| Թեմա | Հարցի համար | Հարց | Պատասխան |
|---|---|---|---|
| Օրենսդրություն | 1 | Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, եթե ՀՀ Կենտրոնական բանկի մյուս նպատակները հակասում են իր հիմնական նպատակներին, ապա ՀՀ կենտրոնական բանկը պետք է առաջնությունը տա | ՀՀ-ում դրամի փոխարժեքի կայունության ապահովմանը |
| | | | ՀՀ բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության, բնականոն գործունեության ապահովմանը |
| | | | ՀՀ-ում մակրոտնտեսական կայունության ապահովմանը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 2 | Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կենտրոնական բանկի հիմնական նպատակներն են. | ՀՀ-ում մակրոտնտեսական կայունության ապահովումը |
| | | | ՀՀ  բանկային համակարգի կայունության ապահովումը |
| | | | ՀՀ-ում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովումը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 3 | Պարտադիր պահուստավորման նորմատիվը հաշվարկում է<br>(ա) ներգրաված միջոցների դիմաց<br>(բ) հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների դիմաց<br>(գ) միայն ՀՀ դրամով ներգրաված միջոցների դիմաց | (ա) |
| | | | (բ) |
| | | | (գ) |
| | | | (բ) և (գ) |
| | 4 | Համաձայն «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, պարտադիր պահուստավորումը սահմանված կարգով չկատարելու դեպքում բանկից գանձվող տույժի չափը չի կարող գերազանցել | նվազագույն կանոնադրական հիմնադրամի 5 տոկոսը |
| | | | նվազագույն կանոնադրական հիմնադրամի 1 տոկոսը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | միջին հաշվով պակաս պահուստավորված յուրաքանչյուր օրվա համար պակաս պահուստավորված գումարի 1 տոկոսը |
| | | | հիմնական կապիտալի 1 տոկոսը |
| | 5 | «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն, պարտադիր պահուստավորման նորմատիվի խախտման դեպքում Կենտրոնական բանկը | բանկից գանձում է տույժ |
| | | | բանկի նկատմամբ նշանակում է տուգանք |
| | | | բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչում |
| | | | կարող է կիրառել նշված պատժամիջոցներից յուրաքանչյուրը |
| | 6 | ՀՀ կենտրոնական բանկը որպես վերջին ատյանի վարկատու, կարող է | ձեռք բերել բանկի բաժնետոմսերի առավելագույնը 50 տոկոսը, ընդ որում կատարված ներդրումները չպետք է գերազանցեն ՀՀ կենտրոնական բանկի կապիտալի 5 տոկոսը |
| | | | ձեռք բերել բանկի անհուսալի՝ հաշվեկշռից դուրսգրված պահանջները |
| | | | բանկին տրամադրել պետական կարճաժամկետ պարտատոմսեր |
| | | | տրամադրել բանկերին վեց ամիս մարման ժամկետը չգերազանցող վարկեր |
| | 7 | Նշել սխալ պատասխանը.<br>Կենտրոնական բանկի կողմից բանկում ստուգում իրականացնելիս բանկը պարտավոր է | ԿԲ վերստուգող խմբին տրամադրել բանկի հաճախորդներից և մասնակիցներից ստացված բողոքները և առաջարկությունները |
| | | | կատարել վերստուգող խմբի ղեկավարի և անդամների ցանկացած պահանջները |
| | | | ապահովել ԿԲ վերստուգող խմբի անարգել մուտք և ելք վերստուգվող բանկի շենք կամ նրա առանձին ծառայողական տարածքներ |
| | | | ԿԲ վերստուգող խմբին հատկացնել աշխատանքային տարածք, որն ապահովված է աշխատելու համար բավարար պայմաններով |
| | 8 | Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը երաշխավորում է | ՀՀ տարածքում գործող  բանկերում, ինչպես նաև ՀՀ տարածքում ստեղծված օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում ներդրված ավանդները |
| | | | վարկային կազմակերպություններում ներդրված ավանդները |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ՀՀ տարածքում գործող բանկերի՝ ՀՀ տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում ներդրված ավանդները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 9 | Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը երաշխավորում է. ա) ՀՀ տարածքում գործող բանկերում ներդրված ավանդները բ) ՀՀ տարածքում գործող բանկերի՝ ՀՀ տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում ներդրված ավանդները գ) ՀՀ տարածքում ստեղծված օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում ներդրված ավանդները | միայն ա) և բ) տարբերակները |
| | | | միայն ա) և գ) տարբերակները |
| | | | միայն բ) և գ) տարբերակները |
| | | | նշված բոլոր տարբերակները ճիշտ են |
| | 10 | Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը երաշխավորում է բանկերում ներդրված | միայն ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) ավանդները |
| | | | միայն իրավաբանական անձանց ավանդները |
| | | | ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) և իրավաբանական անձանց ներդրած ավանդները |
| | | | ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի) և ՀՀ կառավարության (այդ թվում՝ ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների) ավանդները |
| | 11 | Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը երաշխավորում է | միայն դրամային ավանդները |
| | | | միայն արտարժութային ավանդները |
| | | | դրամային և ցանկացած արտարժութային ավանդները |
| | | | դրամային և Կանոնակարգ 2-ով սահմանվող առաջին խմբի մեջ մտնող արտարժույթներով ներգրավված ավանդները |
| | 12 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, երաշխավորված ավանդ չի համարվում այն բանկային ավանդը, որը. | պատկանում է տվյալ բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի տեղակալին |
| | | | պատկանում է տվյալ բանկի ներքին աուդիտի անդամին |
| | | | պատկանում է տվյալ բանկի գլխավոր հաշվապահի քրոջը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 13 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, երաշխավորված ավանդ չի համարվում այն բանկային ավանդը, | որի սեփականատերը հրաժարվել է իր մասի նկատմամբ սեփականության իրավունքից |

| | | | |
|---|---|---|---|
| | | | պատկանում է տվյալ բանկի գլխավոր հաշվապահի տեղակալին |
| | | | պատկանում է տվյալ բանկի մասնաճյուղի կառավարչին |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 14 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, ավանդներ կարող են ներգրավել | բանկերը և վարկային կազմակերպությունները |
| | | | ՀՀ բանկերի միությունը |
| | | | միայն բանկերը |
| | | | միջազգային ֆինանսական կազմակերպությունները |
| | 15 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի բանկային գործունեություն է համարվում | «Բանկերի և բանկային գործունեության» ՀՀ օրենքով սահմանվող ֆինանսական գործառնություններ իրականացնելը |
| | | | ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը և ավանդն ընդունողի անունից և ռիսկով դրանք տեղաբաշխելը |
| | | | ավանդներ ընդունելը կամ ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը և ավանդատուի անունից և ռիսկով դրանք տեղաբաշխելը |
| | | | վարկեր ներգրավելը և վարկեր տրամադրելը |
| | 16 | Անձերի միջև փոխկապակցվածության փաստը հաշվի է առնվում | բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը հաշվարկելիս |
| | | | բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը հաշվարկելիս |
| | | | ընթացիկ իրացվելիության նորմատիվը հաշվարկելիս |
| | | | մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը հաշվարկելիս (Ն31) |
| | 17 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, ներքոհիշյալ ո՞ր դեպքում են ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում փոխկապակցված | եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի 20 տոկոսից ավելին տնօրինող մասնակից |
| | | | եթե տվյալ ֆիզիկական անձը հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գլխավոր հաշվապահը |
| | | | եթե տվյալ ֆիզիկական անձը հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գլխավոր հաշվապահի տեղակալ |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 18 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, ներքոհիշյալ անձանցից ո՞րը չի համարվում բանկի հետ կապված անձ | բանկի գործադիր տնօրենը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բանկի ղեկավարի հետ փոխկապակցված իրավաբանական անձը |
| | | | բանկի բաժնետեր հանդիսացող ֆիզիակական անձը, որի մասնակցությունը բանկի կանոնադրական հիմնադրամում կազմում է 5 տոկոս և չունի օրենքով սահմանված այլ ձևով բանկի որոշումները կանխորոշելու իրավունք |
| | | | բանկի հետ փոխկապակցված ֆիզիկական անձը |
| | 19 | Ներքոհիշյալ անձանցից որո՞նք են համարվում բանկի հետ կապված անձինք<br>(ա) բանկի գործադիր տնօրենը<br>(բ) բանկի գործադիր տնօրենի հետ փոխկապակցված իրավաբանական անձը<br>(գ) բանկի հետ փոխկապակցված ֆիզիկական անձը | միայն (ա) և (գ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | միայն (բ) |
| | | | (ա) և (բ) և (գ) |
| | 20 | Նշեք ճիշտ տարբերակը<br>Նշվածներից (ո՞րը) որո՞նք չունեն իրավաբանական անձի կարգավիճակ<br>(ա) բանկերը<br>(բ) բանկի մասնաճյուղերը<br>(գ) բանկի ներկայացուցչությունները<br>(դ) բանկի դուստր ընկերությունները | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | միայն (բ) և (դ) |
| | | | (բ) և (գ) և (դ) |
| | 21 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից բանկային գործունեություն կարող են իրականացնել | բանկի մասնաճյուղերը |
| | | | բանկի ներկայացուցչությունները |
| | | | բանկի գործառնական գրասենյակները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 22 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, բանկի ներկայացուցչությունը | ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությամբ կարող է իրականացնել որոշ ֆինանսական գործառնություններ |
| | | | ներկայացնում է բանկը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, բանկի անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառույթներ |
| | | | բանկի կողմից տրված լիազորությունների շրջանակներում կարող է իրականացնել բանկային գործունեություն |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությամբ կարող է իրականացնել բանկային գործունեություն |
| | 23 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, պահանջվում է ԿԲ նախնական համաձայնությունը | բանկի կողմից իր բաժնետոմսերը գրավ ընդունելով՝ վարկեր տրամադրելիս |
| | | | փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամը նվազեցնելիս |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | | | ՀՀ տարածքում բանկի մասնաճյուղ (բացառությամբ օտարերկրյա բանկի մասնաճյուղի) կամ ներկայացչություն բացելիս |
| | 24 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, չի պահանջվում ՀՀ ԿԲ նախնական հավանությունը | հաշվետու թողարկող հանդիսացող բանկի բաժնետոմսերի 4 տոկոսը ֆոնդային բորսայում ձեռք բերելիս |
| | | | բանկի բաժնետոմսերի 25 և ավելի տոկոս ձեռք բերելիս |
| | | | բանկի բաժնետոմսերի 5-ը տոկոսը ձեռք բերելիս, ընդ որում ներդրողը իր գործարար համբավով հնարավորություն ունի կանխորոշել բանկի կառավարման մարմինների որոշումները |
| | | | օֆշորային տարածքում մշտական գործունեություն ծավալող ֆիզիկական անձի կողմից բանկի բաժնետոմսերի մինչև 5 տոկոսը ձեռք բերելիս |
| | 25 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն չեն կարող ձեռք բերել | օֆշորային տարածքներում գրանցված կազմակերպությունները |
| | | | կուսակցությունները |
| | | | ապահովագրական կամ արտադրական գործունեությամբ զբաղվող ընկերությունները |
| | | | առևտրային գործունեությամբ զբաղվող ընկերությունները |
| | 26 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի | բանկի կանոնադրությունում փոփոխությունները հաստատում է բանկի խորհուրդը՝ ձայների 3/4-ով ընդունված որոշմամբ |
| | | | բանկի կանոնադրությունը ենթակա է վերանայման առնվազն տարին մեկ անգամ |
| | | | բանկի կանոնադրությունում փոփոխությունները հաստատում է բանկի մասնակիցների ընդհանուր ժողովը՝ ձայների 1/2-ով ընդունված որոշմամբ |
| | | | բանկի կանոնադրությունում փոփոխությունները հաստատում է բանկի մասնակիցների ընդհանուր ժողովը՝ ձայների 3/4-ով ընդունված որոշմամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | 27 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, բանկի կանոնադրությունում կատարված փոփոխություններն ուժի մեջ են մտնում | փոփոխությունների մասին ՀՀ կենտրոնական բանկին ծանուցելու պահից |
| | | | բանկի խորհրդի որոշմամբ՝ փոփոխություն կատարելու պահից |
| | | | ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրանք գրանցելու պահից |
| | | | ՀՀ արդարադատության նախարարության կողմից դրանց գրանցմանը և հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից |
| | 28 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, բանկի կառավարման մարմին չի համարվում | բանկի մասնակիցների ընդհանուր ժողովը |
| | | | բանկի խորհուրդը |
| | | | բանկի վարչությունը |
| | | | ներքին աուդիտը |
| | 29 | «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի բանկի կառավարման մարմին չի համարվում | բանկի մասնակիցների ընդհանուր ժողովը |
| | | | բանկի խորհուրդը |
| | | | բանկի վարչությունը |
| | | | բանկի վերստուգիչ հանձնաժողովը |
| | 30 | Բանկի մասնակիցների ընդհանուր ժողովը | իրականացնում է բանկի ընթացիկ գործունեության նկատմամբ օպերատիվ մոնիտորինգ և վերահսկողություն |
| | | | իրականացնում է բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով կամ բանկի կանոնադրությամբ վերապահված են բանկի խորհրդի բացառիկ իրավասությանը |
| | | | որպես բանկի կառավարման բարձրագույն մարմին, հաստատում է կանոնադրությունը |
| | | | որպես բանկի կառավարման գործադիր մարմին, իրականացնում է օրենքով վերապահված լիազորությունները |
| | 31 | «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն բանկերի և օտարերկյա բանկերի մասնաճյուղերի լիցենզավորման ընթացակարգի փուլերն են | առաջին՝ լիզենզիա ստանալու նախնական հավանություն, երկրորդ՝ բանկի կամ օտարերկյա բանկի մասնաճյուղի գրանցում, երրորդ՝ լիցենզիայի տրամադրում |
| | | | առաջին՝ բանկի կամ օտարերկյա բանկի մասնաճյուղի գրանցում, երկրորդ՝ լիզենզիա ստանալու նախնական հավանություն, երրորդ՝ լիցենզիայի տրամադրում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | առաջին` լիզենզիա ստանալու նախնական հավանություն, երկրորդ` լիցենզիայի տրամադրում |
| | | | առաջին` բանկի կամ օտարերկյա բանկի մասնաճյուղի գրանցում, երկրորդ` լիցենզիայի տրամադրում |
| | 32 | Բանկի կողմից մասնաճյուղ (ներկայացուցչություն) բացելու համար անհրաժեշտ է | բանկային գործունեության հատուկ լիցենզիա, որով բանկին թույլատրվում է բացել մասնաճյուղ (ներկայացչություն) |
| | | | տեղյակ պահել կամ ծանուցել ԿԲ-ին` մասնաճյուղի (ներկայացչության) բացելու վերաբերյալ |
| | | | ՀՀ ԿԲ-ում մասնաճյուղի (ներկայացուցչություն) գրանցում |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 33 | Նշված պնդումներից ո՞րն է սխալ.<br>ԿԲ կողմից մասնաճյուղի գրանցման միջնորդությունը կարող է մերժվել, եթե | մասնաճյուղի գրանցման փաստաթղթերը ԿԲ ներկայացնելու պահին նախորդող մեկ տարվա ընթացքում բանկը խախտել է հիմնական տնտեսական նորմատիվները |
| | | | բանկի մասնաճյուղի տարածքը և տեխնիկական հագեցվածությունը չեն համապատասխանում ԿԲ սահմանած չափանիշներին |
| | | | նախորդ մեկ տարվա ընթացքում տեղի է ունեցել բանկում նշանակալից մասնակցություն ունեցող բաժնետիրոջ փոփոխություն |
| | | | մասնաճյուղի բացումը կհանգեցնի բանկի ֆինանսական վիճակի վատթարացմանը |
| | 34 | Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է բանկային գործունեության լիցենզիան անվավեր ճանաչել, եթե | բանկը ճանաչվել է անվճարունակ |
| | | | բանկը լիցենզիա ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում բանկային գործունեություն չի իրականացրել |
| | | | բանկի կողմից լիցենզիա ստանալու ժամանակ ներկայացվել են կեղծ փաստաթղթեր կամ անարժանահավատ տեղեկատվություն |
| | | | դադարել է բանկի գործունեությունը |
| | 35 | Բանկերը պարտավոր են աուդիտային եզրակացության համառոտ ամփոփագիրը, տարեկան հաշվետվությունը ֆինանսական տարվա ավարտից հետո մամուլում հրապարակել | մեկակսյա ժամկետում |
| | | | եռամսյա ժամկետում |
| | | | չորսամսյա ժամկետում |
| | | | վեցամսյա ժամկետում |

| | | | |
|---|---|---|---|
| | 36 | ՀՀ տարածքում գործող բանկերը կամ օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը պարտավոր չեն ՀՀ կենտրոնական բանկի գրանցմանը ներկայացնել | բանկի գործադիր տնօրենի փոփոխությունը |
| | | | բանկի կանոնադրությունում կատարված փոփոխությունները |
| | | | բանկի վարկային վարչության պետի փոփոխությունը |
| | | | ներքին աուդիտի անդամների կազմում կատարված փոփոխությունները |
| | 37 | Նշել ճիշտ տարբերակը<br>«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն, նշված գործառնություններից որոնք չեն կարող իրականացնել բանկերը<br>(ա) մատուցել ֆինանսական խորհրդատվություն<br>(բ) ապահովագրական գործունեություն<br>(գ)մատուցել վճարահաշվարկային ծառայություններ<br>(դ) իրականացնել առևտրային գործունեություն | (ա) և (գ) |
| | | | միայն (բ) |
| | | | (բ) և (դ) |
| | | | միայն (գ) |
| | 38 | Նշված ֆինանսական գործառնություններից ո՞րը կարող է համարվել վճարահաշվարկային ծառայության մատուցում | հաճախորդի անունից և հաշվին բաժնետոմսեր ձեռք բերելը |
| | | | ընթացիկ հաշվից փոխանցումների կատարումը |
| | | | առևտրային վարկեր տրամադրելը |
| | | | տեղաբաշխման նպատակով այլ անձանց բաժնետոմսեր, պարտատոմսեր ձեռք բերելը |
| | 39 | Բանկի կողմից այլ անձի կանոնադրական հիմնադրամում ներդրումներ կատարելիս պահանջվում է ՀՀ ԿԲ նախնական համաձայնությունը, եթե | տվյալ մասնակցությունը բանկին է անցել բանկի նկատմամբ ստանձնած և չկատարված պարտավորությունների դիմաց |
| | | | տվյալ մասնակցությունը մեկ անձի կանոնադրական հիմնադրամում կկազմի ներդնող բանկի ընդհանուր կապիտալի 10 տոկոսը |
| | | | տվյալ մասնակցությունը բանկը ձեռք է բերել հաճախորդի անունից և հաշվին |
| | | | բանկի մասնակցությունը մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում կգերազանցի ներդնող բանկի ընդհանուր կապիտալի 35 տոկոսը |
| | 40 | Բանկի կողմից այլ անձի կանոնադրական հիմնադրամում ներդրումներ կատարելիս չի պահանջվում ՀՀ ԿԲ նախնական համաձայնությունը, եթե | մասնակցությունը բանկը ձեռք է բերել ֆոնդային բորսայում և չի գերազանցում բանկի կանոնադրական կապիտալի 20 տոկոսը |
| | | | մասնակցությունը բանկին են անցել ստանձնած և չկատարված պարտավորությունների դիմաց |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մասնակցությունը մեկ անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է ներդնող բանկի ընդհանուր կապիտալի 15 տոկոսը |
| | 41 | Բանկը պարտավոր է, բանկի նկատմամբ ստանձնած և չկատարված պարտավորությունների դիմաց բանկին անցած մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում մասնակցությունը, որը գերազանցում է բանկի կապիտալի 15 տոկոսը | օտարել օրենքով սահմանված ժամկետներում |
| | | | անմիջապես ճանաչել ծախս |
| | | | որևէ սահմանափակում չկա |
| | | | առավելագույնը 10-օրյա ժամկետում օտարել |
| | 42 | Բանկին թույլատրվում է ձեռք բերել իր կողմից թողարկված բաժնետոմսերը | բանկի նկատմամբ նախկինում ծագած պարտավորությունները չկատարելու հետևանքով հնարավոր կորուստները կանխելու համար |
| | | | եթե բաժնետոմսի գնման արժեքը չի գերազանցում բաժնետոմսի անվանական արժեքի 50 տոկոսը |
| | | | եթե տվյալ բաժնետոմսերը արտոնյալ բաժնետոմսեր են |
| | | | որևէ սահմանափակում չկա |
| | 43 | Բանկը կարող է ձեռք բերել իր բաժնետոմսերը, եթե | դա անհրաժեշտ է բանկի նկատմամբ նախկինում ծագած պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով հնարավոր կորուստները կանխելու համար |
| | | | բանկի բաժնետոմսերի շուկայական գինը բարձրացման միտում ունի |
| | | | դրանք գնանշված են բորսայում (երկրորդային ֆինանսական շուկայում) |
| | | | եթե նախորդ մեկ տարվա ընթացքում չի խախտել որևէ հիմնական տնտեսական նորմատիվ |
| | 44 | Բանկերը չեն կարող բաժնետերերին շահութաբաժին վճարել, եթե | նախորդ տարվա ընթացքում խախտել են բանկային գործունեության հիմնական տնտեսական  նորմատիվներից որևէ մեկը |
| | | | բանկի ամփոփ գնահատականը (ՔԱՄԼԵՍ) փոքր է ՀՀ ԿԲ կողմից սահմանած չափից |
| | | | դրանք բաշխելու պահին բանկի կրած կորուստը հավասար կամ գերազանցում է բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 45 | Նշված գործարքներից ո՞րն է առ ոչինչ.<br>(ա) բանկի հետ կապված անձանց հետ կնքված՝ վերջիններիս համար առավել բարենպաստ պայմաններ նախատեսող գործարքները<br>(բ) առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության, բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերելը<br>(գ) փոխառուին բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելու նպատակով վարկեր կամ այլ փոխառություններ տրամադրել | միայն (բ) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | (ա) և (բ) և (գ) |
| | 46 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | բանկի և հաճախորդների փոխհարաբերությունները կրում են պայմանագրային բնույթ |
| | | | բանկի հետ կապված անձանց հետ կնքվող գործարքները կարող են վերջիններիս հետ առավել բարենպաստ պայմաններ նախատեսել, քան այլ անձանց հետ կնքվող նույնանման գործարքները, եթե առկա է ՀՀ ԿԲ համաձայնությունը |
| | | | բանկը կարող է հաճախորդների հետ վարկային գործարքներ կնքելիս տվյալ հաճախորդին պարտադրել, որ վերջինս բանկային այլ ծառայությունների վերաբերյալ գործարք կնքի տվյալ բանկի հետ, եթե առկա է ՀՀ ԿԲ համաձայնությունը |
| | | | բոլոր պնդումները ճիշտ են |
| | 47 | Բանկի ռիսկայնությունը զսպելու նպատակով ԿԲ-ը կարող է | բանկին ճանաչել անվճարունակ |
| | | | նախատեսել սահմանափակումներ բանկի վարկային, ավանդային, ֆինանսական, գործառնությունների իրականացման առանձին տեսակների վրա |
| | | | նշված բոլոր պատասխանները սխալ են |
| | | | չերկարաձգել բանկի լիցենզիայի գործունեության ժամկետը |
| | 48 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին ՀՀ օրենքի» բանկերը պարտավոր են միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները հրապարակել հետևյալ պարբերականությամբ | ամսական |
| | | | եռամսակային |
| | | | կիսամյակային |
| | | | նվազագույն որևէ պահանջ դրված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 49 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.<br>(ա) բանկային համակարգի կայունությունը ապահովելու նպատակով ԿԲ-ը կարող է արտակարգ դեպքերում սահմանել հատուկ տնտեսական նորմատիվներ՝ մինչև 6 ամիս տևողությամբ<br>(բ) ԿԲ-ը հատուկ տնտեսական նորմատիվները գործողության մեջ է դնում այնպիսի ժամկետում, որը հնարավորություն կտա բանկերին իրենց գործունությունը համապատասխանեցնել սահմանված նորմատիվների պահանջներին<br>(գ) բանկերի գործունեության կարգավորման, բանկային համակարգի ֆինանսական կայունության ապահովման նպատակով ԿԲ-ը կարող է բանկերի կամ առանձին բանկի համար սահմանել հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերից բարձր (ցածր) չեմ (չեմեր) | միայն (ա) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | (ա) և (բ) և (գ) |
| | 50 | Նվազագույնը ի՞նչ պարբերականությամբ բանկերը պետք է ստուգվեն անկախ աուդիտորական կազմակերպության կողմից | նվազագույնը տարին մեկ անգամ |
| | | | նվազագույնը կիսամյակը մեկ անգամ |
| | | | նվազագույնը երկու տարին մեկ անգամ |
| | | | որևէ նվազագույն պահանջ դրված չէ |
| | 51 | ՀՀ ԿԲ կողմից բանկերի նկատմամբ պատժամիջոցներ կարող են կիրառվել, եթե<br>(ա) ԿԲ կարծիքով բանկն իրականացրել է այնպիսի գործունեության, որը կարող է վտանգել ավանդատուների կամ այլ պարտատերերի շահերը<br>(բ) խախտվել են բանկի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները<br>(գ) բանկը չի կատարել բանկային ավանդների երաշխիքային հիմնադրամին երաշխիքային վճարների վճարումը | միայն (ա) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | (ա) և (բ) և (գ) |
| | 52 | Եթե բանկը համաձայն չէ տուգանքի նշանակման կամ չափի հետ՝ տուգանքը գանձվում է | ԿԲ խորհրդի որոշմամբ |
| | | | ԿԲ հայցով՝ հարկային պետական ծառայության որոշմամբ |
| | | | ԿԲ հայցով՝ ՀՀ բանկերի միության որոշմամբ |
| | | | ԿԲ հայցով՝ դատարանի որոշմամբ |
| | 53 | ԿԲ-ն կարող է բանկի ղեկավարի նկատմամբ նշանակել տուգանք | կապիտալի համարժեքության նորմատիվների խախտման դեպքում |
| | | | իրացվելիության նորմատիվների խախտման դեպքում |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը տրման պահին խախտելու դեպքում |
| | 54 | Տնտեսական նորմատիվի յուրաքանչյուր խախտման և ԿԲ ներկայացվող հաշվետվություններն ուշացնելու համար բանկի նկատմամբ կիրառվող տուգանքի չափը չի կարող գերազանցել | ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի հինգ տոկոսը |
| | | | նվազագույն աշխատավարձի 100 պատիկը |
| | | | նվազագույն աշխատավարձի 1000 պատիկը |
| | | | նվազագույն սպառողական զամբյուղի 1000 պատիկը |
| | 55 | Բանկային գործունեության լիցենզիան կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե | ԿԲ կողմից սահմանված ժամկետում չի կատարել խախտումը վերացնելու մասին ՀՀ ԿԲ հանձնարարականը |
| | | | նշված երեք դեպքերում ԿԲ կարող է լիցենզիան ուժը կորցված ճանաչել |
| | | | բանկը ճանաչվել է անվճարունակ |
| | | | բանկը լիցենզավորման ընթացքում ներկայացրել է կեղծ փաստաթղթեր |
| | 56 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի բանկերը կարող են վերակազմակերպվել | մեկ այլ բանկի հետ միացման միջոցով |
| | | | «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն բանկերին չի թույլատրվում վերակազմակերպվելը |
| | | | միաձուլման միջոցով |
| | | | բաժանման միջոցով |
| | 57 | Նշել սխալ պատասխանը.<br>ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը կարող է հավանություն չտալ բանկերի միացման պայմանագրի կնքմանը, եթե | գործարքի արդյունքում կողմերից որևէ մեկի ավանդատուների, այլ պարտատերերի շահերը կվտանգվեն |
| | | | միացման արդյունքում պահպանվող բանկի ֆինանսական վիճակն էականորեն կվտանգվի |
| | | | միացման արդյունքում պահպանվող բանկի մասնակիցները փոխվեն |
| | | | ներկայացված փաստաթղթերը հակասում են ՀՀ օրենսդրությանը |
| | 58 | Բանկը համարվում է անվճարունակ, եթե | ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է կապիտալի համարժեքության նորմատիվները |
| | | | նախորդ երեք տարվա ընթացքում շահաբաժիններ չի բաշխել |
| | | | ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է իրացվելիության նորմատիվները |
| | | | բանկը սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը |

| | | | |
|---|---|---|---|
| | 59 | Նշված պնդումներից ո՞րն է սխալ.<br>Բանկը կարող է ճանաչվել անվճարունակ, եթե | ի վիճակի չէ բավարարել պարտատերերի օրինական պահանջները |
| | | | բանկը սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը |
| | | | ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը |
| | | | ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել է պարտադիր պահուստավորման նորմատիվը |
| | 60 | Նշել ճիշտ պատասխանը.<br>«Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված անվճարունակության հիմքերից որևէ մեկը բացահայտելու դեպքում ԿԲ-ն երկշաբաթյա ժամկետում կարող է<br>(ա) բանկում նշանակել ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավար<br>(բ) բանկի սնանկության մասին դիմում ներկայացնել դատարան<br>(գ) բանկային գործունեության լիցենզիան ճանաչել անվավեր<br>(դ) բանկային գործունեության լիզենզիան ուժը կորցրած ճանաչել | (ա) կամ (գ) |
| | | | (ա) կամ (բ) |
| | | | (բ) և (գ) |
| | | | (ա)  և (դ) |
| | 61 | Բանկի սնանկության մասին դիմումով ԿԲ-ն դատարան է դիմում, եթե<br>(ա) առկա են բանկը անվճարունակ ճանաչելու հիմքերից որևէ մեկը<br>(բ) ադմինիստրացիայի գործունեության ընթացքում ԿԲ կողմից սահմանված պարբերականությամբ խախտել են հիմնական տնտեսական նորմատիվները<br>(գ) ադմինիստրացիայի գործունեության ընթացքում ԿԲ-ին ակնհայտ է դառնում, որ բանկը լուծարվելու դեպքում հնարավոր է պահպանել բանկի միջոցների ավելի մեծ քանակ, քան ադմինիստարացիայի գործունեությունը շարունակելիս | (ա) և (բ) |
| | | | (բ) և (գ) |
| | | | միայն (գ) |
| | | | (ա) և (գ) |
| | 62 | Բանկում ժամանակավոր ադմինիստրացիա նշանակում է | ՀՀ կենտրոնական բանկը |
| | | | ՀՀ ԿԲ ներկայացմամբ՝ դատարանը |
| | | | ՀՀ բանկերի միությունը |
| | | | առևտրային բանկի ներկայացմամբ՝ ՀՀ կենտրոնական բանկը |
| | 63 | Բանկի կողմից բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակում է համարվում նման տեղեկատվության տրամադրումը | բանկերին |
| | | | ՀՀ բանկերի միությանը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բանկին աուդիտորական ծառայություն մատուցող աուդիտորական ընկերությանը |
| | | | վարկային կազմակերպությանը |
| | 64 | Նշված պնդումներից ո՞րն է սխալ. Բանկերը բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ կարող են | հրապարակել, եթե առկա է ԿԲ թույլատվությունը |
| | | | տրամադրել բանկում աուդիտ իրականացնող աուդիտորական կամակերպությանը |
| | | | տրամադրել Կենտրոնական բանկին |
| | | | տրամադրել հաճախորդի ժառանգներին, եթե վերջիններս բանկին ներկայացրել են ժառանգության իրավունքները հիմնավորող բավարար փաստաթղթեր |
| | 65 | Բանկերը բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրում են հաճախորդի ժառանգներին, եթե վերջիններս բանկին | ներկայացրել են ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությունը |
| | | | ներկայացրել են ժառանգության իրավունքները հիմնավորող բավարար փաստաթղթեր |
| | | | ներկայացրել են ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան որոշումը տեղեկությունները տրամադրելու վերաբերյալ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 66 | Բանկերը կարող են բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները միմյանց տրամադրել՝ | ինքնուրույնաբար, առանց որևէ համաձայնության |
| | | | ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ |
| | | | միայն հաճախորդի գրավոր համաձայնությամբ |
| | | | միայն դատարանի որոշմամբ |
| | 67 | Ֆիզիկական անձի հաշիվը բանկում կոչվում է՝<br>(ա) թղթակցային հաշիվ<br>(բ) բանկային հաշիվ<br>(գ) հաշվարկային հաշիվ | (ա) |
| | | | (բ) |
| | | | (գ) |
| | | | ճիշտ են (բ) և (գ) պատասխանները |
| | 68 | Վարկեր կարող են տրամադրել | միայն բանկերը |
| | | | միայն վարկային կազմակերպությունները |
| | | | ցանկացած անձ կամ կազմակերպություն |
| | | | միայն բանկերը և վարկային կազմակերպությունները |
| | 69 | Գույքի սեփականության իրավունքը ենթադրում է գույքը<br>(ա) տիրապետելու իրավունք<br>(բ) օգտագործելու իրավունք<br>(գ) տնօրինելու իրավունք | միայն (ա) |
| | | | միայն (գ) |
| | | | միայն (ա) և (գ) |

| | | | |
|---|---|---|---|
| | | | (ա) և (բ) և (գ) |
| | 70 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի ներդրումային արժեթղթեր են համարվում | փոխանցելի մուրհակները |
| | | | հասարակ մուրհակները |
| | | | պարտատոմսերը |
| | | | չեկերը |
| | 71 | Այն արժեթուղթը, որը հավաստում է ավանդի գումարը և ավանդատուի իրավունքը՝ սահմանված ժամկետի ավարտից հետո վկայագիր տված բանկում կամ այդ բանկի ցանկացած մասնաճյուղում ստանալ ավանդի գումարը և դրանից տոկոսներ, կոչվում է. | հասարակ պահեստային վկայագիր |
| | | | երկակի պահեստային վկայագիր |
| | | | բանկային վկայագիր |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 72 | Չեկը | ներդրումային արժեթուղթ է, որը պարունակում է չեկ տվողի՝ որևէ բանով չպայմանավորված գրավոր կարգադրությունը, չեկում նախատեսված ժամկետը լրանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում որոշակի գումարը վճարել չեկը ներկայացնողին |
| | | | վճարային արժեթուղթ է, որը պարունակում է չեկ տվողի որևէ բանով չպայմանավորված գրավոր կարգադրությունը բանկին՝ չեկը տիրապետողին վճարել դրանում նշված գումարը |
| | | | ներդրումային արժեթուղթ է, որը պարունակում է չեկ տվողի՝ որևէ բանով չպայմանավորված գրավոր կարգադրությունը բանկին՝ չեկը տիրապետողին վճարելու չեկում նշված գումարը |
| | | | ներդրումային արժեթուղթ է, որը հավաստում է չեկ տիրապետողի իրավունքը ստանալ շահաբաժիններ ընկերության շահույթից |
| | 73 | Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին » ՀՀ օրենքի, հաշվետվություն տրամադրող անձը գործարքը կամ գործարար հարաբերությունը պետք է որակի որպես կասկածելի, եթե | բավարար հիմքեր ունի կասկածելու, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով |
| | | | բավարար հիմքեր ունի կասկածելու, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված գույքը օգտագործվել է ահաբեկչության նպատակով |
| | | | բավարար հիմքեր ունի կասկածելու, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված գույքը առկա է մտադրություն օգտագործելու ահաբեկչության նպատակով |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 74 | Ֆինանսական հաստատությունն ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության դեպքում | իրավունք ունի մինչև 5 օրով կասեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքը և այդ մասին անմիջապես լիազոր մարմին ներկայացնել կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության մասին հաշվետվություն |
| | | | իրավունք ունի ցանկացած ժամկետով կասեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքը և այդ մասին անմիջապես լիազոր մարմին ներկայացնել կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության մասին հաշվետվություն |
| | | | պարտավոր է 10 օրով կասեցնել գործարար հարաբերությունը կամ գործարքը |
| | | | պարտավոր է 10 օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության մասին հաշվետվություն |
| | 75 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին » ՀՀ օրենքի՝ | գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին լիազոր մարմնի որոշումը պետք է կատարվի անմիջապես՝ այն ֆինանսական հաստատության կողմից ստանալու պահից |
| | | | գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին լիազոր մարմնի որոշումը պետք է կատարվի 5 օրվա ընթացքում՝ այն ֆինանսական հաստատության կողմից ստանալու պահից |
| | | | գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշում կայացնելու իրավասություն վերապահված է միայն ֆինանսական հաստատությանը |
| | | | գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշում կայացնելու իրավասություն վերապահված է միայն լիազոր մարմնին |

| | | | |
|---|---|---|---|
| | 76 | Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի դրամական փոխանցումը ուղարկող ֆինանսական հաստատությունը պետք է ձեռք բերի ու պահպանի հետևյալ տեղեկությունները.<br>(ա) փոխանցում կատարողի և փոխանցումն ստացողի անունը, ազգանունը<br>(բ) փոխանցում կատարողի անձը հաստատող փաստաթղթի տվյալները<br>(գ) փոխանցում կատարողի և փոխանցումն ստացողի հաշիվների համարները (բացակայության դեպքում` փոխանցումն ուղեկցող եզակի հղման համարը) | միայն (ա) |
| | | | միայն (բ) |
| | | | միայն (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 77 | Ընտրել ճիշտ տարբերակը.<br>Բանկերին արգելվում է բացել հետևյալ տիպի հաշիվներ`<br>(ա) անանուն կամ մտացածին անուններով հաշիվներ<br>(բ) միայն թվային կամ տառային նշաններով հաշիվներ<br>(գ) օֆշորային տարածքում գրանցված անձանց համար հաշիվներ<br>(դ) պայմանական նշաններով արտահայտված հաշիվներ | միայն (ա) և (գ) |
| | | | միայն (ա), (բ) և (դ) |
| | | | միայն (ա), (գ) և (դ) |
| | | | (ա), (բ), (գ) և (դ) |
| | 78 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի նշվածներից ո՞րը չի համարվում ռեզիդենտ | ֆիզիկական անձինք (բացառությամբ անհատ ձեռնարկատերերի), որոնք հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել են Հայաստանի Հանրա-պետությունում 183 օր և ավելի |
| | | | ՀՀ-ում պետական գրանցում ստացած, հաշվառված կազմակերպությունների ՀՀ սահմանից դուրս գտնվող մասնաճյուղերը |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | | | միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունները |
| | 79 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի նշվածներից որո՞նք են համարվում ոչ ռեզիդենտ | օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանությունները |
| | | | օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանությունների ՀՀ քաղաքացիություն ունեցող աշխատակիցները |
| | | | Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների դեսպանությունները |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 80 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նշվածներից ո՞րն է համարվում ռեզիդենտ | օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները |
| | | | օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունների ՀՀ տարածքում գտնվող մասնաճյուղերը |
| | | | ՀՀ պետական գրանցում ստացած, հաշվառված կազմակերպությունների ՀՀ սահմանից դուրս գտնվող մասնաճյուղերը |
| | | | ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների դեսպանությունները |
| | 81 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի ընթացիկ արժութային գործարքներ չեն համարվում՝ | կարճաժամկետ վարկերի տրամադրումը |
| | | | փոխառությունների դիմաց տոկոսների վճարումը |
| | | | օտարերկրյա ուղղակի ներդրումները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 82 | Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ<br>Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի ընթացիկ արժութային գործառնությունների գծով վճարումները՝ | ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև ծառայությունների ներմուծման կամ արտահանման հետ կապված վճարումներն են |
| | | | ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև փոխառությունների դիմաց վճարվող տոկոսներն են |
| | | | ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև կապիտալի փոխանցումներն են |
| | | | ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև կարճաժամկետ վարկերի տրամադրումն է |
| | 83 | Նշել ճիշտ պատասխանը.<br>Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի ընթացիկ արժութային հաշվի գործարքների գծով վճարումներ են համարվում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև<br>(ա) օտարերկրյա կարճաժամկետ պորտֆելային ներդրումները<br>(բ) երկարաժամկետ վարկերի տրամադրումը<br>(գ) փոխառությունների դիմաց վճարվող տոկոսները | (ա) |
| | | | (բ) |
| | | | (գ) |
| | | | (ա) և (գ) |
| | 84 | Ընթացիկ արժութային գործարքների գծով վճարումներ են համարվում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև | օտարերկրյա պորտֆելային ներդրումները |
| | | | օտարերկրյա ուղղակի ներդրումները |

| | | | |
|---|---|---|---|
| | | | երկարաժամկետ վարկերի տրամադրումը |
| | | | ոչ առևտրային բնույթի փոխանցումները |
| | 85 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի, բանկերի կանոնադրական հիմնադրամը կարող է համալրվել | միայն ՀՀ դրամով |
| | | | միայն ՀՀ դրամով և Կանոնակարգ 2-ով սահմանվող առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով |
| | | | ՀՀ դրամով և արտարժույթներով |
| | | | ՀՀ դրամով և թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներով |
| | 86 | «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի նշված պնդումներից ո՞րն է սխալ | բանկի գործադիր տնօրենը ներկայացնում է բանկը Հայաստանի Հանրապետությունում |
| | | | բանկի գործադիր տնօրենը ներկայացնում է բանկը արտասահմանում |
| | | | բանկի գործադիր տնօրենը տնօրինում է բանկի գույքը, բացառությամբ ֆինանսական միջոցների, որը տնօրինում է բանկի խորհուրդը |
| | | | բանկի գործադիր տնօրենը գործում է առանց լիազորագրի |
| | 87 | Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի տարեկան վարչական ծախսերը և կապիտալ ներդրումները չեն կարող գերազանցել | երաշխիքային վճարներ կատարող բոլոր բանկերի՝ նախորդ եռամսյակի բանկային ավանդների միջին օրական ցուցանիշի 0.05 տոկոսը |
| | | | երաշխիքային վճարներ կատարող բոլոր բանկերի՝ նախորդ տարվա բանկային ավանդների միջին օրական ցուցանիշի 0.03 տոկոսը |
| | | | ՀՀ բանկային համակարգի ակտիվների 0.01 տոկոսը |
| | | | ՀՀ Կենտրոնական բանկի ծախսերի 30 տոկոսը |
| | 88 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, պարբերական երաշխիքային վճարները կատարվում են | ամիսը մեկ անգամ |
| | | | եռամսյակը մեկ |
| | | | տարեկան մեկ անգամ |
| | | | երբ Հիմնադրամի միջոցները բավարար չեն օրենքով սահմանված կարգով և չափով երաշխավորված ավանդների հատուցումը իրականացնելու համար |
| | 89 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության» մասին ՀՀ օրենքի ուղղակի նշանակալից մասնակցություն է համարվում իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում այնպիսի մասնակցությունը, որի դեպքում | մասնակիցը ունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 5 տոկոսը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մասնակիցը ունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 5 տոկոսը, սակայն իրավաբանական անձի նկատմամբ ունեցած պահանջի իրավունքով հնարավություն ունի կանխորոշել վերջինիս կառավարման մարմինների որոշումները |
| | | | մասնակիցը ունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 տոկոսը և ավելին |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 90 | Բանկի կառավարման մարմին չի հանդիսանում | բանկի մասնակիցների ընդհանուր ժողովը |
| | | | բանկի խորհուրդը |
| | | | ճիշտ պատասխան նշված  չէ |
| | | | բանկի վարկային կոմիտեն |
| | 91 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը պահանջվում է | բանկի կանոնադրական հիմնադրամում այլ մասնակցություն (ոչ նշանակալից) ձեռք բերելիս |
| | | | բանկի գույքի ձեռքբերման և օտարման հետ կապված խոշոր գործարքների իրականացման դեպքում |
| | | | բանկի գործարքներում շահագրգիռ անձ համարող անձանց հետ խոշոր գործարքների կնքման դեպքում |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 92 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | բանկերը պարտավոր են ինտերնետում՝ բանկի տնային էջում, մշտապես հրապարակել բանկում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն |
| | | | բանկերը պարտավոր են հրավիրել արտաքին աուդիտ՝ բանկի քվեարկող բաժնետոմսերի առնվազն 1 տոկոսի սեփականատեր մասնակիցների պահանջով |
| | | | բանկի կողմից բանկի գործարքներում շահագրգիռ անձ համարվող անձանց հետ խոշոր գործարքները կնքվում են բացառապես Կենտրոնական բանկի նախնական համաձայնության առկայության դեպքում |
| | | | բոլոր պնդումները սխալ են |
| | 93 | Բանկի ընդհանուր ժողովի նշված իրավասություններից ո՞րը կարող է փոխանցվել խորհրդին | դուստր ընկերությունների ստեղծումը |
| | | | բանկի լուծարումը |
| | | | բանկի կանոնադրության հաստատումը |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 94 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի նշված պնդումներից ո՞րն է ճիշտ | բանկի ընդհանուր ժողովի իրավասություններից մի մասը բանկի կանոնադրությամբ կամ ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել բանկի խորհրդին |
| | | | բանկի ընդհանուր ժողովի իրավասություններից մի մասը բանկի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել գործադիր մարմնին կամ տնօրինությանը |
| | | | բանկի ընդհանուր ժողովի իրավասություններից մի մասը բանկի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել գործադիր մարմնին, եթե առկա է Կենտրոնական բանկ նախնական համաձայնությունը |
| | | | արգելվում է բանկի ընդհանուր ժողովի իրավասությունների փոխանցումը բանկի կառավարման այլ մարմիններին |
| | 95 | Բանկի ներքին աուդիտի իրավասություններին վերաբերվող հարցերը | կարող են փոխանցվել վերստուգիչ հանձնաժողովին |
| | | | կարող են փոխանցվել բանկի խորհրդին |
| | | | կարող են փոխանցվել բանկի խորհրդին, եթե առկա է ՀՀ Կենտրոնական բանկ նախնական համաձայնությունը |
| | | | չեն կարող փոխանցվել բանկի կառավարման այլ մարմիններին |
| | 96 | Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները նշանակվում են | բանկի տնօրինության կողմից |
| | | | բանկի տնօրինության կողմից՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանած կարգով |
| | | | բանկի խորհրդի կողմից |
| | | | մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից |
| | 97 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության» մասին ՀՀ օրենքի բանկի ներքին աուդիտի ղեկավարը հաշվետվություններ է ներկայացնում<br>(ա) - բանկի վերստուգիչ հանձնաժողովին<br>(բ) - բանկի տնօրինությանը<br>(գ) - բանկի խորհրդին | միայն (ա) |
| | | | միայն (գ) |
| | | | (ա) և (գ) |
| | | | (բ) և (գ) |
| | 98 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | միջանկյալ շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշումը ընդունվում է խորհրդի կողմից |

| | | | |
|---|---|---|---|
| | | | միջանկյալ շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշումը ընդունվում է խորհրդի ներկայացմամբ մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից |
| | | | միջանկյալ շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշումը ընդունվում է մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից |
| | | | բանկերին օրենքով արգելվում է միջանկյալ շահաբաժինների վճարումը |
| | 99 | Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության արգելվում է | բանկի կանոնադրական հիմնադրամում այլ մասնակցության ձեռք բերումը |
| | | | տարեկան շահաբաժինների վճարումը |
| | | | բանկի ակտիվների մի մասի օտարումը |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 100 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի նշված անձանցից ո՞րը (որո՞նք) պարտադիր պետք է ընդգրկվի (ընդգրկվեն) բանկի տնօրինության կազմում | բանկի գլխավոր հաշվապահը |
| | | | բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները |
| | | | բանկի խորհրդի անդամներից նվազագույնը երկու հոգի |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 101 | Բանկի գործադիր տնօրենը (տնօրինությունը) խորհրդին ներկայացնում է հաշվետվություն իր գործունեության վերաբերյալ՝ առնվազն | ամիսը մեկ անգամ |
| | | | եռամսյակը մեկ անգամ |
| | | | կիսամյակը մեկ անգամ |
| | | | տարին մեկ անգամ |
| | 102 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության» մասին ՀՀ օրենքի բանկի գլխավոր հաշվապահը առնվազն եռամսյակը մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում<br>(ա) - բանկի գործադիր տնօրենին (տնօրինությանը)<br>(բ) - բանկի խորհրդին<br>(գ) - բանկի ներքին աուդիտին<br>(դ) - բանկի վերստուգիչ հանձնաժողովին | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | միայն (բ) և (դ) |
| | | | միայն (բ), (գ) և (դ) |
| | 103 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.<br>Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության» մասին ՀՀ օրենքի | բանկը կարող է չունենալ վերստուգիչ հանձնաժողով, եթե ներդրել է ԿԲ կողմից սահմանված ներքին հսկողության նվազագույն պայմանները |
| | | | բանկը կարող է չունենալ վերստուգիչ հանձնաժողով, եթե բանկը ունի ներքին աուդիտի ծառայություն |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բանկի վերստուգիչ հանձնաժողովը ստեղծվում է բանկի խորհրդի կողմից |
| | | | բանկերում վերստուգիչ հանձնաժողով չի ստեղծվում |
| | 104 | Համաձայն «Բանկերի և բանկային  գործունեության» մասին ՀՀ օրենքի նշված անձանցից ո՞րն է համարվում անուղղակի նշանակալից մասնակից | մասնակիցը ունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 3 տոկոսը |
| | | | մասնակիցը ունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 8 տոկոսը |
| | | | մասնակիցը չունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսեր, սակայն տվյալ իրավաբանական անձի նկատմամբ ունեցած պահանջի իրավունքով հնարավություն ունի կանխորոշել վերջինիս կառավարման մարմինների որոշումները |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 105 | Բանկում ներքին հսկողության ստանդարտները սահմանում է | բանկի խորհուրդը |
| | | | բանկի գործադիր տնօրենը |
| | | | բանկի ներքին աուդիտի ղեկավարը |
| | | | բանկի գործադիր տնօրենը`  բանկի ներքին աուդիտի ղեկավարի առաջարկությամբ |
| | 106 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի` բանկի տնօրինության կառուցվածքում պարտադիր ընդգրկվում է<br>(ա) - բանկի գործադիր տնօրենը<br>(բ) - բանկի գլխավոր հաշվապահը<br>(գ) - բանկի գործադիր տնօրենի տեղակալը<br>(դ) - բանկի ներքին աուդիտի ղեկավարը | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | (ա), (գ) և (դ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 107 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի` բանկի գլխավոր հաշվապահը նշանակվում է | բանկի գործադիր տնօրենի կողմից |
| | | | բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից |
| | | | բանկի խորհրդի կողմից` գործադիր տնօրենի (տնօրինության) ներկայացմամբ |
| | | | բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից` խորհրդի ներկայացմամբ |
| | 108 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | բանկի գործադիր տնօրենը բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից չի կարող կատարել վճարովի այլ աշխատանք |
| | | | բանկի գործադիր տնօրենը կարող է կատարել վճարովի այլ աշխատանք |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բանկի գործադիր տնօրենը, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից կարող է կատարել վճարովի այլ աշխատանք միայն բանկի խորհրդի համաձայնությամբ |
| | | | բանկի գործադիր տնօրենը, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից կարող է կատարել վճարովի այլ աշխատանք միայն բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի համաձայնությամբ |
| | 109 | Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 1% սեփականատեր հանդիսացող անձը կարող է անվճար ստանալ | բանկի և նրա հետ կապված անձանց միջև կնքվող գործարքների վերաբերյալ տեղեկություն |
| | | | բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները |
| | | | բանկի՝ միանման քաղաքականություն իրականացնող մասնակիցների խմբերի ստեղծմանն ուղղված պայմանագրերի կողմ հանդիսացող մասնակիցների անունները (անվանումները) |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 110 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ բանկերը պարտավոր են ինտերնետում բանկի տնային էջում, մշտապես հրապարակել | բանկում նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցների մասին տեղեկատվություն |
| | | | Կենտրոնական բանկի կողմից իրականացված վերստուգումների եզրակացությունների պատճենները |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | | | բանկի և նրա հետ կապված բոլոր անձանց անունները (անվանումները) |
| | 111 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ Կենտրոնական բանկը կարող է պարտադրել բանկին հրավիրել արտաքին աուդիտ | 6 ամսվա ընթացքում |
| | | | 3 ամսվա ընթացքում |
| | | | 2 ամսվա ընթացքում |
| | | | 4 ամսվա ընթացքում |
| | 112 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ | բանկի արտաքին աուդիտ կարող է հրավիրվել բանկի գործադիր տնօրենի կողմից ցանկացած ժամանակ՝ բանկի միջոցների հաշվին |
| | | | բանկի արտաքին աուդիտ կարող է իրականացվել բանկի՝ քվեարկող բաժնետոմսերի 3% սեփականատեր մասնակիցների պահանջով |
| | | | բանկի արտաքին աուդիտ կարող է իրականացվել բանկի վարկառուների պահանջով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բանկի արտաքին աուդիտին ընտրում է ընդհանուր ժողովը՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով |
| | 113 | Բանկերի կանոնադրական հիմնադրամը համալրվում է | ՀՀ արժույթով և արտարժույթով |
| | | | ՀՀ արժույթով |
| | | | առաջին խմբի արտարժույթով |
| | | | ոսկու ստանդարտացված ձուլակտորներով |
| | 114 | Բանկի կանոնադրության մեջ լրացումներն ու փոփոխությունները կատարվում են | բանկի խորհրդի նիստում՝ ձայների 3/4-ով ընդունված որոշմամբ |
| | | | բանկի մասնակիցների ընդհանուր ժողովում՝ ձայների 3/4-ով ընդունված որոշմամբ |
| | | | բանկի մասնակիցների ընդհանուր ժողովում ձայների 2/3-ով ընդունված որոշմամբ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 115 | Ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե | նրանք այդպիսիք են ճանաչվել Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով |
| | | | նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն |
| | | | նրանք վարում են համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված ելնելով ընդհանուր տնտեսական շահերից |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 116 | Կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեության համար սահմանվող հիմնական տնտեսական նորմատիվ չի (չեն) հանդիսանում | բանկի կանոնադրական հիմնադրամի եւ ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը |
| | | | բանկի խոշոր պարտատերերի գծով ռիսկի առավելագույն չափը |
| | | | բանկի հետ կապված անձանց, անձի գծով ռիսկի առավելագույն չափը (չափերը) |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 117 | Պարտադիր պահուստների նվազագույն չափը խստացնելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում | ընդունման պահից վեց ամիս հետո |
| | | | ընդունման պահից մեկ ամիս հետո |
| | | | ընդունման պահից, եթե տվյալ որոշմամբ ավելի ուշ ժամկետ սահմանված չէ |
| | | | ընդունման պահից երեք ամիս հետո |
| | 118 | Կենտրոնական բանկի կողմից բանկերի նկատմամբ կիրառվող պատժամիջոցներից են. | նախազգուշացում եւ խախտումները վերացնելու հանձնարարական |
| | | | բանկի ղեկավարներին որակավորման վկայականից զրկում |
| | | | լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 119 | Լիցենզիան կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե | բանկը գրանցվելուց հետո մեկ տարվա ընթացքում չի իրականացրնել բանկային գործունեություն |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բանկը Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում չի կատարել խախտումները վերացնելու մասին Կենտրոնական բանկի հանձնարարականը |
| | | | բանկի խորհուրդը կայացրել է ինքնալուծարվելու վերաբերյալ որոշում |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 120 | Ստորև նշվածներից ո՞ր դեպքում ֆիզիկական անձինք չեն համարվի փոխկապակցված | եթե նրանք միևնույն  ընտանիքի անդամ են |
| | | | եթե նրանք դեպարտամենտի, վարչության կամ բաժնի աշխատակից են միևնույն ընկերությունում |
| | | | եթե նրանք այդպիսիք են ճանաչվել Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով |
| | | | եթե նրանք գործել են համաձայնեցված ելնելով ընդհանուր տնտեսական շահերից |
| | 121 | Իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում մասնակցության ո՞ր չափն է համարվում ուղղակի նշանակալից մասնակցություն | այնպիսի մասնակցությունը, որի դեպքում մասնակիցն ունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 և ավելի տոկոսը |
| | | | այնպիսի մասնակցությունը, որի դեպքում մասնակիցն ունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը |
| | | | այնպիսի մասնակցությունը, որի դեպքում մասնակիցն և իր հետ փոխկապակցված անձինք միասին ունեն տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 եւ ավելի  տոկոսը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 122 | Անուղղակի նշանակալից մասնակցություն է համարվում իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում այնպիսի մասնակցությունը, որի դեպքում | մասնակիցն իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում ուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում ունի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 տոկոս եւ ավելի մասնակցություն |
| | | | մասնակիցն իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում ուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում ունի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 20 տոկոս եւ ավելի մասնակցություն |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մասնակիցն իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում ուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում ունի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50 տոկոս եւ ավելի մասնակցություն |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 123 | Ստորև նշվածներից ո՞ր դեպքում բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար չի պահանջվում Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը | եթե նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը հանդիսանում է բանկի մասնակից |
| | | | եթե նշված գործարքի կամ փոխկապակցված գործարքների արդյունքում ձեռք է բերվում անուղղակի նշանակալից մասնակցություն |
| | | | եթե գործարքը կատարվել է ֆոնդային բորսայում և չի գերազանցում բանկի կանոնադրական հիմնադրամի 20 տոկոսը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 124 | Ստորև նշվածներից ո՞ր իրավասությունը չի հանդիսանում բանկի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը | բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների եւ լրացումների կատարումը |
| | | | հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը |
| | | | բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը եւ վարձատրության պայմանների հաստատումը |
| | | | բանկի վերակազմակերպումը |
| | 125 | Ստորև նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | բանկի խորհուրդն իրականացնում է բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումը օրենքով խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում |
| | | | բանկի խորհուրդն իրականացնում է բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը օրենքով խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում |
| | | | բանկի խորհուրդը՝ բանկի կառավարման բարձրագույն մարմինն է |
| | | | բանկի խորհուրդը չի հանդիսանում կառավարման մարմին, այլ իրականացնում է խորհրդատվական ծառայություն բանկի գործադիր մարմնի համար |

| | | | |
|---|---|---|---|
| | 126 | Բանկի կառավարման ո՞ր մարմնի իրավասություններից է բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը | բանկի գործադիր տնօրեն |
| | | | բանկի խորհուրդ |
| | | | մասնակիցների ընդհանուր ժողով |
| | | | վերստուգիչ հանձնաժողով |
| | 127 | «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | բանկերը շահութաբաժինների վճարման մասին նախապես ծանուցում են Կենտրոնական բանկին |
| | | | բանկերին թույլատրվում է փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի նվազեցումը գործունեության ընթացքում՝ դրա հաշվին շահութաբաժիններ բաշխելու ձևով |
| | | | եթե տվյալ պահին բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարին, ապա թույլատրվում է բանկի մասնակիցներին շահութաբաժիններ բաշխելը |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 128 | Եթե ներքին աուդիտի կողմից ստուգման արդյունքներով բացահայտված օրենքների, այլ իրավական ակտերի խախտումների վերաբերյալ տեղեկությունները բանկի խորհրդին չեն ներկայացվել, եւ հետագայում բանկը, այդ խախտումներով պայմանավորված վնասներ է կրել, ապա ո՞վ պետք է հատուցի այդ իրական վնասները | բանկի ներքին աուդիտի ղեկավարը |
| | | | վնասները հատուցվում են բանկի կողմից՝ ապահովագրության հաշվին |
| | | | բանկի գործադիր տնօրենը |
| | | | բանկի խորհուրդի անդամները |
| | 129 | Եթե բանկի հետ կապված անձի հետ գործարքը կնքվել է բանկի ներքին ընթացակարգերի խախտումով՝ խորհրդին ներկայացված դրական եզրակացության հիման վրա, ապա այդ գործարքի հետևանքով բանկին պատճառված իրական վնասների հատուցման համար պատասխանատվություն է կրում | բանկի խորհուրդը |
| | | | բանկի ներքին աուդիտի ղեկավարը |
| | | | բանկի գործադիր տնօրենը |
| | | | բանկի գլխավոր հաշվապահը |

| | | | |
|---|---|---|---|
| | 130 | Եթե բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտել են օրենքների, այլ նորմատիվ իրավական և բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, և հետագայում բանկը կրել է նույն խախտումներով պայմանավորված վնաս, ապա | խորհրդի անդամները համապարտ պատասխանատվություն են կրում այդ իրական վնասների հատուցման համար բացառությամբ, եթե խորհրդի անդամն իր իրավասությունների սահմաններում ձեռնարկել է այդ խախտումները կանխելու ուղղությամբ բավարար եւ խելամիտ գործողություններ |
| | | | խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում այդ իրական վնասների հատուցման համար |
| | | | բանկի գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում այդ իրական վնասների հատուցման համար |
| | | | բանկի գործադիր մարմինը (տնօրինությունը) համապարտ պատասխանատվություն են կրում այդ իրական վնասների հատուցման համար բացառությամբ, եթե տնօրինության անդամն իր իրավասությունների սահմաններում ձեռնարկել է այդ խախտումները կանխելու ուղղությամբ բավարար եւ խելամիտ գործողություններ |
| | 131 | Բանկի հետ կապված անձանց թվին են դասվում | բանկի ղեկավարները և նրանց հետ փոխկապակցված և (կամ) համագործակցող անձինք |
| | | | բանկի կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք և նրանց հետ փոխկապակցված և (կամ) համագործակցող անձինք |
| | | | բանկի հետ փոխկապակցված անձինք |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 132 | Ստորև նշված ո՞ր դեպքում Կենտրոնական բանկի խորհրդը կարող է համաձայնություն չտալ մասնակցության հետգնմանը<br>(ա) մասնակցության հետգնման դեպքում բանկն ի վիճակի չի լինի լրիվ բավարարել իր պարտատերերի պահանջները,<br>(բ) բանկը կխախտի հիմնական տնտեսական նորմատիվները,<br>(գ) մասնակցության հետգնումը կհանգեցնի ՀՀ բանկային համակարգի ապակայունացմանը | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 133 | Նշվածներից ո՞րը չի հանդիսանում ՀՀ Կենտրոնական բանկի նպատակ. | ՀՀ ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը |
| | | | ՀՀ դրամի փոխարժեքի կայունության ապահովումը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը |
| | | | բոլոր նշվածները հանդիսանում են ԿԲ նպատակներ |
| | 134 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.<br>ՀՀ կենտրոնական բանկի հիմնական նպատակն է. | ՀՀ ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելը |
| | | | ՀՀ դրամի փոխարժեքի կայունության ապահովումը |
| | | | գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը |
| | | | բոլոր պնդումները սխալ են |
| | 135 | Կենտրոնական բանկի կողմից բանկերին տրամադրվող վարկերը պետք է ապահովված լինեն՝<br>«ա» պետական արժեթղթերով,<br>«բ» ոսկուց և այլ թանկարժեք մետաղներից պատրաստված մետաղադրամներով և ստանդարտացված ձուլակտորներով,<br>«գ» ոչ ավելի, քան ինը ամիս մարման ժամկետ ունեցող հուսալի չեկերով և մուրհակներով | միայն «ա» |
| | | | միայն «բ» |
| | | | միայն «ա» և «բ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | 136 | Կենտրոնական բանկը սահմանում է պարտադիր պահուստների չափը, պահուստավորման և պահուստավորված միջոցների օգտագործման կարգը բանկերի կողմից ներգրավված<br>(ա) ցպահանջ ավանդների դիմաց<br>(բ) ժամկետային ավանդների դիմաց<br>(գ) խնայողական ավանդների դիմաց | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 137 | Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները սահմանում է | բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը |
| | | | բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը |
| | | | Կենտրոնական բանկի խորհուրդը |
| | | | բանկի գործադիր տնօրենը |
| | 138 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.<br>Բանկային գաղտնիքի հրապարակում է համարվում բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները | բանավոր կամ գրավոր ձևով զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ կերպ հրապարակելը կամ տարածելը |
| | | | երրորդ անձին կամ անձանց հայտնի դարձնելը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | երրորդ անձանց նման տեղեկություններ հայթայթելու հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակի ընձեռելը |
| | | | բոլոր վերոնշված պնդումները ճիշտ են |
| | 139 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Կենտրոնական բանկը իրավունք չունի պետական մարմիններին, պաշտոնատար անձանց ու քաղաքացիներին կամ որևէ այլ անձի տրամադրել բանկերի վերահսկողության կապակցությամբ բանկերի հաճախորդների վերաբերյալ իրեն հայտնի դարձած բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները |
| | | | այն անձինք կամ կազմակերպությունները, բացառությամբ բանկերի, որոնց բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները վստահված են եղել կամ հայտնի են դարձել դրանց ծառայության կամ աշխատանքի կապակցությամբ, իրավունք չունեն այդ տեղեկությունները տրամադրել |
| | | | բանկերը քաղաքացիական և քրեական գործերի կողմ հանդիսացող իրենց հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրում են միայն դատարանի որոշման հիման վրա |
| | | | բոլոր պնդումները ճիշտ են |
| | 140 | Բանկերն իրենց գործունեության անվտանգությունը, վարկերի և այլ ներդրումների վերադարձելիությունը ապահովելու նպատակով կարող են իրենց հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ տրամադրել<br>(ա) ՀՀ տարածքում գործող այլ բանկերին<br>(բ) «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված վարկային կազմակերպություններին<br>(գ) Կենտրոնական բանկին | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | միայն (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 141 | Նշված պնդումներից ո՞րն է սխալ:<br>Ո՞ր դեպքում բանկը կարող է տրամադրել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունը հարկային մարմիններին | միայն դատարանի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով նախատեսված կարգով ընդունված որոշման հիման վրա |
| | | | հաճախորդի բանկային հաշվի վրա բռնագանձում տարածելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի կամ դատավճռի հիման վրա |
| | | | Կենտրոնական բանկի պահանջով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | միայն դատարանի` ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված կարգով ընդունված որոշման հիման վրա |
| | 142 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, երաշխավորված բանկային ավանդ է համարվում | ավանդատուի բանկում ներդրված միայն դրամային բանկային ավանդը |
| | | | ավանդատուի բանկում ներդրված միայն արտարժութային բանկային ավանդը |
| | | | տվյալ բանկի ղեկավարի ներդրված դրամային և արտարժութային բանկային ավանդը |
| | | | ավանդատուի բանկում ներդրված դրամային և արտարժութային բանկային ավանդը |
| | 143 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, պարբերական երաշխիքային վճարների չափը սահմանվում է | բանկի կողմից |
| | | | Երաշխիքային հիմնադրամի կողմից |
| | | | «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով |
| | | | «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով |
| | 144 | Նշված պնդումներից ո՞րն է (որոնք են) ճիշտ<br>Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի<br>(ա) միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը 16 մլն դրամ է,<br>(բ) միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը 5 մլն դրամ է,<br>(գ) դրամային և արտարժութային ավանդներ, և դրամային ավանդի գումարը 7 մլն դրամից պակաս է, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը` 7միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով | միայն (ա) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 145 | Նշված պնդումներից ո՞րն է (որոնք են) ճիշտ<br>Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի<br>(ա) միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը 7 մլն դրամ է,<br>(բ) միայն արտարժութային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը 7 մլն դրամ է,<br>(գ) դրամային և արտարժութային ավանդներ, և դրամային ավանդի գումարը 7 մլն դրամից ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը` մինչև 16 մլն հայկական դրամով | միայն (ա) |
| | | | միայն (ա) և (գ) |

| | | | |
|---|---|---|---|
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 146 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ | բանկերը պարտավոր են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին վճարել պարբերական, միանվագ եւ լրացուցիչ երաշխիքային վճարներ |
| | | | ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին երաշխիքային վճարները կատարում են ՀՀ տարածքում գործող բանկերը, բացառությամբ անվճարունակ բանկերի |
| | | | բանկերի կատարած երաշխիքային վճարները երաշխիքային վճարներ կատարող բանկերի համար համարվում են ծախս և ենթակա չեն վերադարձման |
| | | | բոլոր պնդումները ճիշտ են |
| | 147 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ու՞մ են պատկանում անվանական արժեթղթերով հավաստվող իրավունքները | արժեթուղթը ներկայացնողին |
| | | | արժեթղթում նշված անձին |
| | | | արժեթղթում նշված անձին, ով կարող է ինքն իրականացնել այդ իրավունքը կամ իր կարգադրությամբ նշանակել այլ իրավազոր անձ |
| | | | արժեթուղթ թողարկողին |
| | 148 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ու՞մ են պատկանում օրդերային արժեթղթերով հավաստվող իրավունքները | արժեթուղթը ներկայացնողին |
| | | | արժեթուղթ թողարկողին |
| | | | արժեթղթում նշված անձին, ով կարող է ինքն իրականացնել այդ իրավունքը կամ իր կարգադրությամբ նշանակել այլ իրավազոր անձ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 149 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ինչպես են փոխանցվում ըստ ներկայացնողի արժեթղթերով հավաստվող իրավունքները | պարզապես արժեթուղթը այլ անձին հանձնելով |
| | | | պարտադիր պահանջի զիջման պայմանգրի կնքելով |
| | | | պարտադիր այդ արժեթղթի վրա փոխանցագիր կատարելու միջոցով |
| | | | բոլոր նշված գործողություններով |
| | 150 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, մուրհակների ինչպիսի՞ տեսակներ գոյություն ունեն | հասարակ և փոխանցելի մուրհակներ |
| | | | տիտղոսային և անվանական մուրհակներ |
| | | | անվանական և փոխանցելի մուրհակներ |
| | | | հասարակ և տիտղոսային մուրհակներ |
| | 151 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ո՞րն է գույքի տիրապետման իրավունքի էությունը | գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է |

| | | | |
|---|---|---|---|
| | | | գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է |
| | | | գույքի ճակատագիրն որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է |
| | | | գույքից օգուտներ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է |
| | 152 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ո՞րն է գույքի օգտագործման իրավունքի էությունը | գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է |
| | | | գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտներ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է |
| | | | գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու և գույքի ճակատագիրն որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է |
| | | | գույքի ճակատագիրն որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է |
| | 153 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ո՞րն է գույքի տնօրինման իրավունքի էությունը | գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է |
| | | | գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է |
| | | | գույքի ճակատագիրն որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է |
| | | | գույքից օգուտներ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է |
| | 154 | Նշել ճիշտ պատասխանը.<br>Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, առաջին իսկ պահանջով բանկային ավանդը հետ ստանալու քաղաքացու իրավունքը | կարող է սահմանափակվել բանկային ավանդի պայմանագրով |
| | | | չի կարող սահմանափակվել բանկային ավանդի պայմանագրով |
| | | | կարող է սահմանափակվել օրենքով |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 155 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ի՞նչ չափով է պարտավոր բանկը վճարել տոկոսներ, եթե բանկային ավանդի պայմանագրում չի ներառվել վճարվելիք տոկոսների չափի մասին որևէ պայման | ցպահանջ ավանդների համար վճարվող տոկոսների չափով |
| | | | տվյալ տիպի ավանդների համար սովորաբար վճարվող տոկոսների չափով |
| | | | բանկային տոկոսի հաշվարկային դրույքով |
| | | | հաճախորդի հետ փոխադարձ համաձայնությամբ որոշված տոկոսների չափով |

| | | | |
|---|---|---|---|
| | 156 | «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն բանկի ղեկավար չեն համարվում | բանկի գլխավոր հաշվապահը |
| | | | բանկի տնօրինության անդամները |
| | | | բանկի մասնակիցները |
| | | | բանկի ներքին աուդիտի ղեկավարը |
| | 157 | «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն, ՀՀ կենտրոնական բանկի կողմից որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներ չեն սահմանվում | բանկի վարչության նախագահի տեղակալի համար |
| | | | գլխավոր հաշվապահի տեղակալի համար |
| | | | բանկի գլխավոր հաշվապահի |
| | | | կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի, բացառությամբ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի համար |
| | 158 | ՀՀ կենտրոնական բանկը կարող է ստուգումներ իրականացնել<br>(1) բանկերում և վարկային կազմակերպություններում<br>(2) փոխանակման կետերում<br>(3) ապահովագրական ընկերություններում | միայն (1) |
| | | | միայն (1) և (2) |
| | | | միայն (1) և (3) |
| | | | (1) և (2) և (3) |
| | 159 | Նշված ո՞ր դեպքերում բանկի ղեկավարների նկատմամբ կարող է նշանակվել տուգանք | այլ բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դեպքում |
| | | | ԿԲ հանձնարարականները չկատարելու դեպքում |
| | | | բանկի կողմից լիցենզիա ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում բանկային գործունեություն չիրականացնելու դեպքում |
| | | | բանկի գործադիր տնօրենի պաշտոնում որակավորման վկայական չունեցող անձի նշանակման դեպքում |
| | 160 | ԿԲ-ն չի կարող տուգանել | բանկի գործադիր տնօրենին |
| | | | բանկի մասնաճյուղի ղեկավարին |
| | | | բանկի խորհրդի անդամին |
| | | | նշված բոլոր պատասխանները սխալ են |
| | 161 | Բանկերը կարող են շահութաբաժիններ վճարել<br>(1) փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի նվազեցման միջոցով,<br>(2) եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան կտրվածքով,<br>(3) բանկի գլխավոր պահուստի հաշվին | միայն (1) |
| | | | միայն (2) |
| | | | միայն (3) |
| | | | (2) և (3) |

| | | | |
|---|---|---|---|
| | 162 | Երաշխավորված բանկային ավանդ է (են) համարվում՝<br>(ա) ավանդատուի կամ երրորդ անձի կողմից hօգուտ ավանդատուի բանկին տրամադրված կամ բանկում առկա դրամական գումարը, որը ենթակա է վերադարձման և (կամ) վճարման ավանդատուին<br>(բ) ավանդատուի բանկում բացված հաշվարկային, ընթացիկ, ժամկետային, խնայողական կամ այլ հաշվի վրա գտնվող դրամական միջոցները<br>(գ) բանկի թողարկած անվանական արժեթղթերով ներգրավված դրամական միջոցները<br>(դ) վերը նշված դրամական միջոցների վրա հաշվարկված տոկոսների գումարները | միայն (ա), (բ) և (դ) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | (ա), (բ), (գ) և (դ) |
| | | | միայն (ա), (բ) և (գ) |
| | 163 | Երաշխավորված բանկային ավանդ է (են) համարվում՝<br>(ա) այն դրամական միջոցները, որոնք տրամադրվել են բանկին այն օգտագործելու ռիսկն ավանդատուի կողմից ստանձնելու համաձայնությամբ<br>(բ) ավանդատուի բանկում բացված հաշվարկային, ընթացիկ, ժամկետային, խնայողական կամ այլ հաշվի վրա գտնվող դրամական միջոցները<br>(գ) բանկի թողարկած անվանական արժեթղթերով ներգրավված դրամական միջոցները<br>(դ) այն դրամական միջոցները, որոնք տրամադրվել են բանկին որպես գույք կամ գույքային իրավունքներ վարձակալելու կամ ձեռք բերելու հատուցում | միայն (ա), (բ) և (դ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | (ա), (բ), (գ) և (դ) |
| | | | միայն (ա), (բ) և (գ) |
| | 164 | Երաշխավորված բանկային ավանդ չի համարվում տվյալ բանկի ղեկավարին և/կամ նրա ընտանիքի անդամներին պատկանող ավանդը, որի գումարը գերազանցում է | 1.0 մլն դրամ |
| | | | 1.5 մլն դրամ |
| | | | 2.0 մլն դրամ |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 165 | Ավանդատուն անվճարունակ բանկում ունի ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ներդրված երկու ավանդ, ընդ որում, ՀՀ դրամով ավանդի գումարը կազմում է 6.9 մլն դրամ, իսկ ԱՄՆ դոլարով ավանդի գումարը՝ համարժեք է 7 մլն դրամի: Երաշխավորված ավանդի գումարի չափը կկազմի | ՀՀ դրամով ավանդի գծով՝ 6.9մլն դրամ և ԱՄՆ դոլարով ավանդի գծով՝ 7 մլն դրամ |
| | | | ՀՀ դրամով ավանդի գծով՝ 6.9 մլն դրամ և ԱՄՆ դոլարով ավանդի գծով՝ 100 հազ դրամ |
| | | | միայն ՀՀ դրամով ավանդի գծով՝ 6.9 մլն դրամ |
| | | | միայն ԱՄՆ դոլարով ավանդի գծով՝ 7 մլն դրամ |

| | | | |
|---|---|---|---|
| | 166 | Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին երաշխիքային վճարներ կատարում են | ՀՀ տարածքում գործող բանկերը, բացառությամբ օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի և անվճարունակ բանկերի |
| | | | ՀՀ տարածքում գործող բանկերը (բացառությամբ անվճարունակ բանկերի) |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ տարածքում գործող բանկերը (բացառությամբ անվճարունակ բանկերի) և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը և ՀՀ տարածքում գործող բանկերը, բացառությամբ օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի և անվճարունակ բանկերի |
| | 167 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, պարբերական երաշխիքային վճարների գումարի չափը կազմում է հաշվետու եռամսյակի | տվյալ բանկի բանկային ավանդների միջին օրական ցուցանիշի 0.05 տոկոսը, սակայն ոչ պակաս, քան տարեկան մեկ միլիոն դրամը |
| | | | վերջին օրվա դրությամբ տվյալ բանկի բանկային ավանդների ցուցանիշի 0.05 տոկոսը, սակայն ոչ պակաս, քան տարեկան մեկ միլիոն դրամը |
| | | | վերջին օրվա դրությամբ տվյալ բանկի բանկային ավանդների ցուցանիշի 0.1 տոկոսը, սակայն ոչ պակաս, քան տարեկան երկու միլիոն դրամը |
| | | | տվյալ բանկի բանկային ավանդների միջին օրական ցուցանիշի մեկ տոկոսը, սակայն ոչ պակաս, քան տարեկան մեկ միլիոն դրամը |
| | 168 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, բանկերը երաշխիքային վճարները կատարում են | դրամային ավանդների դիմաց՝ ՀՀ դրամով, արտարժութային ավանդների դիմաց՝ տվյալ արտարժույթով |
| | | | դրամային ավանդների դիմաց՝ ՀՀ դրամով, արտարժութային ավանդների դիմաց՝ ԱՄՆ դոլարով |
| | | | դրամային ավանդների դիմաց՝ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և եվրոյով ավանդների դիմաց՝ համապատասխանաբար՝ ԱՄՆ դոլարով և եվրոյով, այլ արտարժույթներով ավանդների դիմաց՝ ԱՄՆ դոլարով |
| | | | միայն ՀՀ դրամով |
| | 169 | Որոշակի հաճախորդի մասին բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը կարող է հրապարակվել | հաճախորդի բանավոր թույտվությամբ |
| | | | միայն հաճախորդի գրավոր թույլտվության համաձայն |
| | | | հաճախորդի գրավոր կամ դատարանում տրված բանավոր թույլտվությամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | միայն դատարանում տրված բանավոր թույլտվությամբ |
| | 170 | Բանկերն իրենց գործունեության անվտանգությունը, վարկերի և այլ ներդրումների վերադարձելիությունը ապահովելու նպատակով կարող են իրենց հաճախորդների մասին բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն տրամադրել.<br>(ա) առևտրային բանկերին<br>(բ) վարկային կազմակերպություններին<br>(գ) Կենտրոնական բանկին | միայն (ա) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | միայն (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 171 | Նշված պատասխաններից ո՞րն է ճիշտ:<br>ՀՀ Կենտրոնական բանկի նախնական հավանությունը ստանալուց հետո բանկը այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելիս | տվյալ անձանց հաշվեկշիռները միավորում է իր հաշվեկշռում` Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով |
| | | | տվյալ անձանց հաշվեկշիռներները միավորում է իր հաշվեկշռում` Ֆինանսների նախարարության կողմից սահմանված կարգով |
| | | | տվյալ անձանց հաշվեկշիռները միավորում  է բանկի ներքին կարգերին համապատասխան |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 172 | Նշված պատասխաններից ո՞րն է ճիշտ:<br>Այլ անձի կանոնադրական կապիտալում մասնակցություն ձեռք բերելու վերաբերյալ  ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությունը չի պահանջվում, եթե<br>(ա) մասնակցությունը բանկին է անցել բանկի նկատմամբ ստանձնած և չկատարված պարտավորությունների դիմաց<br>(բ) բանկը մասնակցությունը ձեռք է բերել իր հաճախորդի անունից և հաշվին, կամ կոմիսիոն հիմունքներով բաժանորդագրական գործունեություն իրականացնելու ընթացքում, եթե ըստ պայմանագրի բանկը պարտավոր է թողարկողին հատուցել միայն իրացված (տեղաբաշխված) արժեթղթերի արժեքը<br>(գ) մասնակցությունը նվիրատվություն է տրվել բանկին | միայն (ա) |
| | | | (ա) և (բ) |
| | | | (ա) և (գ) |
| | | | (բ) և (գ) |

| | | | |
|---|---|---|---|
| | 173 | Կազմակերպությունը իր անվանման մեջ կարող է օգտագործել «Բանկ» բառը կամ դրա ածանցյալները, եթե.<br>(ա) կազմակերպությունը ունի բանկային գործունեության լիցենզիա<br>(բ) վերոհիշյալ բառի օգտագործման իրավունքը վերապահվել է օրենքով կամ միջազգային պայմանագրով<br>(գ) «բանկ» բառի օգտագործման իմաստից բխում է, որ խոսքը բանկային գործունեության չի վերաբերվում | միայն (ա) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 174 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Բանկային գործունեություն է համարվում վարկերի և փոխառությունների  տրամադրումը |
| | | | Բանկային ավանդ է համարվում անձին տրամադրված այն դրամական գումարը, որը տրամադրվել է այն օգտագործելու` ռիսկը ավանդատուի կողմից ստանձնելու համաձայնությամբ |
| | | | Բանկն այն իրավաբանական անձն է, որը օրենքով սահմանված կարգով լիցենզիայի հիման վրա իրականացնում է  բանկային գործունեություն |
| | | | Բանկային միությունները և ասոցիացիանները լիցենզիայի հիման վրա կարող են իրականացնել բանկային գործունեություն |
| | 175 | Նշված պնդումներից ո՞ր է ճիշտ. | բանկերը իրենց գործունեությունը համակարգելու, շահերը ներկայացնելու և պաշտպանելու համար կարող են ստեղծել շահույթ ստանալու նպատակ հետապնդող բանկային միություններ և ասոցիացիաներ |
| | | | բանկային միությունները և ասոցիացիանները չեն կարող իրականացնել բանկային գործունեություն |
| | | | բանկային միությունները և ասոցիացիանները լիցենզիայի հիման վրա կարող են իրականացնել բանկային գործունեություն |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 176 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | բանկին արգելվում է փոխառուին բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցության ձեռք բերման նպատակով վարկեր տրամադրելը, սակայն բանկը կարող է երաշխավորել կամ երաշխիք տալ երրորդ անձից վարկ կամ փոխառություն ստանալու համար |
| | | | բանկը կարող է փոխառուին բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցության ձեռք բերման նպատակով վարկեր տրամադրել, եթե առկա է Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը |
| | | | բանկը կարող է փոխառուին բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցության ձեռք բերման նպատակով վարկեր տրամադրել ոչ ավել քան 2 ամիս ժամկետով |
| | | | բանկին արգելվում է փոխառուին բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցության ձեռք բերման նպատակով վարկեր տրամադրելը, ինչպես նաև երաշխավորել կամ երաշխիք տալ երրորդ անձից վարկ ստանալու համար |
| | 177 | Նշել ճիշտ պատասխանը. | Բանկի հետ կապված անձանց հետ կնքվող գործարքները կարող են վերջիններիս համար առավել բարենպաստ պայմաններ նախատեսել, քան այլ անձանց հետ կնքվող նույնանման գործարքները |
| | | | Բանկի ղեկավարների և աշխատակիցների շահերը պետք է բարձր դասվեն հաճախորդի նկատմամբ ստանձնած պարտավորություններից |
| | | | Բանկը կարող է հաճախորդի հետ նպաստավոր պայմաններով վարկային կամ այլ գործարք կնքելիս տվյալ հաճախորդին պարտադրել, որ վերջինս բանկի հետ կնքի նաև այլ ծառայությունների տրամադրման պայմանագիր |
| | | | Բանկի հետ կապված անձանց հետ կնքվող գործարքները չեն կարող վերջիններիս համար առավել բարենպաստ պայմաններ նախատեսել, քան բանկի աշխատակից չհամարվող այլ անձանց հետ կնքվող նույնանման գործարքները |
| | 178 | Բանկի հետ կապված անձ չի հանդիսանում | Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալի մասնակցություն ունեցող անձի հետ փոխկապակցված անձը |
| | | | Բանկի կառուցվածքային ստորաբաժանման աշխատակիցը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալի մասնակցություն ունեցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում ունի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50 տոկոս և ավելի |
| | | | Բանկի կառուցվածքային ստորաբաժանման աշխատակիցը, որը ԿԲ խորհրդի կարծիքով հանդիսանում է բանկի հիմնական գործունեության հետ կապված |
| | 179 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ | բանկի խորհրդի նախագահը կամ խորհրդի անդամը կարող է միաժամանակ լինել տվյալ բանկի գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից |
| | | | բանկի գործադիր տնօրենը կարող է միաժամանակ լինել այլ բանկի կամ վարկային կազմակերպության գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, եթե տվյալ բանկերը կամ բանկը և վարկային կազմակերպությունը հանդիսանում են միմյանց հետ փոխկապակցված անձինք |
| | | | բանկի գործադիր մարմնի անդամները բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից կարող են իրականացնել նաև այլ վճարովի աշխատանք ըստ իրեն հայեցողության |
| | | | բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները չեն կարող միաժամանակ լինել այլ բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար կամ անդամներ |
| | 180 | Բանկի ղեկավար են հանդիսանում.<br>(ա) բանկի տնօրինության անդամները<br>(բ) բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի տեղակալը<br>(գ) բանկի կառուցվածքային ստորաբաժանման աշխատակիցը, որը ԿԲ խորհրդի սահմանված չափանիշներով աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո<br>դ) բանկի դեպարտամենտի տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող աշխատակիցը | միայն (ա) |
| | | | (ա) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | | | (ա), (բ), (գ) և (դ) |

| | | | |
|---|---|---|---|
| | 181 | Նշել ճիշտ պատասխանը:<br>Բանկի կառավարման մարմին են հանդիսանում`<br>(ա) Ընդհանուր ժողովը,<br>(բ) Խորհուրդը,<br>(գ) գործադիր տնօրենը կամ վարչությունը,<br>(դ) Ներքին աուդիտը | միայն (ա) և (բ) |
| | | | (ա), (բ) և (դ) |
| | | | (ա), (բ), (գ) և (դ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 182 | Նշված տարբերակներից ո՞րն է սխալ. | բանկի մասնակիցների ընդհանուր ժողովը հաստատում է ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռները, նշանակում է լուծարային հանձնաժողովին |
| | | | բանկի խորհրդի նախագահը նախագահում է բանկի ընդհանուր ժողովում |
| | | | բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունն է |
| | | | միջանկյալ շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումը կայացնում է բանկի խորհուրդը |
| | 183 | Նշված տարբերակներից ո՞րն է ճիշտ. | Բանկի խորհրդի նախագահը ընտրվում է բանկի մասնակիցների ժողովի կողմից |
| | | | Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները կարող են մասնակցել բանկի մասնակիցների ընդհանուր ժողովին` որպես դիտորդ |
| | | | Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից առանց ժամկետային սահմանափակման |
| | | | Բանկի խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է բանկի ներքին ընթացակարգերով |
| | 184 | Խորհրդի բացառիկ իրավասություններն են. | Բանկի ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը |
| | | | Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժինների չափի և դրա վճարման ձևի մասին որոշման ընդունումը |
| | | | Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը |
| | | | Բանկի կանոնադրությունում փոփոխությունների և լրացումների կատարումը |

| | | | |
|---|---|---|---|
| | 185 | Նշված պնդումներից ո՞ն է սխալ. Բանկը համարվում է անվճարունակ, եթե | պարբերաբար խախտում է օրենքով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվը |
| | | | ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները |
| | | | պարբերաբար խախտում է օրենքով սահմանված արտարժույթի տնօրինման նորմատիվը |
| | | | սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը կամ ավելին |
| | 186 | Ադմինիստրացիայի գործունեության ժամկետը սահմանվում է | բանկի ֆինանսական առողջացման ծրագրով՝ մինչև մեկ տարի ժամկետով |
| | | | դատարանի կողմից՝ մինչև երեք տարի ժամկետով |
| | | | բանի պարտատերերի կողմից՝ մինչև 3 տարի ժամկետով |
| | | | բանկի մասնակիցների կողմից |
| | 187 | Դատարանի կողմից սնանկ ճանաչված բանկի պարտավորությունները մարվում են | լուծարային միջոցների հաշվին |
| | | | միայն ավանդների հատուցման երաշխիքային հիմնադրամի միջոցների հաշվին |
| | | | կենտրոնական բանկի միջոցների հաշվին |
| | | | ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին |
| | 188 | Բանկերը պարտավոր են մամուլում հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտային եզրակացությունը ֆինանսական տարվա ավարտից հետո | մեկամսյա ժամկետում |
| | | | չորսամսյա ժամկետում |
| | | | վեցամսյա ժամկետում |
| | | | եռամսյա ժամկետում |
| | 189 | Նշել ճիշտ պատասխանը: Վերստուգվող անձանց մոտ ստուգումներն անցկացվում են | կենտրոնական բանկի խորհրդի կամ նախագահի որոշմամբ՝ դրանց հիման վրա վերստուգող ստորաբաժանման ղեկավարի տված լիազորագրով սահմնավված պաշտոնատար անձանց կողմից |
| | | | կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ՝ դրանց հիման վրա վերստուգող ստորաբաժանման ղեկավարի տված լիազորագրով սահմնավված պաշտոնատար անձանց կողմից |
| | | | կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ՝ դրանց հիման վրա վերստուգող ստորաբաժանման ղեկավարի տված լիազորագրով սահմնավված պաշտոնատար անձանց կողմից |
| | | | կենտրոնական բանկի խորհրդի կամ նախագահի որոշմամբ՝ դրանց հիման վրա ֆինանսական վերահսկողության վարչության պետի տված լիազորագրով սահմանավված վերահսկողի կողմից |

| | | | |
|---|---|---|---|
| | 190 | Նշել սխալ պատասխանը:<br>Վերստուգվող անձը պարտավոր է վերստուգվող խմբի համար | ապահովել ստուգման ընթացքում անարգելք մուտք և ելք վերստուգվող անձի շենք կամ նրա առանձին ծառայողական տարածքներ |
| | | | ստուգման առաջին օրը կազմակերպել վերստուգող խմբի անդամների հանդիպում վերստուգվող անձի բոլոր աշխատակիցների հետ |
| | | | հատկացնել աշխատանքային տարածք, որն ապիովված է աշխատելու համար բավարար պայմաններով, ինչպես նաև տեխնիկական, կապի և այլ անհրաժեշտ միջոցներով |
| | | | վերստուգող խմբին տրամադրել վերստուգվող անձի հաճախորդներից և մասնակիցներից ստացված բողոքները և առաջարկությունները |
| | 191 | Վերստուգող խումբն ստուգումներ իրականացնելու նպատակով իրավասու չէ | օգտվել ստուգման համար անհրաժեշտ, վերստուգվող անձի մոտ առկա տեխնիկական միջոցներից |
| | | | վերստուգվող անձանց, նրա ղեկավարներից և իրավասու աշխատակիցներից պահանջել ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթեր |
| | | | անարգել մուտք գործել վերստուգվող անձի դրամապահոց |
| | | | անհրաժեշտության դեպքում ինքնուրույնաբար կամ վերստուգվող անձի օգնությամբ պատճենահանել անհրաժեշտ փաստաթղթեր |
| | 192 | Ստուգումներ կարող են իրականացվել հետևյալ ուղղություններով (ոլորտներով)՝<br>(ա) իրացվելիության վերլուծություն և գնահատում<br>(բ) կառավարման որակի գնահատում<br>(գ) ռիսկերի և/ կամ դրանց առանձին տեսակների վերլուծություն և գնահատում<br>(դ) դրամական միջոցների հոսքերի վերլուծություն և գնահատում | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա), (բ) և (դ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | (ա), (բ), (գ) և (դ) |
| | 193 | Վերստուգվող անձը, նրա գործադիր մարմնի ղեկավարը կամ նրան փոխարինող անձը ծանոթանում է ստուգման հաշվետվությանը | մեկ շաբաթվա ընթացքում |
| | | | երկշաբաթյա ժամկետում |
| | | | մեկ ամսվա ընթացքում |
| | | | հնգօրյա ժամկետում |
| | 194 | Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի, եթե Կենտրոնական բանկի մյուս նպատակները հակասում են իր հիմնական նպատակներին, ԿԲ-ն առաջնությունը տալիս է | ՀՀ-ում բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ՀՀ-ում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովմանը |
| | | | ՀՀ դրամի փոխարժեքի կայունացմանը |
| | | | ՀՀ-ում վճարահաշվարկային համակարգի զարգացմանը |
| | 195 | «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն | Կենտրոնական բանկը որպես վերջին ատյանի վարկատու կարող է իր կողմից սահմանված կարգով վեց ամիս մարման ժամկետը չգերազանցող վարկեր տրամադրել բանկերին |
| | | | ՀՀ բանկային համակարգի միասնականությունը և սահունությունը պահպանելու նպատակով Կենտրոնական բանկը կարող է տրամադրել վեց ամսից ավելի ժամկետ ունեցող վարկեր, որոնց մարման ժամկետը չի կարող գերազանցել հինգ տարին |
| | | | Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է առանձին տեսակի վարկերի համար վարկավորման տարբերակված տոկոսադրույքներ և վարկավորման հատուկ կարգ ու պայմաններ սահմանել |
| | | | Բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 196 | Համաձայն «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի Կենտրոնական բանկի խորհուրդը ո՞ր դեպքում չի կարող երաշխավորել բանկերի պարտավորությունները՝ դրանց զարգացման և հատուկ այլ ծրագրերի իրագործման նպատակով բանկերից և այլ ներդրողներից փոխառություններ ձեռք բերելու համար | տվյալ փոխառության համար բանկի կողմից վճարվող տոկոսադրույքը էականորեն բարձր է Հայաստանի Հանրապետությունում նման փոխառության միջին շուկայական տոկոսադրույքից |
| | | | տվյալ փոխառությունը երկարաժամկետ է |
| | | | Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է երաշխիքների տրամադրման լրացուցիչ պայմաններ սահմանել |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 197 | Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ. | Կենտրոնական բանկը կարող է յուրաքանչյուր օտարերկրյա բանկի մասնաճյուղի համար սահմանել պարտադիր պահուստավորման հատուկ կարգ |
| | | | Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների չափը, պահուստավորման և պահուստավորված միջոցների օգտագործման կարգը սահմանվում է միայն ֆիզիկական անձանցից ներգրավված ցպահանջ, ժամկետային և խնայողական ավանդների վրա |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բանկերը պարտավոր են պարտադիր պահուստավորման ենթակա գումարները պահուստավորել յուրաքանչյուրը համապատասխանաբար ըստ ներգրավված արտարժույթի |
| | | | պահուստավորման ենթակա միջոցների, ինչպես նաև պարտադիր պահուստավորման ենթակա միջոցների չափը գերազանցող մասի դիմաց վճարվող տոկոսադրույքների չափը սահմանում է Կենտրոնական բանկի նախագահը |
| | 198 | Ֆինանսական հաստատությունները Լիազոր մարմնին պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների վերաբերյալ հաշվետվություն են տրամադրվում ըստ գործարքների հետևյալ տեսակների և սահմանաչափերի. | անկանխիկ գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 5 միլիոն դրամը |
| | | | կանխիկի հետ կապված գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 5 միլիոն դրամը, անկանխիկ գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 20 միլիոն դրամը |
| | | | անկանխիկ գործարքներ, անկախ գումարի մեծությունից |
| | | | նշված բոլոր պնդումները ճիշտ են |
| | 199 | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն, կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը տրամադրվում է՝ | հաշվետվություն տրամադրող բոլոր անձանց կողմից, ըստ հաշվետվություն տրամադրող յուրաքանչյուր անձի համար սահմանված գործարքների կամ գործարար հարաբերությունների տեսակների, անկախ դրանցում ներգրավված գումարի չափից |
| | | | հաշվետվություն տրամադրող անձանց կողմից՝ ըստ գործարքների որոշակի տեսակների և սահմանաչափերի |
| | | | հաշվետվություն տրամադրող բոլոր անձանց կողմից՝ ըստ գործարքների սահմանաչափերի |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 200 | Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին » ՀՀ օրենքի՝ հաշվետվություն տրամադրող անձի կողմից հաճախորդին մատուցվող պարբերական ծառայություններ, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի միանգամյա գործարքներով, համարվում են. | միանգամյա գործարքների համակցություն |
| | | | գործարար հարաբերություններ |
| | | | փոխկապակցված գործարքներ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 201 | Ընտրել ճիշտ տարբերակը.<br>Նշված գործառնություններից ո՞րոնք են համարվում ակտիվային.<br>(ա) ֆինանսական վարձակալությունը վարձատուի համար<br>(բ) ինվեստիցիոն գործունեություն<br>(գ) ֆակտորինգ<br>(դ) ֆինանսական վարձակալությունը վարձակալի համար | միայն (բ) |
| | | | միայն (ա), (գ) և (դ) |
| | | | միայն (ա), (բ) և (գ) |
| | | | (ա), (բ), (գ) և (դ) |
| | 202 | Ընտրել ճիշտ տարբերակը.<br>Բանկերը պարտավոր են ինտերնետում` բանկի տնային էջում, հրապարակել.<br>(ա) ավանդների ընդունման վերաբերյալ տեղեկություններ<br>(բ) վարկերի տրամադրման վերաբերյալ տեղեկություններ<br>(գ) մատուցվող բոլոր ծառայությունների վերաբերյալ տեղեկություններ<br>(դ) շահութաբաժինների վճարման մասին որոշումների պատճենները | միայն (բ) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա) |
| | | | (ա), (բ), (գ) և (դ) |
| | 203 | Ընտրել ճիշտ տարբերակը.<br>Բանկերը պարտավոր են ֆինանսական տարվա ավարտից հետո չորսամսյա ժամկետում մամուլում հրապարակել`<br>(ա) աուդիտային եզրակացությունը<br>(բ) տարեկան ֆինանսական հաշվետվությունը<br>(գ) ներքին աուդիտի հաշվետվությունը | միայն (բ) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 204 | Ընտրել ճիշտ տարբերակը.<br>Բանկերը պարտավոր են մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը հրապարակել`<br>(ա) արտաքին աուդիտի եզրակացությունը<br>(բ) եռամսյակային ֆինանսական հաշվետվությունը<br>(գ) տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը | միայն (բ) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա) |
| | | | (ա), (բ) և (գ) |

| | | | |
|---|---|---|---|
| | 205 | Ընտրել ճիշտ տարբերակը.<br>Բանկերը պարտավոր են ինտերնետում՝ բանկի տնային էջում, հրապարակել.<br>(ա) բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին տեղեկատվություն<br>(բ) Ֆինանսական հաշվետվությունները (առնվազն վերջին տարեկան և վերջին եռամսյակային)<br>(գ) հաշվապահական հաշվառման քաղաքականությունը<br>(դ)  բանկի խորհրդի, գործադիր մարմնի անդամների ցանկը և անձնական տվյալները | միայն (բ) |
| | | | միայն (ա), (բ) և (գ) |
| | | | միայն (ա), (բ) և (դ) |
| | | | (ա), (բ), (գ) և (դ) |
| | 206 | Նշված պնդումներից ո՞րն է սխալ:<br>Բանկի հետ կապված անձանց թվին են դասվում | բանկի ղեկավարները |
| | | | բանկի կապիտալում ցանկացած մասնակցություն ունեցող անձինք |
| | | | բանկի հետ փոխկապակցված անձինք |
| | | | բանկի ղեկավարների հետ փոխկապակցված անձինք |
| | 207 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ | բանկի արտաքին աուդիտին ընտրում է բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով |
| | | | բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումը կարող է կատարվել բանկի խորհրդի պահանջով |
| | | | բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումը կարող է կատարվել բանկի՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5% սեփականատեր մասնակիցների պահանջով |
| | | | նշված բոլոր պնդումները ճիշտ են |
| | 208 | Ընտրել ճիշտ տարբերակը.<br>Բանկում արտաքին աուդիտ իրականացնող անձը պարտավոր է՝<br>(ա) ստուգել ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները<br>(բ) աուդիտ իրականացնելու ընթացքում բանկի ֆինանսական վիճակի էական վատթարացման փաստերի վերաբերյալ հայտնել ՀՀ ԿԲ-ին<br>(գ) ՀՀ ԿԲ-ի պահանջով  վերջինիս ներկայացնել ստուգման վերաբերյալ ցանկացած փաստաթղթեր | միայն (բ) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |

| | | | |
|---|---|---|---|
| | 209 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, բանկի կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից բանկային գործունեություն կարող են իրականացնել | միայն բանկի մասնաճյուղերը |
| | | | միայն բանկի ներկայացուցչությունները |
| | | | բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները |
| | | | միայն բանկի գլխամասային գրասենյակը |
| | 210 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, բանկի ներկայացուցչությունը | ՀՀ կենտրոնական բանկի թույլտվությամբ կարող է իրականացնել որոշ ֆինանսական գործառնություններ |
| | | | ներկայացնում է բանկը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, բանկի անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառույթներ |
| | | | բանկի կողմից տրված լիազորությունների շրջանակներում կարող է իրականացնել բանկային գործունեություն |
| | | | բոլոր պնդումները սխալ են |
| | 211 | Ընտրել ճիշտ տարբերակը. Նշվածներից որ՞ոնք են համարվում օրենսդրության խախտում. (ա) բանկի կանոնադրությունը փոփոխվել է, սակայն չի ներկայացվել ԿԲ գրանցման (բ) բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը (ՔԱՄԵԼՍ) մեծ է ԿԲ կողմից սահմանված բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականի չափից (գ) բանկը չի կատարել Կենտրոնական բանկի կողմից տրված հանձնարարականը | միայն (ա) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 212 | Ընտրել ճիշտ տարբերակը. ԿԲ-ն կարող է բանկի գործադիր մարմնի ղեկավարի նկատմամբ նշանակել տուգանք (ա) խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվի խախտման դեպքում (բ) մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը տրման պահին խախտելու դեպքում (գ) բանկի հետ կապված անձանց գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվի տրման պահին խախտման դեպքում | միայն (գ) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |

| | | | |
|---|---|---|---|
| | 213 | Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվի խախտման համար բանկի նկատմամբ կիրառվող տուգանքի չափը չի կարող գերազանցել | ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի հինգ տոկոսը |
| | | | նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկը |
| | | | նվազագույն աշխատավարձի հազարապատիկը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 214 | Ընտրել ճիշտ տարբերակը.<br>Բանկի գործադիր ղեկավարը զրկվում է որակավորման վկայականից Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե նա՝<br>(ա) միտումնավոր կերպով խախտել է օրենքները և այլ իրավական ակտերը<br>(բ) պաշտոնավարման ընթացքում վարել է անհիմն և վտանգավոր գործունեություն, խոչընդոտել է Կենտրոնական բանկին վերահսկողություն իրականացնելու կապակցությամբ<br>(գ) չի կատարել Կենտրոնական բանկի հանձնարարականը կամ անտեսել է Կենտրոնական բանկի նախազգուշացումը | միայն (ա) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 215 | Ընտրել ճիշտ տարբերակը.<br>Բանկային գործունեության լիցենզիան կարող է ուժը կորցված ճանաչվել, եթե.<br>(ա) դադարել է բանկի գործունեությունը<br>(բ) ԿԲ կողմից սահմանված ժամկետում չի կատարել խախտումը վերացնելու մասին ՀՀ ԿԲ հանձնարարականը<br>(գ) բանկը լիցենզիա ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում բանկային գործունեություն չի իրականացրել | միայն (ա) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 216 | «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի իմաստով երրորդ անձ են համարվում. | կենտրոնական բանկը |
| | | | վարկային կազմակերպությունները |
| | | | իրավապահ մարմինները |
| | | | նշված բոլորն էլ համարվում են երրորդ անձ |
| | 217 | Նշել սխալ պատասխանը<br>Ադմինիստրացիայի գործունեության խնդիրներից է. | բանկի ակտիվների ու պարտավորությունների մի մասը կամ դրանք ամբողջությամբ վաճառելը |
| | | | բանկի վերակազմակերպման միջոցով նրա ավանդատուների ու բանկային հաշվի անվանատերերի պահանջների բավարարումը |
| | | | բանկի ակտիվները հնարավոր կարճ ժամկետում հավաքագրելու (իրացնելու) միջոցով բանկի ֆինանսական կայունության վերականգնումը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բաժնետերերի օրինական պահանջների բավարարումը |
| | 218 | ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի համաձայն, որ պնդու՞մն է ճիշտ. | օգտագործման իրավունքը գույքը փաստացի օգտագործելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է |
| | | | տիրապետման իրավունքը գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է |
| | | | տնօրինման իրավունքը գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է |
| | | | բոլոր պնդումները ճիշտ են |
| | 219 | Ընտրել ճիշտ տարբերակը.<br>ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի համաձայն նշվածներից, որո՞նք են համարվում արժեթուղթ<br>(ա) պարտատոմսը<br>(բ) բաժնետոմսը<br>(գ) երկակի պահեստային վկայագիրը<br>(դ) հասարակ վկայագիրը | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա), (բ) և (դ) |
| | | | միայն (ա), (բ) և (գ) |
| | | | (ա), (բ), (գ) և (դ) |
| | 220 | Ընտրել ճիշտ տարբերակը.<br>ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի համաձայն նշվածներից, որո՞նք են համարվում արժեթուղթ<br>(ա) չեկը<br>(բ) կոնոսամենտը<br>(գ) բանկային վկայագիրը | միայն (ա) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | 221 | ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի համաձայն նշվածներից, ո՞րն է սխալ | պարտատոմսը ինվեստիցիոն (ներդրումային) արժեթուղթ է |
| | | | հասարակ մուրհակը և փոխանցելի մուրհակը (վճարագիրը) վճարային արժեթղթեր են |
| | | | կոնոսամենտը տիտղոսային արժեթուղթ է |
| | | | կոնոսամենտ է համարվում օրդերային այն արժեթուղթը, որը հավաստում է ապրանքային պահեստի կողմից ապրանքն ի պահ ընդունելը |

| | | | |
|---|---|---|---|
| | 222 | Ընտրել ճիշտ տարբերակը.<br>Կենտրոնական բանկի և խախտումներ թույլ տված բանկի միջև կնքվող պայմանագրով կարող է նախատեսվել.<br>(ա) որոշակի ժամանակաշրջանում վերակազմակերպման կամ զարգացման ծրագրի իրագործում<br>(բ) շահաբաժինների վճարման կասեցում<br>(գ) բանկի անձնակազմի աշխատավարձի նվազեցում և պարգևավճարների դադարեցում<br>(դ) գովազդի սահմանափակում | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա), (բ) և (գ) |
| | | | միայն (ա), (բ) և (դ) |
| | | | (ա), (բ), (գ) և (դ) |
| | 223 | «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի համաձայն նշված պնդումներից ո՞րն է սխալ | ՀՀ տարածքում ռեզիդենտներն ու ոչ ռեզիդենտներն իրավունք ունեն առանց սահմանափակումների իրականացնելու արտարժույթի առք ու վաճառք |
| | | | ռեզիդենտների միջև նվիրաբերության, նվիրատվության գործարքները, ինչպես նաև ժառանգությունը կարող են իրականացվել արտարժույթով |
| | | | մասնագիտացված անձինք կարող են իրենց հաճախորդներին Կենտրոնական բանկի սահմանած կարգով, ձևով և վավերապայմաններով տրամադրել արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները հավաստիացնող փաստաթուղթ (անդորրագիր) |
| | | | մասնագիտացված անձանց կողմից իրականացվող արտարժույթի առք ու վաճառքի գործարքների փոխարժեքը և ծավալները սահմանում են մասնագիտացված անձինք |
| | 224 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի, ընթացիկ արժութային գործարքներ չեն համարվում | կարճաժամկետ վարկերի տրամադրումը |
| | | | փոխառությունների դիմաց տոկոսների վճարումը |
| | | | օտարերկրյա ուղղակի ներդրումները |
| | | | ծառայությունների մատուցման դիմաց կատարվող վճարումները |

| | | | |
|---|---|---|---|
| | 225 | «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի համաձայն նշված պնդումներից ո՞րն է սխալ. | կարճաժամկետ վարկերի ժամկետայնությունը և փոքրածավալ գումարների չափը սահմանվում են ԿԲ նորմատիվ իրավական ակտերով՝ համաձայնեցնելով կառավարության լիազորված մարմնի հետ |
| | | | կապիտալի շարժի և ֆինանսական արժութային գործարքներ են համարվում ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև կատարվող այն գործարքները, որոնք չեն համարվում ընթացիկ արժութային գործարքներ |
| | | | եթե ֆիզիկական անձը չի ներկայացնում իր ոչ ռեզիդենտության անհրաժեշտ հիմնավորումները կամ փաստաթղթերը, ապա նա համարվում է ռեզիդենտ ֆիզիկական անձ |
| | | | մասնագիտացված անձինք են Կենտրոնական բանկի կողմից լիցենզիա ստացած բոլոր տնտեսվարող սուբյեկտները |
| | 226 | Ընտրել ճիշտ տարբերակը.<br>«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի համաձայն, որոնք են համարվում արժութային արժեք.<br>(ա) ՀՀ դրամը<br>(բ) օտարերկրյա արժույթը<br>(գ) թանկարժեք մետաղները<br>(դ) արտարժույթով արտահայտված վճարային արժեթղթերը | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա), (բ) և (գ) |
| | | | միայն (ա), (բ) և (դ) |
| | | | (ա), (բ), (գ) և (դ) |
| | 227 | Ընտրել ճիշտ տարբերակը.<br>«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության» մասին ՀՀ օրենքի համաձայն ՀՀ տարածքում ռեզիդենտներն իրավունք ունեն.<br>(ա) իրականացնել արտարժույթի առք ու վաճառք<br>(բ) սպառողական վարկերը տրամադրել նաև արտարժույթով<br>(գ) ՀՀ իրավաբանական անձանց կանոնադրական և բաժնեհավաք կապիտալում փողային ներդրումներն իրականացնել նաև արտարժույթով<br>(դ) ապրանքների իրացման փողային գնանշումը կատարել նաև արտարժույթով | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա) |
| | | | միայն (ա), (բ) և (գ) |
| | | | (ա), (բ), (գ) և (դ) |

| | | | |
|---|---|---|---|
| | 228 | Ընտրել ճիշտ տարբերակը.<br>Նշված գործառնություններից որո՞նք չեն կարող իրականացվել բանկերի կողմից.<br>(ա) մատուցել ֆինանսական խորհրդատվություն,<br>(բ) իրականացնել ապահովագրական գործունեություն,<br>(գ) մատուցել վճարահաշվարկային ծառայություններ | միայն (ա) |
| | | | միայն (բ) |
| | | | միայն (գ) |
| | | | (ա) և (բ) |
| | 229 | Ընտրել ճիշտ տարբերակը.<br>Նշված գործառնություններից ո՞րն է արգելված իրականացնել բանկերին<br>(ա) իրականացնել պարտքերի հավաքման հետ կապված գործողություններ<br>(բ) գնել, վաճառել, կառավարել բանկային ոսկի, ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ<br>(գ) իրականացնել առևտրային գործունեություն | (ա) և (բ) |
| | | | միայն (գ) |
| | | | միայն (ա) |
| | | | (բ) և (գ) |
| | 230 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | բանկը իր բաժնետոմսերը ձեռք բերելու դեպքում պարտավոր է դրանք իրացնել սեփականության իրավունքով ձեռք բերելու պահից 6 ամսյա ժամկետում |
| | | | բանկը իր բաժնետոմսերը ձեռք բերելու դեպքում պարտավոր է դրանք իրացնել սեփականության իրավունքով ձեռք բերելու պահից 3 ամսյա ժամկետում |
| | | | բանկը կարող է իր բաժնետոմսերը ձեռք բերել իր նկատմամբ նախկինում ծագած պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատճաճ կատարելու հետևանքով հնարավոր կորուստները կանխելու համար |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 231 | Բանկային գործունեության լիցենզիան կարող է ուժը կորցրած ճանաչվել այն դեպքում, եթե | բանկը չի կատարել իր հարկային պարտավորությունները |
| | | | բանկը լիցենզիա ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում բանկային գործունեություն չի իրականացրել |
| | | | բանկը ճանաչվել է անվճարունակ |
| | | | նշված երեք դեպքերում ԿԲ-ն կարող է բանկի լիցենզիան ուժը կորցրած ճանաչել |

| | | | |
|---|---|---|---|
| | 232 | Նշել ճիշտ տարբերակը:<br>Ստուգման ավարտից հետո ի՞նչ ժամկետում է իրականացվում բանկի ղեկավարների, վերստուգող խմբի անդամների և կենտրոնական բանկի կողմից ներկայացված ցուցակում ներառված բանկի մասնակիցների մասնակցությամբ ստուգման արդյունքների նախնական քննարկում | յոթօրյա ժամկետում |
| | | | երկշաբաթյա ժամկետում |
| | | | մեկ ամսվա ընթացքում |
| | | | մեկշաբաթյա ժամկետում |
| | 233 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասություններից չէ | բանկի կանոնդրության հաստատումը |
| | | | բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատումը |
| | | | բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձի հաստատումը |
| | | | բանկի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը |
| | 234 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, բանկի խորհրդի բացառիկ իրավասություններից է | տարեկան արդյունքներով շահաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը |
| | | | բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը |
| | | | բանկի կանոնադրության հաստատումը |
| | | | արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը |
| | 235 | Երաշխավորված ավանդ է համարվում | բանկի ղեկավարին պատկանող ավանդը |
| | | | բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձին պատկանող ավանդը |
| | | | բանկի թողարկած անվանական արժեթղթերով ներգրավված դրամական միջոցները |
| | | | այն դրամական միջոցները, որոնք տրամադրվել են բանկին այն օգտագործելու ռիսկն ավանդատուի կողմից ստանձնելու համաձայնությամբ |
| | 236 | Բանկի խորհրդի կազմում առանց ընտրության ընդգրկվելու իրավունք ունեն բանկի այն մասնակիցները, որոնք ընդհանուր ժողովին մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի | մինչև 5 տոկոսին |
| | | | 10 և ավելի տոկոսին |
| | | | մինչև 10 տոկոսին |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 237 | Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ<br>ա) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող բանկերի ռեեստրը վարում է Կենտրոնական դեպոզիտարիան<br>բ) փակ բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկերի մասնակիցների ռեեստրը վարում է Կենտրոնական բանկը<br>գ) բաց բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկերի մասնակիցների ռեեստրը վարում է Կենտրոնական բանկը | միայն ա) |
| | | | միայն բ) |
| | | | միայն գ) |
| | | | ա), բ) և գ) |
| | 238 | Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ | բանկի խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն |
| | | | բանկի խորհրդի նախագահն ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից |
| | | | բանկի խորհրդի անդամները և տվյալ բանկի գործադիր մարմնի անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք |
| | | | բանկի խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը չի կարող մեկ տարուց պակաս լինել |
| | 239 | Բանկի խորհրդի նիստերը գումարվում են | բանկի խորհրդի անդամի բանավոր պահանջով |
| | | | ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի բանավոր պահանջով |
| | | | արտաքին աուդիտն իրականացնող անձի գրավոր պահանջով |
| | | | բանկի խորհրդի նախագահի բանավոր պահանջով |
| | 240 | Բանկի խորհրդին պարբերաբար հաշվետվություններ են ներկայացնում | ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը |
| | | | գործադիր տնօրենը (տնօրինությունը) |
| | | | գլխավոր հաշվապահը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 241 | Բանկի գործադիր տնօրենը նշանակվում է | բանկի խորհրդի կողմից |
| | | | ընդհանուր ժողովի որոշմամբ |
| | | | բանկի տնօրինության կողմից |
| | | | բանկի խորհրդի նախագահի կողմից |
| | 242 | Բանկի տնօրինության կառուցվածքում պարտադիր ընդգրկվում են | բանկի գործադիր տնօրենը, նրա տեղակալը (տեղակալները), գլխավոր հաշվապահը |
| | | | բանկի գլխավոր հաշվապահը և նրա տեղակալը (տեղակալները) |
| | | | բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը |
| | | | բանկի վարկային և ավանդային ստորաբաժանումների ղեկավարները |
| | 243 | Բանկի գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները կարող են փոխանցվել | ընդհանուր ժողովին կամ բանկի խորհրդին |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բանկի գործադիր մարմնի անդամներին |
| | | | բանկի ներքին աուդիտի ստորաբաժանմանը |
| | | | նշված բոլոր պատասխանները սխալ են |
| | 244 | Բանկի ներքին աուդիտի անդամ կարող են լինել | բանկի կառավարման մարմնի անդամները |
| | | | բանկի կառուցվածքային այլ ստորաբաժանումների (օրինակ՝ վարկային վարչության) աշխատակիցները |
| | | | բանկի գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք |
| | | | նշված բոլոր պատասխանները սխալ են |
| | 245 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ բանկային գործունեություն է համարվում | ավանդ ընդունելը և ավանդ ընդունողի անունից և ռիսկով դրանք տեղաբաշխելը |
| | | | փոխառություններ ներգրավելը և և դրանք տեղաբաշխելը |
| | | | արտարժույթային գործառնությունների իրականացումը |
| | | | արժեթղթերով գործառնությունների իրականացումը |
| | 246 | Բանկի բաժնետերերին արգելվում է շահութաբաժիններ բաշխելը, եթե այդ պահին բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են | բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը |
| | | | գլխավոր պահուստի գումարը |
| | | | հիմնական միջոցների գումարը |
| | | | լրացուցիչ կապիտալի գումարը |
| | 247 | Բանկի հետ կապված անձինք են համարվում. | բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք |
| | | | բանկի ղեկավարները |
| | | | բանկի հետ փոխկապակցված անձինք |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 248 | Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է սխալ. | ներքին հսկողություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման մեջ կարող են նշանակվել նաև խորհրդի անդամները |
| | | | բանկի ներքին աուդիտի իրավասություններին վերաբերվող հարցերը չեն կարող փոխանցվել բանկի կառավարման մարմիններին կամ այլ անձանց լուծմանը |
| | | | բանկերում վերստուգիչ հանձնաժողով չի ստեղծվում |
| | | | ներքին հսկողություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանման մեջ չեն կարող նշանակվել բանկի գործադիր մարմնի հետ փոխկապակցված անձինք |

| | | | |
|---|---|---|---|
| | 249 | Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ: Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձին հաստատում է (են)՝ | բանկի մասնակիցների ընդհանուր ժողովը |
| | | | բանկի խորհուրդը |
| | | | բանկի գործադիր տնօրենը |
| | | | բանկի՝ քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) առնվազն 5 տոկոսի սեփականատեր մասնակիցները |
| | 250 | Ներքոհիշյալ պնդումներից ո՞րն է ճիշտ. | հավատարմագրային կառավարման օբյեկտ կարող է լինել ցանկացած գույք |
| | | | գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը հանգեցնում է հավատարմագրային կառավարչին դրա նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման |
| | | | հավատարմագրային կառավարիչը գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով կարող է լինել շահառու |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 251 | Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը | հանգեցնում է գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցմանը հավատարմագրային կառավարչին |
| | | | չի հանգեցնում գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցմանը հավատարմագրային կառավարչին |
| | | | հանգեցնում է գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցմանը հավատարմագրային կառավարչին, եթե պայմանագրով այլ բան սահմանված չէ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 252 | Որպես ֆինանսական գործակալ՝ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրեր կարող են կնքել | բանկերը |
| | | | ունիվերսալ վարկային կազմակերպությունները |
| | | | նման տեսակի գործունեության իրականացման թույլտվություն ունեցող առևտրային կազմակերպությունները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 253 | Լիզինգի պայմանագրով լիզինգի առարկայի նկատմամբ, որը ձեռք է բերվել լիզինգառուի կողմից որոշված վաճառողից, պատասխանատվությունը կրում է | լիզինգատուն |
| | | | լիզինգառուն |
| | | | և լիզինգատուն, և լիզինգառուն |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 254 | Նշված գրավի տեսակներից ո՞րի դեպքում է գրավի առարկան թողնվում գրավատուի մոտ՝ գրավառուի փականքի տակ կամ գրավի մասին վկայող նշաններով՝<br>(ա) կոշտ գրավ<br>(բ) շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավ<br>(գ) հիփոթեք | (ա) և (բ) |
| | | | միայն (բ) |
| | | | միայն (գ) |
| | | | միայն (ա) |
| | 255 | Ըստ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի մասնագիտացված անձինք են համարվում՝<br>(ա)  օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետությունում գործող մասնաճյուղերը,<br>(բ) վարկային կազմակերպությունները,<br>(գ) արտարժույթի առուվաճառքի սակարկություններ կազմակերպող անձինք | միայն (գ) |
| | | | միայն (ա) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | 256 | ՍՊԸ ընկերությյունների մասին ՀՀ օրենքի համաձայն նշված պնդումներից ո՞րն է ճիշտ | բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ստեղծվում է իր կանոնադրությամբ սահմանված ժամկետով |
| | | | բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ստեղծված է համարվում իր հիմնադիրների որոշման ընդունման պահից |
| | | | մեկ հիմնադիր ունեցող Բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հիմնադրման մասին պայմանագիր չի կնքվում |
| | | | բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը  չի կարող ունենալ մեկ մասնակից |
| | 257 | Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությյունների մասին ՀՀ օրենքի համաձայն նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Հիմնադիրների կողմից ընկերության  հիմնադրման հետ կապված հարցերով որոշումները պետք է ընդունվեն հիմնադիրների կողմից միաձայն |
| | | | Հիմնադիրների կողմից բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության  հիմնադրման հետ կապված հարցերով որոշումները պետք է ընդունվեն առնվազն կեսից ավելի մասնակցող հիմնադիրների կողմից |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիրները համապարտ պատասխանատվություն են կրում բանկի ստեղծման հետ կապված պարտավորությունների համար՝ բանկի պետական գրանցումից հետո |
| | | | Բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադրման մասին պայմանագրում փոփոխություններ չեն կատարվում |
| | 258 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիր փաստթուղթ է հանդիսանում նրա հիմնադիրների կողմից հաստատված կանոնադրությունը |
| | | | Բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիր փաստթղթերն են հանդիսանում նրա հիմնադիրների կողմից հաստատված կանոնադրությունը և հիմնադիր պայմանագիրը |
| | | | Բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների գրանցամատյանը վարում է ՀՀ կառավարությունը |
| | | | Բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների գրանցամատյանը վարում է ՀՀ կենտրոնական դեպոզիտարիան |
| | 259 | Նշել ճիշտ պատասխանը. | Բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ստեղծման և գործունեության վերակազմակերպման ու լուծարման առանձնահատկությունները սահմանվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքով |
| | | | Բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պատասխանատու է իր մասնակիցների պարտավորությունների համար |
| | | | բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ստեղծված է համարվում նրա պետական գրանցման պահից և այդ պահից կարող է իրականացնել բանկային գործունեություն |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները պատասխանատու են բանկի պարտավորությունների համար իրենց պատկանող ամբողջ գույքով |
| | 260 | Նշել սխալ պնդումը. | պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները ՍՊԸ մասնակից չեն կարող լինել |
| | | | ՍՊԸ մասնակից կարող են լինել Հայաստանի Հանրապետությունը և համայնքները |
| | | | սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող բանկերի մասնակիցների գրանցամատյանի վարման կարգը սահմանվում է Կենտրոնական բանկի կողմից |
| | | | ՍՊԸ բանկի մասնակիցների թիվը կարող է գերազանցել 49 |
| | 261 | Նշել ճիշտ պատասխանը. | ՍՊԸ բանկի կանոնադրական կապիտալում ներդրումները կարող են կատարվել ՀՀ դրամով, Կենտրոնական բանկի համաձայնությամբ նաև արժեթղթերով, այլ գույք կամ գույքային իրավունքներով |
| | | | ՍՊԸ բանկի փաստացի համալրված կանոնադրական կապիտալի նվազեցումը գործունեության ընթացքում չի թույլատրվում |
| | | | ՍՊԸ բանկի կանոնադրական կապիտալի նվազեցում թույլատրվում է միայն "Բանկերի եւ վարկային կազմակերպությունների սնանկության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքում |
| | | | ՍՊԸ բանկի կանոնադրական կապիտալի ավելացումը հնարավոր է միայն նրա՝ ամբողջությամբ վճարումից հետո |
| | 262 | Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի, նշել սխալ պատասխանը. | ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերը կարող են նրա կողմից փոխանցվել ընկերության գործադիր մարմնի որոշմանը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի |
| | | | ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել ընկերության խորհրդի որոշմանը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի |
| | | | գործադիր մարմնի ձևավորումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունն է |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 263 | Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի, ընկերության վերստուգիչ հանձնաժողովի գործառույթները, եթե դա նախատեսված է ընկերության կանոնադրությամբ, կարող է իրականացնել | գործադիր տնօրենը, որը գույքային շահերով կապված չէ ընկերության խորհրդի անդամների հետ |
| | | | հաշվապահը, որը գույքային շահերով կապված չէ ընկերության մասնակիցների հետ |
| | | | աուդիտորը, որը գույքային շահերով կապված չէ ընկերության գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող անձի հետ |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 264 | Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրում է | ընդհանուր ժողովը |
| | | | գործադիր մարմինը |
| | | | խորհրդի անդամը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 265 | ՍՊԸ ընկերության գործադիր մարմինը հաշվետու է | միայն ընդհանուր ժողովին |
| | | | ընդհանուր ժողովին և ընկերության խորհրդին |
| | | | միայն ընկերության խորհրդին |
| | | | ներքին աուդիտին |
| | 266 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի նշվածներից որն է համարվում բանկի խորհրդի բացառիկ իրավունք | ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը |
| | | | հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը |
| | | | բանկի կանոնադրության հաստատումը |
| | | | խորհրդի քանակական կազմի հաստատումը |
| | 267 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի խորհրդի նախագահին ընտրում է (են)՝ | գործադիր տնօրենը |
| | | | խորհրդի անդամները (խորհրդի անդամների կազմից) |
| | | | ներքին աուդիտի ղեկավարը |
| | | | ընդհանուր ժողովը |
| | 268 | Բաժնետիրական ընկերության վերակազմակերպման մասին որոշումն ընդունելուց հետո, ընկերությունը  պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցել իր բոլոր պարտատերերին | 60 օրվա ընթացքում |
| | | | պարտավոր չէ տեղեկացնել |
| | | | 30 օրվա ընթացքում |
| | | | նշված պատասխաններից ոչ մեկ ճիշտ չէ |
| | 269 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ռեեստրի վարումը և պահպանումը մասնագիտացված կազմակերպությանը հանձնած ընկերությունը | չի ազատվում այն վարելու և պահպանելու համար սահմանված պատասխանատվությունից |
| | | | ազատվում է այն վարելու և պահպանելու համար սահմանված պատասխանատվությունից |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ազատվում է այն վարելու պատասխանատվությունից, սակայն չի ազատվում այն պահպանելու համար սահմանված պատասխանատվությունից |
| | | | Նշված պատասխաններից ոչ մեկը ճիշտ չէ |
| | 270 | Բաժնետիրական ընկերության թողարկած արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը | չպետք է գերազանցի նրա կանոնադրական կապիտալի 25 տոկոսը |
| | | | չպետք է գերազանցի նրա կանոնադրական կապիտալի 15 տոկոսը |
| | | | չպետք է գերազանցի նրա կանոնադրական կապիտալի 20 տոկոսը |
| | | | չպետք է գերազանցի նրա կանոնադրական կապիտալի 30 տոկոսը |
| | 271 | Բաժնետիրական ընկերության դեպքում` եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են | մեկ բաժնետեր |
| | | | յուրաքանչյուրը բաժնետոմսի անվանական արժեքի 50%-ի սեփականատեր |
| | | | երկու կամ ավելի բաժնետերեր |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 272 | Բաժնետիրական ընկերության դեպքում` եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա | ընկերությունը կանոնադրական կապիտալը կարող է մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին |
| | | | ընկերությունը կանոնադրական կապիտալը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին |
| | | | Ընկերությունը կանոնադրական կապիտալը կարող է մեծացնել անշարժ գույքի վաճառքի հաշվին |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 273 | Բաժնետիրական ընկերության շահութաբաժինները վճարվում են | ընկերության զուտ շահույթից |
| | | | ընկերության շահույթից |
| | | | ընկերության եկամուտներից |
| | | | հիմնական կապիտալից |
| | 274 | Բաժնետիրական ընկերության Կանոնադրական կապիտալը կնվազի` | բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման դեպքում |
| | | | բաժնետոմսերի շուկայական արժեքի փոքրացման դեպքում |
| | | | չբաշխված շահույթի նվազման դեպքում |
| | | | ընկերության կողմից վնասներ կրելու դեպքում |
| | 275 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքվում է | ընկերության խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ |
| | | | գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ընկերության գործադիր տնօրենի որոշմամբ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 276 | Եթե բաժնետիրական ընկերության կողմից շահագրգռվածության առկայությամբ գործարքի կնքման ժամանակ խորհրդի բոլոր անդամները շահագրգիռ անձինք են ճանաչվել, ապա գործարքը կնքելու մասին որոշումը ընդունվում է. | գործարքում շահագրգռվածություն չունեցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ |
| | | | ընկերության ժողովի կողմից՝ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների մեծամասնությամբ |
| | | | խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ; |
| | | | ընկերության գործադիր տնօրենի որոշմամբ: |
| | 277 | Բաժնետիրական ընկերությունում ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի տարեկան շահութաբաժինների վճարման և շահութաբաժնի չափի մասին որոշումը ընդունում է | ընկերության խորհուրդը |
| | | | ընկերության գործադիր տնօրենը |
| | | | ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 278 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության համար պատասխանատու է. | տնօրենը (գլխավոր տնօրենը) |
| | | | գլխավոր հաշվապահը |
| | | | ներքին աուդիտի անդամը |
| | | | տնօրենը (գլխավոր տնօրենը) և գլխավոր հաշվապահը |
| | 279 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, խոշոր գործարք կնքելու մասին որոշումը ընդունում է. | խորհրդի կողմից միաձայն |
| | | | ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 2/3-ով |
| | | | ժողովի կողմից՝ դրան մասնակցող բաժնետերերի (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4-ով |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 280 | Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով բանկը պետք է ներգրավի օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի | երկու տարին մեկ անգամ |
| | | | եռամսյակը մեկ անգամ |
| | | | յուրաքանչյուր տարի |
| | | | երեք տարին մեկ անգամ |
| | 281 | Բանկի արտաքին աուդիտի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշում է | ընդհանուր ժողովը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բանկի վարչությունը |
| | | | գործադիր տնօրենը |
| | | | բանկի խորհուրդը |
| | 282 | Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն արտաքին աուդիտի կողմից կարող է իրականացվել նաև բանկի՝ | քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) առնվազն 5 տոկոսի սեփականատեր մասնակիցների պահանջով |
| | | | քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) առնվազն 1 տոկոսի սեփականատեր մասնակիցների պահանջով |
| | | | բանկի վարչության պահանջով |
| | | | բանկի ներքին աուդիտի պահանջով |
| | 283 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի Կենտրոնական բանկը | իրավունք չունի պահանջելու բանկից, որպեսզի նա փոխի արտաքին աուդիտն իրականացնող անձին և նշանակի այլ արտաքին աուդիտ իրականացնող անձ |
| | | | իրավունք ունի պահանջելու բանկից, որպեսզի նա փոխի արտաքին աուդիտն իրականացնող անձին և նշանակի այլ արտաքին աուդիտ իրականացնող անձ |
| | | | չի կարող պարտադրել բանկին չորս ամսվա ընթացքում հրավիրել արտաքին աուդիտ և հրապարակել նրա եզրակացությունը |
| | | | իրավունք չունի բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձից պահանջել բանկի աուդիտային ստուգման վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող փաստաթղթերը |
| | 284 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի Կենտրոնական բանկի պահանջով | արտաքին աուդիտը պարտավոր է ներկայացնել բանկի աուդիտային ստուգման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, անգամ եթե դրանք առևտրային, բանկային կամ այլ գաղտնիք կազմեն |
| | | | արտաքին աուդիտը պարտավոր չէ Կենտրոնական բանկ ներկայացնել բանկի աուդիտային ստուգման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, եթե դրանք կազմում են առևտրային, բանկային կամ այլ գաղտնիք |
| | | | արտաքին աուդիտը պարտավոր չէ Կենտրոնական բանկ ներկայացնել բանկի աուդիտային ստուգման վերաբերյալ որևէ փաստաթուղթ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | արտաքին աուդիտը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել բանկի աուդիտային ստուգման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր, բացառությամբ առևտրային, բանկային կամ այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի |
| | 285 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի. Բանկերը չեն կարող իրականացնել՝ | ներդրումային գործունեություն |
| | | | Ֆինանսական վարձակալության գործունեություն |
| | | | առևտրային գործունեություն |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 286 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի. ՀՀ տարածքում գործող բանկերը դրանց մասնաճյուղերը, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը կարող են՝ | ընդունել ավանդներ, տրամադրել վարկեր, բացել և վարել հաշիվներ, մատուցել ֆինանսական խորհրդատվութույուն |
| | | | չեն կարող ընդունել ավանդներ, տրամադրել վարկեր, բացել և վարել հաշիվներ, կառավարել այլ անձանց գույքը |
| | | | ընդունել ավանդներ, տրամադրել վարկեր, ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, իրականացնել ապահովագրական գործունեություն |
| | | | ընդունել ավանդներ, տրամադրել վարկեր, իրականացնել ֆինանսական վարձակալություն և արտադրական գործունեություն |
| | 287 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի. ՀՀ տարածքում գործող բանկերը, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը չեն կարող իրականացնել՝ | ֆակտորինգային գործունեություն |
| | | | ֆինանսական լիզինգ |
| | | | պարտքերի հավաքման հետ կապված գործունեություն |
| | | | պետական պատատոմսերի թողարկում |
| | 288 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի. ՀՀ ԿԲ-ն կարող է թույլատրել բանկերին իրականացնելու սույն օրենքով ուղղակիորեն չնախատեսված գործունեություն կամ գործառնություններ | եթե դրանք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության հետ |
| | | | եթե դրանք չեն վտանգում բանկի ավանդատուների շահերը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | եթե դրանք չեն վտանգում բանկի վարկատուների շահերը |
| | 289 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, Բանկը պարբերական երաշխիքային վճարը կատարում է | յուրաքանչյուր ամիս |
| | | | եռամսյակը մեկ անգամ |
| | | | յուրաքանչյուր ավանդի ներգրավման դեպքում |
| | | | կիսամյակը մեկ անգամ |

| | | | |
|---|---|---|---|
| | 290 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, նոր ստեղծվող բանկերը միանվագ երաշխիքային վճարները պետք է վճարեն բանկային գործունեության լիցենզիան ստանալու պահից | մեկ ամսվա ընթացքում |
| | | | երեք ամսվա ընթացքում |
| | | | տասնօրյա ժամկետում |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 291 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, բանկերը լրացուցիչ երաշխիքային վճարը կատարում են, եթե | «Բանկերի և վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն որևէ բանկ համարվել է անվճարունակ |
| | | | Հիմնադրամի ծախսերը գերազանցում են եկամուտներին |
| | | | Հիմնադրամի միջոցները, բացառությամբ վարկերի, փոխառությունների, երաշխիքների, դրամաշնորհների, նվիրատվությունների և նվիրաբերությունների, բավարար չեն սահմանված կարգով և չափով երաշխավորված ավանդների հատուցումն իրականացնելու համար |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 292 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, երաշխավորված ավանդ է համարվում այն ավանդը | որը պատկանում է տվյալ բանկի գլխավոր հաշվապահին |
| | | | որը պատկանում է տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձին, |
| | | | որի սեփականատերը (համասեփականատերը) հրաժարվել է իր մասի նկատմամբ սեփականության իրավունքից |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 293 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, երաշխավորված ավանդ չի համարվում այն ավանդը, որը | պատկանում է օտարերկրյա քաղաքացուն |
| | | | պատկանում է տվյալ բանկում ոչ նշանակալից մասնակցություն ունեցող անձին |
| | | | պատկանում է տվյալ բանկի վարչության անդամին |
| | | | երեքն էլ երաշխավորված ավանդ չեն համարվում |
| | 294 | Նշել ճիշտ պատասխանը:<br>Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, երաշխավորված ավանդի չափերն են. | եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է |
| | | | եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է |

| | | | |
|---|---|---|---|
| | | | եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը հինգ միլիոն հայկական դրամ է |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 295 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ. | ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ |
| | | | երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է որպես յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ |
| | | | ավանդների հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը |
| | | | ավանդների հատուցման երաշխավորողն է ՀՀ կենտրոնական բանկը |
| | 296 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի ո՞րը չի համարվում բանկային ավանդ | բանկի թողարկած անվանական արժեթղթերով ներգրավված դրամական միջոցները |
| | | | ավանդատուի բանկում բացված ժամկետային հաշվի վրա գտնվող դրամական միջոցները |
| | | | ավանդատուի բանկում բացված ժամկետային հաշվի վրա գտնվող դրամական միջոցների դիմաց հաշվեգրված տոկոսները |
| | | | դրամական միջոցները, որոնք տրամադրվել են բանկին այն օգտագործելու ռիսկն ավանդատուի կողմից ստանձնելու համաձայնությամբ |
| | 297 | Համաձայն «Բանկերի,վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի,  անվճարունակության հիմքերից որևէ մեկը բացահայտելու դեպքում Կենտրոնական բանկը երկշաբաթյա ժամկետում կարող է | բանկում նշանակել ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավար |
| | | | բանկին սնանկ ճանաչել |
| | | | բանկում նշանակել լուծարային կառավարիչ |
| | | | բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | 298 | Համաձայն «Բանկերի,վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, բանկը համարվում է անվճարունակ, եթե՝ | սպառել է իր  կապիտալի 50 տոկոսը կամ ավելին |
| | | | սպառել է իր ընդհանուր կապիտալի 50 տոկոսը կամ ավելին |
| | | | սպառել է իր հիմնական կապիտալի 50 տոկոսը կամ ավելին |
| | | | սպառել է իր լրացուցիչ կապիտալը |

| | | | |
|---|---|---|---|
| | 299 | Համաձայն «Բանկերի,վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, բանկը համարվում է անվճարունակ, եթե՝ | պարբերաբար խախտում է օրենքով սահմանված իրացվելիության նորմատիվը, |
| | | | պարբերաբար աշխատում է վնասով, |
| | | | պարբերաբար խախտում է օրենքով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվը |
| | | | խախտել է օրենքով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվը |
| | 300 | Համաձայն «Բանկերի,վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, բանկը համարվում է անվճարունակ, եթե՝ | պարբերաբար չի կատարում ավանդների հատուցումն երաշխավորող հիմնադրամին երաշխիքային վճարները |
| | | | բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է ՀՀ-ում գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի միջինից |
| | | | ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները |
| | | | բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | 301 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի՝ նշվածներից ո՞րը չի համարվում ռեզիդենտ | միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունները |
| | | | միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունների աշխատակիցները |
| | | | օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունների ՀՀ տարածքում գտնվող մասնաճյուղերը |
| | | | ՀՀ պետական գրանցում ստացած, հաշվառված կազմակերպությունների ՀՀ սահմանից դուրս գտնվող մասնաճյուղերը |
| | 302 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի՝ կարճաժամկետ վարկերի ժամկետայնությունը և փոքրածավալ գումարների չափը սահմանվում են | ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով |
| | | | ՀՀ կառավարության լիազորված մարմնի նորմատիվ իրավական ակտերով |
| | | | ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով՝ համաձայնեցնելով ՀՀ կառավարության լիազորված մարմնի հետ |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 303 | Նշված պնդումներից ո՞րն է սխալ:<br>Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի՝ լիցենզավորված անձանց կողմից արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների և դրանց հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի պահանջները խախտելու դեպքում ՀՀ կենտրոնական բանկը կարող է | առաջին անգամ խախտում թույլ տալու դեպքում տալ նախազգուշացում՝ խախտումը վերացնելու կամ ապագայում նման խախտում թույլ չտալու հանձնարարականով, |
| | | | մեկ տարվա ընթացքում երկրորդ անգամ խախտելու դեպքում մինչև մեկ տարի ժամկետով կասեցնել գործունեության լիցենզիան |
| | | | երեք կամ ավելի անգամ խախտելու համար նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով |
| | | | մեկ տարվա ընթացքում երկրորդ անգամ խախտելու դեպքում նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով |
| | 304 | Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերին տրամադրվող վարկերը պետք է ապահովված լինեն | պետական արժեթղթերով |
| | | | ոչ ավելի, քան ինը ամիս մարման ժամկետ ունեցող հուսալի չեկերով եւ մուրհակներով |
| | | | ոսկուց և այլ թանկարժեք մետաղներից պատրաստված մետաղադրամներով և ստանդարտացված ձուլակտորներով |
| | | | բոլոր պնդումները ճիշտ են |
| | 305 | Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի՝ վերստուգվող անձը, նրա գործադիր մարմինը կամ նրա ղեկավարը, ինչպես նաև նշանակալից մասնակցություն ունեցող մասնակիցն իրավունք ունեն հաշվետվությանը կից ներկայացնել իրենց գրավոր առարկություններն ու բացատրությունները | մեկ շաբաթվա ընթացքում |
| | | | տասնօրյա ժամկետում |
| | | | երկշաբաթյա ժամկետում |
| | | | մեկամսյա ժամկետում |
| | 306 | ՀՀ կենտրոնական բանկի և խախտումներ թույլ տված բանկի միջև բանկի ֆինանսական վիճակի բարելավման և բնականոն գործունեության ապահովման նպատակով կարող է կնքվել պայմանագիր (եթե առկա չեն "Բանկերի եւ վարկային կազմակերպությունների սնանկության մասին" ՀՀ օրենքով սահմանված անվճարունակության հիմքերը կամ դրանցից մեկը), որով կարող են նախատեսվել | խախտման վերացմանն ուղղված միջոցառումների ձեռնարկում |
| | | | շահաբաժինների վճարման կասեցում |
| | | | ավելի խիստ հիմնական տնտեսական նորմատիվների սահմանում |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 307 | Նշված պնդումներից ո՞րն է սխալ:<br>Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահն իր որոշմամբ կարճում է վարույթը, եթե | խախտման համար օրենքով պատասխանատվություն նախատեսված չէ |
| | | | արձանագրված փաստը խախտում չէ |
| | | | մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին ՀՀ կենտրոնական բանկի նախագահի որոշման ստորագրումը վերստուգվող անձը կամ դրա ղեկավարը կամովին վերացրել է խախտումը |
| | | | բանկը սնանկ է ճանաչվել |
| | 308 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ նշվածներից ո՞րն է համարվում գրավի տեսակ<br>ա) իրավունքի գրավ<br>բ) շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավ<br>գ)կոշտ գրավ | միայն «ա» |
| | | | միայն «ա» և «բ» |
| | | | միայն «ա» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | 309 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ նշված պնդումներից ո՞րն է սխալ | անշարժ գույքի ֆինանսական վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման |
| | | | անշարժ գույքի ֆինանսական վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման |
| | | | ֆինանսական վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով |
| | | | ֆինանսական վարձակալության պայմանագրի առարկա կարող է լինել ցանկացած սպառվող գույք |
| | 310 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ նշված պնդումներից ո՞րն է սխալ | վարկային պայմանագրով վարկատուն պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ տրամադրել փոխառուին |
| | | | փոխառության պայմանագրով փոխատուն պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ տրամադրել փոխառուին |
| | | | վարկային պայմանագրով փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից |

| | | | |
|---|---|---|---|
| | | | փոխատուն իրավունք ունի փոխառության գումարից տոկոսներ ստանալ փոխառուից, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով |
| | 311 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման պայմանագրեր չեն կարող կնքել | բանկերը |
| | | | այլ վարկային կազմակերպությունները |
| | | | նման տեսակի գործունեության իրականացման թույլտվություն (լիցենզիա) ունեցող այլ առևտրային կազմակերպությունները |
| | | | ցանկացած անձինք |
| | 312 | Բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրությամբ սահմանում է | բանկի գտնվելու վայրը |
| | | | մասնակիցների իրավունքները և պարտականությունները |
| | | | ընկերության կանոնադրական կապիտալի չափը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 313 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցն իրավունք ունի ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ ձևով օտարել տվյալ ընկերության միայն մեկ մասնակցի |
| | | | բանկ հանդիսացող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցն իրավունք ունի ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ ձևով օտարել տվյալ ընկերության  մեկ կամ մի քանի մասնակիցների |
| | | | ընկերության մասնակցի կողմից իր բաժնեմասը (դրա մասը) երրորդ անձանց օտարել թույլատրվում է, եթե այլ բան նախատեսված չէ ընկերության կանոնադրությամբ |
| | | | բոլոր պնդումները սխալ են |
| | 314 | Բանկում իրականացված ստուգման արդյունքում արձանագրվել է, որ բանկը խախտել է մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը, ինչի համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկին տրվել է նախազգուշացում՝ մեկամսյա ժամկետում խախտումը վերացնելու հանձնարարականով: Մեկամսյա ընթացքում բանկի կողմից խախտումը չվերացնելու դեպքում | Կենտրոնական բանկը կարող է բանկի համապատասխան ղեկավարի նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի հազարապատիկը չգերազանցող գումարի չափով |
| | | | Կենտրոնական բանկը կարող է բանկի համապատասխան ղեկավարին զրկել որակավորման վկայականից |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Կենտրոնական բանկը կարող է ուժը կորցրած ճանաչել բանկի լիցենզիան |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 315 | Բանկը որոշել է վաճառել վերջինիս սեփականությունը հանդիսացող անշարժ գույքը, որի հաշվեկշռային մնացորդը կազմում է 52.5 մլն դրամ, այն դեպքում, երբ բանկի ընդհանուր ակտիվները կազմում են 108.0 մլն դրամ: Բանկի գույքի վաճառքի վերաբերյալ որոշումը կայացվել է բանկի խորհրդի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ և գործարքը կատարվել է: Նշված դեպքում | գործարքի արդյունքում բանկը չի խախտել ՀՀ օրենսդրության պահանջները |
| | | | գործարքի որոշումը պետք է կայացվեր բանկի խորհրդի կողմից միաձայն |
| | | | գործարքի որոշումը պետք է կայացվեր բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի (մասնակիցների) ձայների 3/4-ով: |
| | | | նշված գործարքը վավեր է |
| | 316 | Բանկի կանոնադրական հիմնադրամի, գլխավոր պահուստի և չբաշխված շահույթի հանրագումարը կազմում է 6.0 մլրդ դրամ: Բանկի լրացուցիչ կապիտալի մեծությունը կազմում է 4.0 մլրդ դրամ: Ո՞ր դեպքում «Ա» կազմակերպության կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելիս բանկը պետք է ստանա ՀՀ ԿԲ-ի նախնական համաձայնությունը, եթե «Ա» կամակերպության կանոնադրական հիմնադրամի մեծությունը կազմում է 3.500.000.000 դրամ | 175.000.000 դրամ |
| | | | 100.000.000 դրամ |
| | | | 116.000.000 դրամ |
| | | | 115.000.000 դրամ |
| | 317 | Բանկի կանոնադրական հիմնադրամի, գլխավոր պահուստի և չբաշխված շահույթի հանրագումարը կազմում է 6.0 մլրդ դրամ: Բանկի լրացուցիչ կապիտալի մեծությունը կազմում է 4.0 մլրդ դրամ: Բանկն այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցություն չունի: Նշված պայմանների դեպքում, երբ բանկը պետք է ստանա ՀՀ ԿԲ-ի նախնական համաձայնությունը «Ա» և «Բ» կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամներում մասնակցություն ձեռք բերելիս | 2.650.000.000 դրամ |
| | | | 2.800.000.000 դրամ |
| | | | 2.720.000.000 դրամ |
| | | | 2.250.000.000 դրամ |
| | 318 | Բանկի կանոնադրական հիմնադրամի, գլխավոր պահուստի և չբաշխված շահույթի հանրագումարը կազմում է 6.0 մլրդ դրամ: Բանկի լրացուցիչ կապիտալի մեծությունը կազմում է 4.0 մլրդ դրամ: Որ դեպքում բանկը «Ա» կազմակերպության կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելիս պետք է ստանա ՀՀ ԿԲ-ի նախնական համաձայնությունը | 1.200.000.000 դրամ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | 1.100.000.000 դրամ |
| | | | 1.000.000.000 դրամ |
| | | | 1.070.000.000 դրամ |
| | 319 | Բանկի կանոնադրական հիմնադրամի, գլխավոր պահուստի և չբաշխված շահույթի հանրագումարը կազմում է 3.0 մլրդ դրամ: Բանկի լրացուցիչ կապիտալի մեծությունը կազմում է 2.0 մլրդ դրամ: Բանկի ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմում է 7.0 մլրդ դրամ: Այլ հավասար պայմանների դեպքում, ո՞ր դեպքում բանկը հիմնական միջոց ձեռք բերելու մասին որոշումը պետք է ընդունվի բանկի խորհրդի կողմից, եթե ձեռք բերվող գույքի արժեքը կազմում է | 1.790.000.000 դրամ |
| | | | 1.580.000.000 դրամ |
| | | | 1.120.000.000 դրամ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 320 | Բանկի կանոնադրական հիմնադրամի, գլխավոր պահուստի և չբաշխված շահույթի հանրագումարը կազմում է 3.0 մլրդ դրամ: Բանկի լրացուցիչ կապիտալի մեծությունը կազմում է 2.0 մլրդ դրամ: Բանկի ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմում է 7.0 մլրդ դրամ: Այլ հավասար պայմանների դեպքում, ո՞ր դեպքում բանկը հիմնական միջոց ձեռք բերելու մասին որոշումը պետք է ընդունվի ընդհանուր ժողովի կողմից` ձայների 3/4-ով, եթե ձեռք բերվող գույքի արժեքը կազմում է | ճիշտ պատասխան նշված չէ |
| | | | 1.450.000.000 դրամ |
| | | | 1.500.000 000 դրամ |
| | | | 2.190.000.000 դրամ |
| | 321 | Նշվածներից ո՞րը չի  համարվում բանկի անվճարունակության հիմք | ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները |
| | | | բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի չափից |
| | | | պարբերաբար խախտում է օրենքով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվը |
| | | | պարբերաբար խախտում է օրենքով սահմանված իրացվելիության  նորմատիվները |
| | 322 | Բանկի սնանկությունը | Կենտրոնական բանկի դիմումի հիման վրա դատարանի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է |
| | | | Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է |
| | | | Լուծարային կառավարիչի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 323 | Բանկի աուդիտն իրականացնող կազմակերպությունը, օրենքով սահմանված՝բանկի անվճարունակության հիմքերից որեւէ մեկի հայտնաբերման դեպքում | պարտավոր է օրենսդրությամբ սահմանված կարգով Կենտրոնական բանկին անմիջապես տեղեկացնել դրա մասին՝ կցելով բոլոր փաստաթղթերը |
| | | | կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով Կենտրոնական բանկին անմիջապես տեղեկացնել դրա մասին՝ կցելով բոլոր փաստաթղթերը |
| | | | պարտավոր է օրենսդրությամբ սահմանված կարգով անմիջապես դիմել դատարան՝ կցելով բոլոր փաստաթղթերը |
| | | | կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով անմիջապես դիմել դատարան՝ կցելով բոլոր փաստաթղթերը |
| | 324 | Բանկի սնանկության մասին դիմումով դատարան կարող է դիմել | ադմինիստրացիայի ղեկավարը |
| | | | բանկի պարտատերերը |
| | | | Կենտրոնական բանկը |
| | | | բանկի աուդիտն իրականացրած կազմակերպությունը |
| | 325 | Բանկի սնանկության մասին դիմումով Կենտրոնական բանկը դատարան է դիմում, եթե բանկը | ի վիճակի չէ բավարարել իր պարտատերերի օրինական պահանջները |
| | | | բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր է Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի չափից |
| | | | ադմինիստրացիայի գործունեության ընթացքում Կենտրոնական բանկին ակնհայտ է դառնում, որ բանկը լուծարելու դեպքում հնարավոր է պահպանել բանկի միջոցների առավել մեծ քանակ, քան ադմինիստրացիայի գործունեությունը շարունակելիս, կամ չի հաջողվում վերականգնել բանկի կայուն վճարունակությունը: |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 326 | Բանկի նկատմամբ սնանկության վարույթի նախաձեռնության իրավունքը | կենտրոնական բանկի նախագահինն է |
| | | | բանկի պարտատերերինն է |
| | | | կենտրոնական բանկի խորհրդինն է |
| | | | ՀՀ կառավարությանն է |
| | 327 | Կենտրոնական բանկի՝ բանկի սնանկության մասին դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո դատարանը քննում է գործը | եռօրյա ժամկետում |
| | | | հնգօրյա ժամկետում |
| | | | մեկ ամսյա ժամկետում |
| | | | ճիշտ տարբերակը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 328 | Բանկին պարտադիր ցուցում տալու կամ նրա գործողություններն այլ ձեւերով կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցների (բաժնետերերի, փայատերերի) ուղղակի կամ անուղղակի գործողությունների հետեւանքով բանկի սնանկության դեպքում այդ անձինք բանկի պարտավորությունների համար կրում են | համապարտ պատասխանատվություն |
| | | | սուբսիդիար պատասխանատվություն |
| | | | ֆիդուցիար պատասխանատվություն |
| | | | պատասխանատվություն չեն կրում |
| | 329 | Կենտրոնական բանկի նպատակ չի հանդիսանում | գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը |
| | | | շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձեւավորումը ու պահպանումը |
| | | | դրամաշրջանառության կազմակերպումը եւ կարգավորումը |
| | | | հարկաբյուջետային քաղաքականության մշակումը |
| | 330 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Կենտրոնական բանկը չի կարող առաջնային տեղաբաշխման ընթացքում իր հաշվին ձեռքբերել Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր |
| | | | Կենտրոնական բանկը կարող է առաջնային տեղաբաշխման ընթացքում իր հաշվին ձեռքբերել Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր |
| | | | Կենտրոնական բանկը չի կարող երկրորդային տեղաբաշխման ընթացքում իր հաշվին ձեռքբերել Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր |
| | | | Ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 331 | Կենտրոնական բանկը չի լիցենզավորում | բանկային գործունեությունը |
| | | | ապահովագրական գործունեությունը |
| | | | գրավատնային գործունեությունը |
| | | | աուդիտորական գործունեությունը |
| | 332 | Վերստուգվող անձանց մոտ ստուգումներն անցկացվում են<br>ա) Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ,<br>բ ) Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ,<br>գ) վերահսկող ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ | Ճիշտ է միայն ա) պնդումը |
| | | | Ճիշտ է միայն բ) պնդումը |
| | | | Ճիշտ է միայն գ) պնդումը |
| | | | Ճիշտ են ա) և բ) պնդումները |
| | 333 | Կենտրոնական բանկը վերստուգվող անձանց եւ դրանց ղեկավարների նկատմամբ կարող է կիրառել | օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ |
| | | | Կառավարության որոշմամբ նախատեսված պատասխանատվության միջոցներ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Կենտրոնական բանկի կողմից ընդունված իրավական ակտերով նախատեսված պատասխանատվության միջոցներ |
| | | | Ազգային ժողովի որոշմամբ նախատեսված պատասխանատվության միջոցներ |
| | 334 | Համաձայն Կենտրոնական բանկի մասին ՀՀ օրենքի՝ վերստուգվող անձի կամ դրա ղեկավարի նկատմամբ պատասխանատվության միջոցի կիրառման վարույթը սկսվում է | խախտումը արձանագրելու պահից |
| | | | խախտումը կատարելու պահից |
| | | | խախտումը հայտնաբերելու պահից |
| | | | որոշման կայացման պահից |
| | 335 | Ֆինանսական վիճակի բարելավման և բնականոն գործունեության ապահովման նպատակով պայմանագիր կարող է կնքվել | Կենտրոնական բանկի եւ խախտումներ թույլ տված գրավատան միջև |
| | | | Կենտրոնական բանկի եւ խախտումներ թույլ տված արտարժույթի փոխանակման կետի միջև |
| | | | Կենտրոնական բանկի եւ խախտումներ թույլ տված բանկի միջև |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 336 | Կենտրոնական բանկը հայտնաբերված խախտման համար կարող է վերստուգվող անձի կամ դրա ղեկավարի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառել խախտման արձանագրման պահից | 1 տարվա ընթացքում |
| | | | 6 ամսվա ընթացքում |
| | | | 2 տարվա ընթացքում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 337 | Իր նպատակներն իրագործելու համար Կենտրոնական բանկն իրականացնում է. | կառավարության բանկային սպասարկումը |
| | | | հանդիսանում է կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն |
| | | | տիրապետում, օգտագործում և տնօրինում է ՀՀ միջազգային պահուստները |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 338 | Ստուգումներն անցկացվում են | վերստուգող ստորաբաժանման ղեկավարի տված լիազորագրով |
| | | | Կենտրոնական բանկի խորհրդի տված լիազորագրով |
| | | | Կենտրոնական բանկի նախագահի տված լիազորագրով |
| | | | ճիշտ տարբերակը նշված չէ |
| | 339 | ՍՊԸ-ի գտնվելու վայրն է | հիմնադրի (հիմնադիրների) գտնվելու վայրը |
| | | | մասնակցի (մասնակիցների) գտնվելու վայրը |
| | | | գործադիր մարմնի գտնվելու վայրը |
| | | | գլխավոր հաշվապահի գտնվելու վայրը |
| | 340 | ՍՊԸ-ն իր մասնակիցների պարտավորությունների համար | պատասխանատվություն չի կրում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | պատասխանատվություն է կրում հիմնադիր պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով |
| | | | պատասխանատվություն է կրում կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով |
| | | | սուբսիդիար պատասխանատվություն է կրում |
| | 341 | Նշված պնդումներից որ՞ն են ճիշտ. | ՍՊԸ-ի մասնակիցը իրավունք չունի դուրս գալ ընկերությունից |
| | | | ՍՊԸ-ի մասնակիցը իրավունք ունի դուրս գալ ընկերությունից մասնակցություն ձեռք բերելուց առնվազն երկու տարի հետո |
| | | | իրավունք ունի ցանկացած պահի դուրս գալ ընկերությունից՝ անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից |
| | | | իրավունք ունի դուրս գալ ընկերությունից՝ մյուս մասնակիցների համաձայնության առկայության դեպքում |
| | 342 | ՍՊԸ-ի մասնակիցն իր բաժնեմասը | գրավ դնել չի կարող |
| | | | կարող է գրավ դնել, եթե դա արգելված չէ կանոնադրությամբ |
| | | | կարող է գրավ դնել միայն ՍՊԸ-ի այլ մասնակիցներին |
| | | | կարող է գրավ դնել միայն երրորդ անձանց |
| | 343 | Շահույթի բաշխումը ՍՊԸ-ի մասնակիցների միջև կարող է իրականացվել | տարին մեկ անգամ՝ ընդհանուր ժողովի որոշմամբ |
| | | | ցանկացած ժամանակ՝ ընդհանուր ժողովի որոշմամբ |
| | | | յուրաքանչյուր եռամսյակ՝ ընդհանուր ժողովի որոշմամբ |
| | | | գործադիր տնօրենի որոշմամբ՝ կանոնադրությամբ նախատեսված դեպքերում |
| | 344 | ՍՊԸ-ի շահույթն ընկերության մասնակիցների միջև բաշխելու մասին որոշումն ընդունում է | ընդհանուր ժողովը |
| | | | ընդհանուր ժողովը կամ խորհուրդը, եթե վերջինիս նման լիազորություն վերապահված է կանոնադրությամբ |
| | | | խորհուրդը |
| | | | գործադիր մարմինը |
| | 345 | ՍՊԸ-ի վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) ընտրվում է | խորհրդի կողմից |
| | | | գործադիր մարմնի կողմից |
| | | | ընդհանուր ժողովի կողմից |
| | | | ընդհանուր ժողովի կողմից, եթե այդ լիազորությունը կանոնադրությամբ չի վերապահվել խորհրդին |

| | | | |
|---|---|---|---|
| | 346 | ՍՊԸ-ն կարող է վերակազմավորվել | լիակատար ընկերակցության |
| | | | բաժնետիրական ընկերության |
| | | | արտադրական կոոպերատիվի |
| | | | նշված բոլոր տարբերակները ճիշտ են |
| | 347 | «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքը կարգավորվում է ՀՀ տարածքում գործող բանկերում հետևյալ անձանց պատկանող բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու հետ կապված հարաբերությունները | միայն իրավաբանական անձանց |
| | | | իրավաբանական և ֆիզիկական անձանց, այդ թվում` անհատ ձեռնարկատերերի |
| | | | ֆիզիկական անձանց, այդ թվում` անհատ ձեռնարկատերերի |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 348 | Օրենքի իմաստով երաշխավորված ավանդ չի համարվում այն բանկային ավանդը,<br>ա) որը պատկանում է տվյալ բանկի ղեկավարին և/կամ նրա ընտանիքի անդամներին,<br>բ) որը պատկանում է տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձին և/կամ նրա ընտանիքի անդամներին,<br>գ) որի սեփականատերը (սեփականատերը) հրաժարվել է իր մասի նկատմամբ սեփականության իրավունքից | ճիշտ է միայն ա) պնդումը |
| | | | ճիշտ է միայն բ) պնդումը |
| | | | ճիշտ է միայն ա) և բ) պնդումները |
| | | | ճիշտ են և ա) և բ) և գ) պնդումները |
| | 349 | Երաշխավորված ավանդի չափերն են | դրամային ավանդը 10 մլն. ՀՀ դրամ |
| | | | արտարժութային ավանդը 5 մլն. ՀՀ դրամ |
| | | | դրամային ավանդը 16 մլն. ՀՀ դրամի չափով, և արտարժութային ավանդը 7 մլն. ՀՀ դրամի չափով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 350 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի` ավանդների հատուցման երաշխավորողն է | Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը |
| | | | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը |
| | | | բոլոր տարբերակները ճիշտ են |
| | 351 | Ո՞ր բանկերն են կատարում երաշխիքային վճարներ | ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերը |
| | | | ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերը, բացառությամբ անվճարունակ բանկերի |
| | | | ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերը, բացառությամբ իրացվելիության նորմատիվը պարբերաբար խախտած բանկերի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերը, բացառությամբ ԿԲ կողմից սահմանված որոշակի չափի կանոնադրական կապիտալ ունեցող բանկերի |
| | 352 | Երաշխիքային վճարները լինում են՝<br>ա) պարբերական,<br>բ) միանվագ,<br>գ) լրացուցիչ | ճիշտ է միայն ա) պնդումը |
| | | | ճիշտ է միայն բ) պնդումը |
| | | | ճիշտ են և ա), և բ) պնդումները |
| | | | ճիշտ են և ա), և բ), և գ) պնդումները |
| | 353 | Ո՞վ է հանդիսանում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հիմնադիրը | ՀՀ կենտրոնական բանկը |
| | | | Հայաստանի Հանրապետությունը |
| | | | ՀՀ տարածքում գործող բոլոր բանկերը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | 354 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի՝ բանկերի կողմից նշված օրենքի պահանջների պահպանելու նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է | ՀՀ կենտրոնական բանկը |
| | | | Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը |
| | | | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը |
| | | | բոլոր տարբերակները ճիշտ են |
| | 355 | Երաշխավորված ավանդների հատուցումն իրականացնում է | ՀՀ կենտրոնական բանկը |
| | | | Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը |
| | | | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը |
| | | | բոլոր տարբերակները ճիշտ են |
| | 356 | Բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն է համարվում | վարկային կազմակերպության կողմից նրա հաճախորդին կանխիկ տրամադրած վարկի մասին տեղեկությունը |
| | | | գրավատնային կազմակերպության կողմից նրա հաճախորդին կանխիկ տրամադրած վարկի մասին տեղեկությունը |
| | | | սնանկ ճանաչված բանկի պարտատերին հասանելիք գումարի չափի մասին տեղեկատվությունը |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 357 | «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն երրորդ անձ չեն համարվում | դատարանները |
| | | | հարկային մարմինները |

| | | | |
|---|---|---|---|
| | | | վարկային կազմակերպությունները |
| | | | քրեական հետապնդում հարուցող մարմիները |
| | 358 | Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանման երաշխավորն է | ՀՀ կառավարությունը |
| | | | բանկը |
| | | | դատարանը |
| | | | քրեական հետապնդում հարուցող մարմիները |
| | | | կանխիկի հետ կապված գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 5 միլիոն դրամը |
| | | | անկանխիկ գործարքներ, որոնց գումարը հավասար է կամ գերազանցում է 5 մլն դրամը, |
| | | | սխալ պատասխանը նշված չէ |
| | 480 | Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, հաշվետվություն տրամադրող անձին, նրա աշխատակիցներին (ղեկավարներին). | իրավասություն է տրվում այն անձին, որի վերաբերյալ հաշվետվություն կամ այլ տեղեկություն է տրամադրվում լիազոր մարմնին հայտնել հաշվետվության  կամ այլ տեղեկատվության տրամադրման փաստի մասին |
| | | | արգելվում է այն անձին, որի վերաբերյալ հաշվետվություն կամ այլ տեղեկություն է տրամադրվում լիազոր մարմնին, ինչպես նաև այլ անձանց, բացառությամբ ֆինանսական խմբի դեպքում՝ ֆինանսական խմբի անդամին, հայտնել հաշվետվության  կամ այլ տեղեկատվության տրամադրման կամ չտրամադրման փաստի մասին |
| | | | թույլատրվում է այն անձին, որի վերաբերյալ հաշվետվություն կամ այլ տեղեկություն է տրամադրվում լիազոր մարմնին, ինչպես նաև այլ անձանց, բացառությամբ ֆինանսական խմբի դեպքում՝ ֆինանսական խմբի անդամին, հայտնել հաշվետվության  կամ այլ տեղեկատվության տրամադրման կամ չտրամադրման փաստի մասին |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 481 | Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի  մասին» ՀՀ օրենքի՝ գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժումը. | գործարքի կատարման կամ գործարար հարաբերության իրականացման ընդհատումն է |
| | | | կասկածելի գործարքի և (կամ) գործարար հարաբերության առարկա գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքն է |
| | | | ահաբեկչության հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքի փաստացի և (կամ) իրավաբանական շարժի անորոշ ժամկետով արգելքն է, այդ թվում՝ այդ գույքի ուղղակի կամ անուղղակի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման արգելքը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 482 | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի իմաստով, պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության մեջ նշվում է՝<br>ա) հաշվետու անձի բնութագիրը<br>բ ) գործարքի առարկայի նկարագրությունը<br>գ) գործարքի գումարը,<br>դ) գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման ամսաթիվը<br>ե) հաճախորդի, լիազորված անձի, գործարքի մյուս կողմի, կասկածելի գործարքի դեպքում՝ նաև իրական շահառուի տվյալները, | Բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | ճիշտ են միայն ա)-ն և ե)-ն |
| | | | ճիշտ են միայն ա)-ն, բ)-ն, գ)-ն և դ)-ն |
| | | | ճիշտ են միայն բ)-ն գ)-ն դ)-ն և ե)-ն |
| | 483 | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաշվետվությունների տրամադրման կարգը, ժամկետները և ձևերը սահմանում է՝ | հաշվետվություն տրամդրող անձը |
| | | | Ֆինանսների նախարարությունը նորմատիվ իրավական ակտերով |
| | | | լիազոր մարմինը՝ նորմատիվ իրավական ակտերով |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 484 | Հաշվետվություն տրամադրող անձը  պետք է հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տեղեկությունները գործարար հարաբերության ավարտից կամ գործարքի կատարելուց հետո պահպանի | ա. առնվազն 5 շաբաթ |
| | | | բ. առնվազն 5 ամիս |
| | | | գ. առնվազն 5 տարի |
| | | | դ. առնվազն 1 տարի |
| | 485 | Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական հաստատության լիցենզավորման ընթացքում վերահսկող մարմինը. | չի կարող պահանջել լիազոր մարմնի կողմից նորմատիվ իրավական ակտով սահմանված տեղեկություններ |
| | | | կարող է պահանջել լիազոր մարմնի կողմից նորմատիվ իրավական ակտով սահմանված տեղեկություններ |
| | | | պարտավոր է  պահանջել լիազոր մարմնի սահմանած տեղեկություններ և ստուգել այդ տեղեկությունների իսկությունը |
| | | | Ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 486 | Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, վերահսկող մարմինը պարտավոր է հաշվետվություն տրամադրող անձի լիցենզավորման և լիցենզիայի դադարման մասին հայտնել լիազոր մարմնին՝ | լիցենզավորմանը և լիցենզիայի դադարմանը հաջորդող 1 ամսվա ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | լիցենզավորմանը և լիցենզիայի դադարմանը հաջորդող 15 օրվա ընթացքում |
| | | | լիցենզավորմանը և լիցենզիայի դադարմանը հաջորդող 1 տարվա ընթացքում |
| | | | պարտավոր չէ հայտնել լիազոր մարմնին |
| | 487 | Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի լիազոր մարմնի իրավասություն չի համարվում. | Հաշվետվություն տրամադրող անձանցից հաշվետվությունների և այլ տեղեկությունների, պետական մարմիններից տեղեկությունների ստացումը |
| | | | Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին հանրային իրազեկման արգելումը |
| | | | Հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելը, այլ վերահսկող մարմինների կողմից  իրականացվող վերահսկողությանն օժանդակելը |
| | | | Ստացված հաշվետվությունների և տեղեկությունների վերլուծությունը. |
| | 488 | Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, լիազոր մարմինը իր գործունեության վերաբերյալ հրապարակում է | կիսամյակային հաշվետվություններ |
| | | | ամսական հաշվետվություններ |
| | | | եռամսյակային հաշվետվություններ |
| | | | տարեկան հաշվետվություններ |
| | 489 | Նշել սխալ պատասխանը.<br>Լիազոր մարմնի կառավարման բարձրագույն մարմինը հաստատում է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի. | կանոնադրությունը |
| | | | գործունեության ծրագիրը |
| | | | բյուջեն |
| | | | անձանց նույնականացման համար անհրաժեշտ տվյալների կամ տիպաբանությունների տրամադրման կարգը հաշվետվություն տրամադրող անձանց |

| | | | |
|---|---|---|---|
| | 490 | Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման  դեմ պայքարի ոլորտում պետական մարմինները պետք է ամփոփեն և լիազոր մարմնի կողմից սահմանած  կարգով, ձևով և ժամկետներում լիազոր մարմնին տրամադրեն պարբերական վիճակագրություն, որը պետք է ներառի. ա) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հատկանիշներով հարուցված քրեական գործերի, դրանց հետ կապված այլ հանցագործությունների կապակցությամբ կայացված դատավճիռների թիվը բ) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հատկանիշներով հարուցված քրեական գործերի քննության ընթացքում առգրավված կամ կալանքի  տակ գտնվող  գույքի արժեքը` ըստ առանձին գործերի գ) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման հատկանիշներով հարուցված և դատական քննության փուլում  գտնվող քրեական գործերի թիվն ու նկարագրությունը | ճիշտ են միայն ա) -ն և գ)-ն |
| | | | ճիշտ են միայն ա) -ն և բ)-ն |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 491 | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի իմաստով հաշվետվություն տրամադրող անձինք պետք է հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնեն, երբ | կատարվում է միանգամյա գործարք, այդ թվում` ներպետական կամ միջազգային դրամական փոխանցում, որի գումարը գերազանցում է նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկը, եթե խստացնող այլ դրույթ սահմանված չէ օրենդրությամբ |
| | | | չեն հաստատվում գործարար հարաբերությունները |
| | | | հաճախորդի նույնականացմանը վերաբերող նախկինում ձեռք բերված տեղեկատվության հավաստիության  կամ ամբողջականության մասին կասկածներ չեն առաջացել |
| | | | փողերի լվացման և/կամ ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ կասկածներ չեն առաջացել |
| | 492 | Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության մեջ չեն նշվում (իրավաբանական անձանց համար) | անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համար), հարկ վճարողի հաշվառման համարը |
| | | | իրավաբանական անձի անվանումը |
| | | | իրավաբանական անձի գտնվելու վայրը, |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 493 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, Հայաստանի Հանրապետությունում արգելվում է. | թողարկել ըստ ներկայացնողի արժեթղթեր |
| | | | բացել, թողարկել, տրամադրել կամ սպասարկել միայն թվային, տառային կամ պայմանական այլ նշաններով արտահայտված հաշիվներ |
| | | | սխալ պատասխանը նշված չէ |
| | | | բացել, թողարկել, տրամադրել կամ սպասարկել անանուն կամ մտացածին անունով հաշիվներ |
| | 494 | Լիազոր մարմինն իրավասու է գործարար հարաբերությունը կամ գործարքը կասեցնել՝ տրամադրված հաշվետվությունների, վերահսկող և քրեական հետապնդում իրականացնող մարմինների ներկայացրած կամ այլ տեղեկությունների վերլուծությունների հիման վրա՝ | 1 ամսով |
| | | | 15 օրով |
| | | | 14 օրով |
| | | | 20 օրով |
| | 495 | Նշել ճիշտ պատասխանը.<br>Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերում ներառված ահաբեկչության հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքը ենթակա է սառեցման | անմիջապես և առանց նրանց նախապես տեղեկացնելու, այդ թվում՝ մաքսային մարմինների և հաշվետվություն տրամադրվող անձանց կողմից |
| | | | նախօրոք տեղեկացնելով նշված անձանց, հաշվետվություն տրամադրող անձանց կողմից |
| | | | հաշվետվություն տրամադրող անձանց կողմից |
| | | | Ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 496 | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն, Լիազոր մարմին է համարվում | ՀՀ կենտրոնական բանկը |
| | | | ՀՀ ֆինանսների նախարարությունը |
| | | | ՀՀ արդարադատության նախարարությունը |
| | | | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն |
| | 497 | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն, գործարքի կամ գործարար հարաբերության կասեցում է համարվում | կասկածելի գործարքի և (կամ) գործարար հարաբերության առարկա գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքը |
| | | | գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման համար նախատեսված գործողությունների չիրականացումը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքի փաստացի և (կամ) իրավաբանական շարժի անորոշ ժամկետով արգելքը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 498 | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն, գործարար հարաբերության կամ գործարքի իրականացման մերժում է համարվում | կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի առարկա գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքը |
| | | | գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման համար նախատեսված գործողությունների չիրականացումը |
| | | | ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսական միջոցների փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 499 | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն,գույքի սառեցում  է համարվում | կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի առարկա գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքը |
| | | | գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման համար նախատեսված գործողությունների չիրականացումը |
| | | | ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքի փաստացի և (կամ) իրավաբանական շարժի անորոշ ժամկետով արգելքը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 500 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի բանկային գործունեության լիցենզավորման փուլեր են հանդիսանում | 1) լիցենզիա ստանալու նախնական հավանությունը,<br>2) բանկի կամ օտարերկրյա մասնաճյուղի գրանցումը,<br>3) լիցենզիայի տալը |
| | | | 1) լիցենզիա ստանալու նախնական հավանությունը,<br>2) լիցենզիայի գործողության ժամկետի սահմանումը<br>3) լիցենզիայի տալը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | 1) լիցենզիա ստանալու նախնական հավանությունը,<br>2) լիցենզիայի մերժման հիմքերի տրամադրումը<br>3) բանկի կամ օտարերկրյա մասնաճյուղի գրանցումը,<br>4) լիցենզիայի տալը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 501 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի բանկի մասնակից են համարվում | բանկի հիմնադիրները , բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկի բաժնետերերը, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող բանկի և կոոպերատիվ բանկի մասնակիցները (փայատերերը, անդամները) |
| | | | բանկի հիմնադիրները  և անդամները |
| | | | բաժնետիրական ընկերություն հանդիսացող բանկի բաժնետերերը, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող բանկի  մասնակիցները (փայատերերը, անդամները) |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 502 | Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի բանկի կառավարման մարմին չեն համարվում | մասնակիցների ընդհանուր ժողովը |
| | | | բանկի խորհուրդը |
| | | | բանկի գործադիր տնօրենը կամ վարչության նախագահը |
| | | | բանկի տարածքային ստորաբաժանման ղեկավարները |
| | 503 | Համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ստորև բերվածներից որո՞նք են համարվում վճարահաշվարկային ծառայություններ | Իրավաբանական կամ ֆիզիկական անձանց բանկային հաշիվներով հաշվարկների իրականացումը |
| | | | Պրոցեսինգի և քլիրինգի իրականացումը |
| | | | Երրորդ անձանց համար դրամարկղային գործառնությունների իրականացումը |
| | | | Բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 504 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի՝ Հայաստանյան վճարահաշվարկային համակարգը՝ դա | ՀՀ տարածքից դուրս վճարումների կատարումն ապահովող վճարահաշվարկային համակարգն է |
| | | | ՀՀ տարածքում վճարումների կատարումն ապահովող վճարահաշվարկային համակարգն է |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ՀՀ տարածքում վճարումների կատարումն ապահովող վճարահաշվարկային համակարգն է կամ ՀՀ տարածքից դուրս վճարումների կատարումն ապահովող վճարահաշվարկային համակարգը, որի օպերատորը ՀՀ ռեզիդենտ է |
| | | | այն համակարգն է, որի հաշվարկներն ապահովում է ՀՀ կենտրոնական բանկը |
| | 505 | Նշել ամբողջական պատասխանը. Համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի՝ արտասահմանյան վճարահաշվարկային համակարգը՝ դա | ՀՀ տարածքից դուրս վճարումների կատարումն ապահովող օտարերկրյա կամ միջազգային վճարահաշվարկային համակարգ է, որի օպերատորը ՀՀ ռեզիդենտ է |
| | | | ՀՀ տարածքից դուրս վճարումների կատարումն ապահովող օտարերկրյա կամ միջազգային վճարահաշվարկային համակարգ է, որի օպերատորը ՀՀ ռեզիդենտ չէ |
| | | | ՀՀ տարածքից դուրս վճարումների կատարումն ապահովող համակարգ է |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 506 | Տալ «վճարահաշվարկային համակարգ» հասկացության սահմանումը՝ համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի | վճարահաշվարկային համակարգը կանխիկ գումարների փոխանցման համար նախատեսված բանկային, տեխնիկական, տեխնոլոգիական և իրավական միջավայր է |
| | | | վճարահաշվարկային համակարգը Western Union, Money Gram, SWIFT, էլեկտրոնային վճարումների համակարգը և այլ տեսակի համակարգերն են, որոնք թույլ են տալիս կատարել դրամական միջոցների անկանխիկ եղանակով վճարումներ |
| | | | վճարահաշվարկային համակարգը վճարային գործիքների, քլիրինգի իրականացման, միջոցների փոխանցման և վերջնահաշվարկի կատարման ընդհանուր կանոնների, ընթացակարգերի և վերջիններս ապահովող տեխնիկածրագրային միջոցների ամբողջությունն է (ընդհանրություն է), որի միջոցով ապահովվում է վճարման կատարումը շահառուին |
| | | | վճարահաշվարկային համակարգը վճարման հանձնարարականներով, չեկերով, ուղղակի դեբետագրման և պարբերաբար վճարումների հանձնարարականներով և այլ վճարային գործիքներով գումարների փոխանցման համար նախատեսված միջավայր է |
| | 507 | Ստորև բերվածներից, որը վճարահաշվարկային ծառայություն չէ | կանխավճարային հեռախոսային քարտերի թողարկումը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | վճարային գործիքների թողարկումը, սպասարկումը և իրացումը (տարածումը) |
| | | | պրոցեսինգի և քլիրինգի իրականացումը |
| | | | երրորդ անձանց համար դրամարկղային գործառնությունների իրականացումը |
| | 508 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. Համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի | արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն ստանալու համար բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում օրենքով սահմանված փաստաթղթերը |
| | | | արտասահմանյան վճարահաշվարկային համակարգը ՀՀ տարածքից դուրս վճարումների կատարումն ապահովող օտարերկրյա կամ միջազգային վճարահաշվարկային համակարգ է, որի օպերատորը ՀՀ ռեզիդենտ չէ |
| | | | արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի կանոններում որոշակի տեսակի փոփոխության դեպքերում արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի մասնակիցը պարտավոր է առնվազն եռամսյա ժամկետում տեղեկացնել այդ մասին Կենտրոնական բանկին |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 509 | Հայաստանի Հանրապետությունում վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու իրավունք ունեն.<br>(1) Կենտրոնական բանկը և ՀՀ տարածքում գործող բանկերը<br>(2) վճարահաշվարկային կազմակերպությունները<br>(3) ՀՀ կենտրոնական գանձապետարանը | միայն (1) և (2) |
| | | | միայն (2) և (3) |
| | | | (1), (2) և (3) |
| | | | միայն (1) |
| | 510 | Հայաստանյան վճարահաշվարկային համակարգի մասնակիցներ կարող են լինել.<br>(1) Կենտրոնական բանկը<br>(2) ՀՀ տարածքում գործող բանկերն ու օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը<br>(3) վճարահաշվարկային կազմակերպությունները | միայն (1) |
| | | | միայն (2) |
| | | | (1), (2) և (3) |
| | | | միայն (3) |
| | 511 | Հայաստանյան վճարահաշվարկային համակարգի մասնակիցներ չեն կարող լինել | ՀՀ ոչ ռեզիդենտ այն կազմակերպությունները, որոնք իրենց երկրում իրավունք ունեն իրականացնելու վճարահաշվարկային ծառայություններ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | միջազգային պայմանագրերով վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու իրավասություն ունեցող անձինք |
| | | | վճարահաշվարկային կազմակերպությունները |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 512 | Ընտրեք ՍԽԱԼ տարբերակը. Հայաստանյան վճարահաշվարկային համակարգի մասնակիցներ կարող են լինել | ՀՀ ոչ ռեզիդենտ այն կազմակերպությունները, որոնք իրենց երկրում իրավունք ունեն իրականացնելու վճարահաշվարկային ծառայություններ |
| | | | միջազգային պայմանագրերով վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու իրավասություն ունեցող անձինք |
| | | | Կենտրոնական բանկը |
| | | | միայն ՀՀ տարածքում գործող ապահովագրական ընկերությունները |
| | 513 | Նշել ՍԽԱԼ պատասխանը. Հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման թույլտվություն ստանալու համար վճարահաշվարկային համակարգը պետք է | ունենա վճարահաշվարկային համակարգի օպերատոր, որի գործադիր մարմնի ղեկավարը պետք է համապատասխանի Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված որակավորման պահանջներին |
| | | | առկա լինի վճարահաշվարկային համակարգի մասնակիցների միջև կնքված և օրենքով սահմանված բովանդակությամբ գործունեության պայմանագիրը |
| | | | բավարարի Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված վճարահաշվարկային համակարգերին ներկայացվող տեխնիկական, անվտանգության, ծրագրային, մասնակցության, ինչպես նաև համակարգի գործունեության կանոններին ներկայացվող պահանջներին |
| | | | ունենա առնվազն 25 մասնակից |
| | 514 | Կենտրոնական բանկը մերժում է հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության թույլտվության տրամադրումը կամ արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվության տրամադրումը, եթե | փաստաթղթերը ներկայացվել են թերի |
| | | | փաստաթղթերում ներկայացված տվյալները անարժանահավատ են կամ կեղծ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | վճարահաշվարկային համակարգի ստեղծումը կամ արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցությունը կհանգեցնի համակարգի մասնակից բանկի՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված չափանիշներով հիմնավորված ֆինանսական վիճակի վատթարացմանը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 515 | Հայաստանի Հանրապետության տարածքում վճարահաշվարկային համակարգի և դրա մասնակիցների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է | ՀՀ կենտրոնական բանկը |
| | | | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը |
| | | | Հայաստանի Բանկերի Միությունը |
| | | | ՀՀ Հարկային պետական ծառայությունը |
| | 516 | Կենտրոնական բանկը հայաստանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորից և այլ մասնակիցներից, ինչպես նաև արտասահմանյան վճարահաշվարկայի համակարգի մասնակիցներից չի կարող պահանջել. | առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվություն |
| | | | բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն |
| | | | այլ գաղտնիք կազմող տեղեկատվություն |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 517 | Համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի՝ նշված ծառայություններից վճարահաշվարկային ծառայություն է համարվում | բանկային հաշիվների բացումը և վարումը |
| | | | թանկարժեք մետաղների, քարերի, ոսկերչական իրերի, արժեթղթերի, փաստաթղթերի և այլ արժեքների ի պահ ընդունումը |
| | | | արտարժույթի առքն ու վաճառքը |
| | | | ինվեստիցիոն և բաժանորդագրական գործունեության իրականացումը |
| | 518 | Համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի՝ հայաստանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորը պարտավոր է պարբերաբար հրապարակել վճարահաշվարկային համակարգի գործունեության վերաբերյալ տեղեկություններ՝ | ՀՀ ԿԲ խորհրդի սահմանած կարգով և հաճախականությամբ |
| | | | ՀՀ ԿԲ Ֆինանսական վերահսկողության պետի կողմից հաստատված ձևով և հաճախականությամբ |
| | | | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի կողմից հաստատած ձևով և հաճախականությամբ |
| | | | ՀՀ ԿԲ մամուլի քարտուղարի կողմից սահմանված ձևով և հաճախականությամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | 519 | Համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի՝ վճարահաշվարկային համակարգի օպերատորի փոփոխման կամ համակարգի գործունեության կանոնակարգում փոփոխության վերաբերյալ որոշումը վճարահաշվարկային օպերատորը ներկայացնում է | ՀՀ կենտրոնական բանկը |
| | | | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը |
| | | | ՀՀ հարկային պետական ծառայությունը |
| | | | ՀՀ արտաքին գործերի նախարարությունը |
| | 520 | ՀՀ Կենտրոնական բանկի հիմնական նպատակն է. | արտարժույթի առք ու վաճառքի միջին փոխարժեքի ձևավորումը |
| | | | ՀՀ-ում գների կայունության և ֆինանսական կայունության ապահովումը |
| | | | բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ վերահսկողությունը |
| | | | Հայաստանի Հանրապետության ներկայացումը միջազգային ֆինանսական կազմակերպություններում |
| | 521 | Նշվածներից որո՞նց նկատմամբ ՀՀ կենտրոնական բանկը վերահսկողություն չի իրականացնում | կենսաթոշակային գործունեություն իրականացնող պետական մարմինների |
| | | | ՀՀ տարածքում գործող օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի |
| | | | ապահովագրական գործունեություն իրականացնող մարմինների |
| | | | դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների |
| | 522 | ՀՀ կենտրոնական բանկի կողմից վերստուգվող անձանց մոտ ստուգումներ կարող են անցկացվել | ՀՀ կենտրոնական բանկի նախագահի կամ խորհրդի որոշմամբ |
| | | | ՀՀ կենտրոնական բանկի վերստուգող ստորաբաժանման ղեկավարի որոշմամբ |
| | | | ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության և լիցենզավորման հանձնաժողովի որոշմամբ |
| | | | ՀՀ կենտրոնական բանկ վերստուգիչ հանձնաժողովի որոշմամբ |
| | 523 | ՀՀ կենտրոնական բանկը իր կողմից վերստուգվող անձանց նկատմամբ ի՞նչ հաճախականությամբ է իրականացնում հեռակա վերստուգում. | ամեն շաբաթ |
| | | | ամեն օր |
| | | | ամեն ամիս |
| | | | եռամսյակը մեկ |
| | 524 | Նշել սխալ պատասխանը.<br>Վերստուգվող անձը պարտավոր է ՀՀ կենտրոնական բանկի վերստուգող խմբի պահանջով | կազմակերպել իր հաճախորդների հետ հանդիպում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ժամանակավորապես դադարեցնել բանկային գործունեությունը |
| | | | տրամադրել ստուգման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ |
| | | | տրամադրել իր հաճախորդներից ստացված բողոքները |
| | 525 | ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության ստորաբաժանման կողմից իրականացվող ստուգման ուղղությունները որոշվում են | միայն ՀՀ կենտրոնական բանկի նախագահի կողմից |
| | | | միայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից |
| | | | ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության վարչության պետի կողմից |
| | | | ՀՀ կենտրոնական բանկի նախագահի կամ խորհրդի կողմից |
| | 526 | Ո՞ր պահից է սկսվում վերստուգվող անձի կամ դրա ղեկավարի նկատմամբ պատասխանատվության միջոցի կիրառման վարույթը | խախտումը արձանագրելու պահից |
| | | | ՀՀ կենտրոնական բանկի նախագահի պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման ուժի մեջ մտնելու պահից |
| | | | ստուգման արդյունքների նախնական քննարկման պահից |
| | | | ստուգման ավարտից հետո վերստուգող խմբի կողմից հաշվետվության կազմման պահից |
| | 527 | ՀՀ կենտրոնական բանկի նախագահը իր որոշմամբ  կարճում է վերստուգվող անձի նկատմամբ սկսված վարույթը, եթե | փոխվել է օրենսդրությունը և արձանագրված փաստը այլևս խախտում չէ |
| | | | բաց են թողնվել վաղեմության ժամկետները |
| | | | արձանագրված փաստը խախտում չէ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 528 | Նշվածներից ո՞րը չի  կարող  լինել  բանկի կազմակերպաիրավական տեսակ | լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն |
| | | | կոոպերատիվ |
| | | | փակ բաժնետիրական ընկերություն |
| | | | բաց բաժնետիրական ընկերություն |
| | 529 | Բանկի խորհրդի անդամները կարող են լինել փոխկապակցված | խորհրդի այլ անդամի հետ |
| | | | գործադիր տնօրենի հետ |
| | | | բանկի արտաքին աուդիտն իրականացնող կազմակերպության ղեկավարի հետ |
| | | | գլխավոր հաշվապահի հետ |
| | 530 | Բանկի խորհրդի նախագահը | ընտրվում է խորհրդի կողմից իր անդամների կազմից |
| | | | ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից իր մասնակիցների կազմից |
| | | | ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից Խորհրդի անդամների կազմից |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ընտրվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկի մասնակիցների կազմից |
| | 531 | Նշվածներից ո՞րը չի հանդիսանում բանկի ղեկավար | բանկի տարածքային ստորաբաժանման ղեկավարը |
| | | | բանկի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը |
| | | | բանկի խորհրդին կից հանձնաժողովի նախագահը |
| | | | բանկի գլխավոր հաշվապահի տեղակալը |
| | 532 | Բանկի գլխավոր հաշվապահը | չի կարող լինել այլ բանկի գլխավոր հաշվապահ |
| | | | կարող լինել այլ բանկում գլխավոր հաշվապահ՝ բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի թույլտվության առկայության դեպքում |
| | | | կարող է լինել այլ բանկի գլխավոր հաշվապահ՝ բանկի խորհրդի թույլտվության առկայության դեպքում |
| | | | կարող է լինել այլ բանկի գլխավոր հաշվապահ՝ ՀՀ կենտրոնական բանկի համաձայնության դեպքում |
| | 533 | Բանկի լիցենզավորման փուլերից չէ | բանկի գրանցումը |
| | | | լիցենզիա տալը |
| | | | բանկի կանոնադրության գրանցումը |
| | | | բանկի լիցենզիա ստանալու նախնական հավանությունը |
| | 534 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | ՀՀ կենտրոնական բանկը բանկի  գործունեության ռիսկայնությունը զսպելու համար իրավունք ունի սահմանափակումներ նախատեսել  ֆինանսական գործառնությունների առանձին տեսակների համար |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը բանկի  գործունեության ռիսկայնությունը զսպելու համար իրավունք չունի սահմանափակումներ նախատեսել  ֆինանսական գործառնությունների առանձին տեսակների համար |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը բանկի  գործունեության ռիսկայնությունը զսպելու համար իրավունք ունի սահմանափակումներ նախատեսել  ֆինանսական գործառնությունների բոլոր տեսակների համար |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 535 | Բանկի գույքի շուկայական արժեքը կարող է որոշվել | բանկի խորհրդի կողմից |
| | | | օրենքով սահմանված դեպքերում այլ մարմնի կամ անձի կողմից |
| | | | օրենքով սահմանված դեպքերում դատարանի կողմից |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 536 | Բանկերը պարտավոր չեն իրենց ինտերնետային կայքում մշտապես հրապարակել | ներքին աուդիտի անդամների վերաբերյալ անձնական տվյալներ |
| | | | գլխավոր հաշվապահի նախորդ տարվա ընթացքում բանկից ստացված վարձատվության չափը |
| | | | գործադիր տնօրենի բանկից նախորդ տարվա ընթացքում ստացված վարձատվության չափը |
| | | | բանկի գործադիր տնօրենի հետ փոխկապակցված անձանց բանկից ստացված վարկերի վերաբերյալ տեղեկություններ |
| | 537 | Բանկերի գործունեության նկատմամբ վերահսկողության իրավունքը պատկանում է | միայն ՀՀ կենտրոնական բանկին |
| | | | ՀՀ կենտրոնական բանկին և ՀՀ հարկային մարմիններին |
| | | | ՀՀ կենտրոնական բանկին և ՀՀ իրավապահ մարմիններին |
| | | | նշված բոլոր մարմիններին |
| | 538 | Նշված պնդումներից ո՞րն է սխալ. | ՀՀ կենտրոնական բանկը կարող է պարտադրել բանկին որպեսզի նա փոխի այն արտաքին աուդիտն իրականացնող անձին ում հետ կնքել է համապատասխան պայմանագիր |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը կարող է պահանջել բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձից որպեսզի նա ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնի բանկի աուդիտային ստուգման վերաբերյալ յուրաքանչյուր փաստաթուղթ, անգամ եթե այն պարունակի առևտրային կամ բանկային գաղտնիք |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը իրավունք ունի պահանջելու բանկից, որպիսի նա 4 ամսվա ընթացքում հրավիրի արտաքին աուդիտ և հրապարակի նրա կողմից տրված եզրակացությունը |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը իրավունք ունի պահանջելու բանկից, որպեսզի նա տվյալ ֆինանսական տարվա համար բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման համար արտաքին աուդիտի ծառայություններից չօգտվի |
| | 539 | ՀՀ կենտրոնական բանկը բանկերի նկատմամբ կարող է կիրառել օրենքով սահմանված պատժամիջոցներ, եթե | բանկը խախտել է իր կանոնադրության պահանջները |
| | | | բանկը խախտել է իր խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բանկը խախտել է ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 540 | ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերի նկատմամբ որպես պատժամիջոց նշանակված տուգանքը գանձվում է | հօգուտ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ |
| | | | հօգուտ պետական բյուջե |
| | | | հօգուտ ՀՀ կենտրոնական բանկի |
| | | | հօգուտ ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ |
| | 541 | Նշեք սխալ պատասխանը.<br>Բանկը կարող է լուծարվել | ՀՀ կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | լիցենզիան անվավեր ճանաչելու դեպքում |
| | | | «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում |
| | 542 | Բանկին անվճարունակ ճանաչելու հիմքերից է | բանկը սպառել է իր հիմնական կապիտալի 25 տոկոսը |
| | | | բանկը պարբերաբար խախտում է օրենքով սահմանված իրացվելիության նորմատիվները |
| | | | բանկը պարբերաբար խախտում է օրենքով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվը |
| | | | բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը ցածր չէ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված չափից |
| | 543 | Բանկը առանց դատարանի համապատասխան որոշման իրավունք չունի բանկային գաղտնիք պարունակող տեղեկություն տրամադրել | հարկային մարմիններին |
| | | | վարկային կազմակերպություններին |
| | | | իր հաճախորդի ժառանգներին |
| | | | ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին |
| | 544 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի ավանդ միայն ՀՀ դրամով, ապա երաշխավորված ավանդի չափը 7 միլիոն դրամ է |
| | | | եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի ավանդ միայն արտարժույթով, ապա երաշխավորված ավանդի չափը 16 միլիոն դրամին համարժեք գումար է |
| | | | եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի ավանդ միայն արտարժույթով, ապա նրա ավանդը չի երաշխավորվում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | եթե ներդրված ավանդը պատկանում է տվյալ բանկի ղեկավարի ընտանիքի անդամին, ապա տվյալ ավանդը չի երաշխավորվում |
| | 545 | Ավանդների հատուցման երաշխավորման հիմնադրամին երաշխիքային վճարներ կատարում է | ՀՀ տարածքում գործող օտարերկրյա բանկի մասնաճյուղը |
| | | | անվճարունակ ճանաչված բանկը |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 546 | ՀՀ տարածքում մասնագիտացված անձանց կողմից իրականացվող արտարժույթի առք ու վաճառքի գործարքների փոխարժեքները որոշվում է | ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից |
| | | | ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության վարչության կողմից |
| | | | մասնագիտացված անձանց կողմից |
| | | | Ֆոնդայինն բորսա ինքնակարգավորվող կազմակերպության կողմից |
| | 547 | Ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցը կարող է ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող իր բաժինը գրավ դնել | միայն գույքի բոլոր սեփականատերերի համաձայնության դեպքում |
| | | | առանց գույքի մնացած սեփականատերերի համաձայնության |
| | | | ընդհանրապես չի կարող նման գույքը գրավ դնել |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 548 | Նշվածներից ո՞րը չի հանդիսանում գրավի տեսակ | գրավականը |
| | | | կոշտ գրավը |
| | | | փափուկ գրավը |
| | | | դրամական միջոցների  գրավը |
| | 549 | Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում | պայմանագիրը ստորագրելու պահից |
| | | | պայմանագրի նոտարական վավերացման պահից |
| | | | փոխառության առարկա գույքի հանձնման պահից |
| | | | փոխառությամբ գույք տրամադրելու բանավոր խոստում տալու պահից |
| | 550 | Լիզինգի պայմանագրով կարող է նախատեսվել, որ վաճառողի և ձեռք բերվող գույքի ընտրությունը կատարում է | լիզինգառուն |
| | | | լիզինգատուն |
| | | | Կենտրոնական բանկը |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 551 | Պետական փոխառության պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը հանդես է գալիս որպես | փոխատու |
| | | | փոխառու |
| | | | երրորդ անձ |
| | | | պարտավորության կատարման երաշխավորող |
| | 552 | Վարկատուն իրավունք ունի վարկառուին չտրամադրել իրենց միջև կնքված վարկային պայմանագրով նախատեսված գումարը, եթե | վարկատուն չունի բավարար միջոցներ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ՀՀ կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ տրվել է վարկ տրամադրելուց հրաժարվելու համապատասխան հանձնարարական |
| | | | վարկատուն ունի բավարար հիմքեր, որոնք ակնհայտ վկայում են, որ վարկառուն սահմանված ժամկետում գումարը չի վերադարձնելու |
| | | | վարկառուն վարկատուին ներկայացրել է իր մասին արժանահավատ տեղեկություններ |
| | 553 | Բանկը իրավունք ունի չընդունել ավանդ | քաղաքացուց |
| | | | իր աշխատակցից |
| | | | բարեգործական կազմակերպությունից |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 554 | Ֆակտորինգի պայմանագրով որպես ֆինանսական գործակալ` ֆակտոր իրավունք չունի հանդես գալ | բանկը |
| | | | վարկային կազմակերպությունը |
| | | | յուրաքանչյուր առևտրային կազմակերպություն |
| | | | համապատասխան լիցենզիա ունեցող առևտրային կազմակերպություն |
| | 555 | Բանկի և քաղաքացու միջև կնքվել է պայմանագիր, համաձայն որի քաղաքացին չի կարող իր ներդրած ժամկետային ավանդը հետ ստանալ պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ: Նման պայմանը | առոչինչ է |
| | | | պարտադիր է |
| | | | օրինական է |
| | | | դատարանի վճռով կարող է ճանաչվել և՛ անվավեր, և՛ առոչինչ և՛ օրինական |
| | 556 | Ավարտվել է ժամկետային ավանդի պայմանագրի ժամկետը, սակայն ավանդատուն չի պահանջում վերադարձնել ավանդի գումարը: Այդ դեպքում | ավանդի պայմանագիրը համարվում է ավարտված և ավանդատուին վճարվում է միայն ավանդի գումարը և մինչև պայմանագրի ժամկետի ավարտը հավելագրված տոկոսները |
| | | | ավանդի պայմանագիրը համարվում է երկարաձգված նույն պայմաններով |
| | | | ավանդի պայմանագիրը համարվում է երկարաձգված, սակայն ցպահանջ ավանդի պայմաններով |
| | | | ավանդի պայմանագիրը համարվում է ավարտված, սակայն բանկը շարունակում է պահել գումարը` նյութական արժեքների պահատվության պայմանագրով սահմանված պայմաններով |
| | 557 | Բանկային ավանդի պայմանագիր կնքելիս, բանկը պարտավոր է ավանդատուին տեղեկացնել | բանկի լուծարման դեպքում ավանդի գումարի հնարավոր կորստի ռիսկի մասին |
| | | | ավանդի գումարի վերադարձի ապահովման մասին |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ավանդի գումարի օգտագործման ռիսկի բանկի կողմից ստանձման մասին |
| | | | ավանդի հաշվում երրորդ անձանցից գումար մուտքագրելու իրավունքի մասին |
| | 558 | Բանկը պարտավոր է մուտքագրել հաճախորդի հաշվին մուտք եղած միջոցները ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը բանկ մուտք լինելու | օրը |
| | | | հաջորդ օրը |
| | | | 3 բանկային օրվա ընթացքում |
| | | | պահին |
| | 559 | Բանկը կարող է բանկային հաշվի պայմանագրով նախատեսել, որ | բանկը կարող է պահանջել դատարանից լուծել բանկային հաշվի պայմանագիրը, եթե հաշվում պահվող միջոցների գումարը պակաս է պայմանագրով նախատեսված նվազագույն չափից |
| | | | հաճախորդը առանց բանկի թույլտվության պետք է հաշվից միջոցներ չհանի |
| | | | հաճախորդի համար բանկային հաշիվ բացելու դեպքում, նա դրամական փոխանցումներ իրականացնելիս պետք է օգտվի միայն այդ բանկի ծառայություններից |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 560 | Հավատարմագրային կառավարման օբյեկտ կարող է լինել. | գույքային իրավունքը |
| | | | արժեթղթեր |
| | | | անշարժ գույքի առանձին տեսակներ |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 561 | Որպես հավատարմագրային կառավարիչ կարող է հանդես գալ | առևտրային կազմակերպությունը |
| | | | ոչ առևտրային կազմակերպությունը, այն դեպքում, երբ գույքի հավատարմագրային կառավարումն իրականացվում է օրենքով նախատեսված հիմքերով |
| | | | անհատ ձեռնարկատերը |
| | | | նշված բոլոր անձինք |
| | 562 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ. | բաց բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի կատարել բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխում՝ բաց բաժանորդագրության միջոցով |
| | | | բաց բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի կատարել բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխում՝ փակ բաժանորդագրության միջոցով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | փակ բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի կատարել բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխում՝ բաց բաժանորդագրության միջոցով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 563 | Նշվածներից ո՞րը չի հանդիսանում անվճարունակ բանկի ժամանակավոր ադմինիստրացիայի խնդիրներից | բանկի ակտիվները վաճառելը |
| | | | բանկի պարտավորությունների  վաճառելը |
| | | | բանկի ֆինանսական կայունության վերականգնումը |
| | | | բանկի կառավարման մարմինների իրենց լիազորությունների պատշաճ կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելը |
| | 564 | Անվճարունակ ճանաչված բանկի ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարը իր ռիսկային գործունեության հետևանքով բանկին պատճառված վնասի համար բանկի առջև | պատասխանատվություն չի կրում |
| | | | ադմինիստրացիայի այլ անդամների հետ կրում է համապարտ պատասխանատվություն |
| | | | անձնական գույքային պատասխանատվություն է կրում |
| | | | ենթարկվում է սուբսիդիար պատասխանատվության |
| | 565 | Բանկը չի կարող լուծարվել | լիցենզիան անվավեր ճանաչելու դեպքում |
| | | | լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում |
| | | | բանկի ընդհանուր ժողովի որոշմամբ |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 566 | Հավատարմագրային կառավարման օբյեկտ կարող են լինել՝<br>(ա) ցանկացած գույք,<br>(բ) արժեթղթեր,<br>(գ) գույքային իրավունքներ, | միայն  (ա) |
| | | | միայն (ա)  և (բ) |
| | | | միայն (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | 567 | Ե՞րբ են վճարվում վարկի տոկոսադրույքները՝ վարկային պայմանագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում | պայմանագրի ավարտի ամսաթվին |
| | | | յուրաքանչյուր տարի |
| | | | յուրաքանչյուր ամիս |
| | | | վարկառուի հայեցողությամբ |
| | 568 | Բանկային ոսկի է համարվում | 99.50-ից ոչ պակաս պարունակությամբ ոսկու ցանկացած տիպի ձուլակտոր, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Լոնդոնի թանկարժեք մետաղների շուկայի ասոցիացիայի անդամ հանդիսացող զտարկող (աֆինաժային) կազմակերպություններում արտադրված, ոսկու ձուլակտորները, որոնք ունեն անհատական սերտիֆիկատ և որոնց վրա դաջված է զտարկող կազմակերպության անվանիշը, քաշը, հարգը և հերթական սերիական համարը, որոնց քաշը կազմում է 10886-13996 գր., 99.50-ից ոչ պակաս ոսկու պարունակությամբ: |
| | | | ոսկու ստանդարտ ձուլակտորները, որոնք ունեն անհատական սերտիֆիկատ, որոնց վրա դաջված է զտարկող կազմակերպության անվանիշը և որը կարող է լինել ցանկացած քաշի: |
| | | | Լոնդոնի թանկարժեք մետաղների շուկայի ասոցիացիայի անդամ հանդիսացող զտարկող (աֆինաժային) կազմակերպություններում արտադրված, ոսկու ջարդոնները: |
| | 569 | Նշել ճիշտ պատասխանը. Բանկի ընդհանուր ժողովի իրավասություններից չէ | ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը |
| | | | ընկերության կանոնադրության հաստատումը |
| | | | ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը |
| | | | ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը |
| | 570 | Բանկ բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից | անմիջապես հետո |
| | | | ողջամիտ ժամկետում |
| | | | հինգ օրվա ընթացքում |
| | | | մեկ ամսվա ընթացքում |
| | 571 | Բանկի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝ | բանկի հասարակ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող մասնակիցները՝ իրենց պատկանող ձայների քանակով |
| | | | բանկի մասնակից չհանդիսացող խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով |
| | | | բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 572 | Բանկ Բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալը կազմվում է | մասնակիցների ձեռք բերած միայն արտոնյալ բաժնետոմսերի արժեքից |
| | | | մասնակիցների ձեռք բերած, սակայն դեռ չվճարված բաժնետոմսերի անվանական արժեքից |
| | | | բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բաժնետերերի այլ ընկերությունից ձեռք բերած սովորական բաժնետոմսերի արժեքից |
| | 573 | Բաժնետիրական ընկերությունը իրավունք չունի հայտարարել տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին, եթե | ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով |
| | | | լրիվ չի վճարվել կանոնադրական կապիտալը |
| | | | դրա արդյունքում կարող է առաջանալ ընկերության սնանկության վտանգ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 574 | Բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձին  հաստատում է | բանկի վարչությունը, գործադիր տնօրենի ներկայացմամբ |
| | | | ընդհանուր ժողովը, խորհրդի ներկայացմամբ |
| | | | բանկի խորհուրդը, գործադիր տնօրենի ներկայացմամբ |
| | | | գործադիր տնօրենը միանձնյա |
| | 575 | Բանկի քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) առնվազն 5 տոկոսի սեփականատեր մասնակիցների պահանջով բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման համար  արտաքին աուդիտի ընտրությունը և նրա ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է | բանկի գործադիր մարմնի կողմից` բանկի միջոցների հաշվին |
| | | | բանկի խորհրդի կողմից`բանկի միջոցների հաշվին |
| | | | ստուգում պահանջող սեփականատեր մասնակիցների կողմից` իրենց միջոցների հաշվին |
| | | | ստուգում պահանջող մասնակիցների կողմից` գլխավոր հաշվապահի հաշվին |
| | 576 | Ֆինանսական տարվա ավարտից հետո բանկերը պարտավոր են | չորսամսյա ժամկետում մամուլում հրապարակել միայն աուդիտային եզրակացությունը |
| | | | չորսամսյա ժամկետում մամուլում հրապարակել միայն տարեկան ֆինանսական հաշվետվությունը, |
| | | | չորսամսյա ժամկետում մամուլում հրապարակել աուդիտային եզրակացությունը, տարեկան ֆինանսական հաշվետվությունը, |
| | | | չորսամսյա ժամկետում մամուլում հրապարակել բանկի բաժնետերերի ֆինանսական հաշվետվությունները |
| | 577 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի,  ընթացիկ տարում բանկի կատարած լրացուցիչ երաշխիքային վճարների գումարը չի կարող գերազանցել | նախորդ տարում իր փաստացի վճարած պարբերական երաշխիքային վճարների գումարի եռապատիկը |
| | | | ընթացիկ տարում իր փաստացի վճարած պարբերական երաշխիքային վճարների գումարի եռապատիկը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | նախորդ տարում իր փաստացի վճարած պարբերական երաշխիքային վճարների գումարի հնգապատիկը |
| | | | ընթացիկ տարում իր փաստացի չվճարած պարբերական երաշխիքային վճարների գումարի եռապատիկը |
| | 578 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի՝ նշված պնդումներից ո՞րն է սխալ | ՀՀ կենտրոնական բանկը ֆինանսական համակարգի  կայունության պահպանման, հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, տնտեսական ռիսկերի կանխարգելման և վիճակագրական նպատակներով կարող է սահմանել կապիտալի շարժի ու ֆինանսական արժութային գործարքների իրականացման համար կարգ և պայմաններ |
| | | | ՀՀ կենտրոնական բանկը ֆինանսական համակարգի կայունությունն ապահովելու, տնտեսական ռիսկերը կանխարգելելու, հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների շրջանառության և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կամ վիճակագրական նպատակներով նորմատիվ իրավական ակտով ՀՀ կառավարության լիազորված մարմնի համաձայնությամբ կարող է սահմանել արժութային արժեքների փոխադրման, առաքման, ներմուծման, արտահանման և հայտարարագրման կարգ և պայմաններ |
| | | | Եթե ֆիզիկական անձը չի ներկայացնում իր ոչ ռեզիդենտության անհրաժեշտ հիմնավորումները կամ փաստաթղթերը, ապա նա համարվում է ռեզիդենտ ֆիզիկական անձ, |
| | | | ՀՀ տարածքում ոչ առևտրային բնույթի գործարքները, ներառյալ կենսաթոշակների, ժառանգությունների, ֆինանսական օգնության, աշխատավարձի վճարումները կարող են իրականացվել նաև արտարժույթով՝ օրենքով սահմանված դեպքերում՝ կանխիկ և անկանխիկ ձևով |
| | 579 | Նշված պնդումներից ո՞րն է սխալ:<br>Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ կենտրոնական բանկը | կարող է օտարերկրյա բանկերի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերի համար սահմանել պարտադիր պահուստավորման հատուկ կարգ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | նույնանման գործունեություն իրականացնող բոլոր բանկերի, ինչպես նաև բանկերի կողմից ստանձնած նույնանման բոլոր պարտավորությունների համար սահմանում է պարտադիր պահուստավորման նույն կարգը |
| | | | սահմանում է բանկերի կողմից ներգրավված ցպահանջ, ժամկետային և խնայողական ավանդների և այլ պարտավորությունների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների չափը, պահուստավորման և պահուստավորված միջոցների օգտագործման կարգը |
| | | | պարտադիր պահուստավորումը սահմանված կարգով չկատարելու դեպքում բանկից տույժ է գանձում՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ սահմանած չափով |
| | 580 | Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ հիփոթեք է համարվում. | անշարժ գույքի գրավը |
| | | | հողամասի կառուցապատման իրավունքի  գրավը |
| | | | կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքից անշարժ գույք գնելու իրավունքի գրավը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 581 | Լիզինգի պայմանագրով լիզինգատուն պարտավորվում է | սեփականության իրավունքով ձեռք բերել լիզինգառուի կողմից նշված գույքը լիզինգառուի որոշած վաճառողից և վճարի դիմաց հանձնել լիզինգառուի ժամանակավոր տիրապետմանը |
| | | | ձեռք բերի լիզինգառուի կողմից նշված գույքը և անձամբ օգտագործի |
| | | | իր գույքը վարձակալությամբ տրամադրի լիզինգառուին |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 582 | Նշված պատասխաններից ո՞րն է սխալ | սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցը պատասխանատվություն չի կրում ընկերության պարտավորությունների համար |
| | | | սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության  մասնակիցը իրավունք ունի դուրս գալ ընկերությունից միայն մյուս մասնակիցների համաձայնությամբ |
| | | | բանկի մասնակից չեն կարող լինել կուսակցությունները և արհեստակցական միությունները |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ՍՊԸ հանդիսացող բանկերի ռեեստրը վարում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը |
| | 583 | Բանկի կանոնադրության մեջ լրացումներ եւ փոփոխություններ կատարվում են բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից | միաձայն |
| | | | ձայների 3/4-ով |
| | | | ձայների 2/3-ով |
| | | | ձայների պարզ մեծամասնությամբ |
| | 584 | Բանկի մասնակից չի կարող լինել՝ | քաղաքացին |
| | | | կուսակցությունը |
| | | | օտարերկրյա իրավաբանական անձը |
| | | | անհատ ձեռնարկատերը |
| | 585 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | ՍՊԸ-ի մասնակիցը իրավունք չունի դուրս գալ ընկերությունից |
| | | | ՍՊԸ-ի մասնակիցը իրավունք ունի դուրս գալ ընկերությունից միայն այն դեպքում, երբ նրա մասնակցություն ձեռք բերելուց հետո անցել է առնվազն երկու տարի |
| | | | ՍՊԸ-ի մասնակիցը իրավունք ունի ցանկացած պահի դուրս գալ ընկերությունից՝ անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից |
| | | | ՍՊԸ-ի մասնակիցը իրավունք ունի դուրս գալ ընկերությունից միայն այն դեպքում, երբ առկա է մյուս մասնակիցների համաձայնությունը |
| | 586 | ՍՊԸ-ի մասնակցին, որն իր գործողություններով կամ անգործությամբ դժվարեցնում կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը ՍՊԸ-ից հեռացնել կարող է | դատարանը՝ ՍՊԸ-ի ցանկացած մասնակցի պահանջով |
| | | | դատարանը՝ ՍՊԸ-ի առնվազն 10 տոկոս բաժնեմասը տնօրինող մասնակցի պահանջով |
| | | | ընդհանուր ժողովը՝ ՍՊԸ-ի ցանկացած մասնակցի պահանջով |
| | | | ընդհանուր ժողովը՝ դատախազության գրության հիման վրա |
| | 587 | Բանկի կանոնադրական հիմնադրամը կարող է համալրվել | միայն ՀՀ դրամով |
| | | | ՀՀ արժույթով և արտարժույթով |
| | | | ՀՀ արժույթով և արժեթղթերով |
| | | | նշված բոլոր արժեքներով |
| | 588 | Համաձայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններների մասին» ՀՀ օրենքի, վերստուգիչ հանձնաժողովի ստեղծումը | պարտադիր է՝ անկախ մասնակիցների թվից |
| | | | պարտադիր չէ |
| | | | պարտադիր է, եթե ՍՊԸ-ն ունի 20-ից ավելի մասնակից |

| | | | |
|---|---|---|---|
| | | | պարտադիր է, եթե ՍՊԸ-ն ունի 10-ից ավելի մասնակից |
| | 589 | Բանկային գաղտնիքի հրապարակում է համարվում՝ | բանկի կողմից իր հաճախորդի հաշվի կամ կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը վարկային կազմակերպությանը |
| | | | բանկի կողմից իր հաճախորդի հաշվի կամ կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը բանկին |
| | | | դատարանում բանկի և իր հաճախորդի միջև վեճի առկայության դեպքում իր հաճախորդի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակումը, առանց իր հաճախորդի համաձայնությամբ |
| | | | բանկի կողմից իր հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը ՀՀ Ազգային Ժողովի վերահսկիչ պալատին |
| | 590 | Բաժնետիրական ընկերության պարտավորությունների համար ընկերության բաժնետերերը իրենց գույքով<br>ա) կրում են համապարտ պատասխանատվություն<br>բ) պատասխանատվություն չեն կրում,<br>գ) կարող են կրել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն, եթե ունենալով ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցում տալու իրավունք, իրենց գործունեության հետևանքով ընկերությունը անվճարունակ (սնանկ) է ճանաչվել | ճիշտ է միայն ա) պնդումը, |
| | | | ճիշտ են միայն ա) և գ) պնդումը, |
| | | | ճիշտ է միայն գ) պնդումը, |
| | | | ճիշտ են միայն բ) և գ) պնդումները |
| | 591 | Բաժնետիրական ընկերության մասնաճյուղը<br>ա) կանոնադրությամբ նախատեսված դեպքերում իրականացնում է նրա բոլոր գործառույթները,<br>բ) կանոնադրությամբ նախատեսված դեպքերում իրականացնում է նրա գործառույթների մի մասը,<br>գ) ներկայացնում է ընկերության շահերն ու իրականացնում դրանց պաշտպանությունը | ճիշտ է միայն ա) պնդումը |
| | | | ճիշտ է միայն բ) պնդումը |
| | | | ճիշտ է միայն գ) պնդումը |
| | | | ճիշտ են և ա) բ) և գ) պնդումները |
| | 592 | Բաժնետիրական ընկերությունը կարող է լուծարվել, երբ | ընկերությունը հասել է այն նպատակին, որի համար այն ստեղծվել էր |
| | | | լրացել է ընկերության գործունեության համար նախատեսված ժամկետը |
| | | | դատարանի կողմից ընկերության գրանցումն անվավեր է ճանաչվել |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 593 | Բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը բաժնետոմսերի անվանական արժեքը փոքրացնելու միջոցով նվազեցնելու դեպքում | հատուցվում է դրա հետևանքով բոլոր բաժնետերերի կրած վնասը |
| | | | հատուցվում է դրա հետևանքով բաժնետերերի կրած վնասը, բացառությամբ այն բաժնետերերի, որոնց գործողությունների հետևանքով կատարվել է կանոնադրական կապիտալի նվազեցում |
| | | | նվազում է բոլոր բաժնետերերի բաժնետոմսերի անվանական արժեքը համամասնորեն |
| | | | նվազում է միայն այն բաժնետերերի բաժնետոմսերի անվանական արժեքը, ում գործողությունների հետևանքով կատարվել է կանոնադրական կապիտալի նվազեցում |
| | 594 | Փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում ընկերության բաժնետերերը ու՞նեն բաժնետոմսերի ձեռք բերելու նախապատվության իրավունք | ոչ, նախապատվության իրավունք չունեն |
| | | | այո, նախապատվության իրավունք՝ իրենց բաժնեմասերից պակաս |
| | | | այո՝ իրենց բաժնետոմսերի 10 % չափով |
| | | | այո՝ իրենց բաժնեմասերին համամասնորեն |
| | 595 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, շահագրգիռ անձ է համարվում ընկերության փոխկապակցված անձը, որը | հանդիսանում է գործարքի կողմ |
| | | | մասնակցում է գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ |
| | | | գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող անձին փոխկապակցված անձ է |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 596 | Գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք չունի | առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն, եթե դա նախետեսված է գրավի պայմանագրով |
| | | | գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, եթե դա նախատեսված է գրավի պայմանագրով |
| | | | առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն, եթե դա նախետեսված չէ գրավի պայմանագրով |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 597 | Գրավի տեսակ է համարվում. | դրամական միջոցների  գրավը |
| | | | հիփոթեքը |
| | | | գրավատուն հանձնված գույքի գրավը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 598 | Գրավի առարկա չի կարող լինել.<br>ա) գույքը<br>բ) գույքային իրավունքը<br>գ) շրջանառությունից հանված գույքը<br>դ) ալիմենտը | ա) և բ) |
| | | | բ) և գ) |
| | | | գ) և դ) |
| | | | ա) և դ) |
| | 599 | Գրավի տեսակ չէ | գրավականը |
| | | | կոշտ գրավը |
| | | | շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավը |
| | | | շրջանառությունից հանված գույքի գրավը |
| | 600 | Գրավական է համարվում այն գրավը, որի առարկան | անցնում է գրավառուի տիրապետմանը |
| | | | հանձնվում է գրավատուն |
| | | | պահվում է բանկի կամ նոտարի դեպոզիտային հաշվում |
| | | | թողնվում է գրավատուի մոտ` գրավառուի փականքի տակ կամ գրավի մասին վկայող նշաններով |
| | 601 | Կոշտ գրավ է համարվում այն գրավը, որի առարկան | անցնում է գրավառուի տիրապետմանը |
| | | | հանձնվում է գրավատուն |
| | | | պահվում է բանկի կամ նոտարի դեպոզիտային հաշվում |
| | | | թողնվում է գրավատուի մոտ` գրավառուի փականքի տակ կամ գրավի մասին վկայող նշաններով |
| | 602 | Անվանական արժեթղթերով հավաստված իրավունքները փոխանցվում են | արժեթուղթը հանձնելով այլ անձի |
| | | | պահանջների զիջման (ցեսիայի) համար սահմանված կարգով |
| | | | դատական կարգով |
| | | | արժեթղթի վրա փոխանցագիր (ինդոսամենտ) կատարելու միջոցով |
| | 603 | Օրդերային արժեթղթով իրավունքները փոխանցվում են | արժեթուղթը հանձնելով այլ անձի |
| | | | պահանջների զիջման (ցեսիայի) համար սահմանված կարգով |
| | | | դատական կարգով |
| | | | արժեթղթի վրա փոխանցագիր (ինդոսամենտ) կատարելու միջոցով |

| | | | |
|---|---|---|---|
| | 604 | Նշվածներից ո՞րը (որո՞նք) չի հանդիսանում ինվեստիցիոն (ներդրումային) արժեթուղթ.<br>ա) բաժնետոմս<br>բ) չեկ<br>գ) պարտատոմս<br>դ) կոնոսամենտ | ա) և բ) |
| | | | բ) և գ) |
| | | | միայն բ) |
| | | | բ) և դ) |
| | 605 | Նշվածներից ո՞րն (որո՞նք են) է հանդիսանում վճարային արժեթուղթ.<br>ա) բաժնետոմս<br>բ) չեկ<br>գ) պարտատոմս<br>դ) կոնոսամենտ | ա) և բ) |
| | | | բ) և գ) |
| | | | միայն բ) |
| | | | բ) և դ) |
| | 606 | Ըստ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի պարտատոմսերը կարող են լինել | ըստ ներկայացնողի կամ անվանական |
| | | | անվանական կամ օրդերային |
| | | | ըստ ներկայացնողի կամ օրդերային |
| | | | միայն անվանական |
| | 607 | Նոտարական վավերացման է ենթակա | ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիրը |
| | | | գործառնական վարձակալության (լիզինգի) պայմանագիրը |
| | | | անշարժ գույքի ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիրը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 608 | Նշվածներից ո՞ր պայմանագրերն են կնքվում գրավոր | վարկային պայմանագիրը |
| | | | լիզինգի պայմանագիրը |
| | | | դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագիրը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 609 | Ֆինանսական գործակալին դրամական պահանջի զիջումը վավեր է, եթե | դրա արգելքի կամ սահմանափակման մասին համաձայնություն գոյություն չունի հաճախորդի և նրա պարտապանի միջև |
| | | | նույնիսկ դրա արգելքի կամ սահմանափակման մասին համաձայնություն գոյություն ունի հաճախորդի և նրա պարտապանի միջև |
| | | | իրականացվել է օրենքի բոլոր պահանջներին համապատասխան |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 610 | Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հաշվարկվում են | ավանդը բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն ավանդատուի հաշվից դուրս գրելու օրը ներառյալ |
| | | | ավանդը բանկ մուտք լինելու  օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար |
| | | | ավանդը բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն ավանդատուի հաշվից դուրս գրելու օրվան նախորդող օրը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 611 | Գույքը ենթակա չէ փոխանցման | անհատ ձեռնարկատիրոջ հավատարմագրային կառավարմանը |
| | | | առևտրային կազմակերպության հավատարմագրային կառավարմանը |
| | | | պետական մարմնի հավատարմագրային կառավարմանը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 612 | Հավատարմագրային կառավարման պայմանագիրը դադարելու դեպքում, | հավատարմագրային կառավարման հանձնված գույքը փոխանցվում է կառավարման հիմնադրին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով |
| | | | հավատարմագրային կառավարման հանձնված գույքը փոխանցվում է հավատարմագրային կառավարչին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով |
| | | | հավատարմագրային կառավարման հանձնված գույքը բաժանվում է կառավարման հիմնադրի և հավատարմագրային կառավարչի միջև, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 613 | Նշված պայմանագրերից ո՞րի գրավոր ձևը չպահպանելն է հանգեցնում այդ պայմանագրի անվավերության | բանկային հաշվի պայմանագիր |
| | | | բանկային ավանդի պայմանագիր |
| | | | վարկային պայմանագիր |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 614 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի` ռեզիդենտ են համարվում<br>ա) ՀՀ-ում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) կազմակերպությունները<br>բ) ՀՀ-ում պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատերերը<br>գ) ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների դեսպանությունները<br>դ) ՀՀ տարածքում գտնվող միջազգային կազմակերպությունները | ա), բ) և գ) |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ա), գ) և դ) |
| | | | ա) և գ) |
| | | | ա) և բ) |
| | 615 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի՝ ռեզիդենտ չեն համարվում. | ՀՀ-ում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) կազմակերպությունները |
| | | | ՀՀ տարածքում գտնվող միջազգային կազմակերպությունները |
| | | | միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունները |
| | | | ՀՀ-ում պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատերերը |
| | 616 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի՝ ռեզիդենտ են համարվում. | ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների զորքերը |
| | | | ՀՀ տարածքում գտնվող միջազգային կազմակերպությունները |
| | | | ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների դեսպանությունները |
| | | | միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչությունները |
| | 617 | Կենտրոնական բանկը կարող է տիրապետել, տնօրինել և օգտագործել | արտարժույթ |
| | | | այլ պետությունների Կենտրոնական և այլ առաջնակարգ բանկերի թողարկած արժեթղթեր |
| | | | ոսկուց և այլ թանկարժեք մետաղներից պատրաստված մետաղադրամներ և ստանդարտացված ձուլակտորներ |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 618 | Կառավարության լիազորած մարմինները, ինչպես նաև ՀՀ վիճակագրական կոմիտեն Կենտրոնական բանկի հետ համաձայնեցված կարգով Կենտրոնական բանկին են տրամադրում տեղեկություններ | բանկերի ղեկավարների՝ այլ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցության մասին |
| | | | բանկերի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեցող անձանց լիակատար ցուցակը |
| | | | վճարային հաշվեկշռի,ֆինանսական և տնտեսական հարցերի վերաբերյալ |
| | | | բանկերի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց լիակատար ցուցակը |
| | 619 | Կենտրոնական բանկի խորհուրդը | հաստատում է Կենտրոնական բանկի տարեկան ծախսերի նախահաշիվը, տարեկան և այլ հաշվետվությունները |
| | | | տալիս է լիազորագրեր |
| | | | կազմակերպում է Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ ակտերի կատարումը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հաստատում է Կենտրոնական բանկի կառուցվածքը,աշխատակիցների հաստիքացուցակը |
| | 620 | Կենտրոնական բանկի նախագահի, նրա տեղակալի և խորհրդի մյուս անդամների վարձատրության չափը սահմանվում է | ոչ պակաս ԱԺ պատգամավորի աշխատավարձից |
| | | | ՀՀ նախագահի կողմից |
| | | | ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից |
| | | | ՀՀ կառավարության որոշմամբ |
| | 621 | Կենտրոնական բանկի կողմից բանկերին տրամադրվող վարկերը պետք է ապահովված լինեն` | 12 և ավելի ամիս մարման ժամկետ ունեցող հուսալի չեկերով ու մուրհակներով |
| | | | ոսկու ձուլակտորներով |
| | | | պետական արժեթղթերով |
| | | | օտարերկրյա իրավաբանական անձի կողմից թողարկված արժեթղթերով |
| | 622 | Նշել սխալ պատասխանը:<br>Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները կարող են ներառել հետևյալ միջոցները | ոսկուց և այլ թանկարժեք մետաղներից պատրաստված մետաղադրամներ և ստանդարտացված ձուլակտորներ |
| | | | ազգային արժույթով արտահայտված թղթադրամ և մետաղադրամ |
| | | | ֆյուչերս, ֆորվարդ, սվոփ և այլ ածանցյալ գործիքներ |
| | | | Արժույթի միջազգային հիմնադրամի հատուկ փոխառության իրավունքները |
| | 623 | Կենտրոնական բանկը միջազգային պահուստների վիճակի և կազմի վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացնում կառավարություն | յուրաքանչյուր ամիս |
| | | | յուրաքանչյուր եռամսյակը մեկ |
| | | | տարեկան մեկ անգամ |
| | | | տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը կազմելիս |
| | 624 | «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի իմաստով իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված,եթե | նրանք գործել են փոխհամաձայնեցված`ելնելով ընդհանուր տնտեսական շահերից |
| | | | տվյալ իրավաբանական անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի` ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին |
| | | | նրանցից մեկի կառավարման մարմնի որևէ անդամ միաժամանակ հանդիսանում է մյուս անձի կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ |
| | | | եթե նրանք գործունեություն են ծավալում միևնույն ոլորտում |

| | | | |
|---|---|---|---|
| | 625 | Նշել սխալ պատասխանը: Կենտրոնական բանկը մերժում է բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմումը, եթե | տվյալ անձը ներկայացնում է իր կողմից ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ |
| | | | անձը դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար դատվածություն ունի |
| | | | տվյալ գործարքի հետևանքով բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը և նրա հետ փոխկապակցված անձինք Հայաստանի Հանրապետության բանկային շուկայում տվյալ գործարքի հետևանքով ձեռք են բերում գերիշխող դիրք |
| | | | տվյալ գործարքի հետևանքով  բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող մասնակիցը կամ նրա հետ փոխկապակցված անձը Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով գտնվում է ֆինանսական վատ վիճակում, կամ նշանակալից մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված անձի ֆինանսական վիճակի վատթարացումը կարող է պատճառ հանդիսանալ բանկի ֆինանսական վիճակի վատթարացմանը |
| | 626 | Բանկի կանոնադրությունը պիտի պարունակի | տեղեկություններ բանկի հիմնադիրների հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ |
| | | | բանկի գտնվելու վայրը |
| | | | բանկի ղեկավարների վարձատրության չափը |
| | | | աշխատակիցների պարգևատրման համակարգը |
| | 627 | Բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանն է պատկանում | բանկի գործունեության հիմնական ուղղություններ որոշումը |
| | | | բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը |
| | | | բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի որոշումը |
| | | | խորհրդի քանակական կազմի հաստատումը |
| | 628 | Բանկի խորհրդի իրավասություններից են | բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը |
| | | | ամփոփ, միջանկյալ և լուծարային հաշվեկշիռների հաստատումը,լուծարային հանձնաժողովի նշանակումը |
| | | | դուստր ընկերությունների ստեղծումը |
| | | | խորհրդի անդամների վարձատրության չափը |

| | | | |
|---|---|---|---|
| | 629 | Նշել սխալ պատասխանը:<br> Խորհրդի նիստի արձանագրությունում նշվում են | նիստի օրակարգը |
| | | | նիստին մասնակցած անձինք |
| | | | նիստում ընդունված որոշումները |
| | | | նախորդ նիստերի անցկացման ժամկետները |
| | 630 | Նշել սխալ պատասխանը:<br>Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող բանկերի մասնաճյուղերը գրանցելու համար Կենտրոնական բանկ պիտի ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը | մասնաճյուղի կանոնադրությունը |
| | | | բանկի միջնորդագիրը |
| | | | գործադիր տնօրենի եկամուտների մասին տեղեկություն պարունակող փաստաթուղթ |
| | | | մասնաճյուղի գործունեության տնտեսական ծրագիրը |
| | 631 | Բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից բանկը զրկվում է բանկային գործունեություն իրականացնելու իրավունքից, բացառությամբ այն գործարքների,որոնք ուղղված են | կանոնադրական կապիտալի համալրմանը |
| | | | ընթացիկ իրացվելիության նորմատիվի պահպանմանը |
| | | | նրա ստանձնած պարտավորությունների կատարմանը, միջոցների իրացմանը և դրանց վերջնական բաշխմանը |
| | | | լրացուցիչ միջոցների ներգրավմանը |
| | 632 | Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության բանկերին արգելվում է այնպիսի գործարքներ կատարել,որոնց արդյունքում բանկի մասնակցությունը | մեկ այլ անձի կանոնադրական հիմնադրամում 3, 99 տոկոս և ավելի է |
| | | | մեկ անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է տվյալ բանկի հիմնական կապիտալի 10 տոկոսը |
| | | | մեկ անձի կանոնադրական հիմնադրամում գերազանցում է տվյալ բանկի ընդհանուր կապիտալի 15 տոկոսը |
| | | | բոլոր անձանց կանոնադրական հիմնադրամներում գերազանցում է տվյալ բանկի երրորդ մակարդակի կապիտալի 35 տոկոսը |
| | 633 | Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցության հետգնումը կարող է մերժվել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից,եթե | մասնակցության հետգնման դեպքում բանկն ի վիճակի չի լինի լրիվ բավարարելու իր պարտատերերի օրինական պահանջները |
| | | | կխախտի հիմնական տնտեսական նորմատիվները |
| | | | մասնակցության հետգնումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի ապակայունացմանը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 634 | Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի երկու տոկոսին և ավելիին տիրապետող յուրաքանչյուր մասնակցի պահանջով բանկը պետք է նրան անվճար տրամադրի հետևյալ տեղեկությունները (թեկուզև դրանք կազմեն բանկային, առևտրային կամ այլ գաղտնիք) | բանկի խորհրդի անդամների, գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի նախորդ տարվա ընթացքում ստացած ամբողջ վարձատրության չափը |
| | | | բանկի և նրա հետ կապված անձանց միջև կնքվող խոշոր գործարքների վերաբերյալ տեղեկություն |
| | | | բանկի կողմից բանկի հետ կապված անձի նկատմամբ ստանձնած պարտավորությունների վերաբերյալ տվյալներ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 635 | Նշել սխալ պատասխանը:<br>Կենտրոնական բանկը բանկերի նկատմամբ կարող է կիրառել հետևյալ պատժամիջոցները | նախազգուշացում և խախտումները վերացնելու հանձնարարական |
| | | | տուգանք |
| | | | բանկի ղեկավարներին որակավորման վկայականից զրկում |
| | | | լիցենզիայի անվավեր ճանաչում |
| | 636 | Բանկի լուծարման դեպքում լուծարային միջոցների հաշվին մարվում են բանկի հետևյալ պարտավորությունները<br>ա) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների ՀՀ դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներում առկա մնացորդները` մինչև 16 միլիոն դրամի չափով<br>բ) պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ պարտավորությունները<br>գ) բանկի մասնակիցների պահանջները<br>դ) լուծարային կառավարչի կողմից իրենց լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը<br>Նշել պարտավորությունների մարման ճիշտ հերթականությունը | ա), դ), գ) բ) |
| | | | բ), ա), դ), գ) |
| | | | դ), ա), գ), բ) |
| | | | դ), ա), բ), գ) |
| | 637 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» օրենքի` նշված պնդումներից որն է ճիշտ. | ավանդատուի պահանջով բանկը պարտավոր է հնգօրյա ժամկետում ավանդատուին տրամադրել բանկում առկա հաշվի վերաբերյալ հաշվի քաղվածք` բանկի հայտարարած սակագներով |
| | | | բանկը պարտավոր չէ ավանդատուին հաշվի քաղվածք տրամադրել, եթե հաշվետու ժամանակաշրջանում բանկը տվյալ հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել |
| | | | բանկը տոկոսների հաշվարկն իրականացնում է հաշվում առկա ավանդի ամբողջ գումարի նկատմամբ, ավանդային պայմանագրի ողջ ժամկետի համար` օրական կտրվածքով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 638 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» օրենքի՝ բանկի տեղեկատվական ամփոփագիրը պետք է առնվազն պարունակի հետևյալը. | տվյալ տեսակի ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ |
| | | | տեղեկատվություն տարեկան տոկոսային եկամտաբերության չափի մասին |
| | | | տարեկան պարզ տոկոսադրույքի չափի մասին |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 639 | Բանկը պարտավոր է տեղեկատվական ամփոփագրերը՝<br>ա) տեղադրել և պահպանել բանկի պաշտոնական ինտերնետային կայքում,<br>բ) տրամադրել բանկի տարածքում գտնվող յուրաքանչյուր անձի՝ նրա առաջին իսկ պահանջով, ընդ որում տեղեկատվական ամփոփագրի համար գանձվող վճարը չի կարող ավել լինել նրա պատրաստման ծախսից,<br>գ) տրամադրել ավանդատուին մինչև ավանդային պայմանագրի կնքումը և (կամ) հաշվի բացումը, | ճիշտ են բոլոր պատասխանները |
| | | | ճիշտ է միայն ա) պատասխանը |
| | | | ճիշտ են ա) և բ) պատասխանները |
| | | | ճիշտ են ա) և գ) պատասխանները |
| | 640 | Բանկի կողմից ավանդատուներին տրամադրվող հաշվի քաղվածքները պետք է պարունակեն հետևյալ տեղեկատվությունը. | վաստակված տարեկան տոկոսային եկամտաբերության չափը |
| | | | հաշվետու ժամանակաշրջանի օրերի քանակը |
| | | | յուրաքանչյուր օրվա կտրվածքով հաշվի դեբետագրումները, կրեդիտագրումները և հաշվի մնացորդը |
| | | | ճիշտ են բոլոր պատասխանները |
| | 641 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի՝ բանկը տոկոսների հաշվարկն իրականացնում է՝ | օրական կտրվածքով, ընդ որում յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկվում է սահմանված տոկոսադրույքը հարաբերելով տարվա ընթացքում աշխատանքային օրերի քանակի վրա |
| | | | ամսեկան կտրվածքով |
| | | | օրական կտրվածքով, ընդ որում յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկվում է սահմանված տոկոսադրույքի 1/360 հարաբերակցությամբ |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 642 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի՝ բանկը տոկոսների հաշվարկն իրականացնում է՝ | հաշվում առկա ավանդի ամբողջ գումարի նկատմամբ, ավանդային պայմանագրի ողջ ժամկետի համար՝ օրական կտրվածքով |
| | | | ամսեկան կտրվածքով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | օրական կտրվածքով, ընդ որում յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկվում է սահմանված տոկոսադրույքի 1/360 հարաբերակցությամբ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 643 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի՝ բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է | սահմանված տոկոսադրույքի առնվազն 1/365 հարաբերակցությամբ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | սահմանված տոկոսադրույքի առնվազն 1/360 հարաբերակցությամբ |
| | | | սահմանված տոկոսադրույքի առավելագույնը 1/360 հարաբերակցությամբ |
| | 644 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի՝ բանկը պարտավոր է տեղեկատվական ամփոփագրերը տրամադրել և պահպանել իր պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև դրանք անվճար տրամադրել՝ | բանկի տարածքում գտնվող յուրաքանչյուր անձի՝ նրա առաջին իսկ պահանջով |
| | | | ավանդատուին՝ մինչև ավանդային պայմանագրի կնքումը և (կամ) հաշվի բացումը |
| | | | այն ավանդատուին, որը բանկի հետ կնքել է երեսնօրյա ժամկետը գերազանցող ժամկետային ավանդային պայմանագիր, և այդ պայմանագիրը ենթակա է երկարաձգման՝ առանց ավանդատուի կողմից բանկին տեղեկացնելու |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 645 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի՝ | ավանդատուի պահանջով բանկը պարտավոր է հնգօրյա ժամկետում ավանդատուին տրամադրել բանկում առկա հաշվի վերաբերյալ հաշվի քաղվածք՝ բանկի հայտարարած սակագներով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | տասնօրյա ժամկետում ավանդատուին տրամադրել բանկում առկա հաշվի վերաբերյալ քաղվածք |
| | | | ավանդատուի պահանջով բանկը պարտավոր չէ տրամադրել բանկում առկա հաշվի վերաբերյալ հաշվի քաղվածք |

| | | | |
|---|---|---|---|
| | 646 | «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի պահանջները չեն տարածվում` ա) այն կրեդիտավորման պայմանագրերի վրա, որոնց համար նախատեսված չէ որևէ տոկոսի կամ այլ հատուցման վճարում(կատարում), բ) տասնհինգ միլիոն դրամը չգերազանցող կրեդիտավորման պայմանագրերի վրա, գ) վարձակալության պայմանագրերի վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ պայմանագրերով նախատեսված է, որ վարձակալության օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքն անցնելու է վարձակալին | ճիշտ են միայն ա), բ) և գ) պատասխանները |
| | | | ճիշտ են միայն  բ) և գ) պատասխանները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | ճիշտ են միայն ա) և գ) պատասխանները |
| | 647 | «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի պահանջները չեն տարածվում` ա) այն կրեդիտավորման պայմանագրերի վրա, որոնց համար նախատեսված չէ որևէ տոկոսի կամ այլ հատուցման վճարում (կատարում), բ)  տասնհինգ միլիոն դրամը գերազանցող կրեդիտավորման պայմանագրերի վրա, գ) վարձակալության պայմանագրերի վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ պայմանագրերով նախատեսված է, որ վարձակալության օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքն անցնելու է վարձակալին դ) հարյուր հազար դրամը գերազանցող և տասնհինգ միլիոն դրամը չգերազանցող կրեդիտավորման պայմանագրերի վրա, | ճիշտ են միայն ա), բ) և գ) պատասխանները |
| | | | ճիշտ են միայն ա), գ) և դ) պատասխանները |
| | | | ճիշտ են միայն ա) և գ) պատասխանները |
| | | | ճիշտ են միայն ա) և բ) պատասխանները |
| | 648 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի` կրեդիտավորման պայմանագիրը առնվազն պետք է ներառի` | նշում տուժանքի չափի մասին, որը սպառողը պետք է վճարի կրեդիտավորման պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու համար` նախատեսված լինելու դեպքում |
| | | | նշում տարեկան փաստացի տոկոսադրույքի չափի, ինչպես նաև այն փոխելու կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ |
| | | | նշում մտածելու ժամանակի մասին, որի տևողությունը պետք է լինի առնվազն երեք աշխատանքային օր |
| | | | նշում տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման համար օգտագործվող բանաձևի մասին |

| | | | |
|---|---|---|---|
| | 649 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի՝ նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | կրեդիտավորման պայմանագիրը կնքվում է գրավոր |
| | | | կրեդիտավորման պայմանագրի պայմանները պետք է շարադրվեն պարզ գրական հայերենով |
| | | | սպառողը պարտադիր ստանում է կրեդիտավորման պայմանգրի մեկ բնօրինակ |
| | | | բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | 650 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գնումը ֆինանսավորելու նպատակով կրեդիտավորման պայմանագիրը պետք է ներառի՝<br>ա) կրեդիտավորման պայմանագրով ֆինանսավորվող ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների նկարագրությունը<br>բ) նախավճարի կամ ապահովման միջոց համարվող դեպոնացվելիք այլ գումարի չափը<br>գ) կրեդիտավորման պայմանագրով ձեռք բերվող ապրանքի, ծառայության կամ աշխատանքի գինը, ինչպես նաև նույն ապրանքի, ծառայության կամ աշխատանքի գինը՝ առանց կրեդիտավորման,<br>դ) պարտավորության կատարման ապահովման միջոցի նկարագրությունը՝ դրա առկայության դեպքում | ճիշտ են միայն ա) և բ) պատասխանները |
| | | | ճիշտ են միայն ա), բ) և գ) պատասխանները |
| | | | ճիշտ են միայն ա) և դ) պատասխանները |
| | | | ճիշտ են բոլոր պատասխանները |
| | 651 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի՝ | Սպառողն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու կրեդիտավորման պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող յոթ աշխատանքային օրվա ընթացքում |
| | | | Սպառողն իրավունք ունի լուծելու կրեդիտավորման պայմանագիրը՝ կրեդիտավորողի հետ համաձայնեցնելուց հետո միայն |
| | | | Սպառողն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու կրեդիտավորման պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող յոթ աշխատանքային օրվա ընթացքում, եթե սպառողի կողմից ներկայացված պատճառաբանությունը՝ բավարարում է ԿԲ կողմից սահմանված պահանջներին |
| | | | Սպառողն իրավունք չունի լուծել կնքված կրեդիտավորման պայմանագիրը |
| | 652 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի՝ | Սպառողն իրավունք չունի կրեդիտավորման պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ մարել, եթե նման իրավունք կրեդիտավորման պայմանագրով նախատեսված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Սպառողն իրավունք ունի կրեդիտավորման պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ մարել՝ վճարելով բանկի կողմից կրեդիտավորման պայմանագրով նախատեսված տուգանքները |
| | | | Սպառողն իրավունք ունի կրեդիտավորման պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ մարել, ընդ որում տվյալ դեպքում կրեդիտավորողն իրավունք չունի կիրառել պատասխանատվության միջոցներ սպառողի նկատմամբ |
| | | | Բոլոր պատասխանները սխալ են: |
| | 653 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկելիս գործում են հետևյալ սկզբունքները. | կրեդիտավորման պայմանագրով կրեդիտի առավելագույն սահմանաչափը սահմանված չլինելու դեպքում տրամադրված կրեդիտի առավելագույն չափը մեկ միլիոն դրամն է |
| | | | կրեդիտավորման պայմանագրով կրեդիտի առավելագույն սահմանաչափը պետք է պարտադիր սահմանված լինի |
| | | | կրեդիտավորման պայմանագրով կրեդիտի առավելագույն սահմանաչափը սահմանված չլինելու դեպքում տրամադրված կրեդիտի առավելագույն չափը հարյուր հազար դրամն է |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 654 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | կրեդիտավորման պայմանագրով կրեդիտի առավելագույն սահմանաչափը սահմանված չլինելու դեպքում տրամադրված կրեդիտի առավելագույն չափը մեկ միլիոն դրամն է |
| | | | տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է կրեդիտավորման պայմանագրի կնքման պահին |
| | | | այն դեպքում, երբ կրեդիտավորման պայմանգիրը սահմանում է կրեդիտի վերադարձման մեկից ավելի ժամկետներ, ապա կրեդիտի վերադարձը կատարվում է կրեդիտավորման պայմանագրով սահմանված ամենամոտ ժամկետում |
| | | | բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | 655 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի նշված պնդումներից ո՞րն է սխալ. | այն դեպքում, երբ կրեդիտավորման պայմանգիրը սահմանում է կրեդիտի վերադարձման մեկից ավելի ժամկետներ, ապա կրեդիտի վերադարձը կատարվում է կրեդիտավորման պայմանագրով սահմանված ամենամոտ ժամկետում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է կրեդիտավորման պայմանագրի կնքման պահին |
| | | | կրեդիտավորման պայմանագրով կրեդիտի վերադարձման ժամանակացույց կամ կրեդիտավորման պայմանագրի դրույթներով վերադարձման ժամկետներ և միջոցներ սահմանված չլինելու դեպքում, կրեդիտի վերադարձման ժամկետը մեկ տարի է |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 656 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | այն դեպքում, երբ կրեդիտավորման պայմանգիրը սահմանում է կրեդիտի վերադարձման մեկից ավելի ժամկետներ, ապա կրեդիտի վերադարձը կատարվում է կրեդիտավորման պայմանագրով սահմանված ամենամոտ ժամկետում |
| | | | տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է կրեդիտավորման պայմանագրի կնքման պահին |
| | | | կրեդիտավորման պայմանագրով կրեդիտի վերադարձման ժամանակացույց կամ կրեդիտավորման պայմանագրի դրույթներով վերադարձման ժամկետներ և միջոցներ սահմանված չլինելու դեպքում, կրեդիտի վերադարձման ժամկետը մեկ տարի է |
| | | | բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | 657 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի՝ կրեդիտավորողը պարտավոր է սպառողին ներկայացնել կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների, դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկություն | իր կողմից կամ կրեդիտավորման պայամանագրով սահմանված պարբերականությամբ, որը չպետք է գերազանցի մեկ ամիսը |
| | | | ոչ պակաս քան քսանօրյա պարբերականությամբ |
| | | | կրեդիտավորողի հայեցողությամբ՝ կրեդիտավորման պայմանագրի համաձայն |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 658 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկելիս անհրաժեշտության պարագայում գործում է հետևյալ սկզբունքը. | կրեդիտավորման պայմանգիրով չի կարող սահմանվել կրեդիտի վերադարձման մեկից ավելի ժամկետներ |
| | | | կրեդիտավորման պայմանագրով կրեդիտի առավելագույն սահմանաչափը սահմանված չլինելու դեպքում տրամադրված կրեդիտի առավելագույն չափը սահմանվում է տասնհինգ միլիոն դրամ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | եթե կրեդիտավորման պայմանագրով կրեդիտի վերադարձման ժամանակացույց կամ վերադարձման ժամկետներ ու միջոցներ սահմանված չեն, կրեդիտի վերադարձման ժամկետը մեկ տարի է |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 659 | Նշեք սխալ պատասխանը. Ֆինանսական համակարգի հաշտարարը մերժում է պահանջի քննությունը, եթե | պահանջն արդեն քննվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից, և դրա վերաբերյալ առկա է նրա որոշումը |
| | | | հաճախորդի և բանկի միջև նույն պահանջի առարկայի վերաբերյալ առկա է դատարանի վճիռ |
| | | | հաճախորդը բողոք-պահանջ չի ներկայացրել կազմակերպությանը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 660 | Նշեք ճիշտ պատասխանը. Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի՝ | Բանկը պարտավոր է քննարկել հաճախորդի կողմից ներկայացված բողոք-պահանջը  և երեսուն աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդին տալ գրավոր վերջնական պատասխան |
| | | | Բանկը պարտավոր է քննարկել հաճախորդի կողմից ներկայացված բողոք-պահանջը, եթե այն ներկայացվել է ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ հաճախորդը իմացել էր կամ կարող էր իմանալ իր իրավունքի խախտման մասին |
| | | | Բանկը պարտավոր չէ քննարկել հաճախորդի բողոք-պահանջը, եթե բանկը գտնում է, որ հաճախորդի բողոք-դիմումը ենթակա չէ լրիվ կամ մասնակի բավարարման |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 661 | Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի՝ | Բանկը պարտավոր է ունենալ հաճախորդների բողոք-պահանջների քննության գործընթացը կարգավորող ներքին իրավական ակտեր, որոնք պետք է հասանելի լինեն հասարակության համար |
| | | | Ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշումը անվիճարկելի է և ենթակա չէ դատարանի կողմից քննության |
| | | | Բանկը պարտավոր է գրավոր պատասխանել Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ վերջինից պահանջի պատճենը ստանալուց երեսուն աշխատանքային օրվա ընթացքում |
| | | | Բոլոր պատասխանները  ճիշտ են: |

| | | | |
|---|---|---|---|
| | 662 | «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի նպատակն է՝<br>ա) Ֆինանսական կազմակերպությունների իրավունքների և շահերի պաշտպանությունը<br>բ) ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ հարկային վարչարարության արդյունավետության բարձրացումը<br>գ) ՀՀ-ում ստեղծված ֆինանսական կազմակերպությունների պաշտպանությունը օտարերկրյա կազմակերպությունների մրցունակությունից<br>դ) ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների և շահերի պաշտպանությունը | ճիշտ են ա), բ) և գ) պատասխանները |
| | | | ճիշտ են միայն ա) և գ) պատասխանները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | ճիշտ է միայն դ) պատասխանը |
| | 663 | «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքը կարգավորում է Ֆինանսական հաշտարարի կողմից | ֆինանսական կազմակերպությունների դեմ հաճախորդների ներկայացրած պահանջների քննության կարգը |
| | | | ֆինանսական կազմակերպությունների համար բարենպաստ մրցակցային միջավայր ձևավորելուն ուղղված միջոցառումների իրականացման կարգը |
| | | | ֆինանսական կազմակերպությունների դեմ Կենտրոնական բանկի կամ այլ պետական կառույցների կողմից կիրառած պատասխանատվության միջոցների բողոքարկման կարգը դատարանում՝ ֆինանսական կազմակերպության անունից |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 664 | «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի նպատակն է՝<br>ա) ֆինանսական համակարգի նկատմամբ սպառողների վստահության բարձրացումը, սպառողների իրավունքների պաշտպանությունը<br>բ) ֆինանսական կազմակերպությունների կողմից մատուցվող բոլոր ծառայությունների սպառողների շահերի և իրավունքների պաշտպանությունը<br>գ) բանկերի կողմից քաղաքացիների ավանդների ներգրավման պայմանների և կարգի վերաբերյալ միասնական կանոնների սահմանումը<br>դ) սպառողական կրեդիտ տրամադրող անձանց իրավունքների և շահերի պաշտպանությունը սպառողական կրեդիտներից օգտված անբարեխիղճ հաճախորդների հետ հարաբերություններում | ճիշտ է միայն դ) պատասխանը |
| | | | ճիշտ են ա), բ) և գ) պատասխանները |
| | | | ճիշտ են ա) և բ) պատասխանները |
| | | | ճիշտ է միայն ա) պատասխանը |

| | | | |
|---|---|---|---|
| | 665 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի՝ կրեդիտավորողի իրավունքներն այլ անձի փոխանցելու դեպքում | սպառողն իրավունք ունի նոր կրեդիտավորողին ներկայացնելու այն բոլոր առարկությունները, որոնք նա ունեցել է սկզբնական կրեդիտավորողի դեմ և կատարելու հանդիպակաց պարտավորությունների հաշվանց |
| | | | սպառողն իրավունք չունի նոր կրեդիտավորողին ներկայացնելու  առարկություններ, որոնք նա ունեցել է սկզբնական կրեդիտավորողի դեմ |
| | | | սպառողն իրավունք չունի նոր կրեդիտավորողի հետ կատարելու հանդիպակաց պարտավորությունների հաշվանց |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 666 | Բանկի կողմից ավանդատուներին տրամադրվող հաշվի քաղվածքները պետք է պարունակեն հետևյալ տեղեկատվությունը. | գանձված սակագները և տուժանքները |
| | | | ստացված տոկոսի գումարը |
| | | | հաշվետու ժամանակաշրջանի օրերի քանակը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 667 | Նշեք սխալ պատասխանը.<br>Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» օրենքի՝ բանկի տեղեկատվական ամփոփագիրը պետք է առնվազն պարունակի հետևյալը. | հաշվից գանձվելիք սակագների և տուժանքների նկարագրությունը և չափերը |
| | | | հաշվի այն մնացորդի չափը, որը պետք է պահպանվի խոստացված տոկոսները կամ այլ եկամուտը ստանալու համար |
| | | | ավանդատուի իրավունքների պաշտպանության վերաբերյալ տեղեկատվություն |
| | | | բանկի սնանկացման դեպքում ավանդների վերադարձման կարգն ու ժամկետները |
| | 668 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, բանկի հաստատած և քաղաքացիներին տրամադրվող յուրաքանչյուր տեղեկատվական ամփոփագիր պետք է հստակ պարունակի | տեղեկատվություն սակագների մասին |
| | | | տեղեկատվություն տոկոսադրույքների մասին |
| | | | տեղեկատվություն տուժանքների մասին |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 669 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, բանկը պարտավոր չէ | տեղեկատվական ափոփագրերը տեղադրել և պահպանել իր պաշտոնական ինտերնետային կայքում |
| | | | տեղեկատվական ափոփագրերը անվճար տրամադրել բանկի տարածքում գտնվող յուրաքանչյուր անձի՝ նրա առաջին իսկ պահանջով |
| | | | տեղեկատվական ափոփագրերը անվճար տրամադրել  ավանդատուին՝ մինչև ավանդային պայմանագրի կնքումը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | նախօրոք ավանդատուին տեղեկացնել տեղեկատվական ամփոփագրի գնի վերաբերյալ և այնուհետև գանձել սահմանված վճարը |
| | 670 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, բանկի հաստատած և քաղաքացիներին տրամադրվող յուրաքանչյուր տեղեկատվական ամփոփագիր պետք է հստակ պարունակի | տեղեկատվություն սակագների և տուժանքների մասին |
| | | | տեղեկատվություն տոկոսադրույքների մասին |
| | | | հաշվի սպասարկումից կամ ավանդային պայմանագրից բխող վեճերի լուծման կարգի, պայմանների և սահմանափակումների վերաբերյալ |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | 671 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, տեղեկատվական ամփոփագրերը գրվում են հայերեն, ընդ որում | հայերենին զուգահեռ այլ 2 օտար լեզուների օգտագործումը պարտադիր է |
| | | | հայերենին զուգահեռ այլ առնվազն մեկ օտար լեզվի օգտագործումը պարտադիր է |
| | | | հայերենին զուգահեռ այլ լեզուների օգտագործումը չի արգելվում |
| | | | հայերենին զուգահեռ այլ լեզուներրի օգտագործումն արգելվում է |
| | 672 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, բանկը պարտավոր չէ ավանդատուին հաշվի քաղվածք տրամադրել, եթե հաշվետու ժամանակաշրջանում | բանկը տվյալ հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել |
| | | | բանկը տվյալ հաշիվը դեբետագրել կամ կրեդիտագրել է 50.000 ՀՀ դրամից փոքր գումարի չափով |
| | | | բանկը տվյալ հաշիվը դեբետագրել կամ կրեդիտագրել է 5-ից քիչ անգամ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 673 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, ավանդատուի պահանջով բանկը պարտավոր է. | եռօրյա ժամկետում ավանդատուին տրամադրել բանկում առկա հաշվի վերաբերյալ հաշվի քաղվածք՝ բանկի հայտարարած սակագներով |
| | | | հնգօրյա ժամկետում ավանդատուին տրամադրել բանկում առկա հաշվի վերաբերյալ հաշվի քաղվածք, որի տրամադրման համար բանկի կողմից գանձվող վճարը չի կարող գերազանցել դրանց պատրաստման համար անհրաժեշտ ծախսերը |
| | | | հնգօրյա ժամկետում ավանդատուին տրամադրել բանկում առկա հաշվի վերաբերյալ հաշվի քաղվածք՝ բանկի հայտարարած սակագներով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հնգօրյա ժամկետում ավանդատուին տրամադրել բանկում առկա հաշվի վերաբերյալ հաշվի քաղվածք, որի տրամադրման համար բանկի կողմից գանձվող վճարը չի կարող գերազանցել 1000 ՀՀ դրամը |
| | 674 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, եթե հաշվետու ժամանակաշրջանում բանկը տվյալ հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել, ապա | բանկը պարտավոր չէ ավանդատուին հաշվի քաղվածք տրամադրել |
| | | | բանկը պարտավոր է ավանդատուի պահանջով եռօրյա ժամկետում տրամադրել  հաշվի քաղվածք |
| | | | բանկը պարտավոր է ավանդատուին հաշվի քաղվածք տրամադրել |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 675 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ. | Տեղեկատվական ամփոփագրերը գրվում են հայերեն |
| | | | Բանկը պարտավոր է տեղեկատվական ափոփագրերը անվճար տրամադրել բանկի տարածքում գտնվող յուրաքանչյուր անձի՝ նրա առաջին իսկ պահանջով |
| | | | Բանկը պարտավոր չէ տեղեկատվական ափոփագրերը անվճար տրամադրել այն ավանդատուին, որը բանկի հետ կնքել է երեսնօրյա ժամկետը գերազանցող ժամկետային ավանդային պայմանագիր |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 676 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, բանկը պարտավոր է ավանդատուին տրամադրել ավանդատուի՝ բանկում առկա յուրաքանչյուր հաշվի վերաբերյալ հաշվի քաղվածք, որում ներկայացվում են | յուրաքանչյուր օրվա կտրվածքով հաշվի դեբետագրումները, կրեդիտագրումները և հաշվի մնացորդը |
| | | | վաստակած տարեկան տոկոսային եկամտաբերության չափը |
| | | | գանձված սակագները և տուժանքները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 677 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի | առնվազն 1/360 հարաբերակցությամբ  (իսկ նահանջ տարվա համար բանկը օգտագործում է 1/366 հարաբերակցությունը) |
| | | | առնվազն 1/366 հարաբերակցությամբ |
| | | | առնվազն 1/365 հարաբերակցությամբ (իսկ նահանջ տարվա համար բանկը օգտագործում է 1/366 հարաբերակցությունը) |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 678 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, ավանդի գումարի նկատմամբ վճարվող տոկոսների դրույքաչափերի վերաբերյալ ավանդատուի հարցմանը բանավոր պատասխանելու դեպքում բանկի աշխատակիցը պարտավոր է նշել.<br>ա. ամսական տոկոսային եկամտաբերությունը<br>բ. տարեկան տոկոսային եկամտաբերությունը<br>գ. պարզ տոկոսի տարեկան դրույքաչափը<br>դ. բարդ տոկոսի տարեկան դրույքաչափը | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | միայն (գ) և (դ) |
| | | | (ա), (բ), (գ) և (դ) |
| | 679 | Նշել ճիշտ պնդումը.<br>Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի. | բանկն իրավունք ունի ավանդային պայմանագրի կնքումը պայմանավորելու արբիտրաժային համաձայնության կնքմամբ |
| | | | բանկը պարտավոր է ավանդային պայմանագրի կնքումը պայմանավորել արբիտրաժային համաձայնության կնքմամբ |
| | | | բանկը իրավունք չունի ավանդային պայմանագրի կնքումը պայմանավորելու արբիտրաժային համաձայնության կնքմամբ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 680 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, բանկի կողմից սույն օրենքի և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջները 365 օրվա ընթացքում խախտելու համար ԿԲ-ը կարող է նշանակել տուգանք, | մեկ անգամ խախտելու համար` երեք հարյուր հազարից մինչև հինգ հարյուր հազար ՀՀ դրամի չափով |
| | | | երկու անգամ խախտելու համար` հինգ հարյուր հազարից մինչև  մեկ միլիոն ՀՀ դրամի չափով |
| | | | երեք անգամ խախտելու համար` մեկ միլիոնից մինչև երկու միլիոն ՀՀ դրամի չափով |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 681 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, բանկի կողմից սույն օրենքի և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջները  365 օրվա ընթացքում խախտելու համար ԿԲ-ը կարող է նշանակել տուգանք  հինգ հարյուր հազարից մինչև մեկ միլիոն ՀՀ դրամի չափով, եթե | թույլ է տվել նշված պահանջների երեք և ավելի խախտում |
| | | | թույլ է տվել նշված պահանջների մեկ խախտում |
| | | | թույլ է տվել նշված պահանջների երկու խախտում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 682 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, բանկի կողմից սույն օրենքի և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջները խախտելու համար ԿԲ-ը կարող է նշանակել տուգանք, որը գանձվում է | հօգուտ ՀՀ ԿԲ-ի |
| | | | հօգուտ ՀՀ պետական բյուջեի եկամուտների |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հօգուտ այն համայնքի բյուջե, որտեղ գտնվում է բանկի գլխամասային գրասենյակը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 683 | Համաձայն «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի, բանկի ծառայություններից օգտվող ավանդատուի իրավունքների խախտման փաստը հաստատվելու դեպքում դատարանի վճռով, անտրային արբիտրաժի կամ ֆինանսական հաշտարարի որոշմամբ բանկը պարտավոր է | ավանդատուին փոխհատուցել չմատուցված ծառայությունների դիմաց |
| | | | ավանդատուին վճարել երեք հարյուր հազար դրամ |
| | | | ավանդատուին 30 օրվա ընթացքում վճարել հարյուր հիսուն հազար դրամ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 684 | «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի պահանջների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է | Կենտրոնական բանկը՝ Հայաստանի բանկերի միության հետ համատեղ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | միայն Կենտրոնական բանկը |
| | | | Ֆինանսական համակարգի հաշտարարը |
| | 685 | Նշեք սխալ պատասխանը.<br>Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի. | Կրեդիտավորման պայմանագիրը կնքվում է գրավոր |
| | | | Սպառողը ցանկության դեպքում ստանում է կրեդիտավորման պայմանագրի մեկ բնօրինակ |
| | | | Կրեդիտավորման պայմանագրի պայմանները պետք է շարադրվեն պարզ գրական հայերենով |
| | | | Վարկային քարտը կարող է տրամադրվել սպառողին միայն վերջինիս գրավոր համաձայնության առկայության դեպքում |
| | 686 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի. | վարկային քարտը կարող է տրամադրվել սպառողին վերջինիս գրավոր կամ բանավոր առկայության դեպքում |
| | | | վարկային քարտը կարող է տրամադրվել սպառողին վերջինիս բանավոր համաձայնության առկայության դեպքում |
| | | | վարկային քարտը կարող է տրամադրվել սպառողին միայն վերջինիս գրավոր համաձայնության առկայության դեպքում |
| | | | վարկային քարտը կարող է տրամադրվել սպառողին առանց վերջինիս գրավոր համաձայնության |
| | 687 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, սպառողն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծել կրեդիտավորման պայմանագիրը | դրա կնքմանը հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե կրեդիտավորման պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե կրեդիտավորման պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ |
| | | | դրա կնքմանը հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե կրեդիտավորման պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ |
| | | | դրա կնքմանը հաջորդող 30 աշխատանքային օրվա ընթացքում, եթե կրեդիտավորման պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ |
| | 688 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, սպառողն իրավունք ունի կրեդիտավորման պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու) | եթե նման իրավունք նախատեսված է կրեդիտավորման պայմանագրով |
| | | | եթե տրամադրված կրեդիտի մեծությունը կազմում է առնվազն 100 միլիոն ՀՀ դրամ |
| | | | անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք կրեդիտավորման պայմանագրով նախատեսված է, թե ոչ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 689 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկելիս անհրաժեշտության պարագայում գործող սկզբունքներից է | կրեդիտավորման պայմանագրով կրեդիտի առավելագույն սահմանաչափը սահմանված չլինելու դեպքում՝ տրամադրված կրեդիտի առավելագույն չափը 500.000 ՀՀ դրամ է |
| | | | կրեդիտավորման պայմանագրով կրեդիտի առավելագույն սահմանաչափը սահմանված չլինելու դեպքում՝ տրամադրված կրեդիտի առավելագույն չափը 1 միլիոն դրամ է |
| | | | կրեդիտավորման պայմանագրով կրեդիտի առավելագույն սահմանաչափը սահմանված չլինելու դեպքում՝ տրամադրված կրեդիտի առավելագույն չափը 3 միլիոն դրամ է |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 690 | Նշեք ամբողջական պատասխանը.<br>Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, կրեդիտավորող են համարվում.<br>ա. ՀՀ առևտրային բանկերը<br>բ. օտարերկրյա բանկի ներկայացուցիչները<br>գ. վարկային կազմակերպությունները<br>դ. գրավատները | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա), (բ) և (գ) |
| | | | միայն (ա), (գ) և (դ) |
| | | | (ա), (բ) (գ) և (դ) |

| | | | |
|---|---|---|---|
| | 691 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, կրեդիտավորման պայմանագիրը ներառում է | նշում տարեկան փաստացի տոկոսադրույքի չափի վերաբերյալ |
| | | | նշում տարեկան փաստացի տոկոսադրույքը փոխելու կարգի վերաբերյալ |
| | | | նշում տարեկան փաստացի տոկոսադրույքը փոխելու պայմանների և ժամկետների վերաբերյալ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 692 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, օրենքով սահմանված պահանջները չեն տարածվում. | տասնհինգ միլիոն դրամը գերազանցող կրեդիտավորման պայմանագրերի վրա |
| | | | հարյուր հազար դրամը գերազանցող և տասը միլիոն դրամը չգերազանցող կրեդիտավորման պայմանագրերի վրա |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջները տարածվում են կրեդիտավորման բոլոր պայմանագրերի վրա |
| | 693 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսը իրենից ներկայացնում է. | այն բոլոր գումարները, որոնք սպառողը վճարել է կրեդիտավորման պայմանագրով նախատեսված ապրանքը ձեռք բերելու համար |
| | | | բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել (կատարել) կրեդիտավորման համար |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | կրեդիտավորման պայմանագրով՝ նախապես հաստատված սահմանաչափով  սպառողին տրամադրված գումարը |
| | 694 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, Վարկային քարտերով կրեդիտավորման պայմանագրերը ներառում են.<br>ա) վարկային քարտով տրամադրվող կրեդիտի առավելագույն սահմանաչափը<br>բ) կրեդիտի վերադարձման պայմանները կամ դրանց որոշման կարգը<br>գ) կրեդիտի օգտագործման ոլորտները | միայն ա) և բ) տարբերակները |
| | | | միայն ա) և  գ) տարբերակները |
| | | | բոլոր տարբերակները միասին |
| | | | միայն բ) և գ) տարբերակները |
| | 695 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, սպառողի կողմից պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու) դեպքում | կրեդիտավորողի կողմից գանձվում է տույժ՝ ժամկետից շուտ մարված գումարի մեկ տոկոսի չափով |
| | | | համամասնորեն նվազեցվում է սպառողի կրեդիտավորման  ընդհանուր ծախսը |
| | | | կրեդիտավորողի կողմից գանձվում է տուգանք՝ որի չափը որոշվում է համաձայն կրեդիտավորման պայմանագրի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 696 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ. | «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջները չեն տարածվում տասնհինգ միլիոն դրամը գերազանցող կրեդիտավորման պայմանագրերի վրա |
| | | | սպառողի կողմից պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու) դեպքում համամասնորեն նվազեցվում է սպառողի ընդհանուր կրեդիտավորման ծախսը |
| | | | սպառողի կողմից պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու) դեպքում սպառողի ընդհանուր ծախսը չի փոփոխվում |
| | | | Կրեդիտավորողի իրավունքներն այլ անձի փոխանցելու դեպքում սպառողն իրավունք ունի կատարելու հանդիպակաց պարտավորությունների հաշվանց |
| | 697 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Կրեդիտավորողի իրավունքներն այլ անձի փոխանցելու դեպքում սպառողն իրավունք ունի նոր կրեդիտավորողին ներկայացնելու այն բոլոր առարկությունները, որոնք նա ունեցել է սկզբնական կրեդիտավորողի դեմ |
| | | | սպառողի կողմից պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու) դեպքում համամասնորեն նվազեցվում է սպառողի ընդհանուր կրեդիտավորման ծախսը |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | | | Կրեդիտավորողի իրավունքներն այլ անձի փոխանցելու դեպքում սպառողն իրավունք ունի կատարելու հանդիպակաց պարտավորությունների հաշվանց |
| | 698 | Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական համակարգի հաշտարարի հաճախորդ կարող են լինել. | միայն ֆիզիկական անձինք |
| | | | միայն իրավաբանական անձինք |
| | | | և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձինք |
| | | | միայն ֆիզիկական անձինք և օտարերկրյա իրավաբանական անձանց՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերը և/կամ ներկայացուցիչները |

| | | | |
|---|---|---|---|
| | 699 | Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական համակարգի հաշտարարը իրավասու է քննելու այն պահանջները, որոնք. | պարունակում են մեկ միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ |
| | | | պարունակում են երեք միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ |
| | | | պարունակում են հինգ միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ |
| | | | պարունակում են տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ |
| | 700 | Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, հաճախորդն իրավունք ունի դիմելու ֆինանսական համակարգի հաշտարարին | անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք հաճախորդի և բանկի միջև կնքված պայմանագրով նախատեսված է, թե ոչ |
| | | | միայն այն դեպքում, երբ նման իրավունք հաճախորդի և բանկի միջև կնքված պայմանագրով նախատեսված է |
| | | | միայն այն դեպքում, երբ բանկը թույլատրում է հաճախորդին դիմելու Ֆինանսական համակարգի հաշտարարին |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 701 | Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու հաճախորդի իրավունքը սահմանափակող համաձայնությունը կամ պայմանն առ ոչինչ է |
| | | | Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից պահանջն ընդունելու կապակցությամբ հաճախորդից որևէ վճար չի գանձվում |
| | | | Մինչև պահանջը Ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացնելը հաճախորդը պետք է բանկին ներկայացնի բողոք-պահանջը |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | 702 | Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից պահանջն ընդունելու կապակցությամբ հաճախորդից որևէ վճար չի գանձվում |
| | | | Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից պահանջը քննելու և որոշում կայացնելու կապակցությամբ հաճախորդից որևէ վճար չի գանձվում |
| | | | Բանկը պարտավոր է բողոք-պահանջը ստանալու պահից տասն աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդին գրավոր տրամադրել վերջնական պատասխան |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 703 | Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացվող պահանջը ներառում է | հաճախորդի անունը |
| | | | հաճախորդի բնակության և հաղորդակցման հասցեները |
| | | | պահանջը ներկայացնելու ամսաթիվը, ամիսը և տարին |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 704 | Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, Ֆինանսական համակարգի հաշտարարը մերժում է պահանջի քննությունը, եթե | դատարանի վարույթում քննվում է հաճախորդի և բանկի միջև նույն պահանջի առարկայի վերաբերյալ գործ |
| | | | պահանջն արդեն քննվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից, և դրա վերաբերյալ առկա է նրա որոշումը |
| | | | պահանջը ստորագրվել է անգործունակ անձի կողմից |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 705 | Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից պահանջն ընդունելու, քննելու և որոշում կայացնելու կապակցությամբ | հաճախորդից գանձվում է վճար` պահանջի գումարի 5 տոկոսի չափով |
| | | | հաճախորդից գանձվում է վճար` պահանջի գումարի 1 տոկոսի չափով |
| | | | հաճախորդից գանձվում է վճար` պահանջի գումարի 0.7 տոկոսի չափով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 706 | Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական համակարգի հաշտարարը իր որոշմամբ դադարեցնում է պահանջի քննությունը, եթե | հաճախորդը հրաժարվել է պահանջից |
| | | | բանկը դիմել է ֆինանսական համակարգի հաշտարարին նման միջնորդությամբ |
| | | | բանկի նկատմամբ կիրառվել է տուգանք ԿԲ որոշմամբ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 707 | Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական համակարգի հաշտարարը իր որոշմամբ դադարեցնում է պահանջի քննությունը, եթե | հաճախորդը մահացել է |
| | | | բանկը լուծարվել է |
| | | | պահանջի քննության ընթացքում պարզվել է, որ պահանջի առարկայի վերաբերյալ առկա է դատարանի վճիռ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 708 | Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, Ֆինանսական համակարգի հաշտարարը մերժում է պահանջի քննությունը, եթե | պահանջն արդեն քննվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից, և դրա վերաբերյալ առկա է նրա որոշումը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | պահանջն ակնհայտորեն զրպարտիչ է |
| | | | հաճախորդի և բանկի միջև նույն պահանջի առարկայի վերաբերյալ առկա է դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վճիռ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 709 | Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Ֆինանսական համակարգի հաշտարարի հաճախորդ կարող են լինել ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերերը կամ իրավաբանական անձինք |
| | | | Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից պահանջն ընդունելու կապակցությամբ հաճախորդից որևէ վճար չի գանձվում |
| | | | ֆինանսական համակարգի հաշտարարը իրավասու է քննելու այն պահանջները, որոնք կապված են բանկի կողմից մատուցվող ծառայությունների հետ և պարունակում են տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | 710 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի. տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկելիս անհրաժեշտության դեպքում գործում է հետևյալ սկզբունքը. այն դեպքում, երբ կրեդիտավորման պայմանագիրը սահմանում է կրեդիտի վերադարձման մեկից ավելի ժամկետներ, ապա | կրեդիտի վերադարձը կատարվում է կրեդիտավորման պայմանագրով սահմանված ամենամոտ ժամկետում |
| | | | կրեդիտավորման պայմանագիրը չի կարող սահմանել կրեդիտի վերադարձման մեկից ավելի ժամկետներ |
| | | | կրեդիտի վերադարձը կատարվում է կրեդիտավորման պայմանագրով սահմանված ամենաուշ ժամկետում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 711 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի. Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Սպառողն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու կրեդիտավորման պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե կրեդիտավորման պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ |
| | | | Սպառողի կողմից պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու) դեպքում սպառողի ընդհանուր ծախսը մնում է անփոփոխ |
| | | | «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջները տարածվում են կրեդիտավորման բոլոր պայմանագրերի վրա |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 712 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի. | Սպառողն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու կրեդիտավորման պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե կրեդիտավորման պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ |
| | | | Սպառողի կողմից պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու) դեպքում համամասնորեն նվազեցվում է սպառողի ընդհանուր կրեդիտավորման ծախսը |
| | | | Օվերդրաֆտը բանկի կողմից կրեդիտի տեսքով սպառողական նպատակով բանկային, ավանդային կամ այլ հաշվի վրա տրամադրված գումար կամ այդպիսի գումարի տրամադրման խոստումն է, այդ թվում` վճարային քարտերով |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | 713 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Կրեդիտ է համարվում պարտավորության տարաժամկետ վճարման իրավունքը, վարկը, փոխառությունը, ֆինանսական վարձակալությունը (լիզինգ) կամ որևէ այլ համաձայնություն կամ պայմանավորվածություն, որի նպատակը ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ձեռքբերումը ֆինանսավորելն է |
| | | | Կրեդիտավորման պայմանագիրը իրենից ներկայացնում է գործարք, որով կրեդիտավորողը սպառողին տրամադրում կամ խոստանում է տրամադրել կրեդիտ |
| | | | «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջները չեն տարածվում տասնհինգ միլիոն դրամը գերազանցող կրեդիտավորման պայմանագրերի վրա |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | 714 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի. սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ չեն ներառվում հետևյալ վճարները. | այն վճարները, որոնք սպառողի կողմից ենթակա են վճարման` անկախ ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների դիմաց վճարումը կրեդիտով կամ առանց կրեդիտի (cash price) կատարելու հանգամանքի |
| | | | այն վճարները, որոնք սպառողը կատարում է կրեդիտի մարման և տոկոսների վճարման նպատակով կատարվող փոխանցումների համար |

| | | | |
|---|---|---|---|
| | | | այն վճարները, որոնք սպառողը կատարում է կրեդիտի մարման և տոկոսների վճարման նպատակով բացված հաշիվների սպասարկման համար |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 715 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի. սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ չեն ներառվում հետևյալ վճարները. ա) այն վճարները, որոնք սպառողը կատարում է կրեդիտի մարման և տոկոսների վճարման նպատակով կատարվող փոխանցումների համար բ) ապահովագրության, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների դիմաց կատարվող վճարները, երբ այդ ծառայություններից օգտվելը կրեդիտավորման պայմանագիրը կնքելու նախապայմանն է և այդ ծառայությունների շահառուն կրեդիտավորողն է գ) կրեդիտավորման պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար վճարված կամ վճարվելիք տուժանքները | միայն ա) և բ) տարբերակները |
| | | | միայն բ) և գ) տարբերակները |
| | | | միայն ա) և գ) տարբերակները |
| | | | նշված բոլոր վճարներն էլ չեն ներառվում սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ |
| | 716 | Համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի. տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է | կրեդիտավորման պայմանագրի կնքման պահին՝ ենթադրելով, որ կրեդիտավորման պայմանագիրը գործելու է պայմանավորված ժամկետում, և պայմանագրի կողմերը պատշաճ կերպով և պայմանավորված ժամկետներում կատարելու են պայմանագրով ստանձնած պարտավորությունները |
| | | | կրեդիտավորման պայմանագրի ավարտին |
| | | | կրեդիտավորման պայմանագրի կնքման պահին հաջորդող տասներորդ օրը՝ ենթադրելով, որ կրեդիտավորման պայմանագիրը գործելու է պայմանավորված ժամկետում, և պայմանագրի կողմերը պատշաճ կերպով և պայմանավորված ժամկետներում կատարելու են պայմանագրով ստանձնած պարտավորությունները |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 717 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, գրավի առարկա չի կարող լինել. | շրջանառությունից հանված գույքը |
| | | | կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջները |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |

| | | | |
|---|---|---|---|
| | | | պարտատիրոջ անձի հետ անխզելիորեն կապված պահանջները |
| | 718 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Առանց գույքի սեփականատիրոջ համաձայնության՝ վարձակալության իրավունքի գրավը չի թույլատրվում |
| | | | Այն գույքի գրավը, որը չի կարող բաժանվել առանց դրա նշանակության փոփոխման, չի կարող գրավ դրվել մաս առ մաս |
| | | | Գույքի գրավատու կարող է լինել միայն դրա սեփականտերը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 719 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Գրավ դրված գույքը այլ գրավի (հաջորդող գրավ) առարկա դարձնելու գրավատուի իրավունքը սահմանափակող համաձայնությունն առ ոչինչ է |
| | | | Գրավ դրված գույքը կարող է դառնալ այլ գրավի առարկա |
| | | | Գրավատուն իրավունք ունի օգտվելու գրավի առարկայից՝ դրա նշանակությանը համապատասխան |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 720 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, գրավի տեսակներն են.<br>ա) շրջանառությունից հանված գույքը<br>բ) դրամական միջոցների գրավը<br>գ) գրավատուն հանձնված գույքի գրավը<br>դ) հիփոթեքը | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | միայն ա) և բ) տարբերակները |
| | | | միայն բ), գ) և դ) տարբերակները |
| | | | միայն ա) և գ) տարբերակները |
| | 721 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, գրավական է համարվում այն գրավը, | որը կարող է դառնալ այլ գրավի առարկա |
| | | | որի առարկան անցնում է գրավառուի տիրապետմանը |
| | | | որը կարող է փոխարինվել մեկ այլ գրավի առարկայով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 722 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, գրավի տեսակներն են.<br>ա. շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավը<br>բ. գրավականը<br>գ. գրավատուն հանձնված գույքի գրավը<br>դ. իրավունքների գրավը | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | միայն ա) և բ) տարբերակները |
| | | | միայն բ), գ) և դ) տարբերակները |
| | | | միայն բ) և գ) տարբերակները |

| | | | |
|---|---|---|---|
| | 723 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, գրավի առարկա դրամական միջոցները պահվում են | գրավատուի մոտ` գրավառուի փականքի տակ |
| | | | բանկի կամ նոտարի դեպոզիտային հաշվում |
| | | | գրավատուի մոտ` գրավի մասին վկայող նշաններով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 724 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, | Ավանդը վերադարձնելը բանկն իրականացնում է բանկային գրքույկը ներկայացնելիս |
| | | | Ավանդից տոկոսներ վճարելը բանկն իրականացնում է բանկային գրքույկը ներկայացնելիս |
| | | | Ավանդի հաշվից դրամական միջոցներն այլ անձանց փոխանցելը բանկն իրականացնում է բանկային գրքույկը ներկայացնելիս |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 725 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, անկանխիկ հաշվարկներ իրականացնելիս թույլատրվում են հաշվարկներ | վճարման հանձնարարականներով |
| | | | ակրեդիտիվով |
| | | | չեկերով |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 726 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, | բանկն իրավունք ունի հաճախորդի հանձնարարկնում նշված դրամական միջոցների փոխանցման գործառնությունների կատարման համար ներգրավել այլ բանկեր |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | բանկն իրավունք չունի հաճախորդի հանձնարարկնում նշված դրամական միջոցների փոխանցման գործառնությունների կատարման համար ներգրավել այլ բանկեր |
| | | | բանկը պարտավոր է ինքնուրույն իրականացնել հաճախորդի հանձնարարկնում նշված դրամական միջոցների փոխանցման գործառնությունները |
| | 727 | Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, անկանխիկ կարող են իրականացվել.<br>ա) իրավաբանական անձանց միջև հաշվարկները<br>բ) քաղաքացիների մասնակցությամբ հաշվարկները` կապված նրանց ձեռնարկատիրական գործունեության հետ<br>գ) քաղաքացիների մասնակցությամբ հաշվարկները, որոնք կապված չեն նրանց ձեռնարկատիրական գործունեության հետ | միայն ա) և բ) տարբերակները |
| | | | միայն ա) և գ) տարբերակները |
| | | | միայն բ) և գ) տարբերակները |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 728 | Համածայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությույունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության հիմնադիր կամ մասնակից չեն կարող  լինել. | ֆիզիկական և իրավաբանական անձինք |
| | | | Հայաստանի Հանրապետությունը |
| | | | համայնքները |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 729 | Համածայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությույունների մասին» ՀՀ օրենքի, ընկերության հիմնադիր կամ մասնակից  կարող են լինել. | ֆիզիկական և իրավաբանական անձինք |
| | | | Հայաստանի Հանրապետությունը |
| | | | համայնքները |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 730 | Համածայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությույունների մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | Ընկերությանը պատկանող բաժնեմասերը հաշվի են առնվում ընդհանուր ժողովի կողմից որոշումների ընդունման ժամանակ քվեարկության արդյունքները որոշելիս |
| | | | Ընկերության մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ դուրս գալ ընկերությունից` անկախ ընկերության կամ նրա մասնակիցների համաձայնությունից |
| | | | Ընկերությանը պատկանող բաժնեմասերը հաշվի են առնվում  ընկերության լուծարման դեպքում գույքը բաշխելիս |
| | 731 | Համածայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընդհանուր ժողովի բացառիկ լիազորություններից են.<br>ա) առանց լիազորագրի գործում է ընկերության անունից, այդ թվում` ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ<br>բ) ընկերության աուդիտի իրականացման որոշումն ընդունելը<br>գ) ընկերության կանոնադրության և ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը<br>դ) տալիս է հրամաններ` ընկերության աշխատակիցներին պաշտոնների նշանակման, նրանց տեղափոխման և ազատման վերաբերյալ | միայն ա) և բ) տարբերակները |
| | | | մրայն բ) և գ) տարբերակները |
| | | | միայն ա) և գ) տարբերկաները |
| | | | նշված բոլոր տարբերակները միասին |
| | 732 | Համածայն «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությույունների մասին» ՀՀ օրենքի,  ընկերությունը կարող է լուծարվել. | նրա սնանկության հետևանքով |
| | | | կամավոր` ընդհանուր ժողովի որոշմամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հարկադիր` դատական կարգով, միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 733 | Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է  յոթ միլիոն հայկական դրամից, ապա | երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժութային բանկային ավանդը` յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով |
| | | | ապա երաշխավորվում է միայն արտարժութային ավանդը` մինչև յոթ միլիոն հայկական դրամով |
| | | | ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը` մինչև հինգ միլիոն հայկական դրամով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 734 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | ավանդատուի բանկում բացված հաշվարկային, ընթացիկ, ժամկետային, խնայողական կամ այլ հաշվի վրա գտնվող դրամական միջոցների վրա հաշվարկված տոկոսների գումարները համարվում են բանկային ավանդ |
| | | | երաշխավորված բանկային ավանդ չի համարվում այն բանկային ավանդը, որի սեփականատերը հրաժարվել է իր մասի նկատմամբ սեփականության իրավունքից |
| | | | երաշխավորված բանկային ավանդ չի համարվում այն բանկային ավանդը, որը պատկանում է տվյալ բանկի ղեկավարին |
| | | | նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | 735 | «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով սահմանված երաշխիքային վճարները չկատարելու դեպքում | այդ գումարների վրա հաշվարկվում են երաշխիքային վճար կատարելու համար սահմանված օրվա դրությամբ գործող բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով տոկոսներ |
| | | | բանկերն ու դրանց ղեկավարները պատասխանատվություն են կրում «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով |
| | | | այդ գումարների վրա հաշվարկվում են երաշխիքային վճար կատարելու համար սահմանված օրվա դրությամբ գործող բանկային տոկոսի հաշվարկային դրույքի եռապատիկի չափով տոկոսներ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 736 | Ավանդատուն անվճարունակ բանկում ունի ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ներդրված երկու ավանդ, ընդ որում, ՀՀ դրամով ավանդի գումարը կազմում է 7.5 մլն դրամ, իսկ ԱՄՆ դոլարով ավանդի գումարը՝ համարժեք է 1 մլն դրամի: Երաշխավորված ավանդի գումարի չափը կկազմի | միայն ԱՄՆ դոլարով ավանդի գծով՝ 1 մլն դրամ |
| | | | ՀՀ դրամով ավանդի գծով՝ 7 մլն դրամ և ԱՄՆ դոլարով ավանդի գծով՝ 1 մլն դրամ |
| | | | միայն ՀՀ դրամով ավանդի գծով՝ 7.5 մլն դրամ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 737 | Ավանդատուն անվճարունակ բանկում ունի ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ներդրված երկու ավանդ, ընդ որում, ՀՀ դրամով ավանդի գումարը կազմում է 4 մլն դրամ, իսկ ԱՄՆ դոլարով ավանդի գումարը՝ համարժեք է 3.5 մլն դրամի: Երաշխավորված ավանդի գումարի չափը կկազմի | ՀՀ դրամով ավանդի գծով՝4 մլն դրամ և ԱՄՆ դոլարով ավանդի գծով՝ 1 մլն դրամ |
| | | | ՀՀ դրամով ավանդի գծով՝ 4 մլն դրամ և ԱՄՆ դոլարով ավանդի գծով՝ 3 մլն դրամ |
| | | | միայն ՀՀ դրամով ավանդի գծով՝4 մլն դրամ |
| | | | միայն ԱՄՆ դոլարով ավանդի գծով՝ 3.5 մլն դրամ |
| | 738 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, եթե բանկը բանկային գործունեության լիցենզիան ստանալու պահից գործում է մինչև 6 ամիս | ապա երաշխիքային վճարի առավելագույն չափը չպետք է գերազանցի վերջին եռամսյակի համար նրա փաստացի վճարած պարբերական երաշխիքային վճարի տասներկուսապատիկը |
| | | | ապա բանկի տարեկան լրացուցիչ երաշխիքային վճարների առավելագույն չափը սահմանվում է երեք միլիոն դրամի չափով |
| | | | ապա բանկի տարեկան լրացուցիչ երաշխիքային վճարների առավելագույն չափը սահմանվում է չորս միլիոն դրամի չափով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 739 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ. | Նոր ստեղծվող բանկերը, բացառությամբ վերակազմակերպման միջոցով ստեղծվող բանկերի, բանկային գործունեության լիցենզիա ստանալու պահից տասնօրյա ժամկետում վճարում են միանվագ երաշխիքային վճար՝ 15 միլիոն դրամ գումարի չափով |
| | | | Եթե բանկը բանկային գործունեության լիցենզիան ստանալու պահից գործում է մինչև 6 ամիս, ապա բանկի տարեկան լրացուցիչ երաշխիքային վճարների առավելագույն չափը սահմանվում է երեք միլիոն դրամի չափով |
| | | | Երաշխիքային վճար կատարող բանկը պարբերական երաշխիքային վճարը կատարում է եռամսյակը մեկ անգամ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 740 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, բանկային ավանդ է համարվում. | ավանդատուի բանկում բացված հաշվարկային հաշվի վրա գտնվող դրամական միջոցները |
| | | | ավանդատուի բանկում բացված ընթացիկ հաշվի վրա գտնվող դրամական միջոցները |
| | | | ավանդատուի բանկում բացված հաշվարկային, ընթացիկ հաշվի վրա գտնվող դրամական միջոցների վրա հաշվարկած տոկոսների գումարները |
| | | | նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | 741 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, բանկային ավանդ չեն համարվում. | ավանդատուի բանկում բացված հաշվարկային հաշվի վրա գտնվող դրամական միջոցները |
| | | | այն դրամական միջոցները, որոնք տրամադրվել են բանկին այն օգտագործելու ռիսկն ավանդատուի կողմից ստանձնելու համաձայնությամբ |
| | | | ավանդատուի բանկում բացված հաշվարկային, ընթացիկ հաշվի վրա գտնվող դրամական միջոցների վրա հաշվարկած տոկոսների գումարները |
| | | | նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | 742 | Ավանդատուն անվճարունակ բանկում ունի ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ներդրված երկու ավանդ, ընդ որում, ՀՀ դրամով ավանդի գումարը կազմում է 8 մլն դրամ, իսկ ԱՄՆ դոլարով ավանդի գումարը՝ համարժեք է 6.5 մլն դրամի: Երաշխավորված ավանդի գումարի չափը կկազմի | միայն ԱՄՆ դոլարով ավանդի գծով՝ 6.5 մլն դրամ |
| | | | ՀՀ դրամով ավանդի գծով՝ 500 000 դրամ և ԱՄՆ դոլարով ավանդի գծով՝ 6.5 մլն դրամ |
| | | | միայն ՀՀ դրամով ավանդի գծով՝ 8 մլն դրամ |
| | | | միայն ԱՄՆ դոլարով ավանդի գծով՝ 5 մլն դրամ |
| | 743 | Ավանդատուն անվճարունակ բանկում ունի ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ներդրված երկու ավանդ, ընդ որում, ՀՀ դրամով ավանդի գումարը կազմում է  7.5 մլն դրամ, իսկ ԱՄՆ դոլարով ավանդի գումարը՝ համարժեք է 2.5 մլն դրամի: Երաշխավորված ավանդի գումարի չափը կկազմի | միայն ԱՄՆ դոլարով ավանդի գծով՝ 2.5 մլն դրամ |
| | | | ՀՀ դրամով ավանդի գծով՝ 7.5 մլն դրամ և ԱՄՆ դոլարով ավանդի գծով՝ 2.5 մլն դրամ |
| | | | միայն ՀՀ դրամով ավանդի գծով՝ 7.5 մլն դրամ |
| | | | ՀՀ դրամով ավանդի գծով՝ 500.000 հազար դրամ և ԱՄՆ դոլարով ավանդի գծով՝ 2.5 մլն դրամ |
| | 744 | Ավանդատուն անվճարունակ բանկում ունի ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ներդրված երկու ավանդ, ընդ որում, ՀՀ դրամով ավանդի գումարը կազմում է  6.8 մլն դրամ, իսկ ԱՄՆ դոլարով ավանդի գումարը՝ համարժեք է 2.5 մլն դրամի: Երաշխավորված ավանդի գումարի չափը կկազմի | միայն ԱՄՆ դոլարով ավանդի գծով՝ 2.5 մլն դրամ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ՀՀ դրամով ավանդի գծով՝ 6 մլն դրամ և ԱՄՆ դոլարով ավանդի գծով՝ 1 մլն դրամ |
| | | | միայն ՀՀ դրամով ավանդի գծով՝ 6.8 մլն դրամ |
| | | | ՀՀ դրամով ավանդի գծով՝ 6.8 մլն դրամ և ԱՄՆ դոլարով ավանդի գծով՝ 200.000 դրամ |
| | 745 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | ավանդների հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը |
| | | | Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին երաշխիքային վճարներ չեն կատարում անվճարունակ բանկերը |
| | | | բանկերի կատարած երաշխիքային վճարները երաշխիքային վճարներ կատարող բանկերի համար համարվում են ծախս և ենթակա չեն վերադարձման |
| | | | նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | 746 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | ավանդների հատուցման երաշխավորողն է ՀՀ կենտրոնական բանկը |
| | | | Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին երաշխիքային վճարներ չեն կատարում անվճարունակ բանկերը |
| | | | ավանդների հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը՝ Կենտրոնական բանկի հետ միասին |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 747 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, պարբերական երաշխիքային վճարների գումարի չափը կազմում է | հաշվետու եռամսյակի՝ տվյալ բանկի ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին պատկանող բանկային ավանդների միջին օրական ցուցանիշի 0.05 տոկոսը, սակայն ոչ պակաս, քան տարեկան երկու միլիոն դրամը |
| | | | հաշվետու եռամսյակի՝ տվյալ բանկի ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին պատկանող բանկային ավանդների միջին օրական ցուցանիշի 0.05 տոկոսը, սակայն ոչ պակաս, քան տարեկան մեկ միլիոն դրամը |
| | | | հաշվետու եռամսյակի՝ տվյալ բանկի բանկային ավանդների միջին օրական ցուցանիշի 0.5 տոկոսը, սակայն ոչ պակաս, քան տարեկան մեկ միլիոն դրամը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 748 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | նոր ստեղծվող բանկերը, բացառությամբ վերակազմակերպման միջոցով ստեղծվող բանկերի, բանկային գործունեության լիցենզիա ստանալու պահից տասնօրյա ժամկետում վճարում են միանվագ երաշխիիքային վճար`15 միլիոն դրամ գումարի չափով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | նոր ստեղծվող և վերակազմակերպման միջոցով ստեղծվող բանկերը բանկային գործունեության լիցենզիա ստանալու պահից տասնօրյա ժամկետում վճարում են միանվագ երաշխիիքային վճար`15 միլիոն դրամ գումարի չափով |
| | | | նոր ստեղծվող և վերակազմակերպման միջոցով ստեղծվող բանկերը բանկային գործունեության լիցենզիա ստանալու պահից տասնօրյա ժամկետում վճարում են միանվագ երաշխիիքային վճար`15 միլիոն դրամ գումարի կամ դրան համարժեք արտարժույթի չափով |
| | 749 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | բանկերը երաշխիքային վճարները կատարում են ինչպես հայկական դրամով, այնպես էլ դրան համարժեք ցանկացած արտարժույթով |
| | | | բանկերը երաշխիքային վճարները կատարում են հայկական դրամով |
| | | | բանկերը երաշխիքային վճարները կարող են կատարել  հայկական դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժութային միջոցներով |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | 750 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, բանկերը պարբերական երաշխիքային վճարներ չեն կատարում, եթե | հաշվետու եռամսյակի վերջին օրը Հիմնադրամի միջոցները, բացառությամբ վարկերի, փոխառությունների, երաշխիքների, դրամաշնորհների, նվիրատվությունների, նվիրաբերությունների, գերազանցում են երաշխիքային վճարներ կատարող բոլոր բանկերի նախորդ եռամսյակի բանկային ավանդների հանրագումարի միջին օրական ցուցանիշի 5 տոկոսը |
| | | | հաշվետու եռամսյակի վերջին օրը Հիմնադրամի միջոցները գերազանցում են երաշխիքային վճարներ կատարող բոլոր բանկերի նախորդ ամսվա բանկային ավանդների հանրագումարի միջին օրական ցուցանիշի 2.5 տոկոսը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հաշվետու եռամսյակի վերջին օրը Հիմնադրամի միջոցները, բացառությամբ վարկերի, փոխառությունների, երաշխիքների, դրամաշնորհների, նվիրատվությունների, նվիրաբերությունների, գերազանցում են երաշխիքային վճարներ կատարող բոլոր բանկերի նախորդ եռամսյակի բանկային ավանդների հանրագումարի միջին օրական ցուցանիշի 0.05 տոկոսը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 751 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Եթե հաշվետու եռամսյակի վերջին օրը Հիմնադրամի միջոցները, բացառությամբ վարկերի, փոխառությունների, երաշխիքների, դրամաշնորհների, նվիրատվությունների, նվիրաբերությունների, գերազանցում են երաշխիքային վճարներ կատարող բոլոր բանկերի նախորդ եռամսյակի բանկային ավանդների հանրագումարի միջին օրական ցուցանիշի 5 տոկոսը, ապա բանկերը պարբերական երաշխիքային վճարներ չեն կատարում |
| | | | Երաշխավորված ավանդների հատուցումն իրականացնում է Հիմնադրամը՝ անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով |
| | | | Ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | 752 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ. | Ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների |
| | | | Ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների |
| | | | Ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային և արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների |
| | | | Եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային  բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է |
| | 753 | Կենտրոնական բանկի կանոնադրական կապիտալը կազմում է | 5 միլիարդ ՀՀ դրամ |
| | | | 100 միլիոն ՀՀ դրամ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | 50 միլիոն ՀՀ դրամ |
| | | | 150 միլիոն ՀՀ դրամ |
| | 754 | Կենտրոնական բանկի հաշվեկշռում ֆինանսական տարվա արդյունքում առաջացած վնասը պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում՝ | Կենտրոնական բանկը՝ գերազանցող գումարի չափով վարկ է վերցնում առևտրային բանկերից |
| | | | ՀՀ կառավարությունը՝ գերազանցող գումարի չափով, օրենքով սահմանված կարգով, որպես ներդրում Կենտրոնական բանկի կապիտալում, ԿԲ-ին է տրամադրում անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակներ |
| | | | Կենտրոնական բանկը գերազանցող գումարի չափով միջազգային ֆինանսական և վարկային կազմակերպություններից վարկ է վերցնում |
| | | | Կենտրոնական բանկը գերազանցող գումարի չափով միջոցներ ներգրավելու նպատակով թողարկում է մինչև մեկ տարի մարման ժամկետ ունեցող պարտատոմսեր |
| | 755 | Նշել սխալ պատասխանը. | Կենտրոնական բանկի շահույթի 20 տոկոսն ուղղվում է գլխավոր պահուստի համալրմանը՝ մինչև դրա ընդհանուր չափը կազմի առկա դրամական զանգվածի 25 տոկոսը |
| | | | Կենտրոնական բանկի եկամուտները ենթակա են հաստատման Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից |
| | | | Կենտրոնական բանկի վարչական ծախսերը և կապիտալ ներդրումների առավելագույն սահմանաքանակը հաստատում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ |
| | | | Կենտրոնական բանկն Ազգային ժողով է ուղարկում Կենտրոնական բանկի վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների վերաբերյալ տեղեկատվություն |
| | 756 | Նշել սխալ պատասխանը.<br>ա) Կենտրոնական բանկը և բանկերը միմյանց պարտավորությունների համար պատասխանատվություն են կրում<br>բ) Կառավարությունը և բանկերը պատասխանատու չեն միմյանց պարտավորությունների համար<br>գ) Բանկերը ինքնուրույն են իրականացնում իրենց հիմնական միջոցների տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը | (ա) |
| | | | (բ) |
| | | | (գ) և (ա) տարբերակները |

| | | | |
|---|---|---|---|
| | | | (բ) և (ա) տարբերակները |
| | 757 | Բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնություն ստանալու նպատակով Կենտրոնական բանկը փաստաթղթերը ստանալուց հետո քննում է դրանք | մեկամսյա ժամկետում |
| | | | ԿԲ խորհրդի սահմանած ժամկետներում |
| | | | 10-օրյա ժամկետում |
| | | | 10-օրյա ժամկետում, որը ԿԲ խորհրդի որոշմամբ կարող է երկարաձգվել ևս 10 օրով |
| | 758 | Նշվածներից ո՞ր դեպքում է Կենտրոնական բանկը մերժում բանկի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման դիմումը. | անձը որևէ կուսակցության ղեկավար է |
| | | | անձը սնանկ է ճանաչվել և չմարված պարտավորություններ ունի |
| | | | օֆշորային տարածքներում գրանցված իրավաբանական անձի դիմումի ներկայացման դեպքում |
| | | | անձը նշանակալից մասնակցություն ունի մեկ այլ բանկի կանոնադրական կապիտալում |
| | 759 | Նշվածներից ո՞րն է համարվում բանկի կառավարման մարմին | գլխավոր հաշվապահը |
| | | | ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը |
| | | | բանկի գործադիր տնօրենը |
| | | | վերստուգիչ հանձնաժողովի նախագահը |
| | 760 | Բանկի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություններից է՝ | բանկի լուծարումը |
| | | | բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը |
| | | | բանկի գործադիր մարմնի անդամներին նշանակելը |
| | | | խորհրդի աշխատանքների կազմակերպումը |
| | 761 | Ընդհանուր ժողովի իրավասություններից ո՞րը կարող է բանկի կանոնադրությամբ կամ ընդհանուր ժողովի որոշմամբ փոխանցվել խորհրդին՝ | հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը |
| | | | բանկի վերակազմակերպումը |
| | | | կանոնադրական հիմնադրամի ավելացման հարցը |
| | | | բանկի կանոնադրության հաստատումը |
| | 762 | Նշվածներից ո՞րն է ճիշտ<br>ա) Բանկերը կանոնադրական հիմնադարամի չափի փոփոխման դեպքում Կենտրոնական բանկում բացում են կուտակային հաշիվ<br>բ) Բանկերը կանոնադրական հիմնադարամի չափի փոփոխման դեպքում բացում են կուտակային հաշիվ Կենտրոնական բանկում կամ այլ բանկում<br>գ) Մինչև Կենտրոնական բանկի կողմից կանոնադրական հիմնադրամի չափի փոփոխությունների գրանցումը՝ բանկը կարող է տիրապետել, տնօրինել և օգտագործել կուտակային հաշվի միջոցները | Ճիշտ է միայն (ա) տարբերակը |
| | | | Ճիշտ է միայն (բ) տարբերակը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ճիշտ է միայն (գ) տարբերակը |
| | | | ճիշտ են (բ) և (գ) տարբերակները |
| | 763 | Ընդհանուր ժողովի որոշումներից ո՞ր մեկը չի կարող ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով՝ | խորհրդի ներկայացմամբ բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը |
| | | | բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը |
| | | | բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը |
| | | | բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը |
| | 764 | Բանկի խորհրդի նիստերը պետք է գումարվեն | առնվազն երկու ամիսը մեկ |
| | | | տարեկան պարբերականությամբ |
| | | | կիսամյակային պարբերականությամբ |
| | | | ընդհանուր ժողովի կողմից սահմանած ժամկետում |
| | 765 | Խորհրդի որոշումներից ո՞ր մեկը չի կարող ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով՝ | ընդհանուր ժողովի հաստատմանը բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը |
| | | | ընդհանուր ժողովի նիստերի օրակարգի հաստատումը |
| | | | բանկի տարեկան ծախսերի  նախահաշվի և կատարողականի հաստատումը |
| | | | բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը |
| | 766 | Բանկի տնօրինության կառուցվածքում պարտադիր ընդգրկվում է(են)՝ | ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը |
| | | | գլխավոր հաշվապահը |
| | | | խորհրդի նախագահը |
| | | | բանկի քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 10 և ավելի տոկոսին տիրապետող մասնակիցները |
| | 767 | Բանկի գլխավոր հաշվապահը նշանակվում է՝ | բանկի խորհրդի կողմից՝ բանկի գործադիր տնօրենի ներկայացմամբ |
| | | | բանկի գործադիր տնօրենի կողմից |
| | | | ընդհանուր ժողովի կողմից |
| | | | ընդհանուր ժողովի կողմից՝ խորհրդի ներկայացմամբ |
| | 768 | Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է՝ | խորհուրդը՝ ընդհանուր ժողովի առաջարկությամբ |
| | | | խորհուրդը |
| | | | ընդհանուր ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ |
| | | | գործադիր տնօրենը |

| | | | |
|---|---|---|---|
| | 769 | Բանկի գույքի ձեռքբերման և օտարման հետ կապված մեկ կամ մի քանի փոխկապակցված գործարքները համարվում են խոշոր՝<br>ա) եթե դրանց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 և ավել տոկոսը<br>բ) եթե դրանց առարկա է հանդիսանում բանկի հասարակ կամ հասարակ բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխումը, որը կազմում է բանկի կողմից արդեն տեղաբաշխված հասարակ բաժնետոմսերի 20 և ավել տոկոսը<br>գ) եթե դրանց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է բանկի ընդհանուր կապիտալի 5 և ավել տոկոսը | Ճիշտ է միայն (ա) տարբերակը |
| | | | Ճիշտ է միայն (բ) տարբերակը |
| | | | Ճիշտ է միայն (գ) տարբերակը |
| | | | Ճիշտ են (բ) և (գ) տարբերակները |
| | 770 | Բանկի գույքի շուկայական արժեքը որոշվում է՝ | բանկի գործադիր տնօրենի կողմից, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, երբ շուկայական արժեքը որոշվում է դատարանի, այլ մարմնի կամ անձի կողմից |
| | | | ընդհանուր ժողովի կողմից՝ խորհրդի առաջարկությամբ |
| | | | ընդհանուր ժողովի կողմից, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, երբ շուկայական արժեքը որոշվում է դատարանի, այլ մարմնի կամ անձի կողմից |
| | | | խորհրդի որոշմամբ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, երբ շուկայական արժեքը որոշվում է դատարանի, այլ մարմնի կամ անձի կողմից |
| | 771 | Նշել ճիշտ պատասխանը. | Կենտրոնական բանկը կարող է վերանայել բանկերի կանոնադրական հիմնադրամի կամ ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը, բայց ոչ հաճախ, քան երկու տարին մեկ անգամ |
| | | | Կենտրոնական բանկի կողմից նոր ստեղծվող բանկերի համար սահմանվող ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվն ուժի մեջ է մտնում ընդունումից 6 ամիս հետո |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Կենտրոնական բանկի կողմից բանկերի կանոնադրական հիմնադրամի կամ ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը վերանայելիս սահմանած ժամկետը, որի ընթացքում բանկերը պարտավոր են լրացնել կանոնադրական հիմնադրամի կամ ընդհանուր կապիտալի նվազագույն վերանայված չափերը, չի կարող երկու տարուց պակաս լինել |
| | | | Կենտրոնական բանկը կարող է վերանայել նոր ստեղծվող բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը, բայց ոչ հաճախ, քան 6 ամիսը մեկ անգամ |
| | 772 | Նշել սխալ պատասխանը. | Կենտրոնական բանկը կարող է պարտադրել բանկին 4 ամսվա ընթացքում հրավիրել արտաքին աուդիտ և հրապարակել նրա եզրակացությունը |
| | | | արտաքին աուդիտի ծառայությունների համար վճարվող գումարի չափը սահմանում է բանկի ընդհանուր ժողովը |
| | | | արտաքին աուդիտի եզրակացությունը Կենտրոնական բանկին է ներկայացվում մինչև տվյալ ֆինանսական տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը |
| | | | բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն արտաքին աուդիտի կողմից կարող է իրականացվել բանկի` քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) առնվազն 5 տոկոսի սեփականատեր մասնակիցների պահանջով |
| | 773 | Նշվածներից ո՞ր խախտման (խախտումների) դեպքում է պատասխանատվություն կրում բանկի գործադիր տնօրենը`<br>ա) մեկ փոխառուի, խոշոր փոխառուների, բանկի հետ կապված անձանց գծով սահմանված նորմատիվների խախտումով տրամադրված վարկերի, փոխառությունների կամ կնքված այլ գործարքների հետևանքով բանկին պատճառված իրական վնասների հատուցման համար<br>բ)եթե ներքին աուդիտի կողմից ստուգման արդյունքներով բացահայտված օրենքների, այլ իրավական ակտերի խախտումների վերաբերյալ տեղեկությունները բանկի խորհրդին չեն ներկայացվել, և հետագայում բանկը, այդ խախտումներով պայմանավորված, վնասներ է կրել<br>գ) եթե բանկի հետ կապված անձի հետ գործարքը կնքվել է բանկի ներքին ընթացակարգերի խախտումով խորհրդին ներկայացված դրական եզրակացության հիման վրա | Ճիշտ է միայն (ա) տարբերակը |
| | | | Ճիշտ է միայն (բ) տարբերակը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ճիշտ են (ա) և (բ) տարբերակները |
| | | | ճիշտ են (ա) և (գ) տարբերակները |
| | 774 | Նշել ճիշտ պատասխանը.<br>ա) Տնտեսական նորմատիվի յուրաքանչյուր խախտման համար բանկի նկատմամբ կիրառվող տուգանքի չափը չի կարող գերազանցել Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի հինգ տոկոսը<br>բ) Տնտեսական նորմատիվի յուրաքանչյուր խախտման համար բանկի նկատմամբ կիրառվող տուգանքի չափը չի կարող գերազանցել Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն կանոնադրական հիմնադրամի մեկ տոկոսը<br>գ) Կենտրոնական բանկը բանկի կողմից մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի կամ բանկի հետ կապված անձանց գծով ռիսկի առավելագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվը տրման պահին խախտելու համար կարող է բանկի ղեկավարների նկատմամբ նշանակել տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկը չգերազանցող գումարի չափով | ճիշտ է միայն (ա) տարբերակը |
| | | | ճիշտ է միայն (բ) տարբերակը |
| | | | ճիշտ է միայն (գ) տարբերակը |
| | | | ճիշտ են (ա) և (գ) տարբերակները |
| | 775 | Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարին և անդամներին նշանակում է | Կենտրոնական բանկը |
| | | | բանկի խորհուրդը |
| | | | ընդհանուր ժողովը |
| | | | Կենտրոնական բանկը՝ ընդհանուր ժողովի առաջարկությամբ |
| | 776 | Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի ժամանակավոր ադմինիստրացիայի գործունեության ժամկետը սահմանվում է | բանկի ընդհանուր ժողովի կողմից |
| | | | ադմինիստրացիայի ղեկավարի կողմից՝ մինչև մեկ տարի ժամկետով |
| | | | Կենտրոնական բանկի կողմից՝ ադմինիստրացիայի ղեկավարի առաջարկությամբ |
| | | | բանկի ֆինանսական առողջացման ծրագրով՝ մինչև մեկ տարի ժամկետով |

| | | | |
|---|---|---|---|
| | 777 | Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ | արգելվում է ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարին բանկի առանձին ոլորտների կառավարման լիազորությունները վերապահել ադմինիստրացիայի անդամներին |
| | | | ադմինիստրացիայի ղեկավարի կամ բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում ադմինիստրացիայի ղեկավարի լիազորությունները փոխանցվում են ադմինիստրացիայի անդամներից որևէ մեկին |
| | | | անվճարունակ բանկի ֆինանսական առողջացման ծրագիրը մշակում և հաստատում է Կենտրոնական բանկը |
| | | | ադմինիստրացիայի ղեկավար նշանակելու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու պահից բանկի կառավարման մարմինների լիազորությունները կասեցվում են, իսկ գործադիր տնօրենի և նման պարտականություններ կատարող կառավարման այլ մարմնի լիազորությունները՝ դադարեցվում |
| | 778 | Բանկի նկատմամբ սնանկության վարույթ հարուցվում է | բացառապես Կենտրոնական բանկի կողմից՝ նրա խորհրդի որոշմամբ |
| | | | բացառապես Կենտրոնական բանկի կողմից՝ ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի որոշմամբ |
| | | | ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի կողմից |
| | | | Կենտրոնական բանկի կողմից՝ ադմինիստրացիայի ղեկավարի և բանկի կառավարման մարմինների համատեղ որոշման հիման վրա |
| | 779 | Բանկի պարտատերերի՝ բանկի սնանկության մասին դիմումը դատարան ներկայացնելու միջնորդությանը պետք է կցվեն | բանկի ծախսերի կրճատմանն ուղղված միջոցառումների ցանկը |
| | | | բանկի ակտիվների կամ պարտավորությունների կառուցվածքի փոփոխությունը |
| | | | բանկի դրամական պարտավորությունների առկայությունը և նրանց չափը հիմնավորող փաստաթղթերը |
| | | | բանկի ֆինանսական վիճակի գնահատականը |
| | 780 | Բանկի բանկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ի՞նչ ժամկետում է Կենտրոնական բանկը դատարան ներկայացնում բանկի սնանկության մասին դիմում՝ առաջարկելով լուծարային կառավարչի թեկնածություն՝ | հնգօրյա ժամկետում |
| | | | տասնօրյա ժամկետում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | առավելագույնը երեք օրվա ընթացքում |
| | | | առավելագույնը մեկ ամսվա ընթացքում |
| | 781 | Բանկի սնանկության մասին որոշում կայացնելիս դատարանը նշանակում է լուծարային կառավարիչ | Կենտրոնական բանկի կողմից ներկայացված թեկնածուների թվից |
| | | | պարտապան բանկի կողմից ներկայացված թեկնածուների թվից |
| | | | պարտապանի կողմից ներկայացված և Կենտրոնական բանկի հավանությունը ստացած թեկնածուների թվից |
| | | | Կենտրոնական բանկի կամ պարտատերերի կողմից ներկայացված թեկնածուների թվից |
| | 782 | Բանկի լուծարման դեպքում պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետը | չի կարող պակաս լինել մեկ տարուց |
| | | | չի կարող պակաս լինել երկու ամսից և գերազանցել վեցամսյա ժամկետը |
| | | | չի կարող պակաս լինել վեց ամսից և գերազանցել մեկ տարվա ժամկետը |
| | | | չի կարող գերազանցել վեցամսյա ժամկետը |
| | 783 | Լուծարային կառավարչի ծանուցումը ստանալուց հետո ի՞նչ ժամկետում գույքի սեփականատերերը պարտավոր են վերցնել բանկին ի պահ հանձնված գույքը | վեցամսյա ժամկետում |
| | | | մեկ տարվա ժամկետում |
| | | | մեկամսյա ժամկետում |
| | | | եռամսյա ժամկետում |
| | 784 | Նշվածներից ո՞ր տեղեկություն(ներ)ը չի պարունակում միջանկյալ լուծարային հաշվեկշիռը՝ | լուծարվող բանկի գույքի կազմի մասին |
| | | | պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի մասին |
| | | | մերժված պահանջների առանձին ցանկը |
| | | | բանկի բոլոր, այդ թվում՝ ոչ ռեզիդենտ բանկերում գտնվող հաշիվների մասին |
| | 785 | Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | ադմինիստրացիայի ղեկավարի և անդամների վարձատրության չափն ու այլ ծախսերը սահմանում է Կենտրոնական բանկը |
| | | | ադմինիստրացիայի ղեկավարի և անդամների վարձատրության չափն ու այլ ծախսերը սահմանում է Կենտրոնական բանկի ներկայացմամբ՝ դատարանը |
| | | | լուծարային կառավարչի վարձատրության չափը սահմանում է Կենտրոնական բանկը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | լուծարային կառավարչի վարձատրության չափը պետք է ավելի բարձր լինի, քան Կենտրոնական բանկի կողմից ադմինիստրացիայի ղեկավարի համար սահմանված վարձատրության չափը |
| | 786 | Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | բանկը պարտավոր է դատարանի որոշումը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում քրեական հետապնդում իրականացնող մարմնին տրամադրել տվյալ որոշմամբ պահանջվող տեղեկությունները և փաստաթղթերը՝ փակ ծրարով |
| | | | բանկը պարտավոր է իր հաճախորդներին տեղեկացնել նրանց մասին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրելու փաստի վերաբերյալ |
| | | | բանկի ղեկավարը պետք է հարցաքննվի դատարանի կողմից մինչ բանկի հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը |
| | | | բանկը պարտավոր է դատարանի որոշումը ստանալուց հետո երկու բանկային օրվա ընթացքում քրեական հետապնդում իրականացնող մարմնին տրամադրել տվյալ որոշմամբ պահանջվող տեղեկությունները և փաստաթղթերը՝ փակ ծրարով |
| | 787 | «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումը առաջացնում է տուգանք | սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազարապատիկից մինչև տասը հազարապատիկի չափով |
| | | | սահմանված նվազագույն աշխատավարձի չորս հազարապատիկից մինչև տասը հազարապատիկի չափով |
| | | | խախտման հետևանքով բանկի հաճախորդին պատճառված վնասի չափով |
| | | | խախտման հետևանքով բանկի հաճախորդին պատճառված վնասի քառապատիկի չափով |
| | 788 | Համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի,նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Կենտրոնական բանկը ֆինանսական համակարգի կայունության պահպանման, վիճակագրական և այլ նպատակներով կարող է սահմանել կապիտալի շարժի և ֆինանսական արժութային գործարքների իրականացման կարգ և պայմաններ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ռեզիդենտները ՀՀ տարածքից դուրս կարող են առանց սահմանափակումների իրականացնել արժութային գործարքներ՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան |
| | | | Կենտրոնական բանկը ֆինանսական համակարգի կայունության պահպանման նպատակով կարող է որոշակի սահմանափակումներ կիրառել ընթացիկ արժութային գործարքների իրականացման նկատմամբ |
| | | | ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ տարածքում ներդրումների հետ կապված գործարքները կարգավորվում են այն երկրի օրենսդրությանը համապատասխան, որտեղ վերջիններս ստեղծվել են |
| | 789 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի՝ նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցիչները իրավաբանական անձինք են, որոնք գործում են ընկերության կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա |
| | | | ընկերության ներկայացուցչություն է համարվում Ընկերության գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որն իրականացնում է նրա բոլոր գործառույթները և ներկայացնում է Ընկերության շահերն ու իրականացնում դրանց պաշտպանությունը |
| | | | ընկերության առանձնացված ստորաբաժանումների հիմնադրման մասին որոշումներն ընդունվում են Ընկերության ընդհանուր ժողովի կողմից |
| | | | մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գույքը հաշվառվում է ինչպես դրանց առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ Ընկերության հաշվեկշռում |
| | 790 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի,նշել սխալ պատասխանը. | ընկերության ստեղծումը հիմնադրման միջոցով իրականացվում է Ընկերության հիմնադիր ժողովի որոշմամբ |
| | | | ընկերության ստեղծման մասին պայմանագիրը համարվում է ընկերության հիմնադիր փաստաթուղթը |
| | | | ընկերության ստեղծման մասին գրավոր պայմանագիրը ներառում է նաև Ընկերության կանոնադրական կապիտալի չափը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ընկերության հիմնադրման ժամանակ նրա բոլոր բաժնետոմսերը պետք է տեղաբաշխվեն հիմնադիրների միջև |
| | 791 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, նշվածներից, ո՞րը հիմք չի հանդիսանում Ընկերությունը չկայացած համարելու համար | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | մերժվել է ընկերության պետական գրանցումը |
| | | | ընկերությունը ունի մեկ բաժնետեր |
| | | | ընկերություն հիմնադրելու մասին որոշումն ընդունվելու պահից վեց ամսվա ընթացքում Ընկերությունը սահմանված կարգով չի գրանցվել |
| | 792 | Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, նշել ճիշտ պատասխանը. | եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր |
| | | | ընկերության թողարկած արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չպետք է գերազանցի նրա կանոնադրական կապիտալի քսանհինգ տոկոսը |
| | | | ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել անվանական բաժնետոմսեր և պարտատոմսեր |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 793 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, բանկային ավանդ չի համարվում | այն դրամական միջոցները, որոնք տրամադրվել են բանկին այն օգտագործելու ռիսկն ավանդատուի կողմից ստանձնելու համաձայնությամբ |
| | | | բանկի թողարկած անվանական արժեթղթերով ներգրավված միջոցները |
| | | | ավանդատուի՝ բանկում բացված հաշվարկային, ժամկետային հաշվի վրա գտնվող դրամական միջոցները |
| | | | բանկի թողարկած անվանական արժեթղթերով ներգրավված միջոցների վրա հաշվարկված տոկոսների գումարները |
| | 794 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, նշել ճիշտ պատասխանը | Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված բանկի մասնաճյուղերում ներդրված ավանդները երաշխավորվում են |
| | | | ավանդատուի բանկում բացված ժամկետային հաշվի վրա գտնվող դրամական միջոցների վրա հաշվարկված տոկոսներիի գումարները համարվում են բանկային ավանդ |
| | | | բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձին պատկանող բանկային ավանդը համարվում է երաշխավորված բանկային ավանդ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված օտարերկրյա բանկի մասնաճյուղերում ներդրված ավանդները չեն երաշխավորվում |
| | 795 | Բանկում ներդրված ավանդների ընդհանուր չափը կազմում է 35 միլիոն ՀՀ դրամ, որից 4 միլիոն ՀՀ դրամը պատկանում  է բանկի գլխավոր հաշվապահի հորը, 2 միլիոն ՀՀ դրամը` բանկի մասնաճյուղերից մեկի կառավարչին: Որքան են կազմում բանկի երաշխավորված ավանդները` | 35 միլիոն |
| | | | 29 միլիոն |
| | | | 31 միլիոն |
| | | | 33 միլիոն |
| | 796 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, բանկի կողմից օրենքով և պայմանագրով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելը ի վիճակի չլինելու մասին որոշումը Կենտրոնական բանկի խորհուրդը կայացնում է այդ փաստը բացահայտելուց հետո | մեկ ամսվա ընթացքում |
| | | | 7 աշխատանքային օրվա ընթացքում |
| | | | 10 աշխատանքային օրվա ընթացքում |
| | | | մեկ շաբաթվա ընթացքում |
| | 797 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, հատուցման դեպքը տեղի ունենալուց հետո ի՞նչ ժամկետներում Հիմնադրամը պետք է հայտարարություն հրապարակի հատուցման դեպքի մասին | հատուցման դեպքի օրվան հաջորդող տասը աշխատանքային օրվա ընթացքում |
| | | | հատուցման դեպքի օրվան հաջորդող յոթ աշխատանքային օրվա ընթացքում |
| | | | հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում |
| | | | հատուցման դեպքի օրվան հաջորդող երեսնօրյա ժամկետում |
| | 798 | Երաշխավորված ավանդների հատուցումն իրականացնող բանկին ընտրում է | Կենտրոնական բանկի խորհուրդը |
| | | | անվճարունակ ճանաչված բանկը |
| | | | Կենտրոնական բանկի խորհուրդը` հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի  առաջարկությամբ |
| | | | հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը |
| | 799 | Նշել ճիշտ պատասխանը. | երաշխավորված ավանդների հատուցումը կարող է իրականացվել ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ` ավանդատուի նշված հաշվին փոխանցման միջոցով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | երաշխավորված ավանդների վճարումն իրականացնող բանկը, ավանդների հատուցման վերաբերյալ ավանդատուի գրավոր պահանջի և Հիմնադրամի տրամադրած ավանդատուների ցուցակի միջև տեղեկությունների անհամապատասխանության հայտնաբերման դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում դիմում է Կենտրոնական բանկ |
| | | | երաշխավորված ավանդների վճարումն իրականացնող բանկի և ավանդատուի միջև տարաձայնությունների առկայության դեպքում ավանդատուն կարող է դիմել դատարան |
| | | | հիմնադրամի հետ տարաձայնությունների դեպքում ավանդատուն կարող է դիմել Կենտրոնական բանկ |
| | 800 | Նշել սխալ պատասխանը. | բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով |
| | | | խնդրահարույց պարտավորությունների տեսակները, հատուցման ենթակա ավանդի հաշվարկման կարգը սահմանում է Հիմնադրամը |
| | | | բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000(հազար) հայկական դրամից |
| | | | եթե ավանդատուն անվճարունակ բանկի նկատմամբ ունի խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության հաշվարկված դրական տարբերության հիման վրա |
| | 801 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, ի՞նչ պարբերականությամբ է երաշխիքային վճար կատարող բանկը կատարում պարբերական երաշխիքային վճարը | կիսամյակը մեկ անգամ |
| | | | տարին մեկ անգամ |
| | | | եռամսյակը մեկ անգամ |
| | | | հատուցման դեպք տեղի ունենալու դեպքում |
| | 802 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, պարբերական երաշխիքային վճարների գումարի չափը կազմում է | հաշվետու եռամսյակի՝ տվյալ բանկի միայն ֆիզիկական անձանց պատկանող բանկային ավանդների միջին օրական ցուցանիշի 0.01 տոկոսը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հաշվետու եռամսյակի ` տվյալ բանկի ֆիզիկական անձանց, այդ թվում` անհատ ձեռնարկատերերին պատկանող բանկային ավանդների միջին օրական ցուցանիշի 0.01 տոկոսը, սակայն ոչ պակաս քան տարեկան մեկ միլիոն դրամը |
| | | | նախորդ եռամսյակի բանկային ավանդների հանրագումարի միջին օրական ցուցանիշի 2.5 տոկոսը |
| | | | հաշվետու եռամսյակի ` տվյալ բանկի ֆիզիկական անձանց, այդ թվում` անհատ ձեռնարկատերերին պատկանող բանկային ավանդների միջին օրական ցուցանիշի 0.05 տոկոսը, սակայն ոչ պակաս քան տարեկան մեկ միլիոն դրամը |
| | 803 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, նոր ստեղծվող բանկերը բանկային գործունեության լիցենզիա ստանալու պահից տասնօրյա ժամկետում վճարում են միանվագ երաշխիքային վճար | 15 միլիոն դրամ գումարի չափով |
| | | | 10 միլիոն դրամ գումարի չափով |
| | | | 20 միլիոն դրամ գումարի չափով |
| | | | 5 միլիոն դրամ գումարի չափով |
| | 804 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, նշվածներից ո՞րն է սխալ. | եթե բանկը բանկային գործունեության լիցենզիա ստանալու պահից գործում է մինչև 6 ամիս, ապա բանկի տարեկան լրացուցիչ երաշխիքային վճարների առավելագույն չափը սահմանվում է երեք միլիոն դրամի չափով |
| | | | ընթացիկ տարում բանկի կատարած լրացուցիչ վճարների գումարը չի կարող գերազանցել երեք միլիոն դրամը |
| | | | բանկերը երաշխիքային վճարները կատարում են հայկական դրամով |
| | | | հիմնադրամի միջոցների անբավարարության մասին որոշումը կայացնում է Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը |
| | 805 | Համաձայն «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | հիմնադրամի միջոցները կառավարում է Կենտրոնական բանկը |
| | | | հիմնադրամի միջոցները կարող են ներդրվել բացառապես Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերում |
| | | | բանկերի կողմից կատարվող երաշխիքային վճարների գումարները կուտակվում են Հիմնադրամի ` Կենտրոնական բանկում գտնվող հատուկ հաշվին |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հիմնադրամի միջոցների տեղաբաշխման առաջնային չափանիշը տեղաբաշխվող միջոցների անվտանգությունն ու եկամտաբերությունն է |
| | 806 | Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, կազմակերպությունը հաճախորդի կողմից բողոք-պահանջը ստանալու պահից ի՞նչ ժամկետում է պարտավոր հաճախորդին գրավոր տրամադրել վերջնական պատասխան | յոթ աշխատանքային օրվա ընթացքում |
| | | | տասնչորս աշխատանքային օրվա ընթացքում |
| | | | տասն աշխատանքային օրվա ընթացքում |
| | | | մեկ ամսվա ընթացքում |
| | 807 | Նշվածներից ո՞րի դեպք(եր)ում ֆինանսական համակարգի հաշտարարը կմերժի պահանջի քննությունը՝<br>ա)Հաճախորդը պահանջ է ներկայացրել Կազմակերպության վերջնական պատասխանը ստանալու օրվանից ութ ամիս հետո<br>բ) Հաճախորդը պահանջ է ներկայացրել Կազմակերպության վերջնական պատասխանը ստանալու օրվանից չորս ամիս հետո<br>գ)Կազմակերպությունը հաճախորդի բողոք-պահանջը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդին չի տրամադրել վերջնական պատասխան | Ճիշտ է միայն (ա) տարբերակը |
| | | | Ճիշտ է միայն (բ) տարբերակը |
| | | | Ճիշտ են (գ) և (բ) տարբերակները |
| | | | Ճիշտ են (ա) և (գ) տարբերակները |
| | 808 | Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, նշված պնդումներից ո՞րն է սխալ. | Ֆինանսական համակարգի հաշտարարի հաճախորդ կարող են լինել միայն ֆիզիկական անձինք |
| | | | Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից պահանջն ընդունելու կապակցությամբ հաճախորդից որևէ վճար չի գանձվում |
| | | | ֆինանսական համակարգի հաշտարարը իրավասու է քննելու այն պահանջները, որոնք կապված են բանկի կողմից մատուցվող ծառայությունների հետ և պարունակում են տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջ |
| | | | Մինչև պահանջը Ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացնելը հաճախորդը պետք է բանկին ներկայացնի բողոք-պահանջը |
| Կանոնակարգում | 1 | Բանկը պարտավոր է սահմանված ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը պահպանել՝ | ամսվա յուրաքանչյուր օրվա դրությամբ |
| | | | հաշվետու տարվա Դեկտեմբերի 31-ի դրությամբ |
| | | | յուրաքանչյուր ամսվա միջին օրական հաշվարկով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ |
| | 2 | Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է | բոլոր արժույթներով` 100 տոկոս |
| | | | յուրաքանչյուր նշանակալի արժույթի գծով` 50 տոկոս |
| | | | բոլոր արժույթներով` 80 տոկոս |
| | | | Կենտրոնական բանկի կողմից նման նորմատիվ չի սահմանվում |
| | 3 | Բանկի ընթացիկ իրացվելիության նորմատիվը` | հաշվարկվում է որպես բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև հարաբերակցություն |
| | | | չի համարվում հիմնական տնտեսական նորմատիվ |
| | | | հաշվարկվում է եռամսյակային կտրվածքով |
| | | | հաշվարկվում է որպես բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների գումարների միջև հարաբերակցություն |
| | 4 | Բանկը չի խախտում ընդհանուր իրացվելիության (Ն21) նորմատիվը, եթե | բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձի իրացվելի ակտիվները փոքր կամ հավասար են բանկի բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների 15 տոկոսից |
| | | | բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվները փոքր կամ հավասար են բանկի բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների 15 տոկոսից |
| | | | բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվները մեծ կամ հավասար են բանկի բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների 15 տոկոսից |
| | | | բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձի իրացվելի ակտիվները մեծ կամ հավասար են բանկի բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների 15 տոկոսից |
| | 5 | Բանկը խախտում է ընթացիկ իրացվելիության (Ն22) նորմատիվը, եթե | բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվները փոքր են բանկի բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների 60 տոկոսից |
| | | | ակտիվները փոքր կամ հավասար են բանկի բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր պարտավորությունների 60 տոկոսին |
| | | | բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվները մեծ են բանկի բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների 60 տոկոսից |
| | | | բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվները մեծ կամ հավասար են բանկի բոլոր արժույթներով արտահայտված պարտավորությունների 60 տոկոսից |
| | 6 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի իմաստով բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում չեն ընդգրկվում. | օտարերկրյա բանկերում թղթակցային հաշիվները |
| | | | ՀՀ ԿԲ-ում ներդրված ավանդների դիմաց հաշվեգրված տոկոսները |
| | | | ճանապարհին գտնվող բանկային ոսկին |
| | | | պատասխանններում նշված բոլոր ակտիվները ընդգրկվում են բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում |
| | 7 | Բանկի խոշոր փոխառուների գծով ռիսկերի հանրագումարը հավասար է 25 մլրդ. դրամ: Որպեսզի բանկը չխախտի Ն32` խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը, բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալը պետք է լինի | 5 մլրդ. դրամ և ավելին |
| | | | մինչև 5 մլրդ. դրամ |
| | | | 3.25 մլրդ. դրամից ավելի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | 3.25 մլրդ. դրամ և ավելին |
| | 8 | Նշված ներգրաված միջոցներից պարտադիր պահուստավորման ենթակա չեն | բանկի դուստր ոչ-բանկ կազմակերպություններից ներգրաված միջոցները |
| | | | օտարերկրյա բանկերի «լորո» թղթակցային հաշիվները |
| | | | ՀՀ ԿԲ-ից ներգրաված լոմբարդային վարկերը |
| | | | ֆիզիկական անձանցից ներգրաված ցպահանջ միջոցները |
| | 9 | Հաշվետու ժամանակաշրջանում փաստացի պահուստավորված միջոցները պահուստավորման վերջին օրը չեն կարող համալրվել. | բանկի դուստ ոչ-բանկ կազմակերպություններից ներգրաված միջոցների հաշվին |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | | | Կենտրոնական բանկից և ՀՀ տարածքում գործող բանկերից ներգրաված լոմբարդային, համակարգային, միջբանկային վարկերի, միմյանցից ներգրաված այլ փոխառությունների և միջոցների հաշվին |
| | | | բանկի ֆիզիկական անձ-հաճախորդներից ներգրաված ավանդների հաշվին |
| | 10 | Բանկի մոտ առկա է փակ արտարժութային դիրք, երբ | բանկի արտարժույթով ակտիվները գերազանցում են արտարժույթով պարտավորությունները |
| | | | բանկի արտարժույթով ակտիվները և պարտավորությունները քանակապես հավասար են |
| | | | արտարժույթով ակտիվների և պարտավորությունների միջև առկա է քանակական անհավասարություն |
| | | | բանկի արտարժույթով պարտավորությունները գերազանցում են արտարժույթով ակտիվները |
| | 11 | Բանկի մոտ առկա է կարճ արտարժութային դիրք եթե | արտարժույթով բանկի ակտիվային հաշիվների մնացորդները գերազանցում են արտարժույթով պարտավորությունների հաշիվների մնացորդներին |
| | | | բանկի արտարժույթով ակտիվները և պարտավորությունները քանակապես հավասար են |
| | | | արտարժույթով բանկի պարտավորությունների հաշիվների մնացորդները գերազանցում են արտարժույթով ակտիվային հաշիվների մնացորդներին |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 12 | Ենթադրենք բանկն ունի 5 մլն. Եվրո ներգրաված միջոցներ և 6 մլն. Եվրո ակտիվներ: Եվրոյի փոխարժեքը 630 դրամից 620 դրամի իջնելիս | փոխարժեքի փոփոխությունը չի ազդի բանկի ֆինանսական արդյունքների վրա |
| | | | բանկը կկրի կորուստներ 10 մլն. դրամի չափով |
| | | | բանկը կստանա եկամուտ 1մլն. դրամի չափով |
| | | | բանկը կստանա եկամուտ 10 մլն. դրամի չափով |
| | 13 | Ենթադրենք բանկն ունի 10 մլն. ԱՄՆ դոլլար ներգրաված միջոցներ և 5 մլրդ. ՀՀ դրամ ակտիվներ: ԱՄՆ դոլլարի հաշվարկային փոխարժեքը 550 դրամից 500 դրամի իջնելիս | փոխարժեքի փոփոխությունը չի ազդի բանկի ֆինանսական արդյունքների վրա |
| | | | բանկը կստանա եկամուտ 250 մլն. դրամի չափով |
| | | | բանկը կստանա եկամուտ 500 մլն. դրամի չափով |
| | | | բանկը կկրի կորուստներ 250 մլն. դրամի չափով |
| | 14 | Համաձայն Կանոնակարգ 2-ի, նշված պնդումներից ո՞րն է սխալ. | արտարժույթի դիրքերի հաշվարկում ակտիվների և պարտավորությունների մեջ ընդգրկվում են նաև արտարժութային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները |
| | | | արտարժութային դիրքը բանկի արտարժութային ռիսկ պարունակող ակտիվների և արտարժութային ռիսկ պարունակող պարտավորությունների միջև եղած տարբերությունն է |

| | | | |
|---|---|---|---|
| | | | արտարժույթի ռիսկի հաշվարկման ժամանակ արտարժութային ռիսկ են պարունակում թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորները |
| | | | թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ձուլակտորները մտնում են արտարժութային երկրորդ խմբի մեջ |
| | 15 | Ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի հաշվարկի ժամանակ հիմնական կապիտալի մեծությունից պակասեցվում են. (ա) բանկի կողմից տրամադրված երկարաժամկետ ստորադաս փոխառությունները (բ) ՀՀ ռեզիդենտ բանկերում կատարված ներդրումները, որը գերազանցում է տվյալ բանկի կանոնադրական կապիտալի 4.99 տոկոսը (գ) արտադրական ձեռնարկությունների կանոնադրական հիմնադրամներում կատարված ներդրումները | միայն (ա) |
| | | | (բ) և (գ) |
| | | | (ա) և (բ) |
| | | | միայն (գ) |
| | 16 | Արտարժութային երկար դիրքերի հանրագումարը կազմում է 45 մլն դրամ, իսկ արտարժութային կարճ դիրքերի հանրագումարը -50 մլն դրամ է: Արտարժութային առավելագույն դիրքը կկազմի` | 5 մլն դրամ |
| | | | 45 մլն դրամ |
| | | | 50 մլն դրամ |
| | | | 95 մլն դրամ |
| | 17 | Սովորական բաժնետոմսերից էմիսիոն եկամուտը հանդիսանում է | գլխավոր պահուստի տարր |
| | | | լրացուցիչ կապիտալի տարր |
| | | | հիմնական կապիտալի տարր |
| | | | չբաշխված շահույթի տարր |
| | 18 | Ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի հաշվարկի ժամանակ բանկի հիմնական կապիտալից նվազեցվում են` (ա) բանկի սեփականությունը հանդիսացող և բանկային գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվները (բ) տրամադրված վարկերի դիմաց բանկում գրավադրված բանկի սեփական բաժնետոմսերը (գ) սովորական բաժնետոմսերից էմիսիոն եկամուտը | (ա) և (բ) |
| | | | միայն (ա) |
| | | | (բ) և (գ) |
| | | | (ա) և (բ) և (գ) |
| | 19 | Ենթադրենք, բանկի կանոնադրական կապիտալը 2.5 մլրդ. դրամ է, գլխավոր պահուստը 3.5 մլրդ. դրամ, չբաշխված շահույթը 500 մլն. դրամ: Բանկի լրացուցիչ կապիտալը 4.5 մլրդ. դրամ է: Բանկը վարկային կազմակերպությանը տրամադրել է երկարաժամկետ ստորադաս փոխատվություն` 500 մլն. դրամի չափով: Համաձայն Կանոնակարգ 2-ի ինչքա՞ն է բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալը | 3 մլրդ. դրամ |
| | | | 8.45 մլրդ. դրամ |
| | | | 7.8 մլրդ. դրամ |
| | | | 7.2 մլրդ. դրամ |
| | 20 | Նշել ճիշտ պատասխանը: Համաձայն Կանոնակարգ 2-ի` | Ն31 և Ն32 նորմատիվները հաշվարկվում են Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ |
| | | | խոշոր փոխառու է այն անձը, որի գծով բանկի ռիսկը գերազանցում է բանկի ընդհանուր կապիտալի 15 տոկոսը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ՀՀ տարածքում գործող բանկերի ՝ այլ պետություններում գործող մասնաճյուղերն ինքնուրույն են կատարում իրենց կողմից ներգրաված միջոցների դեպոնացումը տվյալ պետության Կենտրոնական (Ազգային) բանկում՝ վերջինիս կողմից սահմանված նորմատիվների սահմաններում և ժամկետներում |
| | | | համախմբված հաշվետվությունների նկատմամբ Ն31 և Ն32 նորմատիվների ռիսկի հաշվարկում ընդգրկվում են դուստր բանկի գրանցման երկրի պետական պարտատոմսերը, դուստր բանկի գրանցման երկրի Կենտրոնական բանկի նկատմամբ պահանջները |
| | 21 | Նշել սխալ պատասխանը: Համաձայն Կանոնակարգ 2-ի՝ լրացուցիչ կապիտալն իր մեջ ներառում է | բանկի սեփականությունը հանդիսացող և բանկային գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվների վերագնահատման պահուստը՝ ոչ ավելի քան բանկի հիմնական կապիտալի հաշվեկշռային արժեքի 25 տոկոսի և բանկի սեփականությունը հանդիսացող ու բանկային գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների արժեքի տարբերության չափը |
| | | | հաշվեկշռի միավորման (կոնսոլիդացիայի) ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստը |
| | | | այլ պահուստները |
| | | | բանկի կողմից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունները |
| | 22 | Դիցուք բանկի դոլարային ակտիվները և պարտավորությունները կազմում են համապատասխանաբար 100մլն և 110 մլն դոլար: Դոլարի արժևորման դեպքում | բանկը կստանա եկամուտ |
| | | | բանկը կունենա կորուստներ |
| | | | բանկի եկամուտները կմնան անփոփոխ |
| | | | կախված նրանից, թե որքանով դոլարը կարժևորվի՝ բանկը կստանա եկամուտ կամ կունենա կորուստներ |
| | 23 | Համաձայն Կանոնակարգ 2-ի՝ յուրաքանչյուր արտարժույթի գծով դիրքի նորմատիվը հաշվարկվում է. | բանկի արտարժութային բաց դիրքի բացարձակ մեծությունը հարաբերած բանկի նորմատիվային ընդհանուր  կապիտալի |
| | | | բանկի արտարժութային երկար և կարճ դիրքերի հանրագումարը հարաբերած բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալի |
| | | | բանկի արտարժութային երկար դիրքի  մեծությունը հարաբերած բանկի նորմատիվային ընդհանուր  կապիտալի |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 24 | Համաձայն Կանոնակարգ 2-ի՝ բանկերի պարտադիր պահուստավորված միջոցների, ինչպես նաև կանոնադրական կապիտալի համալրման նպատակով Կենտրոնական բանկում բացված կուտակման հաշվի մնացորդի նկատմամբ | պետք է հաշվարկեն և վճարեն տոկոսներ |
| | | | կարող են հաշվարկել և վճարել տոկոսներ՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով, պայմաններով և չափով |
| | | | տոկոսներ չվճարելու դեպքում ենթարկվում են պատասխանատվության |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 25 | Նշել սխալ պատասխանը: Համաձայն Կանոնակարգ 2-ի՝ կապիտալի գործիքների թվին են դասվում | սովորական բաժնետոմսերը |
| | | | ոչ փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերը |
| | | | իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում բաժնեմասի, անդամակցության կամ այլ մասնակցության իրավունք տվող այլ արժեթղթերը |
| | | | սովորական բաժնետոմսերի փոխարկվող պարտատոմսերը |

| | | | |
|---|---|---|---|
| | 26 | Համաձայն Կանոնակարգ 2-ի` եթե միևնույն ակտիվը ռիսկով կշռելիս ստանում է մեկից ավելի ռիսկի կշիռներ, բանկը պետք է ընտրի ամենացածր ռիսկի կշիռը, բացառությամբ հետևյալ դեպքերի` | ոչ ստանդարտ կամ կասկածելի դասակարգված ակտիվները, միջին ռիսկային և բարձր ռիսկային դասակարգված արժեթղթերը կշռվում են այդ ակտիվների համար սահմանված ամենաբարձր ռիսկի կշռով |
| | | | երկրորդ խմբի արտարժույթով (բացառությամբ ռուսական ռուբլու) ակտիվները կշռվում են այդ ակտիվների համար սահմանված ամենաբարձր ռիսկի կշռով |
| | | | դատարանի որոշմամբ սառեցված կամ կալանված ակտիվները կշռվում են այդ ակտիվների համար սահմանված ամենաբարձր ռիսկի կշռով |
| | | | ճիշտ են նշված բոլոր պատասխանները |
| | 27 | Նշել սխալ պատասխանը: Համաձայն Կանոնակարգ 2-ի` ՎՌԶՄ-երը չեն տարածվում ՎՌԶՄ-ի ենթակա այն պահանջների նկատմամբ, որոնք դասակարգվել են որպես | ոչ ստանդարտ վարկեր և դեբիտորական պարտքեր |
| | | | միջին ռիսկային արժեթղթեր |
| | | | կասկածելի վարկեր և դեբիտորական պարտքեր |
| | | | հսկվող վարկեր և դեբիտորական պարտքեր |
| | 28 | Համաձայն Կանոնակարգ 2-ի` արտարժութային դիրքի հաշվարկում արտարժութային ակտիվներն ընդգրկվում են առանց հաշվի առնելու այդ ակտիվների գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստի մեծությունը, բացառությամբ | հսկվող և ոչ ստանդարտ արտարժութային ակտիվների |
| | | | հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի արտարժութային ակտիվների |
| | | | ոչ ստանդարտ և կասկածելի արտարժութային ակտիվների |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 29 | Համաձայն Կանոնակարգ 2-ի` արտարժութային առավելագույն դիրքը հաշվարկվում է որպես.<br>1. արտարժութային երկար դիրքերի հանրագումարից և արտարժութային կարճ դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումարից  առավելագույն մեծություն, 2. արտարժութային երկար դիրքերի հանրագումարի և արտարժութային կարճ դիրքերի հանրագումարի բացարձակ մեծությունների տարբերություն,<br>3. արտարժութային երկար դիրքերի և արտարժութային կարճ դիրքերի բացարձակ | 1 տարբերակը |
| | | | 2 տարբերակը |
| | | | 3 տարբերակը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 30 | Համաձայն Կանոնակարգ 2-ի` կապիտալի գործիքների դիրքերի հաշվարկում ընդգրկվում են` | ռեպո համաձայնագրերով վաճառված կապիտալի գործիքները |
| | | | փոխառությամբ տրամադրված արժեթղթերը |
| | | | գրավադրված կապիտալի գործիքները |
| | | | ճիշտ են նշված բոլոր պատասխանները |
| | 31 | Նշել սխալ պատասխանը: Համաձայն Կանոնակարգ 2-ի` վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվող 0 տոկոս ռիսկի կշռով կշռվում են` | ճանապարհին գտնվող կանխիկ դրամական միջոցները, |
| | | | կանխիկ դրամական միջոցները և կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերը |
| | | | բանկային ոսկին բանկի դրամապահոցում |
| | | | ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերը |
| | 32 | Նշել սխալ պատասխանը: Համաձայն Կանոնակարգ 2-ի` վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվող ակտիվներից 100 տոկոս ռիսկի կշռով կշռվում են | ոչ ստանդարտ և կասկածելի դասակարգված վարկեր և դեբիտորական պարտքեր` արտահայտված ՀՀ դրամով |
| | | | հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ հաշվեկշռային արժեքով |
| | | | դատարանի վճռով սառեցված կամ կալանված միջոցներ` արտահայտված դրամով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | արտարժույթով արտահայտված միջին և բարձր ռիսկային դասակարգված արժեթղթեր |
| | 33 | Համաձայն Կանոնակարգ 2-ի նորմատիվային ընդհանուր կապիտալի հաշվարկման ժամանակ լրացուցիչ կապիտալի տարր է համարվում. | հաշվեկշռի միավորման (կոնսոլիդացիայի) ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստը |
| | | | բանկի կողմից թողարկված սովորական բաժնետոմսերից էմիսիոն եկամուտը |
| | | | գլխավոր պահուստը |
| | | | արտարժույթի վերագնահատման արդյունքները |
| | 34 | Նորմատիվային ընդհանուր կապիտալի հաշվարկման ժամանակ բանկի սեփականությունը հանդիսացող և բանկային գործունեության համար չօգտագործվող հիմնական միջոցները | հաշվեկշռային արժեքի չափով նվազեցվում են հիմնական կապիտալի հաշվարկից |
| | | | հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծությունը գերազանցող գումարի չափով նվազեցվում են հիմնական կապիտալից |
| | | | հաշվեկշռային արժեքի չափով նվազեցվում են լրացուցիչ կապիտալի հաշվարկից |
| | | | լրացուցիչ կապիտալի հաշվեկշռային մեծությունը գերազանցող գումարի չափով նվազեցվում են հիմնական կապիտալից |
| | 35 | Նորմատիվային ընդհանուր կապիտալի հաշվարկման ժամանակ բանկային գործունեության համար անհրաժեշտ սեփական շենքեր և շինություններ են համարվում այն տարածքները | որոնք ձեռք են բերվել բանկի հիմնադրման և ԿԲ գրանցման ժամանակ |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | | | որոնք բանկի կողմից տրված են վարձակալության |
| | | | որտեղ բանկն իրականացնում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսական գործառնություններ, ինչպես նաև այն շենքերը և շինությունները, որոնք զբաղեցրել են բանկի ներկայացուցչությունները |
| | 36 | Արտարժութային դիրքի հաշվարկում ներառվում են. | տվյալ արտարժութային ռիսկ պարունակող դրամային ակտիվները և պարտավորությունները |
| | | | տվյալ արտարժույթով ածանցյալ գործիքները |
| | | | տվյալ արտարժույթով ակտիվները և պարտավորությունները |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 37 | Բանկի ռիսկով կշռված ակտիվների մեծությունը կազմում է 43 մլրդ. դրամ, ընդհանուր ակտիվների մեծությունը կազմում է 45 մլրդ դրամ, իսկ բանկի ընդհանուր կապիտալը՝ 5.5 մլրդ. դրամ:<br>Բանկն իրավաբանական անձին իր դրամարկղից կանխիկ եղանակով տրամադրում է 1 մլրդ դրամ վարկ: Արդյունքում | բանկը խախտում է Ն12 նորմատիվը, ընդ որում նորմատիվի փաստացի մեծությունը 11.96 տոկոս է |
| | | | բանկը չի խախտում Ն12 նորմատիվը, ընդ որում նորմատիվի փաստացի մեծությունը 12.22 տոկոս է |
| | | | բանկը չի խախտում Ն12 նորմատիվը, ընդ որում նորմատիվի փաստացի մեծությունը 12.5 տոկոս է |
| | | | բանկը խախտում է Ն12 նորմատիվը, ընդ որում նորմատիվի փաստացի մեծությունը 10.47 տոկոս է |
| | 38 | Ռիսկով կշռված ակտիվների հաշվարկի ժամանակ ճանապարհին գտնվող կանխիկ դրամական միջոցները (հայկական դրամով և առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով) ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում են | 0 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 50 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 20 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 100 տոկոս ռիսկի կշռով |
| | 39 | Ֆիզիկական անձը «Ա» բանկից վերցրել է առևտրային վարկ՝ 5 մլն. դրամով: Ընդ որում, ֆիզիկական անձը «Ա» բանկում ունի ներդրված 10 մլն. ավանդ՝ Ռուսաստանի դաշնության ռուբլով: Ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում տվյալ ֆիզիկական անձի նկատմամբ պահանջները, (եթե առկա չէ որևէ այլ ապահովվածություն) ընդգրկվում են՝ | 0 տոկոս ռիսկի կշռով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | 100 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 50 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 20 տոկոս ռիսկի կշռով |
| | 40 | «Ա» բանկը օտարերկրյա վարկանիշ չունեցող բանկին տրամադրել է վարկ, ընդ որում Համաշխարային բանկը երաշխավորել է տվյալ վարկը: Ռիսկով կշռված ակտիվների հաշվարկմում (եթե առկա չէ որևէ այլ ապահովվածություն) տվյալ վարկը կընդգրկվի | 0 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 50 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 20 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 100 տոկոս ռիսկի կշռով |
| | 41 | Պահանջները հարկային օրենսդրությամբ սահմանված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով վճարման ենթակա գումարներից, հարկային օրենսդրությամբ սահմանված կանխավճարներից ավելի վճարված գումարների գծով, ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում են | 0 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 150 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 20 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 100 տոկոս ռիսկի կշռով |
| | 42 | Եթե բանկը խախտել է Ն12 (ընդհանուր կապիտալ հարաբերած ռիսկով կշռված ակտիվների) նորմատիվը, ապա բանկը միանշանակորեն կխախտի | ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | | | մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը |
| | | | Ն21 (բարձր իրացվելի ակտիվներ հարաբերած ընդհանուր ակտիվներ) նորմատիվը |
| | 43 | Նշվածներից ո՞րը չի կարող հանդիսանալ կապիտալի համարժեքության նորմատիվի (Ն12) փոփոխման պատճառ | չբաշխված շահույթի հաշվին գլխավոր պահուստի համալրումը |
| | | | շահաբաժիններ վճարելը |
| | | | բանկի դրամապահոցում եղած դրամական միջոցների (ՀՀ դրամ) ներդրումը ՀՀ տարածքում գործող բանկում բացված թղթակցային հաշվում |
| | | | բանկի դրամապահոցում եղած առաջին խմբի մեջ մտնող արտարժութային միջոցները ուղարկվել են թղթակից բանկին և գտնվում են ճանապարհին |
| | 44 | Ենթադրենք «Ա» բանկը ձեռք է բերում ՀՀ տարածքում գործող «Բ» բանկից ՀՀ դրամով ՀՀ պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմս: Ընդ որում, ՊԿՊ-ների դիմաց «Բ» բանկը գումարը գանձում է «Ա» բանկի «Բ» բանկում եղած թղթակցային հաշվից: Նշված գործառնության արդյունքում «Ա» բանկի ռիսկով կշռված ակտիվների հանրագումարը, այլ հավասար պայմաններում | չի փոփոխվի |
| | | | հարցում նշված տարրերը չեն ընդգրկվում ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում |
| | | | կաճի |
| | | | կնվազի |
| | 45 | Բանկի ռիսկով կշռված ակտիվների մեծությունը կազմում է 25 մլրդ դրամ: Ն11 (հիմնական կապիտալը հարաբերած ռիսկով կշռված ակտիվների) նորմատիվի փաստացի մեծությունը` 20% է: Լրացուցիչ կապիտալը` 3 մլրդ. դրամ է: Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը կազմում է | 5 մլրդ. դրամ |
| | | | 6 մլրդ. դրամ |
| | | | 8 մլրդ. դրամ |
| | | | 6.5 մլրդ. դրամ |

| | | | |
|---|---|---|---|
| | 46 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ | բանկի կողմից բանկային գործունեության համար օգտագործվող հիմնական միջոցները ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում են 0 տոկոս ռիսկի կշռով |
| | | | նշված բոլոր պնդումները ճիշտ են |
| | | | օտարերկյա բանկերի նկատմամբ պահանջները կշռելու նպատակով բանկերը օգտագործում են վարկանիշային գործակալությունների կողմից սահմանած վարկանիշները |
| | | | անավարտ ժամկետային գործառնությունների կշռման համար հիմք է ընդունվում միայն հետհաշվեկշռում այդ գործառնությունների գծով արտացոլված արժեքը |
| | 47 | Բանկի պարտատերերի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը սահմանված է | 0.25 |
| | | | 0.6 |
| | | | 0.5 |
| | | | ներկայումս տվյալ նորմատիվի մեծությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված չէ |
| | 48 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, նշված տնտեսական նորմատիվներից որի՞ (որո՞նց) առավելագույն սահմանաչափն  է կազմում 20 տոկոս:<br>(ա) բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բանկի բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը (Ն21)<br>(բ) մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն31)<br>(գ) բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն41) | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | (ա) Ն21 և (բ) Ն31 |
| | | | (գ) Ն41 |
| | | | (բ) Ն31 |
| | 49 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, նշված տնտեսական նորմատիվներից որի՞ առավելագույն սահմանաչափն է կազմում 20 տոկոս: | բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բանկի բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարի միջև սահմանային հարաբերակցությունը (Ն21) |
| | | | բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն42) |
| | | | բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բանկի բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցությունը (Ն22) |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 50 | Բանկի կապիտալի համարժեքության նորմատիվը հաշվարկելիս բանկի վարկային ռիսկի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.<br>որտեղ՝ Ա1, Ա2..., Աn - վարկային ռիսկի հաշվարկում ներառվող բանկի բոլոր ակտիվներն են՝ հաշվեկշռային արժեքով (հնարավոր կորուստների պահուստները նվազեցված)<br>Պ1, Պ2…, Պn - համապատասխան ակտիվների հնարավոր կորուստների պահուստներն են,<br>Ն1, Ն2 …, Նn - հիմնական կապիտալի հաշվարկից նվազեցվող ակտիվներն են,<br>Ռ1, Ռ2…., Ռn համապատասխան ակտիվների ռիսկի կշիռներն են) | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ՎՌ = (Ա1+Պ1)xՌ1 + (Ա2+Պ2)xՌ2+….+(Ա10+Պ10)xՌ10 |
| | | | Պ7)xՌ7+Ն7 |
| | | | ՎՌ = Ա1xՌ1 + Ա2xՌ2+….+ԱnxՌn |

| | | | |
|---|---|---|---|
| | 51 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի իմաստով բարձր իրացվելի ակտիվներ չեն համարվում՝ | ՀՀ տարածքում գործող բանկերում թղթակցային հաշիվները |
| | | | ՀՀ կառավարության նկատմամբ պահանջները, բացառությամբ պետական գանձապետական պարտատոմսերի |
| | | | օտարերկրյա բանկերում թղթակցային հաշիվները |
| | | | պատասխաններում նշված բոլոր ակտիվները համարվում են բարձր իրացվելի ակտիվներ |
| | 52 | Կանոնակարգ 2-ի իմաստով ցպահանջ պարտավորությունների հաշվարկում ընդգրկվում են | մարման սահմանված ժամկետ չունեցող պարտավորությունները |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | հաշվեկշռի «Պարտավորություններ» կարգում հաշվառվող ցպահանջ միջոցները |
| | | | ժամկետանց պարտավորությունները |
| | 53 | Բանկը խախտել է ընդհանուր իրացվելիության նորմատիվը: Ի՞նչ միջոցառումների ձեռնարկման արդյունքում բանկը կդադարի խախտել ընդհանուր իրացվելության նորմատիվը | օտարերկյա բանկում «նոստրո» թղթակցային հաշվի միջոցները տեղափոխել ռեզիդենտ բանկ |
| | | | պլատինե ձուլակտորները վաճառել՝ փոխարենը գնելով ոսկու ստանդարտացված ձուլակտորներ |
| | | | ՀՀ կենտրոնական բանկում առկա ավելցուկային իրացվելությունը տեղափոխել ռեզիդենտ բանկ |
| | | | վերնշված երեք միջոցառումներից յուրաքանչյուրի իրականացման  դեպքում, բանկը կդադարի խախտել ընդհանուր իրացվելության նորմատիվը |
| | 54 | Համաձայն Կանոնակարգ 2-ի, մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը հաշվարկելիս, ռիսկով կշռվում են հետևյալ տարրերը՝ | «նոստրո» թղթակցային հաշիվները և միջբանկային ավանդները |
| | | | «նոստրո» թղթակցային հաշիվները և միջբանկային ավանդները, վարկային գծերի, քարտերի և օվերդրաֆտների չօգտագործված մասերը |
| | | | վարկային կազմակերպություններին տրված վարկերը |
| | | | ֆիզիկական անձանց տրված վարկերը |
| | 55 | Համաձայն Կանոնակարգ 2-ի, բանկի հետ կապված անձի (անձանց) Ն41 և Ն42 նորմատիվների հաշվարկում | թղթակցային «նոստրո» հաշիվները չեն ընդգրկվում |
| | | | թղթակցային «նոստրո» հաշիվները ընդգրկվում են, սակայն իրենց համապատասխան պահուստի չափով նվազեցվելուց հետո չեն կշռվում |
| | | | թղթակցային «նոստրո» հաշիվները ընդգրկվում են, ընդ որում պահուստի չափով նվազեցվելուց հետո կշռվում են իրենց համապատասխան ռիսկի կշռով |
| | | | թղթակցային «նոստրո» հաշիվները ընդգրկվում են, սակայն իրենց համապատասխան պահուստի չափով նվազեցվելուց հետո չեն կշռվում, բացառությամբ AAA վարկանիշ ունեցող բանկերում թղթակցային «նոստրո» հաշիվների, որոնք ենթակա են ռիսկով կշռման |
| | 56 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.<br>Համաձայն Կանոնակարգ 2-ի, բանկի առաջին խմբի արտարժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արտարժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է. | 15 տոկոս |
| | | | 4 տոկոս |
| | | | 60 տոկոս |
| | | | 5 տոկոս |

| | | | |
|---|---|---|---|
| | 57 | Բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալը 5 մլրդ. դրամ է:<br>Բանկը ունի իր (բանկի) հետ կապված երկու անձ, որոնց գծով բանկի ռիսկի չափը (հաշվարկված համաձայն Կանոնակարգ 2-ի) համապատասխանաբար հավասար են՝<br>«Ա» անձի գծով՝ 250 մլն. դրամ,<br>«Բ» անձի գծով՝ 1.5 մլրդ. դրամ:<br>Այս դեպքում բանկը խախտել է՝ | միայն Ն41 (բանկի հետ կապված մեկ անձի գծով) նորմատիվը «Ա» անձի գծով |
| | | | Ն41 նորմատիվը «Բ» անձի գծով և Ն42 (բանկի հետ կապված բոլոր անձանց գծով) նորմատիվը |
| | | | միայն Ն42 (բանկի հետ կապված բոլոր անձանց գծով) նորմատիվը |
| | | | միայն Ն41 նորմատիվը «Բ» անձի գծով |
| | 58 | Բանկի հետ կապված անձանց տրամադրված վարկերի հանրագումարը համասար է 1 մլրդ. դրամ: Որպեսզի բանկը չխախտի Ն42՝ բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը, նորմատիվային ընդհանուր կապիտալը պետք է լինի | 5 մլրդ. դրամ և ավելին |
| | | | մինչև 2 մլրդ. դրամ |
| | | | 2 մլրդ. դրամից ավելի |
| | | | 2 մլրդ. դրամ և ավելին |
| | 59 | «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի համաձայն կատարված պահուստավորման արդյունքները հաշվի չեն առնվում | հարկվող շահույթը որոշելիս |
| | | | Ն12 (ընդհանուր կապիտալ/ռիսկով կշռված ակտիվներ) նորմատիվի մեծությունը որոշելիս |
| | | | հարկվող եկամուտը որոշելիս |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 60 | «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի համաձայն ձևավորված պահուստներն օգտագործվում են | եկամտահարկի հաշվարկման ժամանակ |
| | | | ընթացիկ իրացվելության նորմատիվի հաշվարկման ժամանակ |
| | | | պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկման ժամանակ |
| | | | բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվի հաշվարկման ժականակ |
| | 61 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, բանկը հնարավոր կորուստների պահուստների ճշգրտումներ իրականացնելիս հնարավոր կորուստների պահուստներում առկա ավելցուկային մնացորդներն ուղղում է. | բանկի ֆինանսական արդյունքներն ամփոփող հաշվետվության ծախսերի հաշվին |
| | | | ակտիվների գծով կորուստների վերականգնումից եկամուտների հաշվին |
| | | | բանկի համապարփակ եկամուտների հաշվին |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 62 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | ընդհանուր պահուստը ֆինանսական կազմակերպության հաշվեկշռում ակտիվներին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դասակարգված ակտիվների գծով |
| | | | հատուկ պահուստը ֆինանսական կազմակերպության հաշվեկշռում ակտիվին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հատուկ պահուստը ֆինանսական կազմակերպության հաշվեկշռում ակտիվին հակակշիռ գրանցված պահուստի այն մասն է, որը ձևավորվում է հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դասակարգված ակտիվների գծով |
| | | | ընդհանուր պահուստը ֆինանսական կազմակերպության հաշվեկշռում պարտավորություններին հակակշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դասակարգված ակտիվների գծով |
| | 63 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, հատուկ պահուստը ֆինանսական կազմակերպության հաշվեկշռում` | ակտիվին հակակշիռ գրանցված պահուստի այն մասն է, որը ձևավորվում է հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դասակարգված ակտիվների գծով |
| | | | բոլոր պնդումները սխալ են |
| | | | ակտիվներին հակակշիռ գրանցված պահուստի այն մասն է, որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով |
| | | | պարտավորություններին հակակշիռ գրանցված պահուստի այն մասն է, որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով |
| | 64 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, հատուկ պահուստ ձևավորվում է<br>(ա) ստանդարտ, (բ) հսկվող,<br>(գ) ոչ ստանդարտ, (դ) կասկածելի դասակարգված ակտիվների գծով. | (ա) և (դ) |
| | | | (ա) և (բ) |
| | | | (բ) և (գ) և (դ) |
| | | | (ա) |
| | 65 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, նշված ակտիվներից ո՞րը (որո՞նք) ենթակա չէ (չեն) դասակարգման` | կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերի գծով պահանջները |
| | | | առևտրային բանկերում սառեցված թղթակցային հաշիվները |
| | | | բանկի աշխատակիցներին տրված առհաշիվ գումարներ |
| | | | բանկի դուստր ընկերության կանոնադրական հիմնադրամներում ներդրումները |
| | 66 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, այն ակտիվներն են համարվում վերանայված պայմաններով ակտիվներ,<br>ա) որոնց պայմանները բարելավվել են` պայմանավորված փոխառուի ֆինանսական վիճակի վատթարացմամբ<br>բ) որոնք վերաֆինանսավորվել են<br>գ) որոնց գծով չվճարված տոկոսները դրանց վճարման կամ վարկի մարման օրը ավելացվում են ակտիվի չմարված մասին | միայն (ա) տարբերակը |
| | | | միայն (բ) տարբերակը |
| | | | միայն (ա) և (բ) տարբերակները |
| | | | միայն (ա) և (գ) տարբերակները |
| | 67 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, բլանկային են դասվում այն ակտիվները (կամ դրանց մասերը), որոնք | ապահովված են գրավով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հանդիսանում են ապրանքների ձեռք բերման համար կատարված կանխավճար |
| | | | ապահովված են բյուջետային երաշխիքով |
| | | | ճիշտ տարբերակը նշված չէ |
| | 68 | դրամ:<br>Բանկին սեփականության իրավունքով պատկանում է 1.1 մլրդ. դրամ (սկզբնական արժեք) արժողությամբ շենք և շինություն:<br>Ընդ որում, 1 մլրդ. դրամ արժողությամբ տարածքը բանկը օգտագործում է բանկային գործունեության համար, իսկ 100 մլն. դրամ արժողությամբ տարածքը օգտագործվում է որպես ավտոկայան:<br>Հիմնական միջոցի կուտակված ամորտիզացիան կազմում է 100 մլն. դրամ, որից 50 մլն-ը ավտոկայանի գծով կուտակված ամորտիզացիան է: Ինչքան է կազմում բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալը: | 5.88 մլրդ. դրամ |
| | | | 5.94 մլրդ. դրամ |
| | | | 6.44մլրդ. դրամ |
| | | | 5.95 մլրդ. դրամ |
| | 69 | Բանկի ռիսկով կշռված ակտիվների մեծությունը կազմում է 37 մլրդ. դրամ, իսկ բանկի ընդհանուր կապիտալը՝ 4.5 մլրդ. դրամ:<br>Բանկը շահաբաժին է վճարում բաժնետերերին 0.5 մլրդ դրամ՝ վճարում կատարելով բանկի դրամարկղում եղած կանխիկ ՀՀ դրամի հաշվին: Արդյունքում՝ | բանկը խախտում է Ն12 նորմատիվը, ընդ որում նորմատիվի փաստացի մեծությունը 10.81 տոկոս է |
| | | | բանկը խախտում է Ն12 նորմատիվը, ընդ որում նորմատիվի փաստացի մեծությունը 11.84 տոկոս է |
| | | | նշված գործառնության հետևանքով բանկի Ն12 նորմատիվի մեծությունը չի փոփխվում |
| | | | բանկը չի խախտում Ն12 նորմատիվը, ընդ որում նորմատիվի փաստացի մեծությունը 12.16 տոկոս է |
| | 70 | Բանկը ֆիզիկական անձին տրամադրել է 10 մլն. դրամի վարկ: Համաձայն պայմանագրի փոխառուն մեկ տարի հետո պետք է մարեր վարկի մայր գումարի 50 տոկոսը՝ 5 մլն. դրամը, որը սակայն չի մարել:<br>Ակտիվների դասակարգման օրը փոխառուն դեռևս չէր մարել վարկի մայր գումարի 50 տոկոսը՝ արդեն 250 օր:<br>Վարկը դասակարգելու արդյունքում հատուկ պահուստի մեծությունը կկազմի | 2.5 հազար դրամ |
| | | | 5 մլն. դրամ |
| | | | 2 մլն. դրամ |
| | | | 1 մլն. դրամ |
| | 71 | Սովորական բաժնետոմսերի գծով հնարավոր կորուստների պահուստին մասհանումներ կատարելիս հիմք պետք է ընդունել | մարման ժամկետը լրանալուց հետո ժամկետանց օրերի թիվը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | դրանց գրավով ապահովված լինելու փաստը |
| | | | տվյալ բաժնետոմսերը թողարկող սուբյեկտի երկրի վարկանիշը |
| | | | դրանց գնանշվող կամ չգնանշվող լինելը |
| | 72 | ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, կապիտալացումը գործընթաց է, որի արդյունքում չվճարված տոկոսները. | պայմանագրի համաձայն, դրանց վճարման կամ վարկի մարման օրը հանվում են ակտիվի չմարված մասից |
| | | | դուրս են գրվում հատուկ պահուստի հաշվին |
| | | | մարվում են նոր ստանձնված պարտավորությունների աղբյուրների հաշվին |
| | | | պայմանագրի համաձայն, դրանց վճարման կամ վարկի մարման օրը գումարվում են ակտիվի չմարված մասին |
| | 73 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, վերաֆինանսավորված ակտիվներն այն ակտիվներն են. | որոնք ապահոված չեն գրավով, երաշխիքով |
| | | | որոնց գծով չվճարված տոկոսները դրանց վճարման կամ վարկի մարման օրը ավելացվում են ակտիվի չմարված մասին |
| | | | որոնց մարման ժամկետները կամ այլ պայմանները վերանայվել են |
| | | | որոնց մի մասի մարումը, պայմանավորված փոխառուի վատ ֆինանսական դրությամբ իրականացվել է այլ բանկում բացված նոր վարկի հաշվին |
| | 74 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, | բանկերի կողմից ակտիվների դասակարգման օրերը սահմանում է Կենտրոնական բանկը՝ առևտրային բանկի ներկայացմամբ |
| | | | բանկերը առնվազն ամիսը 3 անգամ պետք է դասակարգեն ակտիվները, ընդ որում դասակարգման օրը պետք է լինի նաև հաշվետու ամսվա վերջին բանկային օրը |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | | | առնվազն ամիսը մեկ անգամ, ընդ որում դասակարգման օրը պետք է լինի նաև հաշվետու ամսվա վերջին աշխատանքային օրը |
| | 75 | Համաձայն օբյեկտիվ չափանիշների բանկի 1 մլն. դրամ արժողությամբ վարկը ժամկետանց է արդեն 20 օր: Ընդ որում, փոխառուն համաձայն պայմանագրի չի մարել վարկի մայր գումարի 20 տոկոսը՝ 200 հազար դրամ:<br>Միևնույն ժամանակ, սուբյեկտիվ չափանիշների համաձայն վարկը բավարարում է ակտիվը՝ կասկածելի դասակարգելու չափանիշներին:<br>Վարկը դասակարգելու արդյունքում հատուկ պահուստի մեծությունը կազմում է | 500 հազար դրամ |
| | | | 100 հազար դրամ |
| | | | 40 հազար դրամ |
| | | | 200 հազար դրամ |
| | 76 | պայմանագրի՝ փոխառուն մեկ տարի հետո պետք է մարի վարկի մայր գումարը և տվյալ վարկի գծով հաշվեգրված տոկոսները՝ 20 հազար դրամ, որը սակայն չի մարվել և ժամկետանց է արդեն 50 օր:<br>Միևնույն ժամանակ, դասակարգման պահին վարկային ռեգիստրից ստացվել է տեղեկատվություն, որ տվյալ իրավաբանական անձը մեկ այլ բանկից ունի վերցված վարկ, որը ժամկետանց է 120 օր: Տվյալ ակտիվը դասակարգելիս հատուկ պահուստի մեծությունը կկազմի. | 200 հազար դրամ |
| | | | 204 հազար դրամ |
| | | | 102 հազար դրամ |
| | | | 100 հազար դրամ |

| | | | |
|---|---|---|---|
| | 77 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի՝ առանց ՀՀ ԿԲ ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման համաձայնությունը ստանալու | բանկը կարող է ՀՀ դրամով արտահայտված հսկվող ակտիվների գծով ավելացնել հատկացումները հատուկ պահուստին մինչև 20 տոկոս |
| | | | բանկը կարող է ՀՀ դրամով արտահայտված կասկածելի ակտիվների գծով ավելացնել հատկացումները հատուկ պահուստին մինչև 70 տոկոսն |
| | | | բանկը կարող է  արտարժույթով արտահայտված կասկածելի ակտիվների գծով ավելացնել հատկացումները հատուկ պահուստին մինչև 75 տոկոս |
| | | | բանկը կարող է արտարժույթով արտահայտված ոչ ստանդարտ ակտիվների գծով ավելացնել հատկացումները հատուկ պահուստին մինչև 35 տոկոս |
| | 78 | Նշված պնդումներից ո՞րն է սխալ.<br>Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի՝ բանկերը կարող են առանց ՀՀ ԿԲ ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման համաձայնությունը ստանալու, | ավելացնել հատկացումներն ընդհանուր պահուստին արտարժույթով արտահայտված կասկածելի ակտիվների գծով՝ մինչև 70 տոկոս |
| | | | ավելացնել հատկացումները հատուկ պահուստին ՀՀ դրամով արտահայտված հսկվող ակտիվների գծով՝ մինչև 15 տոկոս |
| | | | կարող են ավելացնել հատկացումները ընդհանուր պահուստին՝ ստանդարտ ակտիվների համար՝ մինչև 2 տոկոս |
| | | | ավելացնել հատկացումները հատուկ պահուստին ՀՀ դրամով արտահայտված ոչ ստանդարտ ակտիվների գծով՝ մինչև 25 տոկոս |
| | 79 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի՝ ստանդարտ ակտիվներ են համարվում. | ժամկետային ակտիվները, որոնց մարումը ժամկետում հնարավոր չէ փոխառուի (պարտապանի) դրամական միջոցի անբավարար հոսքի պատճառով |
| | | | այն ակտիվները, որոնք սպասարկվում են պայմանագրի համաձայն |
| | | | այն ակտիվները, որոնք ապահոված չեն համարժեք գրավով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 80 | «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգի համաձայն, հնարավոր կորուստների պահուստ ձևավորվում է | մինչև մարման ժամկետը պահվող մուրհակների գծով |
| | | | ՀՀ պետական միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի գծով |
| | | | նշված երեք արժեթղթերի գծով ձևավորվում են հնարավոր կորուստների պահուստ |
| | | | վաճառքի համար նախատեսված գնանշվող բաժնետոմսերի գծով, որոնք չեն օտարվել 1 տարվա ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| | 81 | «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգի համաձայն հնարավոր կորուստների պահուստ ձևավորվում է | վերավաճառքի նպատակով ձեռք բերված ինվեստիցիոն ժամկետային արժեթղթերի գծով |
| | | | ինվեստիցիոն մինչև մարման ժամկետի ավարտը պահվող և անժամկետ արժեթղթերի գծով |
| | | | բոլոր ինվերստիցիոն գնանշվող արժեթղթերի գծով |
| | | | միայն ինվերստիցիոն անժամկետ արժեթղթերի գծով |
| | 82 | Նշված պնդումներից ո՞րն է սխալ.<br>Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգի հնարավոր կորուստների պահուստ ձևավորվում է | մինչև մարման ժամկետի ավարտը պահվող ինվեստիցիոն արժեթղթերի գծով |
| | | | բոլոր ինվեստիցիոն արժեթղթերի գծով |
| | | | այն անժամկետ արժեթղթերի գծով, որոնք պահվում են երկարատև ժամանակահատվածում արժեթուղթ թողարկողի վրա ներազդելու համար |
| | | | վաճառքի համար նախատեսված գնանշվող բաժնետոմսերի գծով, որոնք չեն օտարվել 1 տարվա ընթացքում |
| | 83 | Ժամկետային արժեթղթերը միջին ռիսկային են դասակարգվում, եթե արժեթղթերը չեն մարվել դրանց մարման ժամկետը լրանալու պահից | մինչև 60-րդ օրը ներառյալ |
| | | | 181-րդ օրվանից մինչև 270-րդ օրը ներառյալ |
| | | | 181-րդ օրվանից սկսած |
| | | | 61-րդ օրվանից մինչև 90-րդ օրը ներառյալ |
| | 84 | Բանկը ժամկետային ոչ պետական մինչև մարման ժամկետը պահվող պարտատոմսի գծով (որի անվանական արժեքը՝ 100 մլն. դրամ է) հնարավոր կորուստների պահուստին կատարել է 5 մլն. դրամ հատկացում:<br>Տվյալ պարտատոմսը բանկի կողմից դասակարգվել է որպես | ոչ ռիսկային արժեթուղթ |
| | | | միջին ռիսկային արժեթուղթ |
| | | | անհուսալի արժեթուղթ |
| | | | ռիսկային արժեթուղթ |
| | 85 | մարման ժամկետը պահվող ոչ պետական պարտատոմսեր՝ 110 մլն. դրամով:<br>Պարտատոմսերը դասակարգվել են որպես ռիսկային:<br>Որքան պետք է կազմի տվյալ արժեթղթի գծով հնարավոր կորուստների պահուստի մեծությունը | 20-ից մինչև 70 մլն դրամ |
| | | | 77-ից մինչև 110 մլն դրամ |
| | | | 2-ից մինչև 20 մլն դրամ |
| | | | 22-ից մինչև 77 մլն դրամ |
| | 86 | Անժամկետ արժեթղթերն անհուսալի են ճանաչվում<br>(ա) ժամկետանց դառնալու 181-րդ օրը,<br>(բ) երբ արժեթուղթ թողարկողն օրենսդրությամբ սահմանված կարգով սնանկ է ճանաչվել,<br>(գ) բանկի սուբյեկտիվ կարծիքի հիման վրա | (ա) |
| | | | (գ) |
| | | | (ա) և (բ) |
| | | | (բ) |
| | 87 | Նշել սխալ պատասխանը.<br>«Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 3-ով սահմանվում են | ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ներկայացման ժամկետները |
| | | | ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բանկի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը |
| | | | ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ներկայացման կարգը |
| | 88 | «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 3-ի համաձայն, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | 16 և ավելի մասնաճյուղ ունեցող բանկերի համար տարեկան հաշվետվությունների ներկայացման ժամկետը սահմանվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 30-ը |
| | | | նշված երեք պնդումներն էլ ճիշտ են |
| | | | շաբաթական հաշվետվություններում հաշվետու ժամանակաշրջանի վերջին օր է համարվում կիրակի օրը |
| | | | ԿԲ բանկային վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման վերահսկողը հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերահսկողական նպատակներից ելնելով, բանկերից կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ |
| | 89 | «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 3-ի համաձայն, թիվ 34 հաշվետվությունը՝ «Հաշվետվություն սթրես-թեստերի վերաբերյալ» | ներկայացվում է ազատ ոճով՝«Էքս էլ էս» ֆորմատի ֆայլերով |
| | | | ներկայացնում է Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող ֆայլերին համապատասխան |
| | | | ներկայացվում է հաշվետու ամսվա վերջին օրվա համար իրականացված սթրես թեստավորման արդյունքներով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 90 | Համաձայն «Ֆինանսական կազմակերպությունների և ֆինանսական խմբերի կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի՝ բանկերի կողմից ներգրավվող ավանդների մասին տեղեկություններում պետք է առկա լինի | ավանդի տեսակը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | ժամկետային ավանդը ժամկետից շուտ հետ վերցնելու պայմանները |
| | | | Հայտարարություն այն մասին, որ ավանդը կարող է ներդրվել բանկ որոշակի երրորդ անձի անունով |
| | 91 | Բանկերի կողմից Վարկային ռեգիստրին տրամադրվում է տեղեկատվություն. | վարկի վերաբերյալ ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ, որը բանկերը լրացնում և թարմացնում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը (նույն օրվա դրությամբ) և վարկային ռեգիստր են ներկայացնում հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում |
| | | | տվյալ վարկի վերաբերյալ վարկային ռեգիստր արդեն իսկ մուտքագրված տվյալների յուրաքանչյուր փոփոխության դեպքում՝ դրանք կատարելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում |
| | | | վարկային պայմանագրի կնքման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 92 | Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է | բոլոր արժույթներով՝ 80 տոկոս |
| | | | յուրաքանչյուր նշանակալի արժույթի գծով 40 տոկոս |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բոլոր արժույթներով` 100 տոկոս |
| | | | Կենտրոնական բանկի կողմից նման նորմատիվ չի սահմանվում |
| | 93 | Վարկատուի կողմից վարկային ռեգիստրին տեղեկատվությունը տրամադրվում է | 1 ամսյա ժամկետում |
| | | | պայմանագրի կնքման օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում |
| | | | 10 աշխատանքային օրյա ժամկետում |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | 94 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգի» նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | իրականացնել նույն բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը, եթե տվյալ ֆինանսական տարվան նախորդող 3 ֆինանսական տարիներին անընդմեջ իրականացրել է տվյալ բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը |
| | | | աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենա աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման  փուլերի առնվազն կեսը ավարտաշ լինելու փաստը հավաստող փաստաթուղթ |
| | | | բոլոր պնդումները ճիշտ են |
| | | | աուդիտորական կազմակերպությունը պետք է ունենա բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ |
| | 95 | Համաձայն   «ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգի», բանկում աուդիտ կարող է իրականացնել | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված աուդիտորական կազմակերպությունը |
| | | | աուդիտորական կազմակերպությունը, որն ունի բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ |
| | | | աուդիտորի որակավորում ունեցող ֆիզիկական անձը, որն ունի 2 տարվա աուդիտորական աշխատանքի փորձ |
| | 96 | Նշվածներից ո՞րը չի համարվում հիմնական կապիտալի տարր | գլխավոր պահուստ |
| | | | վերագնահատման պահուստներ |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | | | չբաշխված շահույթ |
| | 97 | Բանկն ունի արտարժութային կարճ դիրք, եթե | բանկի արտարժույթով ակտիվային հաշիվների մնացորդները գերազանցում են արտարժույթով պարտավորությունների մնացորդներին |
| | | | բանկի արտարժույթով  պարտավորությունների հաշիվների մնացորդները գերազանցում են արտարժույթով ակտիվային հաշիվների մնացորդներին |
| | | | բանկի արտարժույթով ակտիվների և արտարժույթով պարտավորությունների տարբերությունը չի գերազանցում բանկի ընդհանուր կապիտալի 15 տոկոսը |
| | | | բանկի արտարժույթով ակտիվները հավասար են բանկի արտարժույթով պարտավորություններին |

| | | | |
|---|---|---|---|
| | 98 | Բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում ընդգրկվում են | թանկարժեք մետաղների ձուլակտորները |
| | | | ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերը և ՀՀ կենտրոնական բանկի թողարկած արժեթղթերը՝ բացառությամբ գրավադրված, ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերի |
| | | | Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 99 | Օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի համար սահմանվում են | արտարժույթի տնօրինման նորմատիվը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ՀՀ տարածքում ավանդներ ընդունելու համար լրացուցիչ պայմաններ |
| | | | կապիտալի համարժեքության նորմատիվը |
| | 100 | Բանկի ընդհանուր ակտիվներում չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը որոշելու համար նպատակահարմար է օգտագործել ՀՀ ԿԲ կողմից սահմանված Կանոնակարգ 3-ի հետևյալ հաշվետվական ձևերը | ձև 1՝ «Հաշվեկշիռ» և ձև 5՝ «Հաշվետվություն բանկի եկամուտների և ծախսերի վերաբերյալ» |
| | | | ձև 6՝ «Հաշվետվություն վարկային ներդրումների, դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերի վերաբերյալ» և ձև 8՝ «Հաշվետվություն ներգրավված և տեղաբաշխված միջոցների ծախսատարության և եկամտաբերության վերաբերյալ» |
| | | | ձև 1՝ «Հաշվեկշիռ» և ձև 8՝ «Հաշվետվություն ներգրավված և տեղաբաշխված միջոցների ծախսա-տարության և եկամտաբերության վերաբերյալ» |
| | | | ձև 1՝ «Հաշվեկշիռ» և ձև 6՝ «Հաշվետվություն վարկային ներդրումների, դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերի վերաբերյալ» |
| | 101 | «Նախորդ շաբաթվա ընթացքում ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջին տոկոսադրույքների վերաբերյալ թիվ 17 հաշվետվությունը լրացնելիս հաշվի են առնվում | հաշվետու շաբաթվա ընթացքում կնքված նոր ավանդային պայմանագրերը |
| | | | հաշվետու շաբաթվա ընթացքում կնքված նոր վարկային պայմանագրերը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | հաշվետու շաբաթվա ընթացքում կնքված ռեպո համաձայնագրերը |
| | 102 | Նշված հաշվետվություններից որը չի լրացվում ամսական պարբերականությամբ. | Հաշվետվություն ակտիվների եւ պարտավորությունների մարման ժամկետայնության վերաբերյալ (ձև 9) |
| | | | Հաշվետվություն արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների վերաբերյալ (ձև 19) |
| | | | Հաշվետվություն "խոշոր" պարտապանների վերաբերյալ (ձև 15) |
| | | | Հաշվետվություն վարկային ներդրումների, դեբիտորական պարտքերի եւ ինվեստիցիոն արժեթղթերի վերաբերյալ (ձև 6) |
| | 103 | Ըստ «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 3-ի՝ ակտիվի կամ պարտավորության համախառն հաշվեկշռային մնացորդ (արժեք) է համարվում | վերջիններիս գծով հաշվեկշռում գրանցված գումարը՝ ներառյալ տոկոսները, տույժերը և տուգանքները, առանց նրա գծով ձևավորված պահուստի,կուտակված ամորտիզացիայի կամ արժեզրկման նվազեցման, եթե այդպիսիք կան |
| | | | վերջիններիս գծով հաշվեկշռում գրանցված գումարը՝ ներառյալ տոկոսները, տույժերը և տուգանքները, նրա գծով ձևավորված պահուստը և կուտակված ամորտիզացիան |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բանկի բոլոր աշխատակիցները՝ օրենքով և/կամ այլ իրավական ակտերով սահմանված իրենց պարտականությունների շրջանակներում |
| | 324 | Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի՝ սթրես-թեստերի հետևողական իրականացման համար պատասխանատու | բանկի խորհուրդը |
| | | | գործադիր մարմինը |
| | | | հսկողական գործառույթ իրականացնող անձինք |
| | | | բանկի բոլոր աշխատակիցները՝ օրենքով և/կամ այլ իրավական ակտերով սահմանված իրենց պարտականությունների շրջանակներում |
| | 325 | Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի՝ վարկի մոնիթորինգի գործընթացը ներառում է՝ | վճարումների և վարկի մարումների գրանցում |
| | | | գրավի առարկայի պարբերական վերագնահատում |
| | | | վարկի գծով ստացված բոլոր տվյալների գրանցում |
| | | | ճիշտ են նշված բոլոր պատասխանները |
| | 326 | Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի՝ բանկի ներքին հսկողության համակարգը հիմնական միջոցների կառավարման առումով ներառում է՝ | բանկի հիմնական միջոցների ձեռքբերման, օտարման և դուրսգրման կանոնները |
| | | | հիմնական միջոցների պահպանման, հաշվառման ներքին ընթացակարգերը |
| | | | ճիշտ են նշված բոլոր պատասխանները |
| | | | դուրս գրված հիմնական միջոցների տնօրինման սկզբունքներն ու ձևերը |

| | | | |
|---|---|---|---|
| | 327 | Նշել սխալ պատասխանը: Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի` գործարար գործընթացների անընդհատության կառավարման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող գործընթացները բանկի այն գործառնությունները, գործընթացները, ռեսուրսները և ենթակառուցվածքներն են, որոնց խափանումը. ընդհատումը կամ բացակայությունը էական բացասական ազդեցություն կունենա | բանկի գործառնությունների և համբավի վրա |
| | | | հաճախորդների վարկունակության վրա |
| | | | բանկի շահութաբերության վրա |
| | | | ավանդատուների և այլ պարտատերերի վրա |
| | 328 | Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի` բանկի յուրաքանչյուր մասնաճյուղի վերաբերյալ բանկի խորհրդին և գործադիր մարմնին խորհրդի կողմից սահմանված պարբերականությամբ ներկայացվող տեղեկատվությունը ներառում է`<br>1.մասնաճյուղի գործունեության վերլուծությունը, այդ թվում` մասնաճյուղի վարկային պորտֆելի, ավանդային բազայի կառուցվածքը. կենտրոնացումները, փոփոխման միտումները, 2.մասնաճյուղի կողմից սպասարկվող տարածաշրջանի տնտեսական վերլուծությունը,<br>3.հաճախորդների կողմից ներկայացված դիմում-բողոքները,<br>4. հաճախորդների թվաքանակի փոփոխությունների ռինամիկան: | ճիշտ են 1,3 և 4 պատասխանները |
| | | | ճիշտ են 1,2 և 4 պատասխանները |
| | | | ճիշտ են 1,2,3 և 4 պատասխանները |
| | | | ճիշտ են 2,3 և 4 պատասխանները |
| | 329 | Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի` բանկը, որպես ռիսկերի կառավարման և ներքին հսկողության համակարգի տարր, պետք է ունենա առնվազն հետևյալ հսկողական գործառույթները` | ռիսկերի կառավարման և ներքին աուդիտի |
| | | | ռիսկերի կառավարման, համապատասխանության ապահովման և ներքին աուդիտի |
| | | | ճիշտ պատասխանը բացակայում է |
| | | | կառավարման |
| | 330 | «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ով, սահմանված իրացվելիության վերաբերյալ հետևյալ պնդումներից ո՞րն է սխալ. | իրացվելիության ռիսկը հավանականություն է, որ բանկը բավարար իրացվելի միջոցներ չի ունենա պարտավորությունները ժամանակին մարելու համար |
| | | | իրացվելիության ռիսկը կարող է հանդես գալ երեք եղանակով |
| | | | միջոցների ներգրավման անհնարինությունը ենթադրում է, որ բանկը հնարավորություն չի ունենա համապատասխան ժամկետում միջոցներ ներգրավել շուկայից այնպիսի արժեքով, որը հասանելի է շուկայի այլ մասնակիցներին |
| | | | ակտիվների իրացվելիության ռիսկի դեպքում բանկն ի վիճակի չէ շուկայում իրացնել իր ակտիվներն առանց գնային կորուստների |

| | | | |
|---|---|---|---|
| | 331 | Նշել սխալ պատասխանը: Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի՝ | հսկողական գործառույթների առկայությունն ազատում է բանկի խորհրդին կամ գործադիր մարմնին իրենց պարտականությունների կատարումից |
| | | | յուրաքանչյուր հսկողական գործառույթի իրականացման համար պատասխանատու անձի/անձանց լիազորություններն ու պարտականությունները սահմանվում են խորհրդի կողմից |
| | | | յուրաքանչյուր հսկողական գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ բանկի գործադիր տնօրենի հետ պարբերաբար քննարկում է տվյալ գործառույթի ռեսուրսների համարժեքությունը և անհրաժեշտության դեպքում պահանջում է ճշգրտումներ |
| | | | յուրաքանչյուր հսկողական գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ պետք է հնարավորություն ունենա անհրաժեշտության դեպքում հսկողություն իրականացնել ձեռնարկված ուղղիչ միջոցառումների և տրված առաջարկությունների իրականացման նկատմամբ |
| | 332 | Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի՝ համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձն/անձինք առնվազն եռամսյակային պարբերականությամբ խորհրդին է ներկայացնում հաշվետվություններ, որոնք ներառում են՝ | բանկի համապատասխանության գործառույթի հետ կապված ռիսկերի գնահատումը և ռիսկերի կառավարման նպատակով ձեռնարկված քայլերը |
| | | | բանկի տարբեր միավորների (բաժիններ, բիզնես միավորներ և այլն) գործունեության համապատասխանության գնահատումը ներքին ստանդարտներին և նպատակներին հետևելու տեսանկյունից |
| | | | բանկի կամ ցանկացած աշխատակցի նկատմամբ որևէ կարգավորող կամ վերահսկող մարմնի կողմից կիրառված տուգանքները կամ այլ պատասխանատվության միջոցները |
| | | | ճիշտ են բոլոր պատասխանները |
| | 333 | Նշել սխալ պատասխանը: Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի՝ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները պետք է առաջնորդվեն անկախության սկզբունքով, որը ենթադրում է, որ վերջիններս | զգուշավորություն են ցուցաբերում իրենց պարտականությունների իրականացման ընթացքում ձեռքբերված տեղեկատվության օգտագործման և պահպանման հարցում |
| | | | աուդիտորական աշխատանքի պլանավորման, իրականացման, արդյունքների ամփոփման և շրջանառության հարցերում զերծ են երրորդ անձանց միջամտությունից |
| | | | զերծ են մնում այնպիսի գործառույթների գնահատումից, որոնց իրականացման համար հանդիսացել են պատասխանատու անձ աուդիտորական դիտարկմանը նախորդող տարվա ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | իրենց աշխատանքների իրականացման ընթացքում բացառում են շահերի բախման դեպքերը |
| | 334 | Նշել սխալ պատասխանը: Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի՝ | ներքին աուդիտորները պետք է իրականացնեն ռեսուրսների արդյունավետ բաշխում `աուդիտի սահմանված նպատակներին հասնելու համար՝ հաշվի առնելով աուդիտի ենթակա գործառույթների բնույթը, բարդությունը, ժամանակային սահմանափակումները, առկա ռեսուրսները |
| | | | ներքին աուդիտը չի մերժում բանկի գործադիր մարմնի կողմից աուդիտի կամ այլ գործողությունների իրականացման պահանջը, եթե նույնիսկ այն չի համապատասխանում բանկի խորհրդի կողմից հաստատված ներքին աուդիտի գործառույթի նպատակներին կամ կարող է խոչընդոտել աուդիտի տարեկան ծրագրի արդյունավետ իրականացմանը |
| | | | ներքին աուդիտորները բացահայտում, վերլուծում, գնահատում և փաստաթղթավորում են բավարար տեղեկատվություն՝ աուդիտի նպատակներին հասնելու համար |
| | | | ներքին աուդիտի գործառույթն ապահովում է, բանկի բոլոր էական ռիսկային ոլորտները և պարտավորությունները ողջամիտ ժամանակահատվածում և պարբերականությամբ ենթարկվեն աուդիտի |
| | 335 | Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի՝ | բանկի գործարար ծրագրով հաճախորդների նկատմամբ արդարացի վերաբերմունքի ցուցաբերումը պետք է սահմանվի որպես նպատակ և այն պետք է հաշվի առնվի որոշումների կայացման գործընթացներում |
| | | | բանկը պետք է ապահովի գործարար վարվելակերպի և սպառողների շահերի պաշտպանության առումով մշակված գործընթացների ու ընթացակարգերի, ինչպես նաև բարձր պրոֆեսիոնալիզմի ու վարքագծի կանոնների պահպանումը բանկի աշխատակիցների կողմից |
| | | | գործարար վարվելակերպի և սպառողների շահերի պաշտպանության առումով բանկի կողմից մշակված գործընթացներն ու ընթացակարգերը ապահովում են հաճախորդների նկատմամբ արդարացի վերաբերմունք |
| | | | ճիշտ են բոլոր պատասխաններ |
| | 336 | Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի՝ բանկի մասնաճյուղերի կառավարմանը վերաբերող ներքին հսկողության համակարգը ներառում է՝ | մասնաճյուղերի աշխատակիցների նվազագույն/առավելագույն քանակը և նրանց ներկայացվող պահանջները |
| | | | բանկի գլխամաս տեղեկատվություն ներկայացնելու պարտականությունների բաշխումը |
| | | | բանկի բոլոր մասնաճյուղերում հաշվապահական հաշվառման և ներքին հաշվետվական միասնական համակարգի կիրառման սկզբունքները |
| | | | ճիշտ են նշված բոլոր պատասխանները |
| | 337 | Նշել սխալ պատասխանը: Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի՝ | բանկի հետ կապված անձանց հետ գործարքների կնքման ընթացակարգերը նվազագույնը բացահայտում և վերահսկում են շահերի բախման հնարավոր դեպքերն ու ոլորտները |
| | | | վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային գործառնությունները կարգավորող ներքին իրավական ակտերի դրույթները/պահանջները պետք է համահունչ լինեն վարկային գործառնությունները կարգավորող ներքին ակտերի պահանջներին |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ներքին հսկողության համակարգը նախատեսում է բանկի հետ կապված անձանց մասին տեղեկատվության հավաքագրման, պահպանման և մշտապես թարմացման արդյունավետ ընթացակարգերի առկայություն |
| | | | բանկի հետ կապված անձանց մասին տեղեկատվությունը չի ներառում զբաղմունքը (իրավաբանական անձի դեպքում գործունեության տեսակը) |
| | 338 | Նշել սխալ պատասխանը: Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի՝ | ներքին հսկողության համակարգը նախատեսում է հուսալի և արդյունավետ տեղեկատվական և հաշվետվողականության համակարգերի առկայություն |
| | | | բանկի հաշվապահական և այլ գրառումները, բանկում օգտագործվող տեղեկատվությունը պետք է լինեն արժանահավատ, ամբողջական, ներկայացվեն ժամանակին և պաշտպանված լինեն չարտոնված առնչություններից |
| | | | ներբանկային տեղեկատվական հոսքերը և փաստաթղթաշրջանառության համակարգը օգտագործվում են միայն կառավարման որոշ մակարդակներում բանկային տարբեր գործառույթների իրականացման և դրանց նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու համար |
| | | | բանկն ապահովում է տեղեկատվության պահպանման և մշակման էլեկտրոնային համակարգերի անվտանգությունը և դրանց աշխատանքի անընդհատությունը |
| | 339 | Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ի, հսկողական գործառույթների (բացառությամբ ներքին աուդիտի գործառույթի) իրականացման համար պատասխանատու անձանց նշանակումը, վարձատրության պայմանների հաստատումը, խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումն իրականացնում է | բանկի մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից խորհրդի համաձայնությամբ |
| | | | բանկի խորհրդի կողմից՝ մասնակիցների ընդհանուր ժողովի համաձայնությամբ |
| | | | բանկի գործադիր մարմնի կողմից՝ խորհրդի համաձայնությամբ |
| | | | բանկի խորհրդի կողմից՝ ձայների առնվազն կեսի համաձայնությամբ |
| | 340 | Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ի, | Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կապիտալի նվազագույն մակարդակից ավելի կապիտալի ապահովումը պետք է դիտվի որպես բանկի աճող ռիսկերի դիմակայման միջոց |
| | | | ոչ համարժեք ներքին հսկողության համակարգի խնդիրները պետք է լուծվեն ավելցուկային կապիտալի ձևավորմամբ |
| | | | անարդյունավետ ռիսկերի կառավարման գործընթացների խնդիրները պետք է լուծվեն ավելցուկային կապիտալի ձևավորմամբ |
| | | | բանկը պետք է ապահովի իր կողմից ստանձնած ռիսկերին համարժեք կապիտալի համարժեքություն, ինչպես նաև մշակի և օգտագործի ռիսկերի մոնիթորինգի և կառավարման արդյունավետ մեխանիզմներ |
| | 341 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Ներքին հսկողության համակարգը անձնակազմի կառավարման քաղաքականության առումով պետք է առնվազն նախատեսի. | աշխատակիցների վերապատրաստման սկզբունքները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | արձակուրդային քաղաքականության սկզբունքները |
| | | | աշխատակիցների վարձատրության և պարգևատրման կարգը |

| | | | |
|---|---|---|---|
| | 342 | Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի, բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող բանկի գործարար գործընթացների առումով նվազագույնը պետք է ներառի. | գործարար գործընթացի վերջնական արդյունքը՝ փաստաթղթի, գործարքի, տեղեկատվության կամ այլ տեսքով |
| | | | անհրաժեշտ հղումներ գործընթացը կանոնակարգող օրենքներին, այլ իրավական ակտերին կամ այլ ներքին |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | նկարագրվող գործարար գործընթացի իրականացման քայլերի հերթականությունը |
| | 343 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի, գրավի առարկայի գնահատման և վերահսկման ներքին հսկողության համակարգը նվազագույնը ներառում է.<br>(ա) անկախ գնահատող հանդիսացող անձանց ընտրության սկզբունքները<br>(բ) գրավի վերագնահատումն իրականացնելու գործընթացը<br>(գ) գրավի վերագնահատումն իրականացնելու հաճախականությունը | միայն (ա) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | 344 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Բանկի ներքին հսկողության համակարգը վարկավորման գործընթացի առումով, նվազագույնը ներառում է. | վարկային պորտֆելի նպատակային (բենչմարք) կառուցվածքը |
| | | | վարկային պորտֆելի նպատակային ժամկետայնությունը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | վարկային պորտֆելի նպատակային եկամտաբերությունը |
| | 345 | Բանկի ակտիվները և պարտավորությունները կառավարելու և ծրագրավորելու համար, բանկի խորհրդին և գործադիր մարմնին բանկի՝ հաշվետու ժամանակի ընթացքում ձևավորված իրացվելի միջոցների պահանջի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է տրամադրվի | առնվազն ամիսը մեկ անգամ |
| | | | առնվազն եռամսյակը մեկ անգամ |
| | | | առնվազն տարին մեկ անգամ |
| | | | առնվազն երկու ամիսը մեկ անգամ |
| | 346 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Բանկի ակտիվները և պարտավորությունները (իրացվելիությունը) կառավարելու և ծրագրավորելու համար, բանկի խորհրդին և գործադիր մարմնին առնվազն երկու ամիսը մեկ անգամ պետք է տրամադրվի հետևյալ տեղեկատվությունը | ընթացիկ իրացվելիությունը |
| | | | կապիտալի ընթացիկ և ակնկալվող մակարդակը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | միջոցների ակնկալվող/կանխատեսվող պահանջը |
| | 347 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Ներքին աուդիտը պետք է կատարի հետստուգումային հսկողություն բանկի ստորաբաժանումների կողմից այն միջոցառումների իրականացման նկատմամբ, որոնք առաջարկվել են | ներքին աուդիտի արդյունքում և հաստատվել են բանկի խորհրդի կողմից |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | արտաքին աուդիտի արդյունքում և հաստատվել են բանկի խորհրդի կողմից |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Կենտրոնական բանկի կողմից իրականացվող ստուգումների արդյունքում |
| | 348 | Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի` սթրես-թեստավորման արդյունքները կիրառվում են. | երկարաժամկետ գործարար ծրագրերի կազմման ժամանակ |
| | | | վերականգնման ծրագրերի մշակման ժամանակ |
| | | | կապիտալի և իրացվելիության պլանավորման ժամանակ |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 349 | Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի, բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը չեկերի գծով ներառում են հետևյալ պահանջները. | բանկի կողմից չեկերի թողարկման ընթացակարգը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | բանկի կողմից չեկերի սպասարկման և վճարման իրականացման ընթացակարգը |
| | | | կեղծ չեկերի հայտնաբերման և համապատասխան միջոցառումների ձեռնարկման ընթացակարգերի սահմանում |
| | 350 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի, բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը, դրամարկղային գործառնությունների վերաբերյալ, նկարագրում են. | գանձապահների տնօրինության տակ գտնվող կանխիկի առավելագույն սահմանաչափերը |
| | | | կանխիկ միջոցների գույքագրման պարբերականությունը |
| | | | բանկի գործադիր մարմնին բանկի դրամարկղային գործառնությունների վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների ձևերը և ներկայացման պարբերականությունը |
| | | | թույլատրելի կենտրոնացումների սահմանաչափերն` ըստ ներդրումային գործիքների |
| | 351 | Նշել սխալ պատասխանը.<br>Համաձայն «Ֆինանսական կազմակերպությունների և ֆինանսական խմբերի կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի, վճարային քարտերի մասին տեղեկություններում պետք է առկա լինի հետևյալ տեղեկատվությունը | տրամադրվող քարտի տեսակը, քարտի պատկանելիությունը որևէ համակարգի, օրինակ` ԱրՔա, ՎԻԶԱ, այլ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | քարտային հաշվի արժույթի տեսակը |
| | | | քարտային հաշվի բացասական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույքը |
| | 352 | «ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգի», բանկն ընտրում է այն աուդիտորական կազմակերպությունը, որը բավարարում է հետևյալ նվազագույն չափանիշներին. | աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 5 բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակէ Էյ-Սի-Սի-Էյ, ՍԻ-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) |

| | | | |
|---|---|---|---|
| | | | աուդիտորական կազմակերպությունը բանկի հետ կնքվող պայմանագրով համաձայնություն է տալիս Կենտրոնական բանկի հրավերով մասնակցելու բանկի, աուդիտորական կազմակերպության և Կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենա Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում, |
| | 353 | «ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգի», միևնույն պատասխանատու աուդիտորը կարող է իրականացնել նույն բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ, եթե | տվյալ ֆինանսական տարվան նախորդող 3 ֆինանսական տարիներին անընդմեջ իրականացրել է տվյալ բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | տվյալ ֆինանսական տարվան նախորդող 2 ֆինանսական տարիներին անընդմեջ իրականացրել է տվյալ բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ |
| | | | տվյալ ֆինանսական տարվան նախորդող 4 ֆինանսական տարիներին անընդմեջ իրականացրել է տվյալ բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ |
| | 354 | «ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգի», աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենա | աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ |
| | | | Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կողմից տրված աուդիտորի որակավորում |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ |
| | 355 | Համաձայն «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգի», բանկն ընտրում է միջազգային ճանաչում ունեցող այն աուդիտորական կազմակերպությունը, որը բավարարում է հետևյալ նվազագույն չափանիշներին. | աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ |
| | | | աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 7 տարվա աշխատանքային փորձ |
| | | | բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման առնվազն 7 տարվա փորձ |
| | 356 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության» կարգի, | Բանկը պետք է ընտրի սույն կարգում նշված կայքերից որևէ մեկում տեղադրված ցանկում ներառված լավագույն 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպություններից մեկը |
| | | | Բանկի կողմից ընտրված աուդիտորական կազմակերպությունը չի կարող Կենտրոնական բանկի հրավերով մասնակցելու բանկի, աուդիտորական կազմակերպության և Կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը |
| | | | Բանկերը կարող են սահմանել սույն կարգի  սահմանված չափանիշներին չհակասող այլ չափանիշներ |
| | | | Միևնույն պատասխանատու աուդիտորը չի կարող իրականացնել նույն բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը, եթե տվյալ ֆինանսական տարվան նախորդող 3 ֆինանսական տարիներին անընդմեջ իրականացրել է այլ բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ |
| | 357 | «ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգի»,  աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենա | Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կողմից տրված աուդիտորի որակավորում |
| | | | միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ |
| | 358 | Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը հավասար է 5.0 մլրդ դրամ: Բանկի կողմից բանկի հետ կապված անձանց տրամադրված բոլոր փոխառությունների գումարը կազմում է 1.0 մլրդ դրամ: Բանկը  ևս 260 մլն դրամի վարկ է տրամադրել բանկի ղեկավարի հետ փոխկապակցված անձին: Արդյունքում բանկը՝ | խախտել է բանկի հետ կապված 1 անձի և բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվը |
| | | | չի խախտել բանկի հետ կապված 1 անձի գծով ռիսկի առավելագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվը |
| | | | խախտել է բոլոր խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվը |
| | | | չի խախտել բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվը |

| | | | |
|---|---|---|---|
| | | 359 | Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը հավասար է 6.0 մլրդ դրամ: Բանկի կողմից բանկի հետ կապված մեկ անձին տրամադրել է վարկ 180.0 մլն դրամի և նրա հետ փոխկապակցված անձին` 200.0 մլն դրամի:Արդյունքում բանկը` | խախտել է բանկի հետ կապված 1 անձի գծով ռիսկի առավելագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվը |
| | | | | խախտել է խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվը |
| | | | | խախտել է բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվը |
| | | | | չի խախտել որևէ հիմնական տնտեսական նորմատիվ, |
| | | 360 | Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը հավասար է 5.0 մլրդ դրամ: Բանկի կողմից մեկ փոխառուին տրամադրվել է վարկ 500.0 մլն դրամի և նրա հետ փոխկապակցված անձին` 700.0 մլն դրամի: Արդյունքում բանկը` | խախտել է մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվը |
| | | | | չի խախտել որևէ հիմնական տնտեսական նորմատիվ |
| | | | | խախտել է խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվը |
| | | | | չի խախտել մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի հիմնական տնտեսական նորմատիվը |
| | | 361 | Վարկային ռիսկի հաշվարկում օգտագործվող ռիսկի կշիռներն են` | 0% ռիսկի կշիռը |
| | | | | 10% ռիսկի կշիռը |
| | | | | 75% ռիսկի կշիռը |
| | | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | 362 | Բանկային ոսկի բանկի դրամապահոցում ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում են | 0 տոկոս ռիսկի կշռով |
| | | | | 10 տոկոս ռիսկի կշռով |
| | | | | 20 տոկոս ռիսկի կշռով |
| | | | | հիմք ընդունելով տվյալ բանկի վարկանիշին համապատասխան ռիսկի կշիռը |
| | | 363 | Պահանջներ Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի նկատմամբ ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում են | 0 տոկոս ռիսկի կշռով |
| | | | | 20 տոկոս ռիսկի կշռով |
| | | | | 50 տոկոս ռիսկի կշռով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հիմք ընդունելով տվյալ կազմակերպությունների վարկանիշին համապատասխան ռիսկի կշիռը |
| | 364 | Դատական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի Հայաստանի Հանրապետության պետական մուրհակները և դրանց գծով հաշվարկված տոկոսները ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում են | 0 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 10 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 20 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 50 տոկոս ռիսկի կշռով |
| | 365 | Կարճաժամկետ պահանջները օտարերկրյա բանկերի նկատմամբ ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում են | 0 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 10 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 20 տոկոս ռիսկի կշռով |
| | | | հիմք ընդունելով տվյալ կազմակերպությունների վարկանիշին համապատասխան ռիսկի կշիռը |
| | 366 | Շուկայական ռիսկը | արտարժութային, տոկոսադրույքի և իրացվելիության ռիսկերի հանրագումարն է |
| | | | վարկային, տոկոսադրույքի և կապիտալի գործիքների գնային ռիսկերի հանրագումարն է |
| | | | վարկային, արտարժութային և կապիտալի գործիքների գնային ռիսկերի հանրագումարն է |
| | | | արտարժութային, տոկոսադրույքի և կապիտալի գործիքների գնային ռիսկերի հանրագումարն է |
| | 367 | Նշված տարբերակներից որի՞ դեպքում տոկոսադրույքի և կապիտալի գործիքների գնային ռիսկերը կընդգրկվեն շուկայական ռիսկի հաշվարկում | բանկի ընդհանուր հաշվեկշռային ակտիվները կազմում են 20 մլրդ դրամ, իսկ շահույթ/ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների հանրագումարը կազմում է 500 մլն դրամ |
| | | | բանկի ընդհանուր հաշվեկշռային ակտիվները կազմում են 20 մլրդ դրամ, իսկ շահույթ/ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների հանրագումարը կազմում է 700 մլն դրամ |
| | | | բանկի ընդհանուր հաշվեկշռային ակտիվները կազմում են 30 մլրդ դրամ, իսկ շահույթ/ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների հանրագումարը կազմում է 700 մլն դրամ |
| | | | բանկի ընդհանուր հաշվեկշռային ակտիվները կազմում են 30 մլրդ դրամ, իսկ շահույթ/ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների հանրագումարը կազմում է 500 մլն դրամ |
| | 368 | Նշված տարբերակներից որի՞ դեպքում տոկոսադրույքի և կապիտալի գործիքների գնային ռիսկերը չեն ընդգրկվի շուկայական ռիսկի հաշվարկում | բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալը կազմում է 8 մլրդ դրամ, իսկ շահույթ/ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և  իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների հանրագումարը կազմում է 1.5 մլրդ դրամ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալը կազմում է 8 մլրդ դրամ, իսկ շահույթ/ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների հանրագումարը կազմում է 1.8 մլրդ դրամ |
| | | | բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալը կազմում է 7 մլրդ դրամ, իսկ շահույթ/ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների հանրագումարը կազմում է 1.8 մլրդ դրամ |
| | | | բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալը կազմում է 7 մլրդ դրամ, իսկ շահույթ/ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ակտիվների հանրագումարը կազմում է 1.5 մլրդ դրամ |
| | 369 | Արտարժութային դիրքը փակ է, եթե արտարժութային ռիսկ պարունակող ակտիվների և արտարժութային ռիսկ պարունակող պարտավորությունների միջև եղած տարբերությունը | մեծ է զրոյից |
| | | | փոքր է զրոյից |
| | | | հավասար է զրոյի |
| | | | մեծ կամ փոքր է զրոյից |
| | 370 | Նշել ամբողջական պատասխանը. արտարժութային դիրքը բաց է, եթե արտարժութային ռիսկ պարունակող ակտիվների և արտարժութային ռիսկ պարունակող պարտավորությունների միջև եղած տարբերությունը | մեծ է զրոյից |
| | | | փոքր է զրոյից |
| | | | հավասար է զրոյի |
| | | | մեծ կամ փոքր է զրոյից |
| | 371 | Եթե բանկի արտարժութային ռիսկ պարունակող ակտիվները կազմում են 100 մլն դրամ, իսկ արտարժութային ռիսկ պարունակող պարտավորությունները՝ 80 մլն դրամ, ապա արտարժութային դիրքը | կարճ է |
| | | | երկար է |
| | | | փակ է |
| | | | չի հաշվարկվում |
| | 372 | Եթե բանկի արտարժութային ռիսկ պարունակող ակտիվները կազմում են 100 մլն դրամ, իսկ արտարժութային ռիսկ պարունակող պարտավորությունները՝ 120 մլն դրամ, ապա արտարժութային դիրքը | կարճ է |
| | | | երկար է |
| | | | փակ է |
| | | | չի հաշվարկվում |
| | 373 | Արտարժութային դիրքերը հաշվարկվում են | յուրաքանչյուր օրվա դրությամբ և արտահայտվում են համապատասխան արտարժույթով |
| | | | յուրաքանչյուր օրվա դրությամբ և արտահայտվում են Հայաստանի Հանրապետության դրամով |
| | | | ամսվա վերջին օրվա դրությամբ և արտահայտվում են համապատասխան արտարժույթով |
| | | | ամսվա վերջին օրվա դրությամբ և արտահայտվում են Հայաստանի Հանրապետության դրամով |
| | 374 | Արտարժութային առավելագույն դիրքը հաշվարկվում է որպես. | արտարժութային երկար դիրքերի հանրագումարից և արտարժութային կարճ դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումարից առավելագույն մեծություն |

| | | | |
|---|---|---|---|
| | | | արտարժութային երկար դիրքերի հանրագումարի և արտարժութային կարճ դիրքերի հանրագումարի բացարձակ մեծությունների հանրագումար |
| | | | արտարժութային երկար դիրքերի և արտարժութային կարճ դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 375 | Արտարժութային երկար դիրքերի հանրագումարը կազմում է 20 մլն դրամ, իսկ արտարժութային կարճ դիրքերի հանրագումարը -25 մլն դրամ է, Արտարժութային առավելագույն դիրքը կկազմի` | 45 մլն դրամ |
| | | | 5 մլն դրամ |
| | | | 25 մլն դրամ |
| | | | 20 մլն դրամ |
| | 376 | ՎաՌ- մեթոդաբանությամբ արտարժութային ռիսկի հաշվարկման համար հիմք է ընդունվում | 100% վստահության միջակայքը |
| | | | 99% վստահության միջակայքը |
| | | | 50% վստահության միջակայքը |
| | | | 1% վստահության միջակայքը |
| | 377 | Տոկասադրույքի հատուկ և ընդհանուր ռիսկերը հաշվարկվում են | միայն շահույթ/ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերի նկատմամբ |
| | | | միայն իրական արժեքով` այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերի նկատմամբ |
| | | | շահույթ/ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և իրական արժեքով` այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերի նկատմամբ |
| | | | մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի նկատմամբ |
| | 378 | Նշել ամբողջական պատասխանը. միևնույն դիրքերի հաշվարկին մասնակցող պարտքային արժեթղթերը պետք է | թողարկված լինեն միևնույն անձի կողմից |
| | | | արտահայտված լինեն միևնույն արժույթով |
| | | | ունենան միևնույն եկամտաբերությունը, կամ եկամտաբերությունների միջև տարբերությունը չպետք է գերազանցի 0.2 տոկոսային կետը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 379 | Պարտքային արժեթղթերի համախառն դիրքը հաշվարկվում է որպես | պարտքային արժեթղթերի երկար և կարճ դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար |
| | | | պարտքային արժեթղթերի երկար դիրքերի հանրագումար |
| | | | պարտքային արժեթղթերի կարճ դիրքերի հանրագումար |
| | | | պարտքային արժեթղթերի երկար դիրքերի հանրագումարի և կարճ դիրքերի հանրագումարի (բացարձակ մեծությամբ) տարբերություն |
| | 380 | Որպեսզի մեկ տարուց ավելի ժամկետայնություն ունեցող պարտքային արժեթղթերը մասնակցեն միևույն դիրքերի հաշվարկին, ապա նրանց ժամկետայնությունների միջև տարբերությունը չպետք է գերազանցի | 7 օրը |
| | | | 14 օրը |
| | | | 30 օրը |
| | | | 60 օրը |
| | 381 | Մինչև մարումն ընկած յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար պարտքային արժեթղթերի զուտ դիրքը (երկար կամ կարճ) հաշվարկվում է որպես | պարտքային արժեթղթերի` տվյալ ժամանակաշրջանի երկար և կարճ դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար |
| | | | պարտքային արժեթղթերի` տվյալ ժամանակաշրջանի երկար դիրքերի հանրագումար |

| | | | |
|---|---|---|---|
| | | | պարտքային արժեթղթերի՝ տվյալ ժամանակաշրջանի կարճ դիրքերի հանրագումար |
| | | | պարտքային արժեթղթերի՝ տվյալ ժամանակաշրջանի բոլոր երկար դիրքերի հանրագումարի և կարճ դիրքերի հանրագումարի (բացարձակ մեծությամբ) տարբերություն |
| | 382 | Կապիտալի գործիքների գնային ռիսկը հաշվարկվում է | շահույթ/ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և մինչև մարման ժամկետը պահվող կապիտալի գործիքների նկատմամբ |
| | | | իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող և մինչև մարման ժամկետը պահվող կապիտալի գործիքների նկատմամբ |
| | | | շահույթ/ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կապիտալի գործիքների նկատմամբ |
| | | | միայն շահույթ/ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող կապիտալի գործիքների նկատմամբ |
| | 383 | Կապիտալի գործիքների դիրքերի հաշվարկում ընդգրկվում են.<br>ա) ռեպո համաձայնագրով ձեռք բերված և փոխառությամբ ստացված կապիտալի գործիքները<br>բ) գրավադրված կապիտալի գործիքները<br>գ) որպես գրավ ստացված կապիտալի գործիքները<br>դ) արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող կապիտալի գործիքները | ճիշտ է միայն բ) տարբերակը |
| | | | ճիշտ են ա) և գ) տարբերակները |
| | | | ճիշտ են բ) և գ) տարբերակները |
| | | | ճիշտ են գ) և դ) տարբերակները |
| | 384 | Միևնույն դիրքերի հաշվարկում մասնակցող կապիտալի գործիքները պետք է<br>ա) թողարկված լինեն միևնույն անձի կողմից բ) ունենան միևնույն եկամտաբերությունը գ) ունենան միևնույն ժամկետայնությունը դ) թողարկված լինեն միևնույն արժույթով | ճիշտ են ա) և գ) տարբերակները |
| | | | ճիշտ են ա) և դ) տարբերակները |
| | | | ճիշտ են ա), բ) և դ) տարբերակները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 385 | Տվյալ օրվա համար կապիտալի գործիքների գնային ընդհանուր ռիսկը հավասար է | տվյալ օրվա կապիտալի գործիքների համախառն դիրքի 8%-ի բացարձակ մեծությանը |
| | | | տվայլ օրվա կապիտալի գործիքների համախառն զուտ դիրքի 14%-ի բացարձակ մեծությանը |
| | | | տվյալ օրվա կապիտալի գործիքների համախառն զուտ դիրքի 8%-ի բացարձակ մեծությանը |
| | | | տվյալ օրվա կապիտալի գործիքների համախառն դիրքի 14%-ի բացարձակ մեծությանը |
| | 386 | Գործառնական ռիսկի հաշվարկման հիմնական բնութագրիչների մոտեցման դեպքում տվյալ տարվա զուտ եկամտի հաշվարկին չեն մասնակցում<br>ա) արժեթղթերի իրացումից ստացված շահույթը/վնասը<br>բ) ավանդների դիմաց վճարված և վարկերի դիմաց ստացված տոկոսային ծախսերը/եկամուտները<br>գ) որպես փոխհատուցում ստացված ապահովագրական եկամուտները<br>դ) արտասովոր ծախսերը/եկամուտները | ճիշտ են բ) և դ) տարբերակները |
| | | | ճիշտ են բ), գ) և դ) տարբերակները |
| | | | ճիշտ են ա) և գ) տարբերակները |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ճիշտ են ա), բ) և գ) տարբերակները |
| | 387 | Վարկային ռիսկի փոխարկման գործոնները չեն կիրառվում | հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունների նկատմաբ |
| | | | հիփոթեքային վարկերի նկատմամբ |
| | | | հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների նկատմամբ |
| | | | երաշխավորությունների/երաշխիքների նկատմամբ |
| | 388 | Արժեքի տատանման գործակիցների կիրառման դեպքում ՎՌՁՄ-ին ենթակա պահանջի ճշգրտված արժեքը կլինի | բարձր ՎՌՁՄ-ին ենթակա պահանջի արժեքից |
| | | | հավասար ՎՌՁՄ-ին ենթակա պահանջի արժեքին |
| | | | բարձր կամ ցածր ՎՌՁՄ-ին ենթակա պահանջի արժեքից՝ կախված գործակցի արժեքից |
| | | | ցածր ՎՌՁՄ-ին ենթակա պահանջի արժեքից |
| | 389 | Արժեքի տատանման գործակիցների կիրառման դեպքում ապահովվածության ճշգրտված արժեքը կլինի | բարձր ապահովվածության արժեքից |
| | | | բարձր կամ ցածր ապահովվածության արժեքից՝ կախված գործակցի արժեքից |
| | | | ցածր ապահովվածության արժեքից |
| | | | հավասար ապահովվածության արժեքին |
| | 390 | Եթե ՎՌՁՄ-ին ենթակա պահանջը և ապահովվածությունը նույն արժույթներով են, ապա որպես փոխարժեքային տատանման գործակից հիմք է ընդունվում | 8%-ը |
| | | | 6%-ը |
| | | | 10%-ը |
| | | | 0%-ը |
| | 391 | ՎՌՁՄ-ին ենթակա պահանջը կազմում է 50 մլն դրամ ( ՀՀ տարածքում գործող բանկի կողմից թողարկված պարտատոմսեր մինչև 1 տարի մարման ժամկետով), ՎՌՁՄ-ին ենթակա պահանջի գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստի մեծությունը 5 մլն դրամ է, արժեքի տատանման գործակիցը 2% է: Որքա՞ն կկազմի ՎՌՁՄ-ին ենթակա պահանջի ճշգրտված մեծությունը | 45.9 մլն դրամ |
| | | | 54 մլն դրամ |
| | | | 45 մլն դրամ |
| | | | 0.9 մլն դրամ |
| | 392 | ՎՌՁՄ-ին ենթակա պահանջը և ապահովվածությունը միևնույն արժույթներով են, ապահովվածությունը կազմում է 10 մլն դրամ, արժեքի տատանման գործակիցը 6% է: Որքա՞ն կկազմի ապահովվածության ճշգրտված արժեքը: | 10.6 մլն դրամ |
| | | | 8.6 մլն դրամ |
| | | | 4 մլն դրամ |
| | | | 9.4 մլն դրամ |

| | | | |
|---|---|---|---|
| | 393 | ՎՌ-ՋՄ-ին ենթակա պահանջը և ապահովվածությունը տարբեր արժույթներով են, ապահովվածությունը կազմում է 10 մլն դրամ, արժեքի տատանման գործակիցը 6% է: Որքա՞ն կկազմի ապահովվածության ճշգրտված արժեքը: | 10.6 մլն դրամ |
| | | | 4 մլն դրամ |
| | | | 9.4 մլն դրամ |
| | | | 8.6 մլն դրամ |
| | 394 | Նշվածներից որո՞նք կարող են որպես ֆինանսական գրավի առարկա օգտագործվել ՎՌ-ՋՄ-ում | Կենտրոնական բանկի թողարկած արժեթղթեր |
| | | | ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների բաժնետոմսեր |
| | | | Նշված բոլոր տարբերակներն էլ ճիշտ են |
| | | | ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերի թողարկած պարտատոմսեր |
| | 395 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, վարկային ռիսկի հաշվարկում չեն ընդգրկվում. | բանկի ակտիվները |
| | | | հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները |
| | | | հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները |
| | | | հիմնական կապիտալի մեծությունից պակասեցվող ակտիվները |
| | 396 | Ռիսկով կշռված ակտիվների հաշվարկի ժամանակ հետևյալ ակտիվային հաշիվների մնացորդները կշռվում են 0% ռիսկի կշռով (նշել սխալ պատասխանը). | Կանխիկ դրամական միջոցներ |
| | | | Դրամային թղթակցային հաշիվներ ՀՀ տարածքում գործող բանկերում |
| | | | Բանկային ոսկի բանկի դրամապահոցում |
| | | | Արտարժույթով պահանջներ Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի նկատմամբ |
| | 397 | Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները վարկային ռիսկի փոխարկման գործոնների (ՎՌ-ՓԳ) միջոցով վերածվում են հաշվեկշռային վարկային ռիսկի՝ հետեյալ բանաձևի համաձայն. (որտեղ ՀՎՌ - ՎՌ-ՓԳ-ների միջոցով հաշվեկշռային վարկային ռիսկի վերածված հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններին ու հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնություններն են, ՀՀ - հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններն ու հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնություններն են,հետհաշվեկշռում արտացոլված ամբողջ գումարի չափով<br>Պ- հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների գծով ձևավորված պահուստի մեծությունն է,<br>ՎՌ-ՓԳ - վարկային ռիսկի փոխարկման գործոններն են). | ՀՎՌ = (ՀՀ + Պ) * ՎՌ-ՓԳ |
| | | | ՀՎՌ = ՀՀ - Պ*ՎՌ-ՓԳ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ՀՎՌ = ՀՀ * ՎՌՓԳ - Պ |
| | | | ՀՎՌ = (ՀՀ - Պ) * ՎՌՓԳ |
| | 398 | Վարկային ռիսկի զսպման մեխանիզմի (ՎՌԶՄ) առարկա ընդհանրապես չեն կարող լինել. | Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները |
| | | | Բոլոր տարբերակները կարող են լինել ՎՌԶՄ-ի առարկա |
| | | | Հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները |
| | | | Ռեպո համաձայնագրերը |
| | 399 | Եթե ՎՌԶՄ-ին ենթակա պահանջը և ապահովվածությունը տարբեր արժույթներով են, ապա որպես փոխարժեքային տատանման գործակից հիմք է ընդունվում. | 0%-ը |
| | | | 8%-ը |
| | | | 10%-ը |
| | | | 5%-ը |
| | 400 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն պարտքային արժեթղթերի շարքին են դասվում. | պետական պարտատոմսեր և մուրհակներ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | ավանդային սերտիֆիկատներ |
| | | | ոչ փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր |
| | 401 | Բանկի տոկոսադրույքի հատուկ ռիսկը հաշվարկվում է. | յուրաքանչյուր օրվա դրությամբ |
| | | | յուրաքանչյուր շաբաթվա ուրբաթ օրվա դրությամբ |
| | | | յուրաքանչյուր ամսվա 15-ի դրությամբ |
| | | | յուրաքանչյուր շաբաթվա երկուշաբթի օրվա դրությամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | 402 | Բանկի գործառնական ռիսկի հաշվարկման ստանդարտացված մոտեցման ժամանակ 14% գործակից է ստանում զուտ եկամտի հետևյալ խումբը. | Կորպորատիվ ֆինանսներ |
| | | | Հավատարմագրային (լիազորագրային) կառավարում, բրոքերային և պահառուական գործունեություն |
| | | | Վճարահաշվարկային ծառայություն |
| | | | Հիմնական բանկային գործունեություն |
| | 403 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, հատուկ պահուստ չի ձևավորվում. | հսկվող ակտիվների համար |
| | | | կասկածելի ակտիվների համար |
| | | | ոչ ստանդարտ ակտիվների համար |
| | | | ստանդարտ ակտիվների համար |
| | 404 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, չաշխատող են այն ակտիվները, որոնք. | դասակարգվել են ոչ ստանդարտ |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | դասակարգվել են կասկածելի |
| | | | դասակարգվել են անհուսալի |
| | 405 | «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգի համաձայն, գնանշվող բաժնետոմսերը պետք է բավարարեն հետևյալ չափանիշներին.<br>(ա) բաժնետոմսերի լիստինգի մեջ ներառումը ոչ պակաս, քան մեկ ֆոնդային բորսայում, ֆոնդային ստորաբաժանում ունեցող այլ բորսայում կամ բորսայական գործառնություններ իրականացնող հաստատությունում<br>(բ) նախորդ եռամսյակի տվյալներով բորսայում տվյալ բաժնետոմսի միջին ամսական նվազագույն շրջանառությունը կազմում է մեկ միլիոն դրամ<br>(գ) բաժնետոմսերի գնանշման հրապարակումը | (ա) |
| | | | (ա) և (գ) միաժամանակ |
| | | | (ա), (բ) և (գ) միաժամանակ |
| | | | (ա) և (բ) միաժամանակ |
| | 406 | Ենթադրենք, բանկի ձեռք բերած արժեթղթի մարման ժամկետը լրանալուց հետո ժամկետանց օրերի քանակը կազմել է 61-90 օր: «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգի համաձայն, ժամկետային արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստին մասհանումները կկազմեն. | 2-20 տոկոս |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | | | 20-70 տոկոս |
| | | | 70-100 տոկոս |
| | 407 | «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ի համաձայն, նշված հաշվետվությունները ԿԲ են ներկայացվում ամսական կտրվածքով Նշել սխալ պատասխանը. | Ձև 9՝ «Հաշվետվություն ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետայնությունների վերաբերյալ» |
| | | | Ձև 18՝ «Հաշվետվություն ոչ ռեզիդենտների հետ իրականացվող գործառնությունների և ոչ ռեզիդենտների հետ ֆինանսական դիրքերի վերաբերյալ» |
| | | | Ձև 15՝ «Հաշվետվություն «խոշոր» պարտատերերի վերաբերյալ» |
| | | | Ձև 14՝ «Հաշվետվություն Ն31 և Ն32 նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող ցուցանիշների հաշվարկի վերաբերյալ» |

| | | | |
|---|---|---|---|
| | 408 | Բանկերի կողմից ներկայացվող «Հաշվետվություն ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետայնության վերաբերյալ» ձև 9-ի համաձայն, «Կանխիկ և կանխիկին հավասարեցված դրամական միջոցներ» տողում արտացոլվում են. | Կանխիկ դրամը բանկոմատներում |
| | | | Բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | Կանխիկ դրամը ճանապարհին |
| | | | Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ |
| | 409 | Բանկերի կողմից ներկայացվող «Հաշվետվություն ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետայնության վերաբերյալ» ձև 9-ի համաձայն, «Ռեպո համաձայնագրերով ներգրավված միջոցներ» տողում չեն լրացվում. | Բանկերից ռեպո համաձայնագրերով ներգրավված միջոցները. |
| | | | Պետությունից ռեպո համաձայնագրերով սվոպով ներգրավված միջոցները |
| | | | Իրավաբանական և ֆիզիկական անձանցից ռեպո համաձայնագրերով  ներգրավված միջոցները |
| | | | Անհատ ձեռնարկատերերից ռեպո համաձայնագրերով ներգրավված միջոցները |
| | 410 | Բանկերի կողմից ներկայացվող «Հաշվետվություն ակտիվների և պարտավորություննեի մարման ժամկետայնության վերաբերյալ» ձև 9-ի համաձայն, ««Խոշոր» պարտավորություններ» տողում լրացվում են նույն անձանց գծով բոլոր այն պարտավորությունների անվանական արժեքների և անվանական տոկոսների հանրագումարները, որոնց հաշվեկշռային արժեքների հանրագումարները կազմում են. | Բանկի ընդհանուր ակտիվների 5%-ը` հաշվի առած փոխկապակցվածությունը |
| | | | Բանկի ընդհանուր կապիտալի 5%-ը |
| | | | Բանկի ընդհանուր պարտավորությունների 5 և ավելի տոկոսը` առանց հաշվի առնելու փոխկապակցվածությունը |
| | | | Բանկի կանոնադրական կապիտալի 5%-ը և ավելին |
| | 411 | Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի, բանկի ներքին հսկողության համակարգը, դրա առանձին տարրերը վերանայվում են. | Առնվազն տարին երկու անգամ |
| | | | Առնվազն երկու տարին մեկ անգամ |
| | | | Ըստ անհրաժեշտության |
| | | | Առնվազն տարին մեկ անգամ |
| | 412 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի, բանկի ներքին հսկողության համակարգը. | Ուղղված է բանկի գործունեության անընդհատության ապահովմանը |
| | | | Նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | Ուղղված է բանկի գործունեությանը ներհատուկ ռիսկերի ժամանակին բացահայտմանը |
| | | | Ուղղված է բանկի ակտիվների պահպանմանը |
| | 413 | Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի, բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերը դրամարկղային գործառնությունների վերաբերյալ նվազագույնը ներառում են.<br>(ա) կանխիկ միջոցների գույքագրման պարբերականությունը<br>(բ) կանխիկ միջոցներով գործառնությունների իրականացման ներքին ընթացակարգերը, հսկողության մեխանիզմները<br>(գ) գանձապահների տնօրինության տակ գտնվող կանխիկի առավելագույն սահմանաչափերը | (ա) |
| | | | (ա) և (գ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | | | (բ) և (գ) |

| | | | |
|---|---|---|---|
| | 414 | Բանկի ընդհանուր նորմատիվային կապիտալը 5 մլրդ դրամ է: Որպեսզի բանկը չխախտի Ն32 նորմատիվը.<br>(ա) խոշոր փոխառուների գծով ռիսկի հանրագումարը պետք է կազմի առավելագույնը 25 մլրդ դրամ<br>(բ) խոշոր փոխառուների գծով ռիսկի հանրագումարը նվազագույնը պետք է կազմի 25 մլրդ դրամ<br>(գ) բանկի փաստացի պահուստավորված միջոցների գումարը պետք է կազմի 25 մլն դրամ | (ա) |
| | | | (ա) և (գ) |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | | | (բ) |
| | 415 | ՎՌ-ՁՄ-ին ենթակա պահանջի ապահովվածության արժեքը կազմում է 2 մլրդ. դրամ: Արժեքի տատանման գործակիցը 4% է: ՎՌ-ՁՄ-ին ենթակա պահանջը և ապահովվածությունը նույն արժույթով են: Տվյալ դեպքում ապահովվածության ճշգրտված արժեքը կկազմի. | 1.92 մլրդ դրամ |
| | | | Բոլոր պատասխանները սխալ են |
| | | | 2.08 մլրդ դրամ |
| | | | 2 մլրդ դրամ |
| | 416 | ՎՌ-ՁՄ-ին ենթակա պահանջի մեծությունը կազմում է 3 մլրդ դրամ: Պահանջի գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստի մեծությունը կազմում է 50 մլն դրամ:Արժեքի տատանման գործակիցը 1% է: Տվյալ դեպքում ՎՌ-ՁՄ-ին ենթակա պահանջի ճշգրտված մեծությունը կկազմի. | 3.5 մլրդ դրամ |
| | | | 5 մլրդ դրամ |
| | | | Բոլոր պատասխանները սխալ են |
| | | | 4.1 մլրդ դրամ |
| | 417 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Բանկի կողմից տեղեկություններ հրապարակելիս պահպանվում են հետևյալ սկզբունքները.<br>ա) տեղեկատվությունը ներկայացվում է ճշգրիտ և արժանահավատ<br>բ) տեղեկատվությունը ներկայացվում է ժամանակին և ամբողջական<br>գ) տեղեկությունը ներկայացվում է ներկայացուցչական սպառողի համար պարզ և մատչելի լեզվով<br>դ) տեղեկատվությունը շարադրվում է ներկայացուցչական սպառողի համար հեշտ ընթեռնելի տառաչափերով և տառատեսակներով և տեսանելի ձևով | միայն (ա) և (բ) |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | միայն (բ), (գ) և (դ) |
| | | | (ա), (բ), (գ) և (դ) |
| | 418 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Բանկն ապահովում է իր կայքում տեղակայված տեղեկատվության մշտական հասանելիությունը սպառողների համար |
| | | | Բանկն իր կայքի գործարկման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում ԿԲ է ներկայացնում կայքի հասցեն |
| | | | Բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | Բանկի կողմից կայքում հրապարակման ենթակա տեղեկությունների բացակայության դեպքում նշվում է դրանց բացակայության վերաբերյալ |

| | | | |
|---|---|---|---|
| | 419 | Բանկի ինտերնետային կայքի «Հաշվետվություններ» բաժնում ներկայացվում են բանկի | միջանկյալ (օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում) և տարեկան ֆինանսական հաշվետվությունները (ներառյալ կից ծանոթագրությունները) և արտաքին աուդիտորական ընկերության աուդիտորական եզրակացությունը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | հղումներ բանկի՝ հաշվետու տարվան նախորդող հինգ տարիների տարեկան ֆինանսական հաշվետվություններին (առկայության դեպքում) |
| | | | հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվությունը կիսամյակային կտրվածքով մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 15-ը |
| | 420 | Տեղեկատվական ամփոփագրում և (կամ) ինտերնետային կայքում՝ մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկություններ հրապարակելիս բանկը ներկայացնում է | այն կապի միջոցները, որոնցով կարելի է սպառիչ տեղեկություններ ստանալ ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ |
| | | | իր կողմից մատուցվող յուրաքանչյուր ծառայության սակագները |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | ծառայությունների մատուցման պայմանները |
| | 421 | Նշել ամբողջական պատասխանը.<br>Բանկի գովազդը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պարունակում է որևէ սակագին և (կամ) ծառայության մասին տեղեկություն, պետք է առնվազն պարունակի.<br>ա. բանկի էլեկտրոնային հասցեն<br>բ. բանկի հեռախոսահամարը<br>գ. բանկի գրանցման ամսաթիվը | միայն (ա) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | | | միայն (ա) և (բ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | 422 | Տեղեկատվական ամփոփագիրը իրենից ներկայացնում է. | բանկի կողմից մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվություն պարունակող թերթոն, ամփոփաթերթ, գրքույկ |
| | | | տվյալ բանկի վերաբերյալ որևէ թերթում կամ ամսագրում հրապարակված տեղեկատվություն |
| | | | հաճախորդների կողմից ներկայացրած  թերթոն կամ ամփոփաթերթ, որը տեղեկատվություն է պարունակում բանկի կողմից մատուցած ծառայությունների որակի վերաբերյալ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 423 | Բանկը յուրաքանչյուր ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքի վրա պետք է փակցնի հետևյալ տեղեկատվությունը. | ֆինանսական կազմակերպության անվանումը, որն իրականացնում է սարքավորման սպասարկումը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | տվյալ սարքավորումից օգտվելու քայլերի համառոտ նկարագրությունը |
| | | | այն հեռախոսահամարները, որոնցով կարող են սպառողները դիմել տվյալ սարքավորման հետ կապված հարցերի դեպքում |
| | 424 | Բանկն իր գործունեության վայրում՝ տեսանելի տեղում փակցնում են. | հայտարարություն այն մասին, որ ֆիզիկական անձ հաճախորդը հնարավորություն ունի ներկայացնելու ընկերության և հաճախորդի միջև կնքվող գործարքից բխող պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին |
| | | | ընկերության աշխատանքային ժամերը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | ծառայությունների ընդհանուր պայմանները |

| | | | |
|---|---|---|---|
| | 425 | Համաձայն «Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի ձևը, ՀՀ կենտրոնական բանկ ներկայացման կարգը և հաճախականությունը» կարգի, նշել ճիշտ պատասխանը. | բանկի հեռանկարային զարգացման ծրագրում ներկայացվում են բանկի միջնաժամկետ նպատակները և (կամ) հիմնական ռազմավարական առաջնահերթությունները |
| | | | եթե բանկի նպատակներն էականորեն վերանայվել են, ապա ներկայացվում են դրանց վերանայման պատճառները և (կամ) հիմնավորումները |
| | | | բանկի միջնաժամկետ նպատակների իրականացումը բանկի համար պետք է լինի բարձր հավանական և բանկի բիզնես մոդելի ու ռիսկի ախորժակի հետ համադրելի |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 426 | Համաձայն «Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի ձևը, ՀՀ կենտրոնական բանկ ներկայացման կարգը և հաճախականությունը» կարգի, բանկի միջնաժամկետ նպատակների իրականացումը բանկի համար պետք է լինի. | կապիտալի մակարդակի հետ համադրելի |
| | | | ռիսկի ախորժակի հետ համադրելի |
| | | | իրացվելիության մակարդակի հետ համադրելի |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 427 | Համաձայն «Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի ձևը, ՀՀ կենտրոնական բանկ ներկայացման կարգը և հաճախականությունը» կարգի, Ծրագրին կից ներկայացվում են ֆինանսական ծրագրերի և ֆինանսատնտեսական ցուցանիշների կանխատեսումների վերաբերյալ հետևյալ հաշվետվությունները. | կանխատեսումներ բանկի եկամուտների և ծախսերի վերաբերյալ |
| | | | ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների սպասումները |
| | | | կանխատեսումներ բանկի վարկային ներդրումների կառուցվածքի վերաբերյալ |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 428 | Համաձայն «Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի ձևը, ՀՀ կենտրոնական բանկ ներկայացման կարգը և հաճախականությունը» կարգի, Ծրագրում ներկայացվում են. | բանկի կարճաժամկետ նպատակներն ու խնդիրները |
| | | | բանկի առաքելությունը և միջնաժամկետ նպատակները |
| | | | արտաքին միջավայրի վերաբերյալ կանխատեսումներ |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 429 | Համաձայն Կանոնակարգ 2-ի` նշել ճիշտ պատասխանը. | ազատ շրջանառելի են համարվում այն արժեթղթերը, որոնք թողարկված են ֆինանսական կազմակերպության կողմից |
| | | | առաջնային գրավ է համարվում այն գրավը, որի դեպքում գրավառու բանկը գրավ դրված գույքի նկատմամբ ունի այդ գույքի արժեքից լրիվ ծավալով բավարարում ստանալու նախապատվությունան իրավունք տվյալ գրավի այլ գրավառուների հանդեպ |
| | | | ազատ շրջանառելի են համարվում այն արժեթղթերը, որոնք թողարկված են ֆինանսական կազմակերպության հետ փոխկապակցված կազմակերպության կողմից |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 430 | Համաձայն Կանոնակարգ 2-ի՝ անավարտ ժամկետային գործառնությունների թվին են դասվում հետևյալ ածանցյալ գործիքները.<br>ա) ֆորվարդ և ֆյուչերս<br>բ) սվոպ<br>գ) օպցիոն | միայն (ա) տարբերակը |
| | | | միայն (ա) և (գ) տարբերակները |
| | | | (ա), (բ) և (գ) տարբերակները |
| | | | միայն (ա) և (բ) տարբերակները |
| | 431 | Համաձայն Կանոնակարգ 2-ի՝ նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | ֆինանսական խմբի մեջ գտնվող ցանկացած անձի տրված վարկանիշը տարածվում/կիրառվում է ֆինանսական խմբի վրա |
| | | | ֆինանսական խմբին տրված վարկանիշը տարածվում/կիրառվում է խմբի մեջ մտնող անձանց վրա |
| | | | ֆինանսական խմբի մեջ գտնվող ցանկացած անձի տրված վարկանիշը չի տարածվում/կիրառվում ֆինանսական խմբի մեջ մտնող անձանց վրա |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 432 | Բանկի կողմից վարկային ռեգիստրին տեղեկատվությունը տրամադրվում է. | վարկային պայմանագրի կնքման օրը |
| | | | վարկային պայմանագրի կնքման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում |
| | | | վարկային պայմանագրի կնքման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 433 | Տվյալ վարկի վերաբերյալ վարկային ռեգիստր արդեն իսկ մուտքագրված տվյալների յուրաքանչյուր փոփոխության դեպքում վարկատուն պարտավոր է վարկային ռեգիստր ներկայացնել այդ փոփոխությունները. | փոփոխությունը տեղի ունենալուց հետո երեք օրացուցային օրվա ընթացքում |
| | | | դրանք կատարելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում |
| | | | յուրաքանչյուր շաբաթվա վերջին աշխատանքային օրը՝ նախորդ օրվա դրությամբ |
| | | | յուրաքանչյուր շաբաթվա առաջին աշխատանքային օրը՝ նախորդ շաբաթվա կիրակի օրվա տվյալներով |
| | 434 | Վարկատուները Վարկային ռեգիստրին տրամադրած տեղեկատվությունը պարտավոր են իրենց մոտ պահպանել | անժամկետ և առանց փոփոխությունների ենթարկելու |
| | | | հինգ տարի ժամկետով՝ առանց փոփոխությունների ենթարկելու |
| | | | երեք տարի ժամկետով՝ առանց փոփոխությունների ենթարկելու |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 435 | Նշված պնդումներից ո՞րն է սխալ. | Վարկային ռեգիստրի տեղեկատվության օգտագործողը Կենտրոնական բանկն է |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Վարկային ռեգիստրին ուղարկված տվյալները և վարկատուի մոտ առկա տվյալները պետք է ցանկացած պահի դրությամբ լինեն նույնական |
| | | | Վարկային ռեգիստրը վարկառուներին տրամադրում է պարբերական տեղեկատվություն` անվճար կարգով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 436 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Վարկային ռեգիստրին ուղարկված տվյալները և վարկատուի մոտ առկա տվյալները պետք է ցանկացած պահի դրությամբ լինեն նույնական |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | Այն դեպքերում, երբ վարկատուն գտնվում է լուծարման գործընթացում, ապա վարկատուի վարկերի վերաբերյալ վարկային ռեգիստր մուտքագրված տվյալների թարմացումը կատարվում է վարկառուի կամ տվյալ վարկատուի լուծարային կառավարչի կամ լուծարային հանձնաժողովի կողմից վարկային ռեգիստր ներկայացված տեղեկանքների հիման վրա |
| | | | Վարկատուները պարտավոր են վարկային ռեգիստր ներկայացնել ամբողջական և արժանահավատ |
| | 437 | Համաձայն «Բանկերի և վարկային կազմակերպությունների հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի` վարկային ռեգիստրի ստեղծման և վարկային ռեգիստրին ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության» կարգի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | տեղեկատվության փոխանակումը կատարվում է տեղեկատվությունը տիրապետելու իրավունք ունեցող վարկային ռեգիստրի և վարկատուի աշխատակիցների կողմից |
| | | | տրամադրված տեղեկատվության ամբողջականության և արժանահավատության համար պատասխանատվություն է կրում տեղեկատվությունը տրամադրող վարկատուն |
| | | | Վարկային ռեգիստրի տեղեկատվության օգտագործողն է Կենտրոնական բանկը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 438 | Համաձայն Կանոնակարգ 2-ի` նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | ֆինանսական խմբի մեջ գտնվող ցանկացած անձի տրված վարկանիշը չի տարածվում/կիրառվում ֆինանսական խմբի վրա |
| | | | ֆինանսական խմբին տրված վարկանիշը չի տարածվում/ կիրառվում խմբի մեջ մտնող անձանց վրա |
| | | | ֆինանսական խմբի մեջ գտնվող ցանկացած անձի տրված վարկանիշը չի տարածվում/կիրառվում ֆինանսական խմբի մեջ մտնող անձանց վրա |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 439 | Վարկային ռեգիստրը համակարգ է, | որտեղ կուտակվում է վարկառուների և նրանց տրամադրած վարկերի վերաբերյալ տեղեկատվությունը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | որը հնարավորություն է ընձեռում Կենտրոնական բանկին իրականացնել վերլուծություններ, ինչպես նաև օգտագործել այդ տեղեկատվությունը Կենտրոնական բանկի այլ խնդիրները իրականացնելու համար |
| | | | որտեղ պահպանվում է վարկառուների և նրանց տրամադրած վարկերի վերաբերյալ տեղեկատվությունը |
| | 440 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, նշված պնդումներից ո՞րն է սխալ. | այն դեպքում, երբ օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներով ակտիվների դասակարգման ընթացքում ակտիվը ստանում է տարբեր դասեր, ապա բանկը հիմք է ընդունում առավել խիստ դասը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանումը կարող է գրավոր ձևով պահանջել բանկին` Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում ճշգրտելու ակտիվների (այդ թվում` վերանայված ակտիվների) դասակարգումը և (կամ) պահուստավորումը սույն կարգին համապատասխան |
| | | | բլանկային ակտիվները ձևավորվելիս դասակարգվում են անհուսալի դասով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 441 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, ֆինանսական ակտիվներ են հանդիսանում | բանկի համար վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | մատակարարներին տրված կանխավճարները |
| | | | ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ հաշվարկների գծով կարճաժամկետ պահանջները |
| | 442 | «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի համաձայն, բանկը ինքնուրույն կարող է ավելացնել հատկացումները հատուկ պահուստին | ՀՀ դրամով արտահայտված ոչ ստանդարտ ակտիվների համար մինչև 25%-ը |
| | | | արտարժույթով արտահայտված հսկվող ակտիվների համար մինչև 18%-ը |
| | | | ՀՀ դրամով արտահայտված կասկածելի ակտիվների համար մինչև 70%-ը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 443 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի` ստանդարտ ակտիվներին բնորոշ են հետևյալ հայտանիշները | փոխառուի ֆինանսական վիճակը կայուն է, առկա է ակտիվը մարելու փոխառուի բավարար ունակություն, ակտիվն ունի բավարար ապահովվածություն պայմանագրով սահմանված հիմնական գումարի և տոկոսների գծով մարումները կատարելու համար |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | պարտավորությունն ամբողջությամբ ապահովված է համարժեք գրավով, սակայն փոխառուի ֆինանսական դրությունը վատթարացել է |
| | | | փոխառուն կորցրել է իր եկամտի աղբյուրը, սակայն ակտիվը սպասարկվում է պայմանագրի համաձայն |
| | 444 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, նշված պնդումներից ո՞րն է սխալ. | բանկը հնարավոր կորուստների պահուստների ճշգրտումներն իրականացնելիս, հնարավոր կորուստների պահուստներում առկա ավելցուկային մնացորդներն ուղղում է ծախսերի հաշվին |
| | | | Եթե բանկի հաշվեկշռում հաշվառվող ակտիվները (կամ դրանց մի մասը) բանկի կողմից այլ անձի (այդ թվում` փոխառուին) անհատույց զիջվել կամ ներվել են, ապա այդ ակտիվները (կամ դրանց մի մասը) չեն հանդիսանում շահութահարկի հաշվարկման նպատակով համախառն եկամտի նվազեցումներ |
| | | | Յուրաքանչյուր բանկ ակտիվների հնարավոր կորուստները ծածկելու նպատակով վարում է առանձին հաշիվներ` ընդհանուր, հատուկ և լրացուցիչ պահուստների համար |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանումը, Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով, կարող է վերահսկողության արդյունքում պահանջել բանկից Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում ակտիվի կամ ակտիվների խմբի համար որոշակի գումարով պահուստ ձևավորել կամ ձևավորված պահուստը ավելացնել՝ առանց ակտիվի (ակտիվների) դասի խստացման |
| | 445 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, եթե ակտիվը ճանաչվում է անհուսալի և դրա գծով ձևավորվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի 100 % -ին համարժեք պահուստ, ապա | ակտիվը պետք է դուրս գրվի բանկի հաշվեկշռից՝ «ընդհանուր պահուստի» հաշվին և շարունակվի հաշվառվել բանկի հետհաշվեկշռային համապատասխան հաշիվներում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ակտիվը պետք է դուրս գրվի բանկի հաշվեկշռից՝ «ընդհանուր պահուստի» հաշվին |
| | | | այն պետք է ակտիվի դասակարգման օրը դուրս գրվի բանկի հաշվեկշռից «լրացուցիչ պահուստի» հաշվին |
| | 446 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, ակտիվների պայմանների բարելավում է համարվում. | վարկի ժամկետի երկարաձգումը |
| | | | վարկի մայր գումարի և (կամ) տոկոսների վճարման նոր (լրացուցիչ) արտոնյալ ժամկետի տրամադրումը |
| | | | վարկի անվանական և (կամ) փաստացի տոկոսադրույքի նվազումը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 447 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, կապիտալացումը նշանակում է, որ | տոկոսային վճարները ներվել են բանկի կողմից |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | չվճարված տոկոսները գումարվել են վարկի չմարված մասին |
| | | | տոկոսային վճարների վճարման ժամկետները երկարաձգվել են |

| | | | |
|---|---|---|---|
| | 448 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, այն ակտիվները, որոնց համար սահմանված չեն մարման նախապես որոշված ժամկետներ, համարվում են ժամկետանց ակտիվներ, եթե | 60 օրվա ընթացքում մարումներ չեն կատարվել, իսկ հաշվում առկա միջոցները բավարար չեն համապատասխան ժամանակահատվածում կապիտալացված տոկոսները մարելու համար |
| | | | ակտիվի ձևավորման օրվանից սկսած յուրաքանչյուր 90 օրվա ընթացքում չի մարվում ակտիվի սկզբնական գումարի առնվազն 25%-ը |
| | | | 30 օրվա ընթացքում մարումներ չեն կատարվել |
| | | | 30 օրվա ընթացքում մարումներ չեն կատարվել, իսկ հաշվում առկա միջոցները բավարար չեն համապատասխան ժամանակահատվածում կապիտալացված տոկոսները մարելու համար |
| | 449 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, վերաֆինանսավորված ակտիվներն այն ակտիվներն են, | որոնք ապահովված չեն գրավով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | որոնց մի մասի մարումը, պայմանավորված փոխառուի վատ ֆինանսական դրությամբ, իրականացվել է նոր ստանձնած պարտավորությունների հաշվին` անկախ այն հանգամանքից, թե նոր պարտավորությունները ձևավորվել են նույն բանկում, թե այլ բանկերում |
| | | | որոնք ապահովված չեն փոխառության վերադարձելիությունը հիմնավորող տեղեկատվությամբ |
| | 450 | ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, այն դեպքում, երբ օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներով ակտիվների դասակարգման ընթացքում ակտիվը ստանում է տարբեր դասեր, ապա բանկը հիմք է ընդունում. | օբյեկտիվ չափանիշը |
| | | | սուբյեկտիվ չափանիշը |
| | | | առավել մեղմ չափանիշը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 451 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, այն դեպքում, երբ փորձաշրջանի ընթացքում ակտիվը ժամկետանց է դառնում 31 և ավելի օր, ապա<br>ա) տվյալ պահից ակտիվի գծով սահմանված փորձաշրջանը դադարեցվում է,<br>բ) այդ ակտիվի գծով նոր փորձաշրջան է սահմանվում,<br>գ) այն դասակարգվում է որպես անհուսալի և նրա հաշվառումը որպես ակտիվ այլևս նպատակահարմար չէ | միայն (ա) և (բ) |
| | | | (ա), (բ) և (գ) |
| | | | միայն (ա) և (գ) |
| | | | միայն (բ) և (գ) |
| | 452 | Համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Վերաֆինանսավորված ակտիվները այն ակտիվներն են, որոնց մի մասի մարումը, պայմանավորված փոխառուի վատ ֆինանսական դրությամբ և (կամ) փոխառուի` բանկի նկատմամբ առկա պարտավորությունները մարելու ոչ բավարար կարողությամբ, իրականացվել է նոր ստանձնած պարտավորությունների հաշվին` անկախ այն հանգամանքից, թե նոր պարտավորությունները ձևավորվել են նույն բանկում, թե այլ բանկերում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Յուրաքանչյուր բանկ ակտիվների հնարավոր կորուստները ծածկելու նպատակով վարում է առանձին հաշիվ՝ ընդհանուր, հատուկ և լրացուցիչ պահուստների համար |
| | | | Բանկը հնարավոր կորուստների պահուստների ճշգրտումներն իրականացնելիս հնարավոր կորուստների պահուստներում առկա ավելցուկային մնացորդներն ուղղում է ակտիվների գծով կորուստների վերականգնումից եկամուտների հաշվին |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | 453 | ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի, բանկը ներքին իրավական ակտում պետք է սահմանի որպես փորձաշրջանի նվազագույն ժամկետ.<br>ա) վերանայման արդյունքում հսկվող դասակարգված ակտիվների համար առնվազն 6 ամիս<br>բ) վերանայման արդյունքում կասկածելի դասակարգված ակտիվների համար՝ առնվազն 12 ամիս<br>գ) վերանայման արդյունքում ոչ ստանդարտ դասակարգված ակտիվների համար առնվազն 12 ամիս<br>դ) չաշխատող ակտիվների համար՝ առնվազն 6 ամիս | միայն (ա), (բ) և (գ) տարբերակները |
| | | | միայն (բ), (գ) և (դ) տարբերակները |
| | | | միայն (ա) և (դ) տարբերակները |
| | | | միայն (բ) և (գ) տարբերակները |
| | 454 | Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի, ներքին հսկողության նպատակն է | բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերի բացահայտումը եւ կառավարումը |
| | | | բանկի ներսում տեղեկատվության անհրաժեշտ հոսքերի ապահովում |
| | | | բանկի գործունեության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի պահանջներին |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 455 | Համաձայն «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ի, նշվածներից ո՞րն է հանդիսանում միջավայրի փոփոխություն | անձնակազմի էական նշանակություն ունեցող փոփոխությունը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | նոր կամ վերափոխված տեխնոլոգիաները |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բանկի վերակազմավորումը, դուստր և/կամ կախյալ ընկերություններում մասնակցությունները |
| | 456 | «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգի համաձայն, ինվեստիցիոն արժեթղթեր են համարվում. | բաժնետոմսերը |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | ոչ պետական պարտատոմսերը |
| | | | ներդրումներն այլ անձանց կանոնադրական հիմնադրամներում |
| | 457 | «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգի համաձայն, ինվեստիցիոն արժեթղթերն ըստ առանձին հատկանիշների ստորաբաժանվում են | ըստ նպատակայնության |
| | | | ըստ ժամկետայնության |
| | | | ըստ գնահատման եղանակի |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 458 | «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգի համաձայն, ինվեստիցիոն արժեթղթերն ըստ առանձին հատկանիշների ստորաբաժանվում են | ըստ ժամկետայնության |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ըստ ներդրման ոլորտների |
| | | | ըստ առանձին թողարկողների |
| | 459 | «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգի համաձայն, գնանշվող բաժնետոմսերի հնարավոր կորուստների պահուստին մասհանումները կատարվում են | ըստ թողարկողի բաժնետոմսերի ամբողջ պորտֆելի գծով` դրա շուկայական միջին արժեքը հաշվեկշռային (ձեռք բերման) միջին արժեքի համեմատությամբ նվազելու դեպքում |
| | | | ըստ թողարկողի բաժնետոմսերի ամբողջ պորտֆելի գծով` դրա հաշվեկշռային (ձեռք բերման) միջին արժեքը շուկայական միջին արժեքի համեմատությամբ նվազելու դեպքում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ըստ թողարկողի բաժնետոմսերի ամբողջ պորտֆելի գծով` դրա շուկայական միջին արժեքը հաշվեկշռային (ձեռք բերման) միջին արժեքի համեմատությամբ աճելու դեպքում |
| | 460 | «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգի համաձայն, ժամկետային արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստին մասհանումները | բանկերը կատարում են ինքնուրույնաբար` ելնելով դրանց մարման ժամկետի ավարտից և թողարկողի ֆինանսական վիճակի գնահատումից |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | բանկերը կատարում են ԿԲ վերահսկողական նպատակներից ելնելով |
| | | | բանկերը կատարում են ինքնուրույնաբար` ելնելով դրանց մարման ժամկետի ավարտից հետո ժամկետանց օրերի թվից և թողարկողի ֆինանսական վիճակի գնահատումից` ԿԲ կողմից սահմանված տոկոսադրույքների նվազագույն և առավելագույն սահմաններում |
| | 461 | Համաձայն Կանոնակարգ 2-ի, ո՞ր նորմատիվը Կենտրոնական բանկը չի սահմանում | արտարժույթի տնօրինման նորմատիվը |
| | | | Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափի նորմատիվը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը |
| | 462 | Արտարժույթի տնօրինման նորմատիվներն են. | յուրաքանչյուր արտարժույթի գծով դիրքի նորմատիվ և բոլոր արտարժույթների գծով դիրքի նորմատիվ |
| | | | արտարժութային դիրքի և ըստ առանձին արտարժույթների կարճ դիրքերի նորմատիվներ |
| | | | արտարժութային կարճ դիրքի և ըստ առանձին արտարժույթների դիրքերի նորմատիվներ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 463 | Բոլոր արտարժույթների գծով դիրքի նորմատիվը սահմանվում է. | 7 տոկոս |
| | | | 15 տոկոս |
| | | | 10 տոկոս |
| | | | 20 տոկոս |
| | 464 | Յուրաքանչյուր արտարժույթի գծով դիրքի նորմատիվը սահմանվում է. | 7 տոկոս |
| | | | 10 տոկոս |
| | | | 20 տոկոս |
| | | | 15 տոկոս |
| | 465 | Արտարժույթի տնօրինման նորմատիվը հաշվարկվում է | ամսական կտրվածքով |
| | | | շաբաթական կտրվածքով |
| | | | 28 կամ 35 օրերի կտրվածքով |
| | | | օրական կտրվածքով |
| | 466 | Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Եթե բանկն ունի օտարերկրյա դուստր բանկ, ապա համախմբված հաշվետվությունների նկատմամբ Ն3.1 և Ն3.2 նորմատիվների ռիսկի հաշվարկում չեն ընդգրկվում դուստր բանկի գրանցման երկրի պետական պարտատոմսերը, դուստր բանկի գրանցման երկրի կենտրոնական բանկի նկատմամբ պահանջները |
| | | | Ն3.1 և Ն3.2 նորմատիվները չեն հաշվարկվում Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ |
| | | | Հայաստանի Հանրապետության տարածքում գործող դուստր կազմակերպության նկատմամբ պահանջները Ն31 և Ն32 նորմատիվների հաշվարկի մեջ չեն ընդգրկվում |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 467 | Խոշոր փոխառու է այն անձը, | որի գծով ռիսկը գերազանցում է բանկի ընդհանուր կապիտալի 5 տոկոսը |
| | | | որի գծով ռիսկը գերազանցում է բանկի լրացուցիչ կապիտալի 15 տոկոսը |
| | | | որի գծով ռիսկը գերազանցում է բանկի ընդհանուր կապիտալի 4.99 տոկոսը |
| | | | որի գծով ռիսկը գերազանցում է բանկի կանոնադրական կապիտալի 5 տոկոսը |
| | 468 | Պարտադիր պահուստավորման ենթակա են | բանկի կողմից ՀՀ դրամով և արտարժույթով ներգրավված ավանդները |
| | | | նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | | | Կենտրոնական բանկից ներգրաված լոմբարդային վարկերը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ՀՀ տարածքում գործող բանկերի միջև թղթակցային հաշիվները |
| | 469 | Պարտադիր պահուստավորման ենթակա չեն | հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման նպատակով «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունից ներգրաված միջոցները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | Կենտրոնական բանկից ներգրաված լոմբարդային վարկերը |
| | | | ՀՀ տարածքում գործող բանկերի միջև թղթակցային հաշիվները |
| | 470 | Պարտադիր պահուստավորման ենթակա չեն | բանկի կողմից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունները, որոնք ներառվում են բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում |
| | | | Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միջև թղթակցային հաշիվները, միմյանցից ներգրաված այլ միջոցները, արժութային սվոպը |
| | | | Կենտրոնական բանկից ներգրաված լոմբարդային վարկերը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 471 | Պարտադիր պահուստավորման ենթակա չեն.<br>ա) բանկի կողմից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունները, որոնք ներառվում են բանկի ընդհանուր կապիտալի հաշվարկում<br>բ) բանկի կողմից ՀՀ դրամով ներգրավված ավանդները<br>գ) Կենտրոնական բանկից ներգրաված լոմբարդային վարկերը<br>դ) ԿԲ-ում  բացված կուտակման հաշվում հաշվառվող կանոնադրական կապիտալի համալրման նպատակով ներգրաված միջոցները | միայն բ) պատասխանը |
| | | | միայն դ) պատասխանը |
| | | | միայն ա), գ), դ) պատասխանները |
| | | | միայն բ) և գ) պատասխանները |
| | 472 | Արտարժույթի տնօրինման նորմատիվի հաշվարկման նպատակով արտարժութային դիրքը դա | բանկի արտարժույթով, ինչպես նաև արտարժութային ռիսկ պարունակող դրամային ակտիվների և պարտավորությունների գումարն է |
| | | | բանկի արտարժույթով, ինչպես նաև արտարժութային ռիսկ պարունակող դրամային ակտիվների և պարտավորությունների միջև եղած տարբերությունն է |
| | | | բանկի արտարժութային ակտիվների և պարտավորությունների գումարն է |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 473 | Համաձայն Կանոնակարգ 2-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորները և մետաղական հաշիվները համարվում են արտարժութային ակտիվներ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Դրամական ակտիվները կամ պարտավորությունները պարունակում են արտարժութային ռիսկ, երբ դրանց գծով ստացվելիք կամ վճարվելիք գումարների մեծությունները հաշվարկվում են արտարժույթի և/կամ արժութային զամբյուղի` դրամի նկատմամբ փոխարժեքի միջոցով |
| | | | Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներով արտահայտված պահանջներն ու պարտավորությունները համարվում են արտարժութային ակտիվ կամ պարտավորություն |
| | | | նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | 474 | Համաձայն «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 2-ի, նշվածներից ո՞րն է (որո՞նք են) հանդիսանում լրացուցիչ կապիտալի տարր (տարրեր) | բանկային գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվների վերագնահատման պահուստ |
| | | | ճիշտ են բոլոր տարբերակները |
| | | | բանկի սեփականությունը հանդիսացող և բանկային գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների վերագնահատման պահուստ |
| | | | հիմնական կապիտալի մեծությունից պակասեցվող ոչ նյութական ակտիվների վերագնահատման պահուստ |
| | 475 | Համաձայն Կանոնակարգ 2-ի, Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորման ենթակա գումարի մեծության կարգավորումը կատարվում է | յուրաքանչյուր 28 կամ 35 օրը մեկ |
| | | | յուրաքանչյուր 14 օրը մեկ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | յուրաքանչյուր 14 կամ 28 օրը մեկ |
| | 476 | Համաձայն Կանոնակարգ 2-ի, նշված պնդումներից ո՞րն է սխալ. | Արտարժութային բաց դիրքը բանկի արտարժույթով ակտիվների և պարտավորությունների միջև եղած քանակական անհավասարությունն է |
| | | | Արտարժույթի տնօրինման նորմատիվների հաշվարկման իմաստով արտարժութային ակտիվ կամ պարտավորություն են համարվում նաև անկանխիկ մետաղական հաշիվները |
| | | | Արտարժութային երկար դիրք` բանկի արտարժույթով պարտավորությունների հաշիվների մնացորդները գերազանցում են արտարժույթով ակտիվային հաշիվների մնացորդներին |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 477 | Համաձայն «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 2-ի, ցպահանջ պարտավորություններից նվազեցվում են. | ճանապարհին գտնվող բանկային ոսկին |
| | | | թղթակցային «նոստրո» հաշիվներից նվազեցվող ցպահանջ պարտավորությունները, ներառյալ դրանց գծով հաշվեգրվող տոկոսները |
| | | | Կենտրոնական բանկում թղթակցային հաշիվների միջոցները |
| | | | թղթակցային «նոստրո» հաշիվներից նվազեցվող ցպահանջ պարտավորությունները առանց դրանց գծով հաշվեգրվող տոկոսների |
| | 478 | Նշված պնդումներից ո՞րն է սխալ<br>Համաձայն «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 2-ի | ՀՀ տարածքում գործող դուստր կազմակերպության նպատմամբ պահանջները Ն31 և Ն32 նորմատիվների հաշվարկի մեջ չեն ընդգրկվում |
| | | | Ն31 և Ն32 նորմատիվները չեն հաշվարկվում Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Եթե բանկն ունի օտարերկրյա դուստր բանկ, ապա դուստր բանկի գրանցման երկրի պետական պարտատոմսերը համախմբված հաշվետվությունների նկատմամբ Ն31 նորմատիվի ռիսկի հաշվարկում չեն ընդգրկվում |
| | | | Խոշոր փոխառու է այն անձը, որի գծով ռիսկը գերազանցում է բանկի հիմնական կապիտալի 5 տոկոսը |
| | 479 | Բանկը վաճառում է ՀՀ դրամով Կենտրոնական բանկի կողմից թողարկած արժեթղթեր և ձեռք է բերում նույն արժողությամբ արտարժույթով ՀՀ գանձապետական պարտատոմսեր: Ինչպե՞ս է այդ դեպքում փոխվում կապիտալի համարժեքության Ն12 նորմատիվը | աճում է |
| | | | նվազում է |
| | | | մնում է անփոփոխ |
| | | | սկզբում աճում է, այնուհետ նվազում է |
| | 480 | Համաձայն «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 2-ի, նշվածներից որո՞նք են վարկային ռիսկի հաշվարկում ստանում 0-ից տարբեր ռիսկի կշիռներ.<br>ա. Բանկային ոսկի բանկի դրամապահոցում<br>բ. Ճանապարհին գտնվող կանխիկ դրամական միջոցներ<br>գ. Հայաստանի Հանրապետության դրամով Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր<br>դ. արտարժույթով Հայաստանի Հանրապետության  պետական գանձապետական պարտատոմսեր | ճիշտ են միայն «ա», «բ» և «դ» տարբերակները |
| | | | բոլոր տարբերակները ճիշտ են |
| | | | ճիշտ է միայն «դ» տարբերակը |
| | | | ճիշտ են միայն «բ» և «դ» տարբերակները |
| | 481 | Համաձայն «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 2-ի, շուկայական ռիսկի հաշվարկի ժամանակ պարտքային արժեթղթերի շարքին են դասվում. | պետական պարտատոմսերը |
| | | | պետական մուրհակները |
| | | | նշված բոլոր տարբերակները ճիշտ են |
| | | | ավանդային սերտիֆիկատները |
| | 482 | Համաձայն «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 2-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ գործառնական ռիսկի վերաբերյալ | եթե որևէ տարվա զուտ եկամուտը փոքր է 0-ից, ապա տվյալ տարվա զուտ եկամուտը չի ընդգրկվում գործառնական ռիսկի հաշվարկում |
| | | | տվյալ տարվա զուտ եկամտի հաշվարկին չեն մասնակցում արժեթղթերի իրացումից ստացված շահույթը/վնասը, ինչպես նաև որպես փոխհատուցում ստացված ապահովագրական եկամուտները |
| | | | ճիշտ են բոլոր տարբերակները |
| | | | եթե հաշվետու ամսվան նախորդող երեք տարիներից յուրաքանչյուրում բանկի զուտ եկամուտները փոքր կամ հավասար են եղել 0-ի, ապա տվյալ տարվա ընթացքում գործառնական ռիսկը չի հաշվարկվում |
| | 483 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, տվյալ օրվա տոկոսադրույքի ընդհանուր ռիսկը ներքոհիշյալ մեծությունների հանրագումարն է.<br>ա. մինչև մարումն ընկած յուրաքանչյուր ժամանակաշրջանի նվազագույն դիրքի 10 տոկոս,<br>բ. առաջին գոտու նվազագույն դիրքի 40 տոկոս,<br>գ. երկրորդ գոտու նվազագույն դիրքի 30 տոկոս<br>դ. առաջին և երկրորդ գոտիների միջև նվազագույն դիրքի 40 տոկոս, | ճիշտ են միայն «ա», «բ» և «գ» տարբերակները |
| | | | ճիշտ են միայն «ա», «գ» և «դ» տարբերակները |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բոլոր տարբերակները ճիշտ են |
| | | | ճիշտ է միայն «դ» տարբերակը |
| | 484 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, նշված տնտեսական նորմատիվներից որի առավելագույն սահմանաչափն  է կազմում 20 տոկոս:<br>(ա) բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարի միջև սահմանային հարաբերակցությունը (Ն21)<br>(բ) մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն31)<br>(գ) բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն42)<br>(դ) բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն41) | Ն21 և Ն41 |
| | | | Ն31 և Ն42 |
| | | | միայն Ն41 |
| | | | Ն21 և Ն31 |
| | 485 | Բանկի կանոնադրական կապիտալը 4.0 մլրդ դրամ է, գլխավոր պահուստը՝ 2.5 մլրդ դրամ, չբաշխված շահույթը՝ 1.5 մլրդ դրամ, լրացուցիչ կապիտալը՝ 5 մլրդ դրամ: Բանկը մեկ փոխառուին որքա՞ն վարկ տրամադրելու դեպքում, չի խախտի մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն31) | 2.8 մլրդ. դրամ |
| | | | 2.08 մլրդ. դրամ |
| | | | 2.4 մլրդ. դրամ |
| | | | 2.24 մլրդ. դրամ |
| | 486 | Բանկի կանոնադրական կապիտալը 4.0 մլրդ դրամ է, գլխավոր պահուստը՝ 2 մլրդ դրամ, չբաշխված շահույթը՝ 3 մլրդ դրամ, լրացուցիչ կապիտալը՝ 3 մլրդ դրամ: Բանկը բանկի հետ կապված մեկ անձին որքա՞ն վարկ տրամադրելու դեպքում, չի խախտի բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն41) | 675 մլն. դրամ |
| | | | 585  մլն. դրամ |
| | | | 595 մլն. դրամ |
| | | | 600 մլն.դրամ |
| | 487 | Համաձայն Կանոնակարգ 2-ի, այն դեպքում, երբ երկրորդ խմբի որևէ արտարժույթով արտահայտված պարտավորությունները ամսվա միջին օրական հաշվարկով գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5 տոկոսը, ապա | հաշվարկվում է Ն3(1) նորմատիվ |
| | | | հաշվարկվում է Ն4(2) նորմատիվ |
| | | | յուրաքանչյուր այդպիսի երկրորդ խմբի արտարժույթի համար տվյալ ամսվան հաջորդող ամսվա համար հաշվարկվում է Ն2(12) նորմատիվ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 488 | Բանկի կանոնադրական կապիտալը 7.0 մլրդ դրամ է, գլխավոր պահուստը՝ 2 մլրդ դրամ, չբաշխված շահույթը՝ 3 մլրդ դրամ, լրացուցիչ կապիտալը՝ 5 մլրդ դրամ: Բանկը բանկի հետ կապված մեկ անձին որքա՞ն վարկ տրամադրելու դեպքում, չի խախտի բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն41) | առավելագույնը 780 մլն. դրամ |
| | | | նվազագույնը 850 մլն. դրամ |
| | | | առավելագույնը 850 մլն. դրամ |
| | | | նվազագույնը  780 մլն. դրամ |
| | 489 | Բանկի ռիսկով կշռված ակտիվների մեծությունը կազմում է 50 մլրդ դրամ: Բանկի հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը՝ 10% է: Լրացուցիչ կապիտալը՝  6 մլրդ. դրամ է: Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը կազմում է | 6.5 մլրդ. դրամ, |
| | | | 8 մլրդ. դրամ, |
| | | | 7 մլրդ. դրամ: |
| | | | 6 մլրդ. դրամ, |

| | | | |
|---|---|---|---|
| | 490 | «Ա» բանկի ցպահանջ պարտավորությունները կազմում են 260 մլն դրամ: ԿԲ-ում թղթակցային հաշվի մնացորդը 20 մլն դրամ է, ԿԲ-ում պարտադիր պահուստները` 30 մլն դրամ, ներդրված ավանդները կազմում են 40 մլն դրամ, իսկ վերջիններիս գծով հաշվեգրված տոկոսները` 5 մլն դրամ: Իսկ դրամարկղում ունի 105 մլն դրամ: Արդյունքում բանկը | չի խախտում Ն22 նորմատիվը, որի փաստացի մեծությունը կազմում է 76.54 տոկոս |
| | | | չի խախտում Ն22 նորմատիվը, որի փաստացի մեծությունը կազմում է 75 տոկոս |
| | | | չի խախտում Ն22 նորմատիվը, որի փաստացի մեծությունը կազմում է 63.46տոկոս |
| | | | խախտում է Ն22 նորմատիվը, որի փաստացի մեծությունը կազմում է 63.46 տոկոս |
| | 491 | Արտարժութային երկար դիրքերի հանրագումարը կազմում է 20 մլն դրամ, իսկ արտարժութային կարճ դիրքերի հանրագումարը -30 մլն դրամ է: Արտարժութային առավելագույն դիրքը կկազմի` | 50 մլն դրամ |
| | | | 30 մլն դրամ |
| | | | 10 մլն դրամ |
| | | | 20 մլն դրամ |
| | 492 | Բանկի իրացվելի և դիվերսիֆիկացված կապիտալի գործիքների համախառն դիրքը կազմում է 600 մլն դրամ, իսկ այլ կապիտալի գործիքների համախառն դիրքը 450 մլն դրամ: Որքա՞ն կկազմի կապիտալի գործիքների գնային հատուկ ռիսկը | 60 մլն դրամ |
| | | | 66 մլն դրամ |
| | | | 42 մլն դրամ |
| | | | 12 մլն դրամ |
| | 493 | Բանկի իրացվելի և դիվերսիֆիկացված կապիտալի գործիքների համախառն դիրքը կազմում է 250 մլն դրամ, իսկ այլ կապիտալի գործիքների համախառն դիրքը 550 մլն դրամ: Որքա՞ն կկազմի կապիտալի գործիքների գնային հատուկ ռիսկը | 44 մլն դրամ |
| | | | 24 մլն դրամ |
| | | | 12 մլն դրամ |
| | | | 54 մլն դրամ |
| | 494 | Վարկային ռիսկի հաշվարկում օգտագործվող ռիսկի կշիռներն են` | 150 % ռիսկի կշիռը |
| | | | 75 % ռիսկի կշիռը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | 225 % ռիսկի կշիռը |
| | 495 | Առաջին խմբի մեջ մտնող արտարժույթով ճանապարհին գտնվող կանխիկ դրամական միջոցները ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում են | 0 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 20 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 50 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 100 տոկոս ռիսկի կշռով |
| | 496 | ՀՀ դրամով ճանապարհին գտնվող կանխիկ դրամական միջոցները ռիսկով կշռված ակտիվների հաշվարկվում ընդգրկվում են | 0 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 50 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 100 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 20 տոկոս ռիսկի կշռով |
| | 497 | ՀՀ դրամով թղթակցային հաշիվները Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում ռիսկով կշռված ակտիվների հաշվարկվում ընդգրկվում են | 0 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 20 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 50 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 100 տոկոս ռիսկի կշռով |

| | | | |
|---|---|---|---|
| | 498 | Արտարժութային պահանջներ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի նկատմամբ ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում են | 20 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 75 տոկոս ռիսկի կշռով |
| | | | հիմք ընդունելով տվյալ բանկի վարկանիշին համապատասխան ռիսկի կշիռը |
| | | | 50 տոկոս ռիսկի կշռով |
| | 499 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկման նպատակով արտարժութային ռիսկը հաշվարկվում է արտարժութային ռիսկի հաշվարկման | Ստանդարտ կամ ՎաՌ մեթոդաբանության համաձայն |
| | | | միայն Ստանդարտ մեթոդաբանության համաձայն |
| | | | GAP կամ դյուրացիայի մեթոդաբանության համաձայն |
| | | | GAP կամ ՎաՌ մեթոդաբանության համաձայն |
| | 500 | ՎՌՁՄ-ին ենթակա պահանջի ապահովվածության արժեքը կազմում է 3 մլրդ. դրամ: Արժեքի տատանման գործակիցը 12% է: ՎՌՁՄ-ին ենթակա պահանջը և ապահովվածությունը տարբեր արժույթներով են: Տվյալ դեպքում ապահովվածության ճշգրտված արժեքը կկազմի. | 2.88 մլրդ դրամ |
| | | | 0.84 մլրդ դրամ |
| | | | Բոլոր պատասխանները սխալ են |
| | | | 2.4 մլրդ դրամ |
| | 501 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են. | բանկի ակտիվները |
| | | | հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները |
| | | | գործառնությունները |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 502 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, հետևյալ հիմնական տնտեսական նորմատիվներից, որը (որոնք) չի (չեն) սահմանվում Կենտրոնական բանկի կողմից. | հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը |
| | | | ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը |
| | | | բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 503 | Համաձայն Կանոնակարգ 2-ի, եթե պահանջի գծով առկա չեն արժեքի տատանման գործակիցներ, ապա ՎՌՁՄ ենթակա պահանջի արժեքը հավասար է. | պահանջի և հնարավոր կորուստների պահուստի տարբերությանը |
| | | | պահանջի և հնարավոր կորուստների պահուստի գումարին |
| | | | հնարավոր կորուստների պահուստի և պահանջի արտադրյալին |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 504 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, տվյալ օրվա համար կապիտալի գործիքների գնային ընդհանուր ռիսկը հավասար է | տվյալ օրվա կապիտալի գործիքների համախառն զուտ դիրքի 8 տոկոսի բացարձակ մեծությանը |
| | | | տվյալ օրվա կապիտալի գործիքների համախառն դիրքին |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | տվյալ օրվա կապիտալի գործիքների համախառն զուտ դիրքի 4 տոկոսի բացարձակ մեծությանը |
| | 505 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Կապիտալի այն գործիքները, որոնք նվազեցվել են հիմնական կապիտալի հաշվարկից, չեն ընդգրկվում կապիտալի գործիքների դիրքերի հաշվարկում |
| | | | Կապիտալի գործիքների դիրքերը հաշվարկվում են յուրաքանչյուր օրվա դրությամբ և արտահայտվում Հայաստանի Հանրապետության դրամով |
| | | | Կապիտալի գործիքների գնային ռիսկը կապիտալի գործիքների գնային ընդհանուր ռիսկի և կապիտալի գործիքների գնային հատուկ ռիսկի հանրագումարն է |
| | | | նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | 506 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, կապիտալի գործիքների դիրքերի հաշվարկում չեն ընդգրկվում | ռեպո համաձայնագրերով վաճառված կապիտալի գործիքները |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ռեպո համաձայնագրերով ձեռք բերված կապիտալի գործիքները |
| | | | գրավադրված կապիտալի գործիքները |
| | 507 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, կապիտալի գործիքների դիրքերի հաշվարկում ընդգրկվում են. | արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրի համաձայն կառավարվող կապիտալի գործիքները |
| | | | ռեպո համաձայնագրերով ձեռք բերված կապիտալի գործիքները |
| | | | որպես գրավ ստացված կապիտալի գործիքները |
| | | | ռեպո համաձայնագրերով վաճառված կապիտալի գործիքները |
| | 508 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, կապիտալի գործիքների դիրքերի հաշվարկում ընդգրկվում են. | փոխառությամբ ստացված կապիտալի գործիքները |
| | | | ռեպո համաձայնագրերով ձեռք բերված կապիտալի գործիքները |
| | | | ռեպո համաձայնագրերով վաճառված կապիտալի գործիքները |
| | | | բրոքերային ծառայության շրջանակներում կառավարվող կապիտալի գործիքները |
| | 509 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, պարտքային արժեթղթերի թվին չեն դասվում | փոխարկվող պարտատոմսեր |
| | | | ավանդային սերտիֆիկատներ |
| | | | ոչ փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր |
| | | | բաժնային արժեթղթեր չհամարվող այն արժեթղթերը, որոնք պարունակում են տոկոսադրույքի ռիսկ |
| | 510 | Արտարժույթով պահանջները Հայաստանի Հանրապետության համայնքների նկատմամբ, ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում են | 30 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 110 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 150 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 100 տոկոս ռիսկի կշռով |
| | 511 | Դրամային պահանջները Հայաստանի Հանրապետության համայնքների նկատմամբ, ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում են | 30 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 100 տոկոս ռիսկի կշռով |

| | | | |
|---|---|---|---|
| | | | 225 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 150 տոկոս ռիսկի կշռով |
| | 512 | Ոչ ստանդարտ և կասկածելի դասակարգված դրամային վարկերը, ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում են | 100 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 150 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 30 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 20 տոկոս ռիսկի կշռով |
| | 513 | Արտարժույթով միջին ռիսկային և բարձր ռիսկային դասակարգված արժեթղթերը ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում ընդգրկվում են | 110 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 150 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 100 տոկոս ռիսկի կշռով |
| | | | 20 տոկոս ռիսկի կշռով |
| | 514 | Վարկային ռիսկի հաշվարկում օգտագործվող ռիսկի կշիռ  չէ՝ | 225% ռիսկի կշիռը |
| | | | 110% ռիսկի կշիռը |
| | | | 120% ռիսկի կշիռը |
| | | | 30% ռիսկի կշիռը |
| | 515 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, նշված տնտեսական նորմատիվներից որի՞ (որո՞նց) առավելագույն սահմանաչափն  է կազմում 20 տոկոս.<br>(ա) բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարի միջև սահմանային հարաբերակցությունը (Ն21)<br>(բ) մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն31)<br>(գ) բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն42) | միայն Ն21 |
| | | | Ն31 և Ն42 |
| | | | միայն Ն31 |
| | | | միայն Ն42 |
| | 516 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, նշված տնտեսական նորմատիվներից որի՞ (որո՞նց) նվազագույն սահմանաչափն  է կազմում 15 տոկոս.<br>(ա) բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարի միջև սահմանային հարաբերակցությունը (Ն21)<br>(բ)  բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն42)<br>(գ) բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն41) | միայն Ն21 |
| | | | միայն Ն42 |
| | | | Ն21 և Ն41 |
| | | | միայն Ն41 |
| | 517 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, օտարերկրյա կենտրոնական բանկերի, կառավարությունների, տեղական կառավարման մարմինների նկատմամբ պահանջները վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկելու համար պետք է հիմք ընդունել վարկանիշները՝ կախված | պահանջների ժամկետայնությունից |
| | | | նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | | | պահանջների նպատակայնությունից |
| | | | գործիքների տեսակից և արժույթից |

| | | | |
|---|---|---|---|
| | 518 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, եթե անձի/գործիքի նկատմամբ կարճաժամկետ պահանջի ռիսկի կշիռը 150% է, ապա տվյալ անձի նկատմամբ ցանկացած վարկանիշ չունեցող պահանջները (թե երկարաժամկետ, թե կարճաժամկետ) վարկային ռիսկի հաշվարկում պետք է ընդգրկվեն | 225% ռիսկի կշիռը |
| | | | 110% ռիսկի կշիռը |
| | | | 100% ռիսկի կշիռը |
| | | | 150% ռիսկի կշիռը |
| | 519 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, նշված տնտեսական նորմատիվներից որի՞ (որո՞նց) առավելագույն սահմանաչափն է կազմում 5 տոկոս.<br>(ա) մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն31)<br>(բ) բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն42)<br>(գ) բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվը (Ն41) | միայն Ն31 |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | միայն Ն41 |
| | | | միայն Ն42 |
| | 520 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, շուկայական ռիսկի հաշվարկում տոկոսադրույքի և կապիտալի գործիքների գնային ռիսկերը հաշվարկվում են միայն այն դեպքում, երբ հաշվետու ժամանակաշրջանին նախորդող ամսվա կամ հաշվետու ամսվա միջին օրական հաշվարկով բանկի | շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ակտիվների հանրագումարը գերազանցում է ընդհանուր հաշվեկշռային ակտիվների 3 տոկոսը |
| | | | շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ակտիվների հանրագումարը գերազանցում է բանկի նորմատիվային ընդհանուր կապիտալի 3 տոկոսը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ակտիվների հանրագումարը չի գերազանցում ընդհանուր հաշվեկշռային ակտիվների 3 տոկոսը |
| | 521 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Արտարժութային դիրքի հաշվարկն իրականացվում է արտարժույթների առանձին տեսակներով |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | | | Արտարժութային դիրքը բանկի արտարժութային ռիսկ պարունակող ակտիվների և արտարժութային ռիսկ պարունակող պարտավորությունների միջև եղած տարբերությունն է |
| | | | Արտարժութային դիրքերը հաշվարկվում են յուրաքանչյուր օրվա դրությամբ և արտահայտվում են Հայաստանի Հանրապետության դրամով |
| | 522 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկում ընդգրկվում են ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերը |
| | | | Պետական պարտատոմսերը և մուրհակները, ավանդային սերտիֆիկատները հանդիսանում են պարտքային արժեթղթեր |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | | | Պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկում չեն ընդգրկվում ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերը |
| | 523 | «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի համաձայն, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | արտարժութային դիրքերի հաշվարկում չեն ընդգրկվում արտարժութային ռիսկ պարունակող այն միջոցները, որոնք նվազեցվում են լրացուցիչ կապիտալի հաշվարկից |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | արտարժութային դիրքերի հաշվարկում  ընդգրկվում են արտարժութային ռիսկ պարունակող բոլոր միջոցները |
| | | | արտարժութային դիրքերի հաշվարկում չեն ընդգրկվում արտարժութային ռիսկ պարունակող այն միջոցները, որոնք նվազեցվում են հիմնական կապիտալի հաշվարկից |
| | 524 | «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի նպատակներն են. | եկամտահարկի հաշվարկման նպատակով սահմանել համախառն եկամտի նվազեցումները՝ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին ուղղված գումարների չափով |
| | | | շահութահարկի հաշվարկման նպատակով սահմանել համախառն եկամտի նվազեցումները՝ ակտիվների, այդ թվում՝ բանկի կողմից գնված բաժնետոմսերի և ոչ պետական պարտատոմսերի գծով հնարավոր կորուստների պահուստներին ուղղված գումարների չափով |
| | | | Բոլոր պատասխանները սխալ են |
| | | | բանկի կողմից հրապարակվող հաշվետվությունների համար ապահովել բանկի կապիտալի և ակտիվների մեծության վերաբերյալ արժանահավատ տեղեկատվության ստացումը |
| | 525 | «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի նպատակն է. | ավելացված արժեքի հարկի ու շահութահարկի հաշվարկման նպատակով սահմանել ծառայությունների մատուցման և համախառն եկամտի նվազեցումները՝ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին ուղղված գումարների չափով |
| | | | Ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | բանկի կողմից հրապարակվող հաշվետվությունների համար ապահովել բանկի կապիտալի և ակտիվների մեծության վերաբերյալ արժանահավատ տեղեկատվության ստացումը |
| | | | շահութահարկ վճարողների հարկման բազայի որոշման նպատակով սահմանել համախառն եկամտի նվազեցումները՝ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին ուղղված գումարների չափով |
| | 526 | «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի իմաստով ակտիվներ են համարվում.<br>ա) բոլոր արժեթղթերը, բացի մուրհակներից,<br>բ) բանկային գործունեության համար օգտագործվող անշարժ գույքը,<br>գ) ՀՀ ԿԲ-ում ներդրված ավանդները և բացված  հաշիվները,<br>դ) բանկի աշխատակիցներին տրված առհաշիվ գումարները | միայն ա) և բ) տարբերակները |
| | | | միայն դ) տարբերակը |
| | | | նշված բոլոր տարբերակները |
| | | | միայն գ) և դ) տարբերակները |
| | 527 | «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի իմաստով ակտիվներ են համարվում. | բանկային գործունեության համար օգտագործվող անշարժ գույքը և ոչ նյութական ակտիվները |
| | | | Բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | նախավճարները |
| | | | բանկային գործունեության ընթացքում օգտագործվող համակարգչային տեխնիկան |

| | | | |
|---|---|---|---|
| | 528 | «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի իմաստով ակտիվներ են համարվում.<br>ա) բանկային գործունեության համար օգտագործվող անշարժ գույքը և ոչ նյութական ակտիվները<br>բ) երաշխիքների, երաշխավորությունների և ակրեդիտիվների գծով պահանջները<br>գ) բանկի համար վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածները | ճիշտ են միայն ա) և բ) տարբերակները |
| | | | ճիշտ է միայն գ) տարբերակը |
| | | | ճիշտ է միայն բ) տարբերակը |
| | | | ճիշտ են բ) և գ) տարբերակները |
| | 529 | «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի համաձայն` ակտիվների դասակարգումը ակտիվների խմբավորումն է հետևյալ դասերի. | ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և կորուստ, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ստանդարտ, ոչ ստանդարտ, կասկածելի և կորուստ, |
| | | | ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի, |
| | 530 | «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի համաձայն` ընդհանուր պահուստը. | արտահաշվեկշռում գրանցված պահուստ է, որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով |
| | | | բանկի հաշվեկշռում ակտիվին հակակշիռ գրանցված պահուստի այն մասն է, որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով |
| | | | Ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | բանկի հաշվեկշռում գրանցված պահուստի այն մասն է, որը ձևավորվում է հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դասակարգված ակտիվների գծով |
| | 531 | «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի համաձայն` հատուկ պահուստը. | բանկի հաշվեկշռում ակտիվին հակակշիռ գրանցված պահուստի այն մասն է, որը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով |
| | | | Ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | հաշվեկշռում պասիվներին հակաշիռ գրանցված պահուստ է, որը ձևավորվում է հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դասակարգված ակտիվների գծով |
| | | | բանկի հաշվեկշռում գրանցված պահուստի այն մասն է, որը ձևավորվում է հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դասակարգված ակտիվների գծով |
| | 532 | «ՀՀ տարածքում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական ակտիվների դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման» կարգի համաձայն` նշել սխալ պատասխանը. | այն դեպքում, երբ փորձաշրջանի ընթացքում ակտիվը ժամկետանց է դառնում 31 և ավելի օր, ապա տվյալ պահից ակտիվի գծով սահմանված փորձաշրջանը դադարեցվում է և այդ ակտիվի գծով նոր փորձաշրջան է սահմանվում |
| | | | հնարավոր կորուստների պահուստները ճանաչվում են որպես ծախս բանկի ֆինանսական արդյունքները ամփոփող հաշվետվությունում |
| | | | հետհաշվեկշռում ակտիվները շարունակվում են արտացոլվել այն արժեքով, որով կարտացոլվեին հաշվեկշռում հաշվառելու դեպքում` թղթակցելով համապարփակ եկամտի հաշիվների հետ |
| | 26 | Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի՝ սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերը ժամանակին և ամբողջական ձևակերպելու, սահմանված կարգով և ժամկետներում հաշվապահական հաշվառման մեջ արտացոլելու համար դրանց փոխանցման պատասխանատվությունը կրում է (են)՝ | միայն կազմակերպության գլխավոր հաշվապահը |
| | | | այդ փաստաթղթերը կազմող և ստորագրող անձինք |
| | | | կազմակերպության ղեկավարը և գլխավոր հաշվապահը |
| | | | նշված բոլոր անձինք |
| | 27 | Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», օգտակար ֆինանսական տեղեկատվության հիմնարար որակական բնութագրերն են.<br>ա) տեղին լինելը<br>բ) համադրելի լինելը<br>գ) ճշմարիտ ներկայացումը | «ա» և «բ» |
| | | | «ա» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «բ» և «գ» |
| | 28 | Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», տեղեկատվությունը համարվում է էական, եթե. | դրա բացթողումը կամ սխալ ներկայացումը կարևորվում է ընկերության ղեկավարության կողմից |
| | | | դրա բացթողումը կամ սխալ ներկայացումը կարող է ազդել օգտագործողների՝ հաշվետու կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող որոշումների վրա |
| | | | դրա բացթողումը կամ սխալ ներկայացումը կհանգեցնի խոշոր գումարների տատանման |
| | | | Նշված բոլոր պատասխանները ճիշտ են |

| | | | |
|---|---|---|---|
| | 29 | Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», ճշմարիտ ներկայացման բնութագրերից են.<br>ա) ամբողջական<br>բ) չեզոք<br>գ) սխալներից զերծ<br>դ) համադրելի | «ա» և «բ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա», «բ» և «դ» |
| | | | «բ» և «գ» |
| | 30 | Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», օգտակար ֆինանսական տեղեկատվության որակական բնութագրերն են.<br>ա) համադրելիությունը<br>բ) ժամանակին լինելը<br>գ) հասկանալիությունը | «բ» |
| | | | «ա» և «բ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | 31 | Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», ֆինանսական արդյունքի չափման հետ անմիջականորեն կապված տարրերն են.<br>ա) սեփական կապիտալը<br>բ) եկամուտներ<br>գ) ծախսեր | «բ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա» և «բ» |
| | 32 | Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», ակտիվը ճանաչվում է, երբ<br>ա) հավանական է, որ ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն<br>բ) ընկերությունը նպատակահարմար է գտնում ծախսերը կապիտալացնել` վերածելով այն ակտիվի<br>գ) ակտիվն ունի արժեք, որը կարելի է արժանահավատորեն չափել | «ա» |
| | | | «ա» և «գ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | 33 | Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», պարտավորությունը ճանաչվում է այն ժամանակ, երբ | հավանական է, որ ներկա պարտականությունը մարելու արդյունքում տեղի կունենա տնտեսական օգուտները պարունակող ռեսուրսների արտահոսք և այն գումարը, որով կմարվի պարտականությունը, հնարավոր է արժանահավատորեն չափել |
| | | | գումարը, որով կմարվի պարտականությունը, հնարավոր է արժանահավատորեն չափել |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հավանական է, որ տեղի կունենա տնտեսական օգուտները պարունակող ռեսուրսների ներհոսք և այն գումարը, որով կմարվի պարտականությունը, հնարավոր է արժանահավատորեն չափել |
| | 34 | Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ<br>ա) ապագա տնտեսական օգուտների աճը կապված է ակտիվի ավելացման հետ<br>բ) ապագա տնտեսական օգուտների աճը կապված է պարտավորության նվազման հետ<br>գ) այն կարող է արժանահավատորեն չափվել | «ա» |
| | | | «ա» և «գ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | 35 | Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», ծախսերը ճանաչվում են, երբ<br>ա) ապագա տնտեսական օգուտների նվազումը կապված է ակտիվների նվազման հետ<br>բ) ապագա տնտեսական օգուտների նվազումը կապված է պարտավորությունների աճի հետ<br>գ) այն կարող է արժանահավատորեն չափվել | «ա» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա» և «գ» |
| | 36 | Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», ֆինանսական տարրերի չափումը ներառում է հետևյալ հասկացությունները.<br>ա) ընթացիկ արժեք<br>բ) սկզբնական արժեք<br>գ) մնացորդային արժեք<br>դ) ներկա արժեք | «ա» և «բ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա», «բ» և «դ» |
| | | | «ա», «բ», «գ» և «դ» |
| | 37 | Համաձայն «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների», ո՞րը չի հանդիսանում ֆինանսական տարրերի չափման հասկացություն.<br>ա) հաշվեկշռային արժեք<br>բ) սկզբնական արժեք<br>գ) ներկա արժեք<br>դ) մնացորդային արժեք | «ա» և «դ» |
| | | | «ա», «բ» և «դ» |
| | | | «ա», «գ» և «դ» |
| | | | «բ» և «գ» |

| | | | |
|---|---|---|---|
| | 38 | Համաձայն ՀՀՄՍ 1-ի՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը», նշեք սխալ տարբերակը | ֆինանսական հաշվետվությունները լրացվում են հաշվապահական հաշվառման սկզբունքների կիրառմամբ |
| | | | ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության, լրացվում են հաշվեգրման սկզբունքի կիրառմամբ |
| | | | դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը լրացվում է հաշվեգրման սկզբունքի կիրառմամբ |
| | | | դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կազմվում է ուղղակի մեթոդով |
| | 39 | Համաձայն ՀՀՄՍ 1-ի՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը», ստանդարտի նպատակն է ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների կազմման և ներկայացման հիմունքների սահմանումը՝ | ապահովելու համար կազմակերպության նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև տվյալ կազմակերպության և այլ կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների համադրելիությունը |
| | | | ապահովելու համար աուդիտորական ստուգման արդյունավետությունը |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | | | ապահովելու համար ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատությունը |
| | 40 | Համաձայն ՀՀՄՍ 1-ի՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը», նշավծներից որը չի ներառվում ֆինանսական հաշվետվությունների փաթեթում. | հաշվապահական հաշվառման քաղաքականությունը |
| | | | շահութահարկի հաշվարկը |
| | | | ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը |
| | | | համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը |
| | 41 | Համաձայն ՀՀՄՍ 1-ի՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը», ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են տեղեկություններ կազմակերպության | ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ |
| | | | եկամուտների և ծախսերի վերաբերյալ |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | սեփական կապիտալի և դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ |
| | 42 | Համաձայն ՀՀՄՍ 1-ի՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը», կազմակերպությունը ֆինանսական հաշվետվությունները պետք է պատրաստի անընդհատության հիմունքով, բացառությամբ<br>ա) առկա է կազմակերպության ղեկավարության մտադրությունը կազմակերպությունը լուծարելու<br>բ) առկա է կազմակերպության ղեկավարության մտադրությունը գործունեության դադարեցման<br>գ) չկա դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք | «ա» |
| | | | «ա» և «բ» |
| | | | «ա», «բ» և «գ» |

| | | | |
|---|---|---|---|
| | | | «գ» |
| | 43 | Համաձայն ՀՀՄՍ 1-ի` «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը», ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընդգրկի հետևյալ գումարները ներկայացնող տողային հոդվածները | ոչ նյութական ակտիվներ |
| | | | ներդրումային գույք |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | դրամական միջոցներ և դրանց համարժեքներ |
| | 44 | Համաձայն ՀՀՄՍ 1-ի` «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը», կազմակերպությունը պարտավորությունը պետք է դասակարգի որպես ընթացիկ, երբ<br>ա) ակնկալում է պարտավորությունը մարել կազմակերպության սովորական գործառնական փուլի ընթացքում<br>բ) պահում է պարտավորությունը հիմնականում առևտրական նպատակներով<br>գ) պարտավորությունը ենթակա է մարման հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում<br>դ) պահում է պարտավորությունը հիմնականում մինչև մարման ժամկետը և կազմակերպությունը չունի անվերապահ իրավունք` մարելու պարտավորությունը մարման ժամկետից շուտ | «ա» և «բ» |
| | | | «բ», «գ» և «դ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «բ» և «դ» |
| | 45 | Համաձայն ՀՀՄՍ 1-ի` «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը», նշված պնդումներից ո՞րն է ճիշտ` | կազմակերպությունը իր ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ ֆինանսական վիճակի մասին տեղեկատվության, պետք է պատրաստի հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի հիման վրա |
| | | | կազմակերպությունը իր ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ սեփական կապիտալի փոփոխությունների մասին տեղեկատվության, պետք է պատրաստի հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի հիման վրա |
| | | | կազմակերպությունը իր ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ ֆինանսական արդյունքների մասին տեղեկատվության, պետք է պատրաստի հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի հիման վրա |
| | | | կազմակերպությունը իր ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվության, պետք է պատրաստի հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի հիման վրա |
| | 46 | Համաձայն ՀՀՄՍ 1-ի` «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում», կազմակերպությունները  հաշվեգրման սկզբունքի հիման վրա չեն պատրաստում | Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը և Սեփական կապիտալի մասին հաշվետվությունը |
| | | | Դրամական հոսքերի մասին հաշվետվությունը |
| | | | Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը |
| | 47 | Համաձայն ՀՀՄՍ 2-ի՝ «Պաշարներ», պաշարները չափվում են | ինքնարժեքով |
| | | | իրացման զուտ արժեքով |
| | | | ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից առավելագույնով |
| | | | ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով |
| | 48 | Համաձայն ՀՀՄՍ 2-ի՝ «Պաշարներ», երբ պաշարները վաճառվում են, ապա | դրանց հաշվեկշռային արժեքը պետք է ճանաչվի որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը |
| | | | դրանց հաշվեկշռային արժեքը պետք է ճանաչվի որպես հասույթ այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված ծախսը |
| | | | դրանց վաճառքից ստացված հասույթի և պաշարների հաշվեկշռային արժեքի տարբերությունը պետք է ճանաչվի որպես ծախս կամ եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, որում կատարվել է գործարքը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 49 | Համաձայն ՀՀՄՍ 2-ի՝ «Պաշարներ», պաշարների ինքնարժեքի տարրեր են՝<br>ա) ձեռք բերման ծախսումները<br>բ) արտադրանքի վերամշակման ծախսումները<br>գ) գերնորմատիվային ծախսումները | «ա» և «բ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա» և «գ» |
| | 50 | Նշել սխալ պատասխանը:<br>Համաձայն ՀՀՄՍ 2-ի՝ «Պաշարներ», պաշարների ինքնարժեքը կարող է չփոխհատուցվել, եթե | դրանք մասամբ կամ ամբողջությամբ օգտագործելի չեն՝ վնասվել են, փչացել են, հնացել են |
| | | | աճել են այնպիսի ենթադրվող ծախսումները, որոնք պետք է կատարվեն վաճառքը կազմակերպելու համար |
| | | | դրանց վաճառքի գինը նվազել է |
| | | | դրանց վաճառքի գինը աճել է |
| | 51 | Նշել սխալ պատասխանը:<br>Համաձայն ՀՀՄՍ 2-ի՝ «Պաշարներ», պաշարները դրանք ակտիվներ են, որոնք | պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար |
| | | | արտադրության ընթացքում են՝ հետագայում վաճառելու նպատակով |
| | | | արտահայտված են հումքի և նյութերի ձևով, որը նախատեսվում է սպառել արտադրության գործընթացում կամ ծառայությունների մատուցման ժամանակ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ձեռք են բերվել առաջիկա տարիների ընթացքում կազմակերպության գործունեությունը ապահովելու համար |
| | 52 | Համաձայն ՀՀՄՍ 2-ի՝ «Պաշարներ», պաշարներն այն ակտիվներն են, որոնք՝<br>ա) պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար<br>բ) արտադրության ընթացքում են հետագա վաճառքի համար<br>գ) արտադրվում են ընկերության գործունեության արդյունքում ծառայելու նպատակով<br>դ) հումքի կամ նյութերի ձևով են՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար | «ա» և «բ» |
| | | | «ա», «բ» և «դ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա», «բ», «գ» և «դ» |
| | 53 | Համաձայն ՀՀՄՍ 2-ի՝ «Պաշարներ», պաշարների ինքնարժեքի բանաձևերն են.<br>ա) ՖԻՖՈ<br>բ) ԼԻՖՈ<br>գ) միջին կշռված արժեք | «ա» և «բ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա» և «գ» |
| | 54 | Համաձայն ՀՀՄՍ 2-ի՝ «Պաշարներ», իրացման զուտ արժեքը | վաճառքի ձևավորվող գինն է |
| | | | վաճառքի գնի և արժեզրկման կորուստի տարբերությունն է |
| | | | սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները |
| | | | այն գումարն է, որով պաշարի միավորը առևտրական գործարքի ընթացքում կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև |
| | 55 | Համաձայն ՀՀՄՍ 2-ի՝ «Պաշարներ», իրական արժեքը | այն գումարն է, որով պաշարի միավորը առևտրական գործարքի ընթացքում կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | վաճառքի ձևավորվող գինն է |
| | | | գին, որը չափման ամսաթվի դրությամբ, շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց |
| | 56 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», բանկը միանվագ վճարել է նույն մատակարարից ձեռք բերված հիմնական միջոցի և ապրանքների համար, հետևաբար | մատակարարին վճարված գումարն ամբողջությամբ դասակարգվում է որպես գործառնական հոսք |
| | | | մատակարարին վճարված գումարն ամբողջությամբ դասակարգվում է որպես ներդրումային հոսք |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հիմնական միջոցի համար վճարված գումարը դասակարգվում է որպես գործառնական հոսք, իսկ ապրանքների համար վճարված գումարը՝ որպես ներդրումային հոսք |
| | | | հիմնական միջոցի համար վճարված գումարը դասակարգվում է որպես ներդրումային, իսկ ապրանքների համար վճարված գումարը՝ որպես գործառնական հոսք |
| | 57 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», դրամական գործառնություններ չեն և հետևաբար դրամական հոսքերի մասին հաշվետվությունում չեն ներառվում | փոխառությունների ներգրավումը |
| | | | բաժնետոմսերի թողարկման միջոցով կազմակերպության ձեռքբերումը: |
| | | | կրեդիտորական պարտքի մարումը |
| | | | հարկերի վճարումը |
| | 58 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», աշխատակիցներին և նրանց անունից (օրինակ՝ կենսաթոշակային ապահովության վճար, եկամտահարկ) դրամական վճարումները դրամական միջոցների հոսքեր են, որոնք առաջանում են | գործառնական գործունեության արդյունքում |
| | | | ներդրումային գործունեության արդյունքում |
| | | | ֆինանսական գործունեության արդյունքում |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 59 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից դրամական մուտքերը, դրամական միջոցների հոսքեր են, որոնք առաջանում են | ներդրումային գործունեության արդյունքում |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | | | ֆինանսական գործունեության արդյունքում |
| | | | գործառնական գործունեության արդյունքում |
| | 60 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», սեփական բաժնետոմսերի կամ բաժնային այլ գործիքների թողարկումից դրամական մուտքերը դրամական միջոցների հոսքեր են, որոնք առաջանում են | ներդրումային գործունեության արդյունքում |
| | | | ֆինանսական գործունեության արդյունքում |
| | | | գործառնական գործունեության արդյունքում |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 61 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», դիլերային և առևտրային պայմանագրերից դրամական մուտքերը և վճարումները դրամական միջոցների հոսքեր են, որոնք առաջանում են | ներդրումային գործունեության արդյունքում |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | | | գործառնական գործունեության արդյունքում |
| | | | ֆինանսական գործունեության արդյունքում |
| | 62 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների ձեռք բերման դրամական վճարումները դրամական միջոցների հոսքեր են, որոնք առաջանում են | ներդրումային գործունեության արդյունքում |
| | | | գործառնական գործունեության արդյունքում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ֆինանսական գործունեության արդյունքում |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 63 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», այլ կազմակերպությունների պարտքային գործիքների համար դրամական վճարումները (բացի այն գործիքների, որոնք համարվում են դրամական միջոցների համարժեք, կամ որոնք պահվում են դիլերային կամ առևտրային նպատակներով) դրամական միջոցների հոսքեր են, որոնք առաջանում են | ներդրումային գործունեության արդյունքում |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | | | գործառնական գործունեության արդյունքում |
| | | | ֆինանսական գործունեության արդյունքում |
| | 64 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», ֆինանսական հաստատությունների նշված դրամական միջոցների հոսքերից, որո՞նք են որ կարող են բանկի «Դրամական միջոցների հաշվետվությունում» ներկայացվել զուտ հիմունքով՝ | բանկի հաճախորդների անունից կատարվող դրամական վճարումները և մուտքերը, եթե այս դրամական միջոցների հոսքերն արտահայտում են հաճախորդների, և ոչ թե բանկի գործունեությունը |
| | | | բանկի հաճախորդների անունից կատարվող դրամական վճարումները և մուտքերը, եթե այս դրամական միջոցների հոսքերն արտահայտում են բանկի, և ոչ թե հաճախորդի գործունեությունը |
| | | | բանկի հիմնական միջոցների ձեռք բերման դիմաց վճարումները և վաճառքից դրամական մուտքերը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 65 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», նշվածներից ո՞րն է (որո՞նք են) համարվում ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝ | ապահովագրական կազմակերպության դրամական մուտքերը  ապահովագրավճարներից |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | վարձակալի կողմից կատարվող դրամական վճարումները՝ ֆինանսական վարձակալությանը վերաբերող պարտավորությունների մարման նպատակով |
| | | | ֆյուչերսային, ֆորվարդային, օպցիոն և սվոպային պայմանագրերի դիմաց դրամական վճարումները, բացի այն դեպքերից, երբ նշված պայմանագրերը կնքվում են դիլերային և առևտրային նպատակով կամ նշված վճարումները դասակարգվում են որպես ֆինանսական գործունեություն |
| | 66 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», նշվածներից ո՞րն է (որո՞նք են) համարվում գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝ | այլ կազմակերպությունների սեփական կապիտալի մասնակցության և պարտքային գործիքների (արժեթղթերի), ինչպես նաև համատեղ գործունեությունում մասնակցության վաճառքից դրամական մուտքերը (բացի այն գործիքների (արժեթղթերի) դիմաց մուտքերից, որոնք համարվում են դրամական միջոցների համարժեք, կամ որոնք պահվում են դիլերային կամ առևտրային նպատակներով) |

| | | | |
|---|---|---|---|
| | | | բաժնետոմսերի կամ սեփական կապիտալի մասնակցության այլ գործիքների թողարկումից դրամական մուտքերը |
| | | | ապրանքների, աշխատանքների և ծառայությունների դիմաց մատակարարներին վճարված դրամական միջոցները |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | 67 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», նշվածներից ո՞րն է (որո՞նք են) համարվում ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝ | ապրանքների (արտադրանքի) վաճառքից, աշխատանքների կատարումից և ծառայությունների մատուցումից ստացված դրամական միջոցների մուտքերը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | դրամական վճարումները սեփականատերերին՝ կազմակերպության բաժնետոմսերը ձեռք բերելու կամ մարելու համար |
| | | | դրամական միջոցներով տրամադրված փոխատվությունները և վարկերը (բացի ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրված փոխատվություններից) |
| | 68 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», նշվածներից ո՞րը չի (որո՞նք չեն) համարվում ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր | դրամական վճարումները սեփականատերերին՝ կազմակերպության բաժնետոմսերը ձեռք բերելու կամ մարելու համար |
| | | | սեփական բաժնետոմսերի կամ բաժնային այլ գործիքների թողարկումից դրամական մուտքերը |
| | | | այլ կազմակերպությունների պարտքային գործիքների համար դրամական վճարումները |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 69 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | | | ներդրումները սովորաբար դասվում են դրամական միջոցների համարժեքների շարքին միայն այն դեպքում, եթե դրանք ունեն մարման կարճ ժամկետ, օրինակ՝ ձեռքբերման օրվանից երեք ամիս, կամ ավելի քիչ |
| | | | որպեսզի ներդրումները որակվեն որպես դրամական միջոցների համարժեքներ, դրանք պետք է լինեն ազատ փոխարկելի՝ նախապես հայտնի դրամական գումարներով, և դրանց արժեքի փոփոխման ռիսկը պետք է լինի ոչ նշանակալի |
| | 70 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», ներդրումային գործունեությունը | երկարաժամկետ ակտիվների և այլ ներդրումների ձեռքբերումն ու օտարումն է, որոնք չեն ընդգրկվում դրամական միջոցների համարժեքների մեջ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | գործունեություն է, որը հանգեցնում է կազմակերպության ներդրված սեփական կապիտալի և փոխառու միջոցների մեծության ու կառուցվածքի փոփոխությունների |
| | | | կազմակերպության հասույթ բերող հիմնական գործունեությունն է և ներդրումային կամ ֆինանսավորման գործունեություն չհանդիսացող այլ գործունեություններ |
| | | | դրամական միջոցների և դրանց համարժեքների ներհոսքերն ու արտահոսքերն են |
| | 71 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», ֆինանսական գործունեությունը | երկարաժամկետ ակտիվների և այլ ներդրումների ձեռքբերումն ու օտարումն է, որոնք չեն ընդգրկվում դրամական միջոցների համարժեքների մեջ |
| | | | դրամական միջոցների և դրանց համարժեքների ներհոսքերն ու արտահոսքերն են |
| | | | կազմակերպության հասույթ բերող հիմնական գործունեությունն է և ներդրումային կամ ֆինանսավորման գործունեություն չհանդիսացող այլ գործունեություններ |
| | | | գործունեություն է, որը հանգեցնում է կազմակերպության ներդրված սեփական կապիտալի և փոխառու միջոցների մեծության ու կառուցվածքի փոփոխությունների |
| | 72 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», գործառնական գործունեությունը | երկարաժամկետ ակտիվների և այլ ներդրումների ձեռքբերումն ու օտարումն է, որոնք չեն ընդգրկվում դրամական միջոցների համարժեքների մեջ |
| | | | գործունեություն է, որը հանգեցնում է կազմակերպության ներդրված սեփական կապիտալի և փոխառու միջոցների մեծության ու կառուցվածքի փոփոխությունների |
| | | | կազմակերպության հասույթ բերող հիմնական գործունեությունն է և ներդրումային կամ ֆինանսավորման գործունեություն չհանդիսացող այլ գործունեություններ |
| | | | դրամական միջոցների և դրանց համարժեքների ներհոսքերն ու արտահոսքերն են |
| | 73 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», ապրանքների (արտադրանքի) վաճառքից և ծառայությունների մատուցումից ստացած դրամական միջոցների մուտքերը դրամական միջոցների հոսքեր են, որոնք առաջանում են | ներդրումային գործունեության արդյունքում |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | | | գործառնական գործունեության արդյունքում |
| | | | ֆինանսական գործունեության արդյունքում |
| | 74 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», նշվածներից որը չի հանդիսանում գործառնական գործունեության արդյունքում առաջացած դրամական միջոցների հոսքերի օրինակներ. | առևտրային պայմանագրերից դրամական միջոցների մուտքերը և վճարումները |

| | | | |
|---|---|---|---|
| | | | աշխատակիցներին և նրանց անունից դրամական վճարումները |
| | | | միջնորդավճարներից ստացված դրամական միջոցների մուտքերը |
| | | | հիմնական միջոցների, ոչ նյութական և այլ երկարաժամկետ ակտիվների վաճառքից դրամական միջոցների մուտքերը |
| | 75 | Համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», նշվածներից որո՞նք են հանդիսանում գործառնական գործունեության արդյունքում առաջացած դրամական միջոցների հոսքերի օրինակներ. | բաժնետոմսերի կամ բաժնային այլ գործիքների թողարկումից դրամական միջոցների մուտքերը |
| | | | շահութահարկի գծով դրամական միջոցների վճարումները կամ հետստացումները |
| | | | փոխառությունների՝ դրամական միջոցներով մարումները |
| | | | ֆյուչերսային, ֆորվարդային, օպցիոն և սվոպային պայմանագրերից ստացվող դրամական միջոցների մուտքերը |
| | 76 | Համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ», հաշվապահական հաշվառման քաղաքականությունը դա | ՖՀՄՍ-ներով և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված պահանջներն ու ցուցումներն են, որոնք ընդունված են հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի կողմից |
| | | | որոշակի սկզբունքներ, հիմունքներ, եղանակներ, կանոններ, ձևեր և արարողակարգեր են, որոնք ընդունված են Կենտրոնական բանկի կողմից՝ բանկերի հաշվապահական հաշվառումը վարելու  նպատակով |
| | | | կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ դրամական արտահայտությամբ, տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով |
| | | | կազմակերպության կողմից ընդունված որոշակի սկզբունքներ, հիմունքներ, եղանակներ, կանոններ, ձևեր և արարողակարգեր են, որոնք կիրառվում են կազմակերպության կողմից ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և ներկայացնելու նպատակով |
| | 77 | Համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ», հոդվածների բացթողումները կամ ոչ ճիշտ ներկայացումները համարվում են էական, | եթե դրանք առանձին կամ միասին կարող են ազդել օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա |
| | | | եթե դրանք ազդում են վերահսկողի կողմից պատժամիջոցների կիրառման վրա |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | եթե դրանք  ազդում են օգտագործողների հաշվետվությունների կազմման վրա |
| | 78 | Համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ», նշվածներից ո՞րը չի դիտարկվում որպես հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն<br>ա) հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը այնպիսի գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների համար, որոնք իրենց բովանդակությամբ տարբերվում են նախկինում կատարված գործառնություններից և տեղի ունեցած իրադարձություններից<br>բ) նոր հաշվապահական հաշվառման քաղաքականության ընդունումը այնպիսի գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների համար, որոնք նախկինում տեղի չեն ունեցել կամ հանդիսացել են ոչ էական | «ա» |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | «ա» և «բ» |
| | | | «բ» |
| | 79 | Համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ», նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | կազմակերպությունը պետք է փոփոխի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը այն դեպքում, եթե այդ փոփոխությունը պահանջվում է որևէ ՖՀՄՍ-ով |
| | | | կազմակերպությունը պետք է հաշվառի ՖՀՄՍ-ի առաջին կիրառման արդյունքում առաջացող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը տվյալ ՖՀՄՍ-ի կոնկրետ անցումային դրույթների համաձայն |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | | | հետընթաց կիրառումը, դա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականության կիրառումն է գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների նկատմամբ այնպես, կարծես այդ քաղաքականությունը միշտ կիրառվել է |
| | 80 | Համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ», նշված պնդումներից ո՞րն է սխալ. | կազմակերպությունը պետք է փոփոխի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը այն դեպքում, եթե այդ փոփոխությունը պահանջվում է որևէ ՖՀՄՍ-ով |
| | | | կազմակերպությունը պետք է հաշվառի ՖՀՄՍ-ի առաջին կիրառման արդյունքում առաջացող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը տվյալ ՖՀՄՍ-ի կոնկրետ անցումային դրույթների համաձայն |
| | | | հոդվածների բացթողումները կամ խեղաթյուրումները համարվում են էական, եթե դրանք, առանձին կամ միասին, չեն կարող ազդել օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հետընթաց կիրառումը, դա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականության կիրառումն է գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների նկատմամբ այնպես, կարծես այդ քաղաքականությունը միշտ կիրառվել է |
| | 81 | Համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ», | հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը պետք է կիրառվի բացառապես առաջընթաց |
| | | | հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության կիրառման եղանակը կախված է վերահսկող մարմնի դիրքորոշումից |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը պետք է կիրառվի բացառապես հետընթաց |
| | 82 | Համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ», | քաղաքականության փոփոխությունից առաջացող ցանկացած ճշգրտում պետք է ներկայացվի որպես չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններից առաջացող ճշտգրտումներ չեն կատարվում, միայն ներկայացվում է համադրելի տեղեկատվություն |
| | | | քաղաքականության փոփոխությունից առաջացող ցանկացած ճշգրտում պետք է ներառվի ընթացիկ ժամանակաշրջանի զուտ շահույթը կամ վնասը որոշելիս |
| | 83 | Համաձայն ՀՀՄՍ 12-ի՝ «Շահութահարկեր», հարկի գծով ծախսը (հարկի գծով եկամուտը). | տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթի/վնասի հաշվարկում ներառված ընթացիկ հարկի մեծությունն է |
| | | | ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի հաշվարկում ներառված համախառն գումարն է՝ ընթացիկ հարկի և հետաձգված հարկի գծով |
| | | | հարկվող շահույթի մեծությունն է |
| | | | տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթի/վնասի հաշվարկում ներառված հետաձգված հարկի մեծությունն է |
| | 84 | Համաձայն ՀՀՄՍ 12-ի՝ «Շահութահարկեր», ժամանակավոր տարբերությունները կարող են լինել.<br>ա) հարկվող<br>բ) նվազեցվող<br>գ) հետաձգված<br>Նշեք առավել ամբողջական պատասխանը. | «ա» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա» և «բ» |
| | | | «բ» և «գ» |

| | | | |
|---|---|---|---|
| | 85 | Նշեք սխալ պատասխանը.<br>Համաձայն ՀՀՄՍ 12-ի՝ «Շահութահարկ», հետաձգված հարկային ակտիվը ապագա ժամանակաշրջաններում փոխհատուցման ենթակա շահութահարկի գումարներն են, կապված | նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հետ |
| | | | հարկվող ժամանակավոր տարբերությունների հետ |
| | | | չօգտագործված հարկային զեղչերը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ |
| | | | չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ |
| | 86 | Համաձայն ՀՀՄՍ 12-ի՝ «Շահութահարկ», ակտիվի կամ պարտավորության հարկային բազան | ապագա ժամանակաշրջաններում փոխհատուցման ենթակա շահութահարկերի գումարներն են |
| | | | ժամանակաշրջանի հարկվող շահույթի (հարկային վնասի) գծով վճարման (փոխհատուցման) ենթակա շահութահարկերի գումարն է |
| | | | ապագա ժամանակաշրջաններում վճարման ենթակա շահութահարկերի գումարներն են |
| | | | այդ ակտիվի կամ պարտավորության հարկային նպատակներով վերագրվող գումարն է |
| | 87 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», հիմնական միջոցները նյութական ակտիվներ են, որոնք առկա են կազմակերպությունում արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու համար և | որոնք նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով |
| | | | որոնց ձեռքբերման արժեքը ավել է 25.000 ՀՀ դրամից |
| | | | որոնք նախատեսվում է օգտագործել մինչև մեկ տարի ժամկետով և որոնց ձեռքբերման արժեքը ավել է 25.000 ՀՀ դրամից |
| | | | որոնք իրենց ծառայության ընթացքում պահպանում են իրենց բնաիրային տեսքը |
| | 88 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», նշված ակտիվներից ո՞րը չի համարվի հիմնական միջոց | նյութական ակտիվը, որը առկա է կազմակերպությունում արտադրանքի արտադրության համար, նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով և որի ձեռքբերման արժեքը պակաս է 25.000 ՀՀ դրամից |
| | | | բոլոր նշվածներն էլ կհամարվեն հիմնական միջոց |
| | | | նյութական ակտիվը, որը առկա է կազմակերպությունում վարձակալության տալու համար և որը նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով |
| | | | նյութական ակտիվը, որը առկա է կազմակերպությունում այլ կողմերին վարձակալության տալու նպատակներով և նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով և որի ձեռքբերման արժեքը ավել է 25.000 ՀՀ դրամից |

| | | | |
|---|---|---|---|
| | 89 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», նշված պնդումներից ո՞րն է սխալ. | երբ հիմնական միջոցների միավորը վերագնահատվում է, ապա հիմնական միջոցների ամբողջ դասը, որին պատկանում է այդ ակտիվը, նույնպես պետք է վերագնահատվի |
| | | | հիմնական միջոցները դրանք այն նյութական ակտիվներ են, որոնք իրենց ծառայության ընթացքում պահպանում են իրենց բնաիրային տեսքը |
| | | | հիմնական միջոցների միավորը ճանաչվում է որպես ակտիվ, երբ դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել |
| | | | հիմնական միջոցները դրանք այն նյութական ակտիվներ են, որոնք նախատեսվում են օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով |
| | 90 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», հիմնական միջոցների դասերի օրինակ չի հանդիսանում. | գրասենյակային գույքը |
| | | | հեղինակային իրավունքը |
| | | | հողամասերը և շենքերը |
| | | | մեքենա-սարքավորումներ |
| | 91 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», ո՞ր պնդումն է ճիշտ | Հիմնական միջոցի միավորը, համաձայն սկզբնական արժեքի մոդելի, որպես ակտիվ ճանաչելուց հետո, պետք է հաշվառվի իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները |
| | | | Եթե հիմնական միջոցների միավորը վերագնահատվում է, ապա հիմնական միջոցների ամբողջ դասը, որին պատկանում է այդ ակտիվը, նույնպես պետք է վերագնահատվի |
| | | | բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | | | Հիմնական միջոցի միավորը (համաձայն վերագնահատման մոդելի), որի իրական արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել, որպես ակտիվ ճանաչելուց հետո պետք է հաշվառվի վերագնահատված գումարով, որն իրենից ներկայացնում է դրա իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները |
| | 92 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», երբ անհրաժեշտ է դառնում մաշվածության հաշվարկման մեթոդի փոփոխությունը, այն պետք է դիտվի | որպես փոփոխություն հաշվապահական հաշվառման գնահատականներում |
| | | | որպես փոփոխություն հաշվապահական հաշվառման գնահատականներում, և նախորդ ժամանակաշրջանների համար հաշվարկված մաշվածության գումարները պետք է վերահաշվարկվեն՝ ըստ նոր մեթոդի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | որպես փոփոխություն հաշվապահական հաշվառման գնահատումներում, և նախորդ, ընթացիկ ու հետագա ժամանակաշրջանների համար հաշվարկվող մաշվածության գումարները պետք է ճշգրտվեն |
| | | | որպես փոփոխություն հաշվապահական հաշվառման քաղաքականությունում, և ընթացիկ ու հետագա ժամանակաշրջանների համար հաշվարկվող մաշվածության գումարները պետք է ճշգրտվեն |
| | 93 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը, | հատուցման իրական արժեքը ակտիվի ձեռքբերման պահի դրությամբ, կամ, որտեղ կիրառելի է, ակտիվի սկզբնապես ճանաչման ժամանակ նրան վերագրված գումարն է |
| | | | ակտիվի ձեռքբերման կամ կառուցման ժամանակ վճարված դրամական միջոցների կամ դրանց համարժեքների գումարն է |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | այն գումարն է, որով ակտիվը ճանաչվում է կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները հանելուց հետո |
| | 94 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», նշված պնդումներից ո՞րն է սխալ. | Մաշվող գումարը ակտիվի ինքնարժեքն է կամ դրան փոխարինող այլ գումարն է հանած դրա մնացորդային արժեքը |
| | | | Սկզբնական արժեքը ակտիվի ձեռք բերման կամ կառուցման ժամանակ վճարված դրամական միջոցների կամ դրանց համարժեքների գումարն է |
| | | | Մաշվածությունը ակտիվի մաշվող գումարի պարբերական բաշխումն է դրա օգտակար ծառայության ընթացքում |
| | | | Հաշվեկշռային արժեքը ակտիվի ձեռքբերման կամ կառուցման ժամանակ վճարված դրամական միջոցների կամ դրանց համարժեքների գումարն է |
| | 95 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», հիմնական միջոցի իրական արժեքը, դա | այն գումարն է, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը |
| | | | այն արժեքն է, որով ակտիվը ճանաչվում է կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները հանելուց հետո |
| | | | այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց |
| | | | այն գումարն է, որով ակտիվը ճանաչվում և ներառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում |
| | 96 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», հիմնական միջոցի փոխհատուցվող գումարը | իրենից ներկայացնում է ակտիվի իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | այն գումարն է, որով ակտիվը ճանաչվում է կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները հանելուց հետո |
| | | | այն գումարն է, որով ակտիվը կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև «անկախ կողմերի միջև գործարքում» |
| | 97 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», նշված ակտիվներից ո՞րն է համարվում հիմնական միջոց<br>ա) նյութական ակտիվը, որը առկա է կազմակերպությունում արտադրանքի արտադրության համար, նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով և որի ձեռքբերման արժեքը պակաս է 25.000 ՀՀ դրամից<br>բ) նյութական ակտիվը, որը առկա է կազմակերպությունում վարչական նպատակներով օգտագործելու համար և նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով և որի ձեռքբերման արժեքը ավել է 25.000 ՀՀ դրամից<br>գ) նյութական ակտիվը, որը առկա է կազմակերպությունում վարձակալության տալու համար և որը նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով | «ա» |
| | | | «ա» և «բ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «բ» և «գ» |
| | 98 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», սկզբնական արժեքի մոդելում՝ հիմնական միջոցները որպես ակտիվ սկզբնական ճանաչումից հետո պետք է. | հաշվառվեն սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | կամ սկզբնական արժեքով, կամ վերագնահատված գումարով |
| | | | հաշվառվեն վերագնահատված գումարով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները |
| | 99 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», ո՞ր պնդումն է ճիշտ. | Հողամասը և այդ հողամասի վրա գտնվող շենքերն ու շինությունները առանձին ակտիվներ են և հաշվառման նպատակով դիտվում են առանձին-առանձին, նույնիսկ այն դեպքում, երբ դրանք ձեռք են բերվում միասին |
| | | | Հողամասը և այդ հողամասի վրա գտնվող շենքերն ու շինությունները առանձին ակտիվներ են և հաշվառման նպատակով դիտվում են առանձին-առանձին, սակայն եթե վերջիններս ձեռք են բերվում միասին ապա հաշվառվում են որպես մեկ ակտիվ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | Հողամասը և այդ հողամասի վրա գտնվող շենքերն ու շինությունները առանձին ակտիվներ չեն և հաշվառման նպատակով դիտվում են միասին, նույնիսկ այն դեպքում, երբ դրանք ձեռք են բերվում առանձին - առանձին |

| | | | |
|---|---|---|---|
| | 100 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», եթե ակտիվների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, ապա աճը պետք է ճանաչվի. | բացառապես համապարփակ ֆինանսական արդյունքներում |
| | | | այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և կուտակվի սեփական կապիտալի վերագնահատումից արժեքի աճի հոդվածում, եթե այդ աճը չի վերականգնում նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | շահույթում կամ վնասում |
| | 101 | Համաձայն ՀՀՄՍ 16-ի՝ «Հիմնական միջոցներ», հիմնական միջոցների միավորի ինքնարժեքն ընդգրկում է | գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում |
| | | | հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև իր զբաղեցրած տեղանքի վերականգնման սկզբնապես գնահատված ծախսումների գումարը |
| | 102 | Բանկը 2002թ հունվարի 1-ին ձեռք է բերել համակարգիչ, որի օգտակար ծառայության ժամկետը սահմանվել է 5 տարի: 2003 թվականի հունվարի 1-ին համակարգչի օգտակար ծառայության ժամկետը վերանայվել է, որի համաձայն գնահատվել է 2 տարի: Այլ հավասար պայմաններում. | համակարգչի մաշվածության գումարը 2003թ. համար կկազմի ավելի փոքր գումար քան նախորդ տարի և կտրվեն համապատասխան ճշգրտումներ 2002 թ. ֆինանսական հաշվետվություններում |
| | | | համակարգչի մաշվածության գումարը 2003թ. համար կկազմի ավելի մեծ գումար, քան նախորդ տարի և 2002 թ.-ի ֆինանսական հաշվետվություններում համապատասխան ճշգրտումներ չեն տրվի |
| | | | ճիշտ տարբերակը նշված չէ |
| | | | համակարգչի մաշվածության գումարը 2003թ. համար կկազմի ավելի մեծ գումար, քան նախորդ տարի և կտրվեն համապատասխան ճշգրտումներ 2002 թ. ֆինանսական հաշվետվություններում |
| | 103 | Համաձայն հաշվային պլանի, հիմնական միջոցների մաշվածության հաշվեգրումը ձևակերպվում է | Դտ - հիմնական միջոցների մաշվածություն<br>Կտ - հիմնական միջոցներ, |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | Դտ - հիմնական միջոցների մաշվածություն<br>Կտ - մաշվածության գծով ծախսեր |
| | | | Դտ - մաշվածության գծով ծախսեր<br>Կտ - հիմնական միջոցների մաշվածություն |
| | 104 | Համաձայն հաշվային պլանի, էտարված հիմնական միջոցների կուտակված մաշվածության գումարները դուրս գրելիս ձևակերպվում է. | Դտ - հիմնական միջոց<br>Կտ - հիմնական միջոցների մաշվածություն |
| | | | Դտ - հիմնական միջոցների մաշվածություն<br>Կտ - մաշվածության գծով ծախսեր |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Դտ - հիմնական միջոցների մաշվածություն<br>Կտ - հիմնական միջոց |
| | | | Դտ - մաշվածության գծով ծախսեր<br>Կտ - հիմնական միջոց |
| | 105 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը.<br>վաճառված հիմնական միջոցների կուտակված արժեզրկման գումարները դուրսգրելիս ձևակերպվում է. | Դտ - հիմնական միջոցների արժեզրկում<br>Կտ - հիմնական միջոց |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | Դտ - արժեզրկման գծով ծախս<br>Կտ - հիմնական միջոցների արժեզրկում |
| | | | Դտ - հիմնական միջոցների արժեզրկում<br>Կտ - արժեզրկման գծով ծախս |
| | 106 | Բանկը ձեռք է բերել հիմնական միջոց, որի համար մատակարարին վճարել է 200 միավոր: Հիմնական միջոցը տեղակայելու համար բանկը կատարել է որոշակի ծախսեր՝ 50 միավորի չափով: Այդ դեպքում բանկն իր հաշվապահական  գրքերում կճանաչի. | հիմնական միջոցը՝ 250 միավորով |
| | | | հիմնական միջոցը՝ 150 միավորով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | | | հիմնական միջոցը՝ 200 միավորով և հաշվետու ժամանակաշրջանի ծախս՝ 50 միավորով |
| | 107 | Բանկը 01.01.2000թ ձեռք է բերել սարքավորում 5000 միավորով, որի օգտակար ծառայության ժամկետը գնահատվել է 7 տարի, մնացորդային արժեքը 500 միավոր: Սարքավորման մաշվածությունը պետք է հաշվարկվի գծային մեթոդով: 2003թ համար սարքավորման մաշվածության գումարը կկազմի. | 482 միավոր |
| | | | 892 միավոր: |
| | | | 643 միավոր |
| | | | 714 միավոր |
| | 108 | Բանկը 01.01.2001թ. ձեռք է բերել շենք 10000 միավորով: Մնացորդային արժեքը գնահատվել է 0 միավոր: Շենքի մաշվածության հաշվարկը կատարվում է գծային մեթոդով: 2004թ ընթացքում բանկը շենքի վրա կատարել է ընթացիկ վերանորոգում, որի համար ծախսվել է 1000 միավոր: 2004 թ-ից սկսած շենքի տարեկան մաշվածության գումարը այլ հավասար պայմաններում | կփոքրանա |
| | | | սկզբում կավելանա, հետո կփոքրանա |
| | | | կավելանա |
| | | | չի փոփոխվի |
| | 109 | Բանկը  01.01.2000թ. ձեռք է բերել շենք՝ 3000 միավոր արժեքով, օգտակար ծառայության ժամկետը գնահատվել է 20 տարի, մնացորդային արժեք՝ 0 միավոր: 01.01.2002թ. օրենքով սահմանված կարգով վերագնահատման իրականացման արդյունքում շենքի արժեքը ավելացել է 10 տոկոսով: Բանկն ընտրել է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հարկման նպատակով համախառն եկամտից հիմնական միջոցի գծով մաշվածության գումարի նվազեցվող մեծությունը 2003 թվականի համար կկազմի | 220 միավոր |
| | | | 143 միավոր: |
| | | | 165 միավոր |
| | | | 200 միավոր |

| | | | |
|---|---|---|---|
| | 110 | Բանկը ձեռք է բերել շենք՝ 5000 միավորով, որի օգտակար ծառայության ժամկետը գնահատվել է 20 տարի: Ամորտիզացիայի հաշվարկը բանկը կատարում է մաշվածության հաշվարկման նվազող մնացորդի մեթոդով (մաշվածության տոկոսադրույքը՝ 10%): Հարկվող շահույթն որոշելիս համախառն եկամտից նվազեցվող գումարը շենքի մաշվածության գծով 2-րդ տարվա համար կկազմի | 250 միավոր |
| | | | 450 միավոր |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | 500 միավոր |
| | 111 | Նշել ճիշտ պատասխանը<br>Հիմնական միջոցի սկզբնական արժեքը՝ 140 միավոր է, մաշվածության գումարը՝ 50 միավոր: Հիմնական միջոցի իրական արժեքը նվազել է 10% չափով: Հիմնական միջոցի վերագնահատումն (համամասնության մեթոդով) արտացոլելու համար կտրվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները | Դտ - հիմնական միջոց 14 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների վերագնահատումից համապարփակ կորուստներ 14 միավոր<br>և<br>Դտ - հիմնական միջոցների վերագնահատումիցհամապարփակ կորուստներ 5 միավոր<br>Կտ - հիմնական միջոցի մաշվածություն 5 միավոր<br>է<br>Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 9 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների վերագնահատումից համապարփակ կորուստներ 9 միավոր |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | Դտ - հիմնական միջոց 14 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 14 միավոր<br>և<br>Դտ - հիմնական միջոցի վերագնահատման պահուստ 5 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների մաշվածություն 5 միավոր |
| | | | Դտ - հիմնական միջոցների վերագնահատումից կորուստներ 14 միավոր<br>Կտ - հիմնական միջոց 14 միավոր<br>և<br>Դտ - հիմնական միջոցի մաշվածություն 5 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների վերագնահատումիցհամապարփակ կորուստներ 5 միավոր<br>է<br>Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 9 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների վերագնահատումից համապարփակ կորուստներ 9 միավոր |

| | | | |
|---|---|---|---|
| | 112 | Նշել ճիշտ պատասխանը<br>Հիմնական միջոցի սկզբնական արժեքը՝ 200 միավոր է, մաշվածության գումարը՝ 50 միավոր, հիմնական միջոցի նախորդ դրական վերագնահատումից հիմնական միջոցների վերագնահատման պահուստում գրանցված է 20 միավոր: Հետագայում հիմնական միջոցի իրական արժեքը նվազում է 10%-ի չափով: Հիմնական միջոցի (զուտ մեթոդով) վերագնահատումն արտացոլելու համար կտրվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները | Դտ - հիմնական միջոցի մաշվածություն 50 միավոր<br>Կտ - հիմնական միջոց 50 միավոր<br>և<br>Դտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 15 միավոր<br>Կտ - հիմնական միջոց<br>է<br>Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների վերագնահատումից համապարփակ օգուտներ 15 միավոր |
| | | | Դտ - հիմնական միջոցի մաշվածություն 50 միավոր<br>Կտ - հիմնական միջոց 50 միավոր<br>և<br>Դտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 15 միավոր<br>Կտ - հիմնական միջոց 15 միավոր<br>է<br>Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների վերագնահատումից համապարփակ կորուստներ 15 միավոր |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | Դտ - հիմնական միջոց 50 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների մաշվածություն 50 միավոր<br>և<br>Դտ - հիմնական միջոցի վերագնահատման պահուստ 15 միավոր<br>Կտ - հիմնական միջոց 15 միավոր |
| | 113 | Նշել ճիշտ պատասխանը<br>Հիմնական միջոցի սկզբնական արժեքը՝ 300 միավոր է, մաշվածության գումարը՝ 150 միավոր, հիմնական միջոցի նախորդ դրական վերագնահատումից հիմնական միջոցների վերագնահատման պահուստում գրանցված է 50 միավոր: Հետագայում հիմնական միջոցի իրական արժեքը նվազում է 10%-ի չափով: Հիմնական միջոցի վերագնահատումն (համամասնության մեթոդով) արտացոլելու համար կտրվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները | Դտ - կորուստներ հիմնական միջոցների վերագնահատումից 30 միավոր<br>Կտ - հիմնական միջոց 30 միավոր,<br>և<br>Դտ - հիմնական միջոցի մաշվածություն 15 միավոր<br>Կտ -հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Դտ - հիմնական միջոց 30 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների մաշվածություն 30 միավոր<br>և<br>Դտ -հիմնական միջոցի մաշվածություն 15 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների վերագնահատումից համապարփակ կորուստներ 15 միավոր<br>և<br>Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր<br>Կտ - հիմնական միջոց 15 միավոր |
| | | | Դտ - հիմնական միջոցների վերագնահատումից համապարփակ կորուստներ 30 միավոր<br>Կտ - հիմնական միջոց 30 միավոր<br>և<br>Դտ - հիմնական միջոցի մաշվածություն 15 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների վերագնահատումից համապարփակ կորուստներ 15 միավոր<br>է<br>Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների վերագնահատումից համապարփակ կորուստներ 15 միավոր |
| | 114 | Նշել ճիշտ պատասխանը<br>Հիմնական միջոցի սկզբնական արժեքը՝ 200 միավոր է, մաշվածության գումարը՝ 50 միավոր, հիմնական միջոցի նախորդ վերագնահատման արդյունքում կորուստներ հիմնական միջոցների վերագնահատումից հաշվում գրանցված է 50 միավոր: Հետագայում հիմնական միջոցի իրական արժեքը բարձացել է 10%-ի չափով: Հիմնական միջոցի վերագնահատումն (համամասնության մեթոդով) արտացոլելու համար կտրվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները | Դտ -հիմնական միջոցներ 20 միավոր<br>Կտ -հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 20 միավոր<br>և<br>Դտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 5 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների մաշվածություն 5 միավոր<br>և<br>Դտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 15 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր |
| | | | Դտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 20 միավոր<br>Կտ - հիմնական միջոց 20 միավոր<br>և<br>Դտ - հիմնական միջոցի մաշվածություն 5 միավոր<br>Կտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 5 միավոր<br>և<br>Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր<br>Կտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 15 միավոր |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | Դտ - հիմնական միջոց 20 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների մաշվածություն 20 միավոր, և,<br>Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 5 միավոր<br>Կտ - հիմնական միջոց 5 միավոր |
| | 115 | Նշել ճիշտ պատասխանը<br>Հիմնական միջոցի սկզբնական արժեքը՝ 200 միավոր է, մաշվածության գումարը՝ 50 միավոր, հիմնական միջոցի նախորդ բացասական վերագնահատման արդյունքում Կորուստներ հիմնական միջոցների վերագնահատումից հաշվում գրանցված է 50 միավոր: Հետագայում հիմնական միջոցի իրական արժեքը բարձացել է 10%-ի չափով: Հիմնական միջոցի վերագնահատումն (զուտ մեթոդով) արտացոլելու համար կտրվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները | Դտ - հիմնական միջոցներ 50 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների վերագնահատումից օգուտներ 50 միավոր<br>և<br>Դտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 15 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների մաշվածություն 15 միավոր<br>և<br>Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր<br>Կտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 15 միավոր |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | Դտ - հիմնական միջոցի մաշվածություն 50 միավոր<br>Կտ - հիմնական միջոց 50 միավոր<br>և<br>Դտ - հիմնական միջոց 15 միավոր<br>Կտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 15 միավոր<br>և<br>Դտ - հիմնական միջոցի վերագնահատումից համապարփակ օգուտներ 15 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր |
| | | | Դտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 50 միավոր<br>Կտ - հիմնական միջոց 50 միավոր<br>և<br>Դտ - հիմնական միջոցի մաշվածություն 15 միավոր<br>Կտ - հիմնական միջոցների վերագնահատման պահուստ 15 միավոր |
| | 116 | Բանկը 01.01.2002թ ձեռք է բերել սարքավորում 7400 միավորով, որի օգտակար ծառայության ժամկետը գնահատվել է 8 տարի, մնացորդային արժեքը 500 միավոր: Սարքավորման մաշվածությունը պետք է հաշվարկվի գծային մեթոդով: Առ 01.01.2006թ սարքավորման կուտակված մաշվածության գումարը կկազմի. | 2587.5 միավոր |
| | | | 5175 միավոր |
| | | | 4312.5 միավոր: |
| | | | 3450 միավոր |

| | | | |
|---|---|---|---|
| | 117 | Բանկը 01.01.2002թ. ձեռք է բերել շենք 8800 միավորով, որի օգտակար ծառայության ժամկետը գնահատվել է 20 տարի: Մնացորդային արժեքը գնահատվել է 300 միավոր: 2004թ ընթացքում բանկը շենքի վրա կատարել է ընթացիկ վերանորոգում, որը ավարտվել է 31.12.2004 և որի համար ծախսվել է 1000 միավոր: Շենքի մաշվածության հաշվարկը կատարվում է գծային մեթոդով: Մնացած հավասար պայմաններում, առ 01.01.2006թ շենքի կուտակված մաշվածության գումարը կկազմի. | 1900միավոր |
| | | | 2125 միավոր |
| | | | 1700 միավոր |
| | | | 2375 միավոր |
| | 118 | Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածի ավարտին արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն | կիրառելով գործարքի օրվա փոխանակման փոխարժեքը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | կիրառելով փակման փոխարժեքը |
| | | | կիրառելով տվյալ ամսվա միջին ամսական փոխարժեքը |
| | 119 | Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», ֆինանսական վիճակի մասին ներկայացված յուրաքանչյուր հաշվետվության ակտիվները և պարտավորությունները պետք է | վերահաշվարկվեն այդ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ առկա փակման փոխարժեքով |
| | | | արտարժույթով դրամային հոդվածները պետք է ներկայացվեն (վերահաշվարկվեն)՝ կիրառելով գործարքի օրվա փոխանակման փոխարժեքը, իսկ արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է ներկայացվեն կիրառելով փակման փոխարժեքը |
| | | | արտարժույթով դրամային հոդվածները և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է ներկայացվեն (վերահաշվարկվեն)՝ կիրառելով գործարքի օրվա փոխանակման փոխարժեքը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 120 | Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», նշված պնդումներից ո՞րն է ճիշտ | սփոթ փոխանակման փոխարժեքը անհապաղ փոխանակման համար մատչելի փոխարժեքն է |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | | | ներկայացման արժույթը այն արժույթն է, որով ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են |
| | | | իրական արժեքը այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց |

| | | | |
|---|---|---|---|
| | 121 | Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», արտարժույթով գործարքն այնպիսի գործարք է, որը սահմանված է արտարժույթով, կամ որը պահանջում է արտարժույթով կարգավորում, ներառյալ այն գործարքները, որոնք առաջանում են, երբ կազմակերպությունը.<br>ա) գնում կամ վաճառում է ապրանքներ կամ ծառայություններ, որոնց գինը սահմանված է արտարժույթով<br>բ) այլ ձևով ձեռք է բերում կամ օտարում է ակտիվներ, ստանձնում կամ մարում է պարտավորություններ, որոնք սահմանված են արտարժույթով<br>գ) ստանում կամ հատկացնում է միջոցներ, որոնց վճարման կամ ստացման ենթակա գումարները սահմանված են արտարժույթով | «ա» և «բ» |
| | | | «ա» և «գ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | 122 | Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», դրամային հոդվածներ են<br>ա) առկա դրամական միջոցները<br>բ) դրամական միջոցներով վճարման ենթակա նպաստներ և աշխատակիցների այլ հատուցումները<br>գ) ապրանքների և ծառայությունների դիմաց վճարված կանխավճարները<br>դ) որպես պարտավորություն ճանաչվող դրամական միջոցներով վճարման ենթակա շահաբաժինները | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա», «բ», «գ» և «դ» |
| | | | «ա», «բ» և «դ» |
| | | | «բ», «գ» և «դ» |
| | 123 | Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», փոխարժեքային տարբերությունը դա | տարբերություն է, որն առաջանում է մեկ արժույթով մեկ այլ արժույթի միևնույն քանակը տարբեր փոխարժեքներով վերահաշվարկելու արդյունքում |
| | | | դրամային հոդվածներ են, որոնք առաջանում են դրամային գործառնություններից, և առկա է գործառնության ամսաթվի և մարման ամսաթվի միջև փոխանակման փոխարժեքի փոփոխություն |
| | | | երբ դրամային հոդվածները փոխարինվում են արտարժութային հոդվածներով |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 124 | Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», արտերկրյա ստորաբաժանման վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերությունները, որոնք նախկինում ճանաչվել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ | սեփական կապիտալից չեն վերադասակարգվում որպես շահույթ կամ վնաս՝ մինչև ստորաբաժանման օտարումը |
| | | | պարբերաբար բաշխվի ակտիվի օգտակար ծառայության ընթացքում |
| | | | ճշգրտվեն արտերկրյա միավորի հաշվեկշռային արժեքի իջեցմանը համապատասխան |
| | | | վերանայվի առնվազն տարին մեկ անգամ |

| | | | |
|---|---|---|---|
| | 125 | Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», ֆունկցիոնալ արժույթը | այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ կազմակերպությունը իրականացնում է գործունեություն |
| | | | այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ կազմակերպությունը պատրաստվում է իրացնել իր կողմից արտադրված արտադրանքը |
| | | | երկու փոխարժեքների փոխանակման հարաբերակցությունն է |
| | | | արժույթ է, որով ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են |
| | 126 | Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», ներկայացման արժույթը | այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ կազմակերպությունը իրականացնում է գործունեություն |
| | | | արժույթ է, որով ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են |
| | | | այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ կազմակերպությունը պատրաստվում է իրացնել իր կողմից արտադրված արտադրանքը |
| | | | մեկ արժույթի արտահայտումն է մեկ այլ արժույթով |
| | 127 | Նշել սխալ պատասխանը:<br>Համաձայն ՀՀՄՍ 21-ի՝ «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքները», | փոխարժեքային տարբերությունը առաջանում է մեկ արժույթով մեկ այլ արժույթի միևնույն քանակը տարբեր փոխանակման փոխարժեքներով վերահաշվարկելու արդյունքում |
| | | | փոխանակման փոխարժեքը երկու արժույթների փոխանակման հարաբերակցությունն է |
| | | | փոխարժեքային տարբերությունը առաջանում է մեկ արժույթով մեկ այլ արժույթի միևնույն քանակը փոխանակելու արդյունքում |
| | | | արտարժույթը արժույթ է, որը տարբերվում է կազմակերպության ֆունկցիոնալ արժույթից |
| | 128 | ՀՀ ԿԲ հրապարակած հաշվարկային փոխարժեքի նվազման դեպքում արտարժույթով ակտիվների վերագնահատումը ձևակերպվում է. | Դտ - համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ<br>Կտ - արտարժույթի վերագնահատման պահուստ |
| | | | Դտ - համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ<br>Կտ - արտարժույթի վերագնահատումից օգուտներ |
| | | | Դտ - արտարժույթի վերագնահատումից կորուստներ<br>Կտ - համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ |
| | | | Դտ - արտարժույթի վերագնահատման պահուստ<br>Կտ - համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ |
| | 129 | ՀՀ ԿԲ հրապարակած հաշվարկային փոխարժեքի բարձրացման դեպքում արտարժույթով ակտիվների վերագնահատումը ձևակերպվում է | Դտ - համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ<br>Կտ- արտարժույթի վերագնահատման պահուստ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Դտ - համապատասխան  արտարժույթով ակտիվի հաշիվ<br>Կտ - արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ |
| | | | Դտ - արտարժույթի վերագնահատումից կորուստներ<br>Կտ -  համապատասխան արտարժույթով ակտիվի հաշիվ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 130 | ԿԲ հաշվարկային փոխարժեքը մեկ հաշվետու ժամանակաշրջանից մյուսը 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ 410 դրամից բարձրացել է 419 դրամի: Առևտրային բանկի ակտիվների արտարժույթով դրամային հոդվածների վերագնահատումը արտացոլելու համար կտրվեն հետևյալ  հաշվապահական ձևակերպումները | Դտ - արտարժույթով ակտիվային հաշիվներ 9 դր<br>Կտ - արտարժույթի վերագնահատումից  ստացված օգուտներ 9 դր |
| | | | Դտ - արտարժույթի վերագնահատումից  կորուստներ 419 դր<br>Կտ - արտարժույթով ակտիվային հաշիվներ 419 դր |
| | | | Դտ - արտարժույթով ակտիվային հաշիվներ 419 դր<br>Կտ - արտարժույթի վերագնահատումից  ստացված օգուտներ 419 դր |
| | | | Դտ - արտարժույթի վերագնահատումից  կորուստներ  9 դր<br>Կտ - արտարժույթով ակտիվային հաշիվներ 9 դր |
| | 131 | ԿԲ հաշվարկային փոխարժեքը մեկ հաշվետու ժամանակաշրջանից մյուսը 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ 410 դրամից բարձրացել է 419 դրամի: Առևտրային բանկի պարտավորությունների արտարժույթով դրամային հոդվածների վերագնահատումը արտացոլելու համար կտրվեն հետևյալ  հաշվապահական ձևակերպումները | Դտ - արտարժույթով պարտավորության հաշիվներ 9 դր<br>Կտ - արտարժույթի վերագնահատումից  ստացված օգուտներ 9 դր |
| | | | Դտ - արտարժույթով պարտավորության հաշիվներ 419 դր<br>Կտ - արտարժույթի վերագնահատումից  ստացված օգուտներ 419 դր |
| | | | Դտ - արտարժույթի վերագնահատումից  կորուստներ 9 դր<br>Կտ - արտարժույթով պարտավորության հաշիվներ 9 դր |
| | | | Դտ - արտարժույթի վերագնահատումից  կորուստներ 419 դր<br>Կտ - արտարժույթով պարտավորության հաշիվներ 419 դր |
| | 132 | ԿԲ հաշվարկային փոխարժեքը մեկ հաշվետու ժամանակաշրջանից մյուսը 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ 400 դրամից նվազել է մինչև 380 դրամ: Առևտրային բանկի ակտիվային մասի արտարժույթով դրամային հոդվածների վերագնահատումը արտացոլելու համար կտրվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները | Դտ - արտարժույթով ակտիվային հաշիվներ 20 դր<br>Կտ - արտարժույթի վերագնահատումից  ստացված օգուտներ 20 դր |
| | | | Դտ - արտարժույթով ակտիվային հաշիվներ 380 դր<br>Կտ - արտարժույթի վերագնահատումից  ստացված օգուտներ 380 դր |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Դտ -արտարժույթի վերագնահատումից կորուստներ 20 դր<br>Կտ - արտարժույթով ակտիվային հաշիվներ 20 դր |
| | | | Դտ - արտարժույթի վերագնահատումից կորուստներ 380 դր<br>Կտ - արտարժույթով ակտիվային հաշիվներ 380 դր |
| | 133 | ԿԲ հաշվարկային փոխարժեքը մեկ հաշվետու ժամանակաշրջանից մյուսը 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ 500 դրամից նվազել է մինչև 495 դրամ: Առևտրային բանկի պարտավորությունների արտարժույթով դրամային հոդվածների վերագնահատումը արտացոլելու համար կտրվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները | Դտ - արտարժույթով պարտավորության հաշիվներ 5 դր<br>Կտ - արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ 5 դր |
| | | | Դտ - արտարժույթով պարտավորության հաշիվներ 495 դր<br>Կտ - արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ 495 դր |
| | | | Դտ - արտարժույթի վերագնահատումից կորուստներ 5 դր<br>Կտ - արտարժույթով պարտավորության հաշիվներ 5 դր |
| | | | Դտ - արտարժույթի վերագնահատումից կորուստներ 495 դր<br>Կտ - արտարժույթով պարտավորության հաշիվներ 495 դր |
| | 134 | Համաձայն ՀՀՄՍ 23-ի՝ «Փոխառության ծախսումներ», փոխառության ծախսումները կարող են ներառել.<br>ա) ֆինանսական վարձակալությանը վերաբերող ֆինանսական վճարը (տոկոսը)՝ ճանաչված համաձայն «Վարձակալություն» ՀՀՄՍ 17-ի<br>բ) փոխառության տրամադրման հետ կապված բոլոր տոկոսային վճարները<br>գ) փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են արտարժույթով փոխառություններիցէ այնքանով, որքանով դրանք դիտվում են որպես տոկոսների գծով ծախսումների ճշգրտում<br>դ) փոխառության ներգրավման և/կամ տրամադրման հետ կապված բոլոր գործառնական ծախսումները | «ա» և «բ» |
| | | | «ա», «բ» և «դ» |
| | | | «ա» և «գ» |
| | | | «բ» և «դ» |
| | 135 | Նշեք սխալ տարբերակը.<br>Համաձայն ՀՀՄՍ 23-ի՝ «Փոխառության ծախսումներ», փոխառության ծախսումներ են. | արդյունավետ տոկոսային մեթոդի կիրառմամբ հաշվարկված տոկոսային ծախսը |
| | | | ֆինանսական վարձակալությանը վերաբերող ֆինանսական վճարները |
| | | | արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետևանքով այդ արտարժույթով ստացված փոխառությունների վերագնահատման բացասական արդյունքները |
| | | | փոխառությունների ստացման հետ կապված ծախսումները: |

| | | | |
|---|---|---|---|
| | 136 | Համաձայն ՀՀՄՍ 23-ի՝ «Փոխառության ծախսումներ», կապիտալացման համար մեկնարկի ամսաթիվը այն ամսաթիվն է, երբ կազմակերպությունը առաջին անգամ բավարարում է հետևյալ պայմանին (ներին)՝<br>ա) ակտիվի համար կատարում է ծախքեր<br>բ) սկսվում է եկամուտների ներհոսքը դեպի կազմակերպություն<br>գ) կատարում է փոխառության ծախսումներ<br>դ) ձեռնարկում է այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար | «ա» և «բ» |
| | | | «ա» և «գ» |
| | | | «բ» և «դ» |
| | | | «ա», «գ» և «դ» |
| | 137 | Համաձայն ՀՀՄՍ 23-ի՝ «Փոխառության ծախսումներ», կազմակերպությունը փոխառության ծախսումների կապիտալացումը պետք է կասեցնի և սկսի դրանց ծախս ճանաչումը, երբ | որակավորվող ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար անհրաժեշտ աշխատանքներն ըստ էության կատարված են |
| | | | կապիտալացումը չի կասեցվում |
| | | | երկարատև ժամանակահատվածի ընթացքում ակտիվի վրա կատարվող աշխատանքներն ընդհատվում են |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 138 | Համաձայն ՀՀՄՍ 23-ի՝ «Փոխառության ծախսումներ», փոխառության ծախսումները, որոնք պետք է կազմակերպության կողմից կապիտալացվեն որպես այդ ակտիվի արժեքի մաս,<br>ա) անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը<br>բ) անմիջականորեն վերագրելի են կառուցմանը<br>գ) անմիջականորեն վերագրելի են արտադրությանը<br>դ) անմիջականորեն վերագրելի են ապագա վաճառքի ծախսումներին | «ա» և «բ» |
| | | | «ա», «բ», «գ» և «դ» |
| | | | «ա», «բ» և «դ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | 139 | Համաձայն ՀՀՄՍ 23-ի՝ «Փոխառության ծախսումներ», փոխառության ծախսումները. | փոխառու միջոցների ստացման հետ կապված՝ բացառապես տոկոսների վճարման ծախումներն են, որոնք կատարում է կազմակերպությունը |
| | | | կազմակերպության բոլոր գործառնական ծախսերն են՝ կապված փոխառության տրամադրման և/կամ ստացման հետ |
| | | | տոկոսների վճարման և այլ ծախսումներն են, որոնք կազմակերպությունը կատարում է՝ կապված փոխառու միջոցների ստացման հետ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 140 | Համաձայն ՀՀՄՍ 27-ի՝ «Առանձին ֆինանսական հաշվետվություններ», համախմբված ֆինանսական հաշվետվությունները դրանք՝ | չվերահսկվող բաժնեմասի սեփականատերերի համաձայնությամբ խմբի՝ որպես մեկ կազմակերպության կողմից ներկայացվող ֆինանսական հաշվետվություններն են |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | այն ֆինանսական հաշվետվություններ են, որոնք արտացոլում են մայր կազմակերպության ֆինանսական վիճակի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը, անկախ խմբի կազմում գտնվող առանձին իրավաբանական անձանց գործունեության ոլորտի իրավական սահմանափակումների |
| | | | խմբի ֆինանսական հաշվետվություններն են, որտեղ մայր կազմակերպության և դուստր կազմակերպությունների ակտիվները, պարտավորությունները, սեփական կապիտալը, եկամուտները և ծախսերը, ինչպես նաև դրամական միջոցների հոսքերը ներկայացվում են որպես մեկ տնտեսական կազմակերպության համար ներկայացվող ֆինանսական հաշվետվություններ |
| | 141 | Համաձայն ՀՀՄՍ 27-ի՝ «Առանձին ֆինանսական հաշվետվություններ», առանձին ֆինանսական հաշվետվություններում ներդրումները դուստր և ասոցիացված կազմակերպություններում, ինչպես նաև համատեղ ձեռնարկումներում պետք է հաշվառվեն.<br>ա) բաժնեմասնակցության մեթոդով<br>բ) ինքնարժեքով<br>գ) իրական արժեքից և ինքնարժեքից նվազագույնով<br>դ) համաձայն ՖՀՄՍ 9-ի | «ա» և «բ» |
| | | | «ա», «բ» և «դ» |
| | | | «ա» և «գ» |
| | | | «ա», «բ», «գ» և «դ» |
| | 142 | Համաձայն ՀՀՄՍ 27-ի՝ «Առանձին ֆինանսական հաշվետվություններ», առանձին ֆինանսական հաշվետվություններում դուստր և ասոցիացված կազմակերպություններից, ինչպես նաև համատեղ ձեռնարկումներից ստացվող շահաբաժինները<br>ա) ճանաչվում են , երբ ձևավորվում է շահաբաժինների ստացման իրավունքը<br>բ) ճանաչվում են եկամուտներում/ծախսերում, բացառությամբ ներդրման բաժնեմասնակցության մեթոդով հաշվառման դեպքի<br>գ) ճանաչվում են եկամուտներում/ծախսսերում՝ անկախ ներդրման հաշվառման մեթոդի<br>դ) ճանաչվում են ուղղակիորեն սեփական կապիտալում | «ա» և «բ» |
| | | | «ա», «բ» և «դ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «բ» և «գ» |
| | 143 | Համաձայն ՀՀՄՍ 28-ի, «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում», ասոցիացված կազմակերպություններում ներդրումները բաժնեմասնակցության մեթոդով հաշվառման ժամանակ շահաբաժինները հայտարարելուց հետո, ներդրողը ձևակերպվում է | Դտ - էտացվելիք շահաբաժիններ<br>Կտ - եկամուտ շահաբաժիններից |
| | | | Դտ - դրամական միջոցներ<br>Կտ - էտացվելիք շահաբաժիններ |
| | | | Դտ - եկամուտ շահաբաժիններից<br>Կտ- էտացվելիք շահաբաժիններ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Դտ - էտացվելիք շահաբաժիններ<br>Կտ - համապատասխան ներդրման հաշիվ |
| | 144 | Համաձայն ՀՀՄՍ 28-ի, «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում», ո՞ր տարբերակներն են բնորոշ բաժնեմասնակցության մեթոդով հաշվառման համար.<br>ա) ներդրումը սկզբնապես ճանաչվում է ինքնարժեքով<br>բ) հետագա չափումների շրջանակում ներդրումը ճշգրտվում է ձեռքբերումից հետո ներդրման օբյեկտի զուտ ակտիվներում ներդրողի բաժնեմասի փոփոխությունների չափով<br>գ) ներդրումից ստացվող շահաբաժինները ավելացնում են ներդրման հաշվեկշռային արժեքը | «ա» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա» և «բ» |
| | 145 | Համաձայն ՀՀՄՍ 28-ի՝ «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում», կազմակերպություններում ներդրումները բաժնեմասնակցության մեթոդով հաշվառման դեպքում շահաբաժինները ստանալիս, տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը | Դտ - դրամական միջոցներ<br>Կտ - էտացվելիք շահաբաժիններ |
| | | | Դտ - դրամական միջոցներ<br>Կտ - համապատասխան եկամտի հաշիվ |
| | | | Դտ - դրամական միջոցներ<br>Կտ - համապատասխան ներդրման հաշիվ |
| | | | Դտ - էտացվելիք շահաբաժիններ<br>Կտ - համապատասխան ներդրման հաշիվ |
| | 146 | Համաձայն ՀՀՄՍ 28-ի՝ «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում», բաժնեմասնակցության մեթոդով հաշվառումը ենթադրում է, որ | ներդրումը սկզբնապես գրանցվում է իրական արժեքով, իսկ հետո ճշգրտվում է ձեռք բերումից հետո ներդրման օբյեկտի կողմից հայտարարած՝ ներդրողին վերագրվող շահաբաժինների մեծության չափով |
| | | | ներդրումը սկզբնապես գրանցվում է սկզբնական արժեքով, իսկ հետո ճշգրտվում է իրական արժեքի փոփոխության դեպքում |
| | | | ներդրումը չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումը |
| | | | ներդրումը սկզբնապես գրանցվում է ինքնարժեքով, իսկ հետո ճշգրտվում է ձեռքբերումից հետո ներդրման օբյեկտի զուտ ակտիվներում ներդրողի բաժնեմասի փոփոխությունների չափով |
| | 147 | Համաձայն ՀՀՄՍ 28-ի՝«Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում», ներդրումը բաժնեմասնակցության մեթոդով հաշվառելու դեպքում ներդրման օբյեկտի կողմից հայտարարած՝ ներդրողին վերագրվող շահաբաժինները ներդրողի մոտ ճանաչվում են | որպես եկամուտ |
| | | | որպես ներդրման հաշվեկշռային արժեքի նվազում |
| | | | որպես ծախս |
| | | | ուղղակիորեն սեփական կապիտալում |

| | | | |
|---|---|---|---|
| | 148 | Համաձայն ՀՀՄՍ 28-ի՝ «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում», ասոցիացված կազմակերպությունը այնպիսի կազմակերպություն է | որում ներդրողն ունի ձայնի իրավունք տվող բաժնետոմսեր, բայց որը չի հանդիսանում ներդրողի ոչ դուստր ընկերությունը, ոչ էլ համատեղ կազմակերպությունը |
| | | | որտեղ սահմանված է համատեղ պայմանագրային կարգավորում |
| | | | որի ֆինանսական և գործառնական քաղաքականությունը կառավարվում է ներդրողի կողմից |
| | | | որի նկատմամբ ներդրողն ունի նշանակալի ազդեցություն |
| | 149 | Համաձայն ՀՀՄՍ 28-ի՝ «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում», ասոցիացված կազմակերպությունը այնպիսի կազմակերպություն է | որում ներդրողն ունի ձայնի իրավունք տվող բաժնետոմսեր |
| | | | որում ներդրողն ունի տվյալ կազմակերպության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 75%-ից ավելին |
| | | | որում ներդրողն ունի տվյալ կազմակերպության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50%-ից ավելին |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 150 | Համաձայն ՀՀՄՍ 28-ի՝ «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում», ստանդարտը պետք է կիրառվի | բոլոր այն կազմակերպությունների կողմից, որոնք հանդիսանում են ներդրման օբյեկտի նկատմամբ համատեղ վերահսկողություն կամ նշանակալի ազդեցություն ունեցող ներդրողներ |
| | | | նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | | | ասոցիացված կազմակերպություններում այն ներդրումների նկատմամբ, որոնք պահվում են փոխադարձ ֆոնդերի կողմից |
| | | | ասոցիացված կազմակերպություններում այն ներդրումների նկատմամբ, որոնք պահվում են վենչուրային կապիտալով կազմակերպությունների կողմից |
| | 151 | Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», նշվածներից ո՞րն է, որ չի դասակարգվի որպես ֆինանսական ակտիվ | դրամական միջոցները |
| | | | այլ ընկերության բաժնային գործիքը |
| | | | մեկ այլ կազմակերպությունից դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ ստանալու պայմանագրային իրավունքը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 152 | Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», նշվածներից ո՞րը չի դասակարգվի որպես ֆինանսական ակտիվ | առաջնային շուկայում թողարկողից ձեռք բերված բաժնետոմսերը |
| | | | դրամական միջոցներով մարման ենթակա դեբիտորական պարտքը |
| | | | ապրանքների ձեռք բերման համար տրված կանխավճարը |
| | | | երկրորդային շուկայում ձեռք բերված այլ թողարկողի բաժնետոմսերը |

| | | | |
|---|---|---|---|
| | 153 | Համաձայն ՀՀՄՍ 32 «Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը» ստանդարտի, նշվածներից ո՞րը չի դասակարգվում որպես ֆինանսական ակտիվ | դրամական միջոցներով մարման ենթակա դեբիտորական պարտքը |
| | | | հիմնական միջոցները |
| | | | այլ ֆինանսական ակտիվով մարման ենթակա դեբիտորական պարտքը |
| | | | նշված բոլոր ակտիվներն էլ ֆինանսական ակտիվներ են |
| | 154 | Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը», նշվածներից ո՞րն (որո՞նք) է (են) դասակարգվում որպես ֆինանսական ակտիվ | դրամական միջոցներով մարման ենթակա դեբիտորական պարտքը |
| | | | նշված բոլոր ակտիվներն էլ ֆինանսական ակտիվներ են |
| | | | այլ կազմակերպության կողմից թողարկված պարտատոմսը |
| | | | այլ ֆինանսական ակտիվով մարման ենթակա դեբիտորական պարտքը |
| | 155 | Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը», նշվածներից ո՞րը չի դասակարգվում որպես ֆինանսական պարտավորություն | այլ կազմակերպությունից ստացված և դրամական միջոցներով մարման ենթակա փոխառությունը |
| | | | իր իսկ կողմից թողարկված բաժնետոմսը |
| | | | իր իսկ կողմից թողարկված պարտատոմսը |
| | | | այլ ֆինանսական ակտիվով մարման ենթակա կրեդիտորական պարտքը |
| | 156 | Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը», հետագայում սովորական բաժնետոմսերի փոխարկման իրավունք տվող պարտատոմսը թողարկողի մոտ | ներկայացվում է որպես բաժնային գործիք |
| | | | դասակարգվում է որպես ֆինանսական պարտավորություն |
| | | | ներկայցվում է որպես ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք՝ համաձայն կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության |
| | | | ներկայացվում է ըստ գործիքի բաղկացուցիչ 2 մասերի առանձին դասակարգման՝ որոնցից մեկը՝ որպես ֆինանսական պարտականություն, և մյուսը՝ որպես բաժնային գործիք |
| | 157 | Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը», հետագայում արտոնյալ բաժնետոմսերի փոխարկման իրավունք տվող պարտատոմսը թողարկողի մոտ | ներկայացվում է որպես սեփական կապիտալի գործիք |
| | | | դասակարգվում է որպես ֆինանսական պարտավորություն և ենթակա է վերանայման՝ որպես փոխարկում իրականացնելու հավանականության փոփոխության հետևանք |
| | | | ներկայցվում է որպես ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք՝ համաձայն կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 158 | Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», ո՞րը չի դասակարգվի որպես ֆինանսական պարտավորություն | դրամական միջոցներով վճարման ենթակա կրեդիտորական պարտքը |
| | | | այլ կազմակերպությունից ստացված փոխառությունը |
| | | | իր կողմից թողարկված սովորական բաժնետոմսը |
| | | | իր կողմից թողարկված պարտատոմսը |
| | 159 | Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», ո՞րն է համարվում ֆինանսական գործիք | ցանկացած պայմանագիր, որը միաժամանակ մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուս կազմակերպությունում՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք |
| | | | ցանկացած պայմանագիր, որը միաժամանակ մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն, իսկ մյուս կազմակերպությունում՝ սեփական կապիտալի գործիք |
| | | | ցանկացած պայմանագիր, որը միաժամանակ մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուս կազմակերպությունում՝ միայն ֆինանսական պարտավորություն |
| | | | ցանկացած պայմանագիր, որը նախատեսված է բավարարել կազմակերպության ցանկացած գնման, վաճառքի կամ օգտագործման պահանջմունքները |
| | 160 | Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», ո՞րն է համարվում սեփական կապիտալի գործիք | ցանկացած պայմանագիր, որը հավաստում է կազմակերպության՝ բոլոր պարտավորությունները հանելուց հետո մնացորդային ակտիվների բաժնի նկատմամբ իրավունքը |
| | | | ցանկացած պայմանագիր, որը չի հավաստում կազմակերպության՝ բոլոր պարտավորությունների և ակտիվնեի բաժնի նկատմամբ իրավունքը |
| | | | ցանկացած պայմանագիր, որը հավաստում է կազմակերպության կողմից բաժնեմասնակցության գործիքի ձեռքբերման կամ թողարկման իրավունքը |
| | | | ցանկացած պայմանագիր, որը հավաստում է կազմակերպության՝ բոլոր պարտավորությունների և ակտիվնեի բաժնի նկատմամբ իրավունքը |
| | 161 | Ընտրեք ամբողջական ճիշտ պատասխանը.<br>Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», որ՞ դեպքերում են ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում.<br>(ա) երբ առկա է հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք<br>(բ) կազմակերպությունը մտադիր է հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով<br>(գ) կազմակերպությունը մտադիր է իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ<br>(դ) երբ դրանք նույն անձի գծով են | ճիշտ են (ա), (բ) և (գ) |
| | | | ճիշտ են (բ) և (դ) |
| | | | ճիշտ են (ա), (բ), (գ) և (դ) |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ճիշտ են (ա) և (բ) |
| | 162 | Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը», կազմակերպության կողմից թողարկված արտոնյալ բաժնետոմսերի գծով հայտարարված շահաբաժինը թողարկողի կողմից | ճանաչվում է ծախս, եթե այդ արտոնյալ բաժնետոմսը բավարարում է ֆինանսական պարտավորության սահմանմանը |
| | | | ճանաչվում է բացառապես որպես շահույթի բաշխում |
| | | | ճանաչվում է բացառապես որպես ծախս |
| | | | ճանաչվում է ծախս կամ որպես շահույթի բաշխում, ըստ կազմակերպության հայեցողության |
| | 163 | Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը», բաժնային գործիքը, դա | ֆինանսական պարտավորություններ են, որոնք առաջացել են հիմնականում դիլերային հավելագների կարճաժամկետ տատանումներից շահույթ ստանալու նպատակով |
| | | | ճիշտ տարբերակը նշված չէ: |
| | | | ֆինանսական պարտավորություններ են, որոնք առաջացել են ուղղակիորեն կրեդիտորին դրամ, ապրանքներ կամ ծառայություններ տրամադրելու միջոցով, |
| | | | ցանկացած պայմանագիր է, որը հավաստում է կազմակերպության մնացորդային ակտիվների բաժնի նկատմամբ իրավունքը՝ կազմակերպության պարտավորությունները հանելուց հետո |
| | 164 | Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը», կազմակերպությունը իր սեփական բաժնային գործիքները հետ գնելիս, այդ գործիքները | ճանաչվում են որպես ակտիվ |
| | | | ճանաչվում են որպես պարտավորություն |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | նվազեցվում են սեփական կապիտալից |
| | 165 | Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը», կազմակերպությունը իր սեփական բաժնային գործիքների ձեռք բերման, վաճառքի, թողարկման կամ մարման արդյունքում | առաջացող արդյունքը չի ճանաչվում որպես եկամուտ/ծախս |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | առաջացող արդյունքը ճանաչվում է ուղղակիորեն շահույթ/վնասում |
| | | | առաջացող արդյունքը ճանաչվում է որպես եկամուտ/ծախս |
| | 166 | Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը», պայմանագիրը, որը հանդիսանում է ոչ ածանցյալ գործիք, ըստ որի կազմակերպությունը պարտավորված է կամ կարող է պարտավորված լինել ստանալ փոփոխական քանակով իր իսկ սեփական բաժնային գործիքներ, | Ֆինանսական պարտավորություն է |
| | | | Ֆինանսական ակտիվ է |
| | | | Սեփական կապիտալի գործիք է |
| | | | Բաղադրյալ գործիք է |
| | 167 | Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը», ապաճանաչման չափանիշներին չբավարարող փոխանցված ֆինանսական ակտիվը և համապատասխան ֆինանսական պարտավորությունը, | ֆինանսական հաշվետվություններում չեն ներկայացվում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են զուտ հիմունքով /հաշվանցվում են/ |
| | | | չպետք է հաշվանցվի |
| | | | հաշվանցվում են համապատասխան «հաշվանցման համաձայնության» առկայության դեպքում |
| | 168 | Ընտրեք ամբողջական ճիշտ պատասխանը. Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», ֆինանսական ակտիվը և ֆինանսական պարտավորությունը պետք է հաշվանցվեն, երբ | կազմակերպությունը տվյալ պահին ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք |
| | | | կազմակերպությունը մտադիր է իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ |
| | | | նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | | | կազմակերպությունը մտադիր է հաշվարկը (մարումը) իրականացնել զուտ հիմունքով |
| | 169 | Ընտրեք ամբողջական ճիշտ պատասխանը. Համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», երբ կազմակերպությունն իրականացնում է ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության հաշվանցում, ապա | ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պետք է ներկայացվի զուտ գումարը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | համապարփակ ֆինանսաական հաշվետվությունում պետք է ներկայացվի զուտ գումարը |
| | | | Ֆինանսական ակտիվը և ֆինանսական պարտավորությունը չպետք է հաշվանցվեն, սակայն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պետք է ներկայացվի զուտ գումարը |
| | 170 | Համաձայն ՀՀՄՍ 33-ի՝ «Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ», պոտենցիալ սովորական բաժնետոմսը , դա | ֆինանսական գործիք կամ այլ պայմանագիր է, որը դրա տիրապետողին կարող է տալ սովորական բաժնետոմսեր ունենալու (ձեռք բերելու) իրավունք |
| | | | այն սովորական բաժնետոմսն է, որը դրա տիրապետողին չի տալիս ձայնի իրավունք |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ֆինանսական գործիք կամ այլ պայմանագիր է, որը դրա տիրապետողին կարող է տալ արտոնյալ բաժնետոմսեր ունենալու (ձեռք բերելու) իրավունք |
| | 171 | Համաձայն ՀՀՄՍ 33-ի՝ «Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ», սովորական բաժնետոմսը , դա | ֆինանսական գործիք կամ այլ պայմանագիր է, որը դրա տիրապետողին տալիս է բաժնետոմսեր ունենալու (ձեռք բերելու) իրավունք |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | սեփական կապիտալի գործիք է, որը ստորադասված է սեփական կապիտալի գործիքների բոլոր այլ դասերին |
| | | | պարտքային գործիք է |

| | | | |
|---|---|---|---|
| | 172 | Համաձայն ՀՀՄՍ 33ի՝ «Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ», պոտենցիալ սովորական բաժնետոմսերը պետք է համարվեն նոսրացնող այն և միայն այն դեպքում, եթե դրանց փոխարկումը սովորական բաժնետոմսերի<br>ա) կնվազեցներ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը<br>բ) կավելացներ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող վնասը՝ շարունակական գործունեությունից<br>գ) կնվազեցներ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող վնասը՝ շարունակական գործունեությունից<br>դ) կավելացներ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը | «ա» և «բ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «բ» և «դ» |
| | | | «ա» և «գ» |
| | 173 | Համաձայն ՀՀՄՍ 33-ի՝ «Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ», մեկ բաժնետոմսին բաժին ընկնող մեկ բաժնետոմսին նոսրացված շահույթը հաշվարկելու նպատակով կազմակերպությունը պետք է մայր կազմակերպության սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող բազային շահույթը կամ վնասը ճշգրտի՝ հաշվի առնելով հետևյալի ազդեցությունը հարկումից հետո | նոսրացնող պոտնեցիալ սովորական բաժնետոմսերի գծով ցանկացած շահաբաժինները կամ այլ հոդվածներ, որոնք նվազեցվել են մայր կազմակերպության սովորական բաժնետոմսերի տիրապետողներին հոդվածներ, որոնք նվազեցվել են մայր կազմակերպության սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող բազային շահույթը կամ վնասը հաշվարկելիս |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | նոսրացնող պոտենցիալ սովորական բաժնետոմսերի գծով այդ ժամանակաշրջանի ընթացքում ճանաչված ցանկացած տոկոս |
| | | | եկամուտներում ու ծախսերում ցանկացած այլ փոփոխություններ, որոնք կառաջանային նոսրացնող պոտենցիալ սովորական բաժնետոմսերի փոխարկման արդյունքում |
| | 174 | Համաձայն ՀՀՄՍ 34-ի՝ «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ», միջանկյալ ժամանակաշրջան է. | բոլոր կազմակերպությունների համար խիստ պարտադիր ֆինանսական հաշվետու ժամանակաշրջան է |
| | | | լրիվ ֆինանսական տարուց ավելի երկար ժամանակաշրջանը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ֆինանսական հաշվետու ժամանակաշրջան է, որն ավելի կարճ է, քան լրիվ ֆինանսական տարին |
| | 175 | Նշել ամբողջական պատասխանը:<br>Համաձայն ՀՀՄՍ 34-ի՝ «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ», միջանկյալ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներկայացվում է հետևյալ ժամանակաշրջանների համար. | ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ |
| | | | միայն անմիջապես նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ |
| | | | ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ, նախորդող երկու ֆինանսական տարիների վերջի դրությամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ և անմիջապես նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ |
| | 176 | Համաձայն ՀՀՄՍ 34-ի՝ «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ», միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները նվազագույնը պետք է ներառեն հետևյալ բաղկացուցիչները.<br>ա) ֆինանսական վիճակի մասին խտացված հաշվետվությունը,<br>բ) շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին խտացված հաշվետվությունը,<br>գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին խտացված հաշվետվությունը,<br>դ) դրամական միջոցների հոսքերի մասին խտացված հաշվետվությունը,<br>ե) ընտրված բացատրական ծանոթագրությունները: | «ա», «բ», «գ» և «դ» |
| | | | «ա», «բ», «գ», «դ» և «ե» |
| | | | «ա»-ն |
| | | | «ա» և «բ» |
| | 177 | Համաձայն ՀՀՄՍ 34-ի՝ «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ», կազմակերպությունը իր միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում առնվազն պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը, եթե դրանք էական են և չեն բացահայտվել միջանկյալ ֆինանսական հաշվետվության որևէ այլ հատվածում. | հայտարարություն այն մասին, որ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում կիրառվել են հաշվապահական հաշվառման միևնույն քաղաքականությունը և հաշվարկման մեթոդները, որոնք կիրառվել էին ամենավերջին տարեկան ֆինանսական հաշվետվություններում |
| | | | նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | | | պարտքային և բաժնային արժեթղթերի թողարկումները, հետգնումները և մարումները |
| | | | միջանկյալ գործառնությունների սեզոնային կամ ցիկլային բնույթի վերաբերյալ բացատրական մեկնաբանություններ |
| | 178 | Համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Փոխհատուցվող գումարը սահմանվում է որպես ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից՝ հանած օտարման ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը |
| | | | նշված բոլոր պնդումներն էլ ճիշտ են |
| | | | Ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է նվազեցվի մինչև դրա փոխհատուցվող գումարը այն և միայն այն դեպքում, եթե ակտիվի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է, քան դրա հաշվեկշռային արժեքը |
| | | | Ակտիվի  արժեզրկումից կորուստը ճանաչվում է որպես ծախս շահույթ/վնասում՝ բացառությամբ եթե ակտիվը, համաձայն այլ ստանդարտի, հաշվառվում է վերագնահատված արժեքով |
| | 179 | Համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», արժեզրկման հակադարձման արդյունքում ակտիվի հաշվեկշռային արժեքը չպետք է՝ | փոքր լինի հաշվեկշռային արժեքից, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե այդ ակտիվի  գծով նախորդ տարիներին արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | գերազանցի վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից նվազագույնը |
| | | | գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե այդ ակտիվի գծով նախորդ տարիներին արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ |
| | | | փոքր լինի վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից նվազագույնից |
| | 180 | Համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», ակտիվի օգտագործման արժեքը որոշելու նպատակով ապագա դրամական հոսքերի գնահատումները պետք է ներառեն՝<br>ա) այն դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատականները, որով կազմակերպությունը ակնկալում է ստանալ տվյալ ակտիվից<br>բ) դրամի արժեքը ժամանակի մեջ՝ ներկայացված ռիսկային շուկայական տոկոսադրույքով<br>գ) այդ դրամական միջոցների ապագա հոսքերի գումարների և ժամկետների հնարավոր տատանումների վերաբերյալ սպասումները | «ա» և «բ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա» և «գ» |
| | 181 | Համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», գուդվիլի արժեզրկումից կորուստը | հակադարձվում է, երբ արժեզրկումից կորստի պատճառ է հանդիսացել բացառիկ բնույթի յուրահատուկ արտաքին իրադարձություն, որի կրկնվելն ապագայում չի ակնկալվում, |
| | | | չպետք է հակադարձվի հետագա ժամանակաշրջանում |
| | | | հակադարձվում է, երբ հետագայում տեղի են ունեցել արտաքին իրադարձություններ, որոնք վերացրել են արժեզրկում առաջացնող իրադարձության ազդեցությունը: |
| | | | ցանկացած դեպքում հակադարձվում է |
| | 182 | Համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», երբ ակտիվի արժեզրկումից կորստի գնահատված մեծությունը գերազանցում է ակտիվի հաշվեկշռային արժեքը, ապա | Տարբերությունը վերագրվում է սեփական կապիտալին |
| | | | Պարտավորություն է ճանաչվում միայն այն դեպքում, երբ դա պահանջվում է մեկ այլ էտանդարտով |
| | | | Տարբերությունը նվազեցվում է սեփական կապիտալից |
| | | | Արժեզրկում չի ճանաչվում |
| | 183 | Համաձայն «Ակտիվների արժեզրկում» ՀՀՄՍ 36-ի, նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | Եթե արժեզրկումից կորստի գնահատված գումարն ավելի մեծ է, քան այդ ակտիվի հաշվեկշռային արժեքը, ապա կազմակերպությունը պետք է ճանաչի պարտավորություն այն և միայն այն դեպքում, եթե դա պահանջվում է մեկ այլ ստանդարտով |
| | | | Նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | | | Գուդվիլի գծով ճանաչված արժեզրկումից կորուստը չպետք է հակադարձվի հետագա ժամանակաշրջանում |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Փոխհատուցվող գումարը սահմանվում է որպես ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը |
| | 184 | Համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», ո՞րն է ակտիվի օգտագործման արժեքը | ապագա դրամական հոսքերի ներկա (զեղչված) արժեքը, որն ակնկալվում է ստանալ ակտիվից կամ դրամաստեղծ միավորից |
| | | | այն գումարը, որը կարելի է ստանալ ակտիվի վաճառքից իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորության» գործարքում |
| | | | այն գումարն է, որը ակնկալվում է ստանալ միայն ակտիվի շարունակական օգտագործումից՝ համապատասխան ծախսումների գծով խնայողությունները հաշվի առնելով |
| | | | այն գումարը, որը կարելի է ստանալ ակտիվի վաճառքից իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորության» գործարքում՝ հանած օգտագործման և օտարման ծախսումները |
| | 185 | Համաձայն ՀՀՄՍ 36-ի «Ակտիվների արժեզրկում», ո՞րն է որ չի կարող հանդիսանալ ակտիվների հնարավոր արժեզրկման հայտանիշ | տվյալ ժամանակաշրջանի ընթացքում ակտիվի շուկայական արժեքը նվազել է զգալիորեն ավելի մեծ չափով, քան կակնկալվեր որոշակի ժամանակ անցնելու կամ սովորական օգտագործման արդյունքում |
| | | | ներքին հաշվետվական համակարգը վկայում է, որ ակտիվի տնտեսական ցուցանիշները ավելի ցածր են կամ կլինեն ավելի ցածր, քան ակնկալվում էր |
| | | | հաշվետու կազմակերպության զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքը ավելի փոքր է, քան նրա շուկայական կապիտալացումը |
| | | | վկայություն կա ակտիվի բարոյական մաշվածության կամ ֆիզիկական վնասվածության վերաբերյալ |
| | 186 | Համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», արժեզրկումից կորուստը պետք է անմիջապես ճանաչվի | որպես ծախս շահույթ/վնասում՝ բացառությամբ եթե ակտիվը, համաձայն այլ ստանդարտի, հաշվառվում է վերագնահատված արժեքով |
| | | | կամ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ սեփական կապիտալում, ըստ կազմակերպության ընտրած հաշվապահական հաշվառման քաղաքականության |
| | | | բացառապես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում |
| | | | բացառապես ուղղակիորեն սեփական կապիտալում |
| | 187 | Համաձայն ՀՀՄՍ-ի 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», փոխհատուցվող գումարը սահմանվում է | որպես ակտիվի վաճառքից ստացվող զուտ գումար |
| | | | որպես ակտիվի՝ ակտիվի իրական արժեքից նվազեցրած վաճառքի ծախսումները և օգտագործման արժեքից նվազագույնը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | որպես առավելագույնը՝ ակտիվի իրական արժեքից նվազեցրած վաճառքի ծախսումները և օգտագործման արժեքից |
| | | | որպես ակտիվի օգտագործումից ստացվող զուտ գումար |
| | 188 | Համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», ե՞րբ է ճանաչվում ակտիվի գծով արժեզրկումից կորուստը | երբ ակտիվի իրական արժեքը մեծ է փոխհատուցվող գումարից |
| | | | երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը մեծ է փոխհատուցման գումարից |
| | | | երբ նրա փոխհատուցվող գումարը մեծ է իրական արժեքից |
| | | | երբ նրա փոխհատուցվող գումարը մեծ է նրա հաշվեկշռային արժեքից |
| | 189 | Համաձայն ՀՀՄՍ 36-ի՝ «Ակտիվների արժեզրկում», վերագնահատված արժեքով հաշվառվող ակտիվների գծով | արժեզրկում պետք է ճանաչվի, միայն եթե այդ ակտիվները ունեն գործող շուկա և այդ ակտիվի օտարման ծախսումները աննշան են |
| | | | արժեզրկում կարող է ճանաչվել, եթե այդ ակտիվի օտարման ծախսումները աննշան չեն |
| | | | արժեզրկում պետք է ճանաչվի ակտիվի օգտագործմանը համամասնորեն |
| | | | արժեզրկում երբեք չի ճանաչվում |
| | 190 | Համաձայն ՀՀՄՍ 37-ի՝ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», ակտիվների ակնկալվող օտարումից օգուտները | պետք է հաշվառվեն պահուստը չափելիս |
| | | | չպետք է գերազանցեն պահուստի գումարը |
| | | | չպետք է հաշվառվեն պահուստը չափելիս |
| | | | պետք է հաշվառվեն պահուստը չափելիս, եթե ակնկալվող օտարումը սերտորեն կապված է այն դեպքի հետ, որը հանգեցնում է պահուստի առաջացմանը |
| | 191 | Համաձայն  ՀՀՄՍ 37-ի՝ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», նշված սահմանումներից ո՞րն է սխալ. | Դեպքը, որը հանգեցնում է իրավական կամ կառուցողական պարտականության, որի մարումից խուսափելու ոչ մի իրատեսական այլընտրանք կազմակերպությունը չունի, կոչվում է պարտավորեցնող դեպք |
| | | | Պարտականությունը, որը բխում է պայմանագրից (բացահայտորեն նշված լինելու կամ անուղղակիորեն պայմանագրի դրույթներից հետևելու միջոցով), օրենսդրությունից կամ այլ գործադրումներից կոչվում է իրավական |
| | | | Ծրագիրը, որը պլանավորվում և վերահսկվում է կազմակերպության ղեկավարության կողմից և էականորեն փոփոխում է կազմակերպության կողմից իրականացված ձեռնարկատիրական գործունեության ոլորտը, կամ այն եղանակը, որով վարվում է այդ գործունեությունը, կոչվում է անբարենպաստ պայմանագիր |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորությունը կոչվում է պահուստ |
| | 192 | Համաձայն ՀՀՄՍ 37-ի՝ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», պայմանագիրը, որով նախատեսված պարտականությունները կատարելու անխուսափելի ծախսումները գերազանցում են այդ պայմանագրից ակնկալվող ստացվելիք տնտեսական օգուտները, կոչվում է | կառուցողական պայմանագիր |
| | | | շահավետ պայմանագիր |
| | | | պայմանական պայմանագիր |
| | | | անբարենպաստ պայմանագիր |
| | 193 | Համաձայն ՀՀՄՍ 37-ի՝ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», ստեղծված պահուստը կարող է օգտագործվել | ցանկացած տեսակի ծախսերի համար |
| | | | միայն դատական ծախսերի համար |
| | | | միայն ֆինանսական ծախսերի համար |
| | | | միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր |
| | 194 | Համաձայն ՀՀՄՍ 37-ի՝ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», ապագա գործառնական վնասների գծով | ճանաչվում է պահուստ, և պահուստի վերաբերյալ բացահայտումներ չեն կատարվում |
| | | | ճիշտ տարբերակը նշված չէ |
| | | | ճանաչվում է պահուստ,և պահուստի վերաբերյալ կատարվում են բացահայտումներ |
| | | | պահուստ չի ճանաչվում |
| | 195 | Համաձայն ՀՀՄՍ 37-ի՝ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», նշված սահմանումներից ո՞րն է ճիշտ. | Պայմանագիրը, որով նախատեսված պարտականությունները կատարելու անխուսափելի ծախսումները գերազանցում են այդ պայմանագրից ակնկալվող ստացվելիք տնտեսական օգուտները, կոչվում է անբարենպաստ պայմանագիր |
| | | | Պարտականությունը, որը բխում է պայմանագրից (բացահայտորեն նշված լինելու կամ անուղղակիորեն պայմանագրի դրույթներից հետևելու միջոցով), օրենսդրությունից կամ յալ գործադրումներից կոչվում է իրավական |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | Անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորությունը կոչվում է պահուստ |
| | 196 | Համաձայն ՀՀՄՍ 37-ի՝ «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», պահուստը պետք է ճանաչվի, երբ<br>ա) կազմակերպությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք<br>բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք<br>գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել | «ա» և «բ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա» և «գ» |
| | | | «բ» և «գ» |

| | | | |
|---|---|---|---|
| | 197 | Համաձայն ՀՀՄՍ 37-ի` «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», նշվածներից ո՞րն է հանգեցնում իրավական կամ կառուցողական պարտականության, որի մարումից խուսափելու ոչ մի իրատեսական այլընտրանք կազմակերպությունը չունի. | պահուստ |
| | | | պայմանական դեպք |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | պարտավորեցնող դեպք |
| | 198 | Համաձայն ՀՀՄՍ 37-ի` «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», եթե կազմակերպությունն ունի անբարենպաստ պայմանագիր, | ապա այդ պայմանագրի գծով ներկա պարտականությունը չպետք է ճանաչվի որպես պահուստ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ապա այդ պայմանագրի գծով պահուստ չի ճանաչվում, սակայն պահուստի վերաբերյալ կատարվում են բացահայտումներ |
| | | | ապա այդ պայմանագրի գծով ներկա պարտականությունը պետք է ճանաչվի և չափվի որպես պահուստ |
| | 199 | Համաձայն ՀՀՄՍ 37-ի` «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ», նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | ակտիվների ակնկալվող օտարումից օգուտները պետք է հաշվի առնվեն պահուստը չափելիս |
| | | | ապագա գործառնական վնասների համար պահուստներ պետք է ճանաչվեն |
| | | | նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | | | եթե կազմակերպությունն ունի անբարենպաստ պայմանագիր, ապա այդ պայմանագրի գծով ներկա պարտականությունը պետք է ճանաչվի և չափվի որպես պահուստ |
| | 200 | Համաձայն ՀՀՄՍ 38-ի` «Ոչ նյութական ակտիվներ», նշվածներից որո՞նք են հանդիսանում ոչ նյութական ակտիվներ.<br>ա) համակարգչային ծրագրեր,<br>բ) հաճախորդների ցուցակները<br>գ) ներստեղծված գուդվիլ<br>դ) արտոնագրեր | «ա», «բ» և «գ» |
| | | | «գ» |
| | | | «ա» և «դ» |
| | | | «ա», «բ» և «դ» |
| | 201 | Համաձայն ՀՀՄՍ 38-ի` «Ոչ նյութական ակտիվներ», այն ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն անորոշ օգտակար ծառայության ժամկետ (ՕԾԺ) | ամորտիզացվում են նվազող մնացորդի մեթոդով |
| | | | ամորտիզացվում են գծային մեթոդով |
| | | | ամորտիզացվում են գծային մեթոդով, ընդ որում` որպես ՕԾԺ ընդունվում է 10 տարին |
| | | | չեն ամորտիզացվում |
| | 202 | Համաձայն ՀՀՄՍ 38-ի` «Ոչ նյութական ակտիվներ», ոչ նյութական ակտիվը պետք է ապաճանաչվի | օտարման պահին |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | երբ դրա օգտագործումից այլևս չեն ակնկալվում ապագա տնտեսական օգուտներ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | երբ դրա հետագա օտարումից այլևս չեն ակնկալվում ապագա տնտեսական օգուտներ |
| | 203 | Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտի, նշվածներից որո՞նք չեն հանդիսանում ոչ նյութական ակտիվներ.<br>ա) համակարգչային ծրագրեր,<br>բ) ներստեղծված գուդվիլ,<br>գ) մարկետինգային իրավունքները<br>դ) ապրանքներ | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա» և «գ» |
| | | | «դ» |
| | | | «բ» և «դ» |
| | 204 | Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», օգտակար ծառայությունը դա.<br>ա) այն ժամանակահատվածն է, որի ընթացքում կազմակերպությունն անկնկալում է օգտագործել ակտիվը<br>բ) արտադրանքի կամ այլ նմանատիպ միավորների այն քանակը, որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ տվյալ ակտիվից<br>գ) ստացվելիք ծառայությունների ծավալը դրամային արտահայտությամբ նվազեցրած դրանց համար կատարվելիք ծախսումներով | «ա» և «բ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա» և «գ» |
| | | | «բ» և «գ» |
| | 205 | Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», ոչ նյութական ակտիվը պետք է ճանաչվի միմիայն այն դեպքում. երբ.<br>ա) հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն<br>բ) ակտիվը իրացվելի է<br>գ) ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել | «ա» և «բ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա» և «գ» |
| | 206 | Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», ոչ նյութական ակտիվը սկզբնապես պետք է չափվի | իրական արժեքով |
| | | | իրական արժեքով՝ հանած ձեռքբերման ծախսումները |
| | | | ներկա արժեքով |
| | | | սկզբնական արժեքով |
| | 207 | Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը ներառում է.<br>ա) դրա գնման գինը<br>բ) ակտիվն իր նպատակային օգտագործման վիճակին բերելու հետ կապված ցանկացած ուղղակիորեն վերագրելի ծախսումները<br>գ) նոր արտադրանքի կամ ծառայության շուկայում ներկայացնելու ծախսումները | «ա» և «բ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա» և «գ» |

| | | | |
|---|---|---|---|
| | 208 | Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», հետազոտության փուլում ներդրված միջոցները պետք է ճանաչվեն որպես | ոչ նյութական ակտիվներ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | հետաձգված եկամուտ |
| | | | ծախս |
| | 209 | Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», մշակումից առաջացող միջոցները որպես ոչ նյութական ակտիվ ճանաչման անհրաժեշտ պայմաններից են.<br>ա) ոչ նյութական ակտիվն այնպիսի ավարտուն վիճակի հասցնելու տեխնիկական իրագործելիությունը, որ այն մատչելի լինի օգտագործման կամ վաճառքի համար<br>բ) նյութերի, սարքավորումների, արտադրատեսակների, գործընթացների, համակարգերի կամ ծառայությունների համար այլընտրանքների որոնում<br>գ) ոչ նյութական ակտիվին մշակման ընթացքում վերագրելի ծախսումներն արժանահավատորեն չափելու իր կարողությունը | «ա» և «բ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա» և «գ» |
| | 210 | Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», սկզբնական ճանաչումից հետո ոչ նըութական ակտիվը պետք է հաշվառվի.<br>ա) սկզբնական արժեքով<br>բ) վերագնահատված արժեքով<br>գ)  ներկա արժեքով | «ա» և «բ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա» և «գ» |
| | | | «բ» և «գ» |
| | 211 | Համաձայն ՀՀՄՍ 38-ի՝ «Ոչ նյութական ակտիվներ», օգտակար ծառայության անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվի | ամորտիզացիան կատարվում է միայն գծային մեթոդով |
| | | | ամորտիզացիան չի իրականացվում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ամորտիզացիոն հատկացումները կապիտալացվում են |
| | 212 | Համաձայն ՀՀՄՍ 40-ի՝ «Ներդրումային գույք», ո՞ր պայմաններն են առավել բնութագրում ներդրումային գույքը: Ներդրումային գույք՝ գույք (հող կամ շինություն, շինության մի մաս կամ և հող, և շինություն), որը պահվում է՝<br>ա) դրա արժեքի աճի նպատակով<br>բ) արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման կամ վարչական նպատակներով օգտագործելու համար<br>գ) վարձակալությունից եկամուտ վաստակելու նպատակով<br>դ) սովորական (ամենօրյա) գործունեության ընթացքում վաճառքի նպատակով | «ա» և «բ» |
| | | | «գ» և «դ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա» և «գ» |
| | 213 | Համաձայն ՀՀՄՍ 40-ի՝ «Ներդրումային գույք», նշվածներից որը ՉԻ համարվում ներդրումային գույք | գույք, որը պահվում է՝ սովորական գործունեության ընթացքում վաճառելու համար, |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մեկ այլ կազմակերպությանը ֆինանսական վարձակալությամբ տրված գույք |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | գույք, որը գտնվում է կառուցման կամ բարելավման գործընթացում՝ հետագա վերավաճառքի նպատակով |
| | 214 | Համաձայն ՀՀՄՍ 40-ի՝ «Ներդրումային գույք», նշվածներից որը ՉԻ համարվում ներդրումային գույք | հող, որը պահվում է երկար ժամկետի ընթացքում դրա արժեքի աճի, այլ ոչ թե սովորական գործունեության ընթացքում կարճաժամկետ վաճառքի նպատակով |
| | | | կազմակերպությանը պատկանող շինություն, որը տրված է մեկ կամ ավելի գործառնական վարձակալությունների |
| | | | հող, որը պահվում է ներկայումս չորոշված նպատակով ապագա օգտագործման համար |
| | | | գույք, որը կառուցվում կամ բարելավվում է երրորդ կողմի պատվերով |
| | 215 | Համաձայն ՀՀՄՍ 40-ի՝ «Ներդրումային գույք», ներդրումային գույքը պետք է ճանաչվի որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ<br>ա) հավանական է, որ այդ ներդրումային գույքի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն<br>բ) ներդրումային գույքի ինքնարժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել<br>գ) ներդրումային գույքի ինքնարժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել | «ա» և «բ» |
| | | | «ա» |
| | | | «գ» |
| | | | «ա» և «գ» |
| | 216 | Համաձայն ՀՀՄՍ 40-ի՝ «Ներդրումային գույք», նշված պնդումներից ո՞րն է ճիշտ. | ներդրումային գույքը սկզբնապես պետք է չափվի իր ինքնարժեքով (սկզբնական արժեքով) |
| | | | նշված բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | գործառնության հետ կապված ծախսումները պետք է ներառվեն սկզբնապես չափման մեջ |
| | | | ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտը կամ վնասը պետք է ներառվի այն ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, որի ընթացքում այն առաջանում է: |
| | 217 | Համաձայն ՀՀՄՍ 40-ի՝ «Ներդրումային գույք», ներդրումային գույքը սկզբնապես պետք է չափվի | իրական արժեքով |
| | | | սկզբնական արժեքով |
| | | | սկզբնական արժեքով՝ հանած ձեռքբերման ծախսումները |
| | | | ներկա արժեքով |
| | 218 | Համաձայն ՀՀՄՍ 40-ի՝ «Ներդրումային գույք», երբ պաշարները վերադասակարգվում են որպես ներդրումային գույք, որը հաշվառվելու է իրական արժեքով, ապա | այդ ամսաթվի դրությամբ գույքի իրական արժեքի և նախորդ հաշվեկշռային  արժեքի միջև ցանկացած տարբերության գծով ձևավորվում է պահուստ կապիտալում |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | այդ ամսաթվի դրությամբ գուլքի իրական արժեքի և նախորդ հաշվեկշռային արժեքի միջև ցանկացած տարբերություն պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում |
| | | | այդ ամսաթվի դրությամբ գուլքի իրական արժեքի և նախորդ հաշվեկշռային արժեքի միջև ցանկացած տարբերություն պետք է ճանաչվի ակտիվներում կամ պարտավորություններում |
| | 219 | Համաձայն ՖՀՄՍ 3-ի՝ «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ», գուդվիլը սահմանվում է որպես ո՞ր ստորև նշված հոդվածի (ների) և ձեռքբերման դրությամբ ՖՀՄՍ 3-ի համաձայն չափված ձեռքբերված որոշելի ակտիվների ստանձնած պարտավորությունների զուտ գումարէ դրական տարբերություն<br>ա) փոխանցված հատուցում, որը ՖՀՄՍ 3-ի համաձայն, ընդհանուր առմամբ պետք է չափվի ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքով<br>բ) ձեռքբերվողում ցանկացած չվերահսկող բաժնեմասի գումար՝ չափված ՖՀՄՍ 3-ի համաձայն<br>գ) ձեռնարկատիրական գործունեության փուլային ձեռքբերման դեպքում ձեռքբերվողի սեփական կապիտալում ձեռքբերողի նախկինում ունեցած բաժնեմասի՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեք. | «ա» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «բ» |
| | | | «ա» և «բ» |
| | 220 | Ա կազմակերպությունը ձեռք է բերել Բ կազմակերպության զուտ ակտիվների 70%-ը վճարելով 1.700.000 ՀՀ դրամ: Բ կազմակերպության զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքը այդ պահի դրությամբ կազմել է 1.600.000 ՀՀ դրամ, իսկ իրական արժեքը՝ 1.650.000 ՀՀ դրամ:<br>Համաձայն ՖՀՄՍ 3-իէ «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ», Ա ընկերության մոտ ձեռքբերումից առաջացել է | բացասական գուդվիլ 545. 000 ՀՀ դրամ |
| | | | գուդվիլ 580.000 ՀՀ դրամ |
| | | | գուդվիլ 545. 000 ՀՀ դրամ |
| | | | եկամուտ 50.000 ՀՀ դրամ |
| | 221 | Համաձայն ՖՀՄՍ 3-ի՝ «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ», ձեռքբերման մեթոդի պահանջներից է (են)է<br>ա) ձեռքբերողի որոշակիացում<br>բ) ձեռքբերման ամսաթվի որոշում<br>գ) ձեռքբերման դիմաց վճարում<br>դ) գուդվիլի կամ զեղչով ձեռքբերումից օգուտի ճանաչում և չափում | «ա» և «բ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա», «բ» և «դ» |
| | | | «բ» և «դ» |

| | | | |
|---|---|---|---|
| | 222 | Ա կազմակերպությունը ձեռք է բերել Բ կազմակերպության զուտ ակտիվների 70%-ը վճարելով 1.000.000 ՀՀ դրամ: Բ կազմակերպության զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքը այդ պահի դրությամբ կազմել է 1.600.000 ՀՀ դրամ, իսկ իրական արժեքը` 1.650.000 ՀՀ դրամ: Համաձայն ՖՀՄՍ 3-իէ «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ», Ա ընկերության մոտ ձեռքբերումից առաջացել է | եկամուտ 600.000 ՀՀ դրամ |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | | | գուդվիլ 155.000 ՀՀ դրամ |
| | | | բացասական գուդվիլ 155.000 ՀՀ դրամ |
| | 223 | Համաձայն ՖՀՄՍ 5-ի «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործառնություններ», կազմակերպությունը որպես վաճառքի համար պահվող դասակարգված ոչ ընթացիկ ակտիվը (կամ օտարման խումբը) պետք է չափի | դրա հաշվեկշռային արժեքով |
| | | | դրա հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից նվազագույնով |
| | | | դրա հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից առավելագույնով |
| | | | դրա հաշվեկշռային արժեքից և, իրական արժեք` հանած վաճառքի ծախսումներից նվազագույնով |
| | 224 | Համաձայն ՖՀՄՍ 5-ի «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործառնություններ», կազմակերպությունը պետք է դասակարգի ոչ ընթացիկ ակտիվը (կամ օտարման խումբը) որպես վաճառքի համար պահվող, եթե դրա հաշվեկշռային արժեքը փոխհատուցվելու է հիմնականում վաճառքի գործարքի, այլ ոչ թե շարունակական օգտագործման միջոցով | վարձակալության գծով վճարումների միջոցով |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | | | շարունակական օգտագործման միջոցով |
| | | | դրա հաշվեկշռային արժեքը փոխհատուցվելու է հիմնականում վաճառքի գործարքի միջոցով |
| | 225 | Համաձայն ՖՀՄՍ 5-ի «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործառնություններ», եթե վաճառքի տեղի ունենալը ակնկալվում է մեկ տարուց հետո, ապա կազմակերպությունը պետք է | վաճառքի ծախսումները կրկնապատկի |
| | | | վաճառքի ծախսումները անտեսի |
| | | | վաճառքի ծախսումները չափի դրանց ներկա արժեքով |
| | | | վաճառքի ծախսումները չափի դրանց իրական արժեքով |
| | 226 | Համաձայն ՖՀՄՍ 5-ի «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործառնություններ», վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվների հետագա չափումը իրականացվում է | իրական արժեքով |
| | | | ճիշտ պատասխան նշված չէ |
| | | | ներկա արժեքով |
| | | | սկզբնական գումարով |

| | | | |
|---|---|---|---|
| | 227 | Համաձայն ՖՀՄՍ 5-ի «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործառնություններ», ընդհատված գործառնությունը կազմակերպության բաղադրիչ մաս է, որը կամ օտարվել է, կամ դասակարգված է որպես վաճառքի համար պահվող, և<br>ա) իրենից ներկայացնում է գործունեության առանձին խոշոր ուղղություն կամ գործառնությունների իրականացման աշխարհագրական տարածք<br>բ) կազմում է գործունեության առանձին խոշոր ուղղության կամ գործառնությունների իրականացման աշխարհագրական տարածքի օտարման մեկ համակարգված պլանի մաս<br>գ) բացառապես վերավաճառելու նպատակով ձեռք բերված դուստր կազմակերպություն է | «ա» և «բ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «գ» |
| | | | «բ» և «գ» |
| | 228 | Համաձայն ՖՀՄՍ 7-ի՝ «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ», կազմակերպությունը | պետք է բացահայտի միայն այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է հարկային մարմիններին որոշումներ իրականացնելու համար |
| | | | պարտավոր չէ բացահայտել որևէ տեղեկատվություն |
| | | | պետք է բացահայտի տեղեկատվություն, որը թույլ կտա իր ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին գնահատել ֆինանսական գործիքների նշանակությունը (ազդեցությունը) իր ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների համար (վրա) |
| | | | ներկայացնում է որոշակի տեղեկատվություն՝ միայն պահանջի ներկայացման դեպքում |
| | 229 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», էկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները պետք է չափվեն | ամորտիզացված արժեքով |
| | | | իրական արժեքով, բացառությամբ թողարկված պարտատոմսերի և այլ ներգրավված միջոցների |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | իրական արժեքով |
| | 230 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները այն ակտիվներն են, որոնք | առաջանում են կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ, ապրանքներ կամ ծառայություններ տրամադրելու միջոցով |
| | | | հանդիսանում են արդյունավետ հեջավորման գործիք |
| | | | չեն հանդիսանում ամորտիզացված արժեքով հաշվառվող կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ |
| | | | ունեն ֆիքսված մարման ժամկետ |
| | 231 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինասական ակտիվները չափվում են՝ | իրական արժեքից և սկզբնական արժեքից նվազագույնով |
| | | | շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով |
| | | | նշված բոլոր պատասխանները սխալ են |

| | | | |
|---|---|---|---|
| | | | սկզբնական արժեքից և իրացման արժեքից առավելագույնով |
| | 232 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», նշված ակտիվներից որը, սովորաբար, չի կարող դասակարգվել որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող ներդրում. | մինչև 1 տարի մարման ժամկետով պարտատոմսը |
| | | | 1 տարուց ավելի մարման ժամկետով պարտատոմսը |
| | | | ոչ կապակցված կազմակերպության սովորական բաժնետոմսը |
| | | | նշված բոլոր ֆինանսական ակտիվներն էլ կարող են դասակարգվել որպես մինչև մարման ժամկետը պահվող |
| | 233 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», կազմակերպության կողմից տրամադրված փոխառությունները և դեբիտորական պարտքերը սովորաբար հաշվառվում են | ամորտիզացված արժեքով |
| | | | այլ համապարփակ եկամտով վերաչափվող իրական արժեքով |
| | | | իրական արժեքից և ամորտիզացված արժեքից նվազագույնով |
| | | | շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով |
| | 234 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով չեն հաշվառվում | ածանցյալ գործիքները |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | վերավաճառքի համար ձեռք բերված արժեթղթերը |
| | | | տրամադրված վարկերը |
| | 235 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով են հաշվառվում | ածանցյալ գործիքները |
| | | | տրամադրված երկարաժամկետ վարկերը |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ներգրավված ժամկետային ավանդները |
| | 236 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», այլ համապարփակ եկամուտներով վերաչափվող իրական արժեքով են հաշվառվում այն ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են<br>ա) պայմանագրային դարամական հոսքերի հավաքագրման<br>բ) վաճառքի նպատակով<br>գ) մայր գումարների և տոկոսների վճարները տեղի են ունենում պայմանագրով սահմանված ժամկետներում | «ա» և «բ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա» և «գ» |
| | | | «բ» և «գ» |
| | 237 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», պարտավորություններում ընդգրկվող ածանցյալները հաշվառվում են՝ | ամորտիզացված արժեքով |
| | | | այլ համապարփակ եկամտով վերաչափվող իրական արժեքով |
| | | | ամորտիզացված արժեքից և շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքից նվազագույնով |
| | | | շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով |

| | | | |
|---|---|---|---|
| | 238 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես | ամորտիզացված արժեքով հաշվառվող |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող |
| | | | շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող |
| | 239 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», առևտրային դեբիտորական պարտքերը հաշվառվում են. | ամորտիզացված արժեքով |
| | | | շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | | | այլ համապարփակ եկամտով վերաչափվող իրական արժեքով |
| | 240 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», եթե պարունակվող ածանցյալ գործիքը հնարավոր չէ առանձին հաշվառել, ապա ողջ բաղադրյալ գործիքը դասակարգվում է որպես՝ | ամորտիզացված արժեքով |
| | | | ամորտիզացված արժեքից և շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքից առավելագույնով |
| | | | այլ համապարփակ եկամտով վերաչափվող իրական արժեքով |
| | | | շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով |
| | 241 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», առևտրային դեբիտորական պարտքերը հաշվառվում են. | ամորտիզացված արժեքով |
| | | | շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով |
| | | | գործարքի գնով |
| | | | այլ համապարփակ եկամտով վերաչափվող իրական արժեքով |
| | 242 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները չափելիս օգտագործվող արդյունավետ տոկոսադրույքը | շուկայում գործող փոխառության միջին դրույքն է |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ԿԲ կողմից սահմանված հաշվարկային դրույքն է |
| | | | այն դրույքն է, որով ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գոյության ակնկալվող ժամանակահատվածում, դրամական միջոցների ակնկալվող վճարումների հոսքերը զեղչվում են ճշգրտորեն մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ընթացիկ հաշվեկշռային արժեքը |
| | 243 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող դասակարգված ֆինանսական ակտիվների եկամուտները հաշվառվում են | համամասնական մեթոդով |
| | | | տարիների հանրագումարի մեթոդով |
| | | | տարիների նվազման մեթոդով |
| | | | արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով |

| | | | |
|---|---|---|---|
| | 244 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ինչպես կազդի որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող դասակարգված ֆիքսված դրույքով պարտատոմսի հաշվեկշռային արժեքի վրա շուկայական տոկոսադրույքների աճը (ենթադրվում է, որ ֆինանսական ակտիվները չեն արժեզրկվել) | կմեծացնի պարտատոմսի հաշվեկշռային արժեքը |
| | | | բոլոր պատասխաններն էլ սխալ են |
| | | | կփոքրացնի պարտատոմսի հաշվեկշռային արժեքը |
| | | | չի ազդի |
| | 245 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ինչպես կազդի որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող դասակարգված ֆիքսված դրույքով պարտատոմսի հաշվեկշռային արժեքի վրա շուկայական տոկոսադրույքների նվազումը | կմեծացնի պարտատոմսի հաշվեկշռային արժեքը |
| | | | չի ազդի |
| | | | բոլոր պատասխաններն էլ սխալ են |
| | | | կփոքրացնի պարտատոմսի հաշվեկշռային արժեքը |
| | 246 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ինչպես կազդի որպես շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող դասակարգված ֆիքսված դրույքով պարտատոմսի հաշվեկշռային արժեքի վրա շուկայական տոկոսադրույքների նվազումը | կմեծացնի պարտատոմսի հաշվեկշռային արժեքը |
| | | | բոլոր պատասխաններն էլ սխալ են |
| | | | կփոքրացնի պարտատոմսի հաշվեկշռային արժեքը |
| | | | չի ազդի |
| | 247 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ինչպես կազդի որպես շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող դասակարգված ֆիքսված դրույքով պարտատոմսի հաշվեկշռային արժեքի վրա շուկայական տոկոսադրույքների աճը | կմեծացնի պարտատոմսի հաշվեկշռային արժեքը |
| | | | չի ազդի |
| | | | բոլոր պատասխաններն էլ սխալ են |
| | | | կփոքրացնի պարտատոմսի հաշվեկշռային արժեքը |
| | 248 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», նշվածներից ո՞րը չի հանդիսանում ֆինանսական ակտիվների առանձին կատեգորիա | ամորտիզացված արժեքով հաշվառվող |
| | | | հեջավորման ածանցյալ գործիքներ |
| | | | շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող |
| | | | այլ համապարփակ եկամտով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող |
| | 249 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», կազմակերպությունը կճանաչի ֆինանսական ակտիվը իր հաշվեկշռում այն դեպքում, երբ | կազմակերպությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ |
| | | | եթե նա իրացնում է պայմանագրով սահմանված օգուտների նկատմամբ իրավունքները |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ունենում է դրամական միջոցներ ստանալու կամ վճարելու իրավական պարտականություն |
| | 250 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են՝ | Իրական արժեքով՝ ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի ձեռքբերմանը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Իրական արժեքով՝ առանց գործարքի հետ կապված ծախսումների, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի ձեռքբերմանը |
| | | | Սկզբնական արժեքով |
| | | | Սկզբնական արժեքից և իրական արժեքից նվազագույնով |
| | 251 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող, դասակարգված ներդրումները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են՝ | Իրական արժեքով՝ ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի ձեռքբերմանը |
| | | | Սկզբնական արժեքից և իրական արժեքից նվազագույնով |
| | | | Սկզբնական արժեքով |
| | | | Իրական արժեքով՝ առանց գործարքի հետ կապված ծախսումների, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի ձեռքբերմանը |
| | 252 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ամորտիզացված արժեքով հաշվառվող ներդրումների գծով դրամական հոսքերի փոփոխության դեպքում որպես ապագա դրամական հոսքերի զեղչման դրույք կիրառվում է՝ | սկզբնական ճանաչման ժամանակ որոշված արդյունավետ տոկոսադրույքը |
| | | | տվյալ պահին ակնկալվող ապագա հոսքերի վրա հիմնված՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքը |
| | | | նմանատիպ ֆինանսական ակտիվների շուկայական եկամտաբերության տոկոսադրույքը |
| | | | լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը |
| | 253 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ֆինանսական ակտիվները կարող են վերադասակարգվել. | շաբաթական պարբերականությամբ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ֆինանսական ակտիվների վերադասակարգման ենթակա չեն |
| | | | բիզնես մոդելի վերանայման դեպքում |
| | 254 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ստորև թվարկած ո՞ր հատկանիշներով է օժտված ածանցյալ գործիքը.<br>ա) նրա արժեքը փոփոխվում է՝ ի պատասխան սահմանված տոկոսադրույքի, ֆինանսական գործիքի գնի, ապրանքի գնի, արտարժույթի փոխարժեքի, գների կամ դրույքների ինդեքսի, վարկունակության, վարկային ինդեքսի կամ համանման այլ փոփոխականի փոփոխությունների<br>բ) չի պահանջում սկզբնական զուտ ներդրում կամ էլ պահանջում է աննշան սկզբնական զուտ ներդրում՝ պայմանագրերի այլ տեսակների համեմատ, որոնք շուկայական պայմանների փոփոխություններին հակազդում են համանման ձևով<br>գ) նրա գծով վերջնահաշվարկը կատարվում է ապագա որևէ ամսաթվին | «ա» և «բ» |
| | | | «ա» և «գ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |

| | | | |
|---|---|---|---|
| | 255 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», ֆինանսական ակտիվը ենթակա է ապաճանաչման, եթե<br>ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը<br>բ) այն փոխանցվում է և փոխանցվում են նրա սեփականության հետ կապված, ըստ էության բոլոր ռիսկերն ու հատուցումները<br>գ) այն փոխանցվում է ռեպո համաձայնագրի շրջանակներում | «ա» և «բ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա» և «գ» |
| | 256 | Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ «Ֆինանսական գործիքներ», նշվածներից որպես ամորտիզացված արժեքով հաշվառվող ներդրումներ են դասակարգվում այն ներդրումները, | որոնց կազմակերպությունը սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսում է որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով |
| | | | որոնց կազմակերպությունը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի |
| | | | ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ, որոնք կազմակերպությունը հստակ մտադրված է և ի վիճակի է պահել մինչև մարման ժամկետի լրանալը |
| | | | նշված բոլոր պատասխաններն էլ ճիշտ են |
| | 257 | «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» համաձայն՝ չաշխատող դասակարգված (բացառությամբ անհուսալի դասի) ակտիվի գծով հաշվեգրվող տոկոսների գծով տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը. | Դտ - տոկոսային եկամուտ<br>Կտ - չճանաչված տոկոսային եկամուտ |
| | | | Դտ - էտացվելիք տոկոսներ<br>Կտ - չճանաչված տոկոսային եկամուտ |
| | | | Դտ - տրամադրված վարկ<br>Կտ - տոկոսային եկամուտ |
| | | | Դտ - տրամադրված վարկ<br>Կտ - չճանաչված տոկոսային եկամուտ |
| | 258 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը:<br>Բանկը տրամադրել է վարկ. | Դտ - դրամական միջոց<br>Կտ - տրամադրված վարկ |
| | | | Դտ - տրամադրված վարկ<br>Կտ - դրամական միջոց |
| | | | Դտ - տրամադրված վարկ<br>Կտ - տոկոսային եկամուտ |
| | | | Դտ - էտացվելիք տոկոսներ<br>Կտ - տոկոսային եկամուտ |
| | 259 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը:<br>Տրամադրված վարկի գծով ստացվելիք եկամուտը արդյունավետ տոկոսադրույքով հաշվեգրելիս. | Դտ - դրամական միջոց<br>Կտ - տոկոսային եկամուտ |
| | | | Դտ - էտացվելիք տոկոսներ<br>Կտ - տոկոսային եկամուտ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Դտ - տրամադրված վարկ<br>Կտ - տոկոսային եկամուտ |
| | | | Դտ - տոկոսային եկամուտ<br>Կտ - տրամադրված վարկ |
| | 260 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը:<br>Տրամադրված վարկի գծով հաշվեգրված եկամուտը ստանալիս. | Դտ - դրամական միջոց<br>Կտ - էտացվելիք տոկոսներ |
| | | | Դտ - տոկոսային եկամուտ<br>Կտ - տրամադրված վարկ |
| | | | Դտ - տրամադրված վարկ<br>Կտ - տոկոսային եկամուտ |
| | | | Դտ - էտացվելիք տոկոսներ<br>Կտ - տոկոսային եկամուտ |
| | 261 | Բանկի կողմից տրամադրվել է 1000 միավոր գումարով վարկ: Ընդհանուր պահուստ ձևավորելիս տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը. | Դտ - վարկերի հնարավոր կորուստների ծածկման ընդհանուր պահուստ 10 միավոր<br>Կտ - վարկ 10 միավոր |
| | | | Դտ - եկումուտ 10 միավոր<br>Կտ - վարկերի հնարավոր կորուստների ծածկման ընդհանուր պահուստ 10 միավոր |
| | | | Դտ -վարկերի հնարավոր կորուստների ծածկման ընդհանուր պահուստ 10 միավոր<br>Կտ - եկամուտ 10 միավոր |
| | | | Դտ - ծախս 10 միավոր<br>Կտ - վարկերի հնարավոր կորուստների ծածկման ընդհանուր պահուստ 10 միավոր |
| | 262 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը:<br>Բանկը 2003 թ.-ի նոյեմբեր ամսին 200 միավորով ձեռք է բերել մինչև մարման ժամկետը պահվող արժեթուղթ, որի անվանական արժեքը 190 միավոր է: | Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթուղթ 200 միավոր<br>Կտ - դրամական միջոցներ 200 միավոր |
| | | | Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթուղթ 190 միավոր<br>Դտ - համապատասխան ծախսային հաշիվ 10 միավոր<br>Կտ - դրամական միջոցներ 200 միավոր |
| | | | Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթուղթ 190 միավոր<br>Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթի հավելավճար 10 միավոր<br>Կտ - դրամական միջոց 200 միավոր |
| | | | Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթուղթ 200 միավոր<br>Կտ - համապատասխան եկամտային հաշիվ 10 միավոր<br>Կտ - դրամական միջոցներ 190 միավոր: |

| | | | |
|---|---|---|---|
| | 263 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Բանկն իրացնում է առևտրական նպատակով պահվող իր արժեթուղթը 170 միավորով: Արժեթղթի ձեռքբերման արժեքը 140 միավոր է: Ձեռքբերումից մինչև վաճառք ընկած ժամանակահատվածում արժեթուղթը վերագնահատվել է, որի արդյունքում ձևավորվել է բացասական վերագնահատման արդյունք՝ 15 միավոր: | Դտ - դրամական միջոցներ 170 միավոր,<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթուղթ 125 միավոր,<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ 45 միավոր |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ: |
| | | | Դտ - դրամական միջոցներ 170 միավոր,<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթուղթ 140 միավոր,<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթի վաճառքից ստացված եկամուտ 30 միավոր<br>Դտ - Վաճառքի համար մատչելի արժեթղթի վերագնահատումից ստացված կորուստ 15 միավոր |
| | | | Դտ - դրամական միջոցներ 170 միավոր,<br>Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթի շուկայական գնի ճշտման հաշիվ 15 միավոր,<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթուղթ 140 միավոր,<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ 45 միավոր |
| | 264 | Բանկը 2004թ.-ի ապրիլի 7-ին 100 միավորով վերավաճառքի նպատակով ձեռք է բերել արժեթուղթ: 2004 թ.ի մայիսի 5-ին այդ արժեթուղթը վաճառել է 115 միավորով: Ձեռքբերումից մինչև վաճառք ընկած ժամանակահատվածում արժեթուղթը վերագնահատվել է, որի արդյունքում ձևավորվել է դրական վերագնահատման արդյունք՝ 9 միավոր: Արժեթուղթը իրացնելիս ի՞նչ ձևակերպում է տրվում. | Դտ - դրամական միջոցներ 115 միավոր,<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթուղթ 100 միավոր,<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆին. ակտիվների վաճառքից ստացված օգուտներ 15 միավոր, |
| | | | Դտ - դրամական միջոցներ 115 միավոր<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթուղթ 100 միավոր<br>Կտ - արժեթղթի վերագնահատումից եկամուտ 9 միավոր<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆին. ակտիվների վաճառքից ստացված օգուտներ 6 միավոր |
| | | | Դտ - դրամական միջոցներ 115 միավոր<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթուղթ 109 միավոր<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆին. ակտիվների վաճառքից ստացված օգուտներ 6 միավոր |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Դտ - դրամական միջոցներ 115 միավոր<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթուղթի շուկայական գնի ճշտման հաշիվ 9 միավոր<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթուղթ 100 միավոր<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆին. ակտիվների վաճառքից ստացված օգուտներ 6 միավոր |
| | 265 | Շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերի շուկայական գնի բարձրացման դեպքում ձևակերպվում է. | Դտ - արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ<br>Կտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ |
| | | | Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր<br>Կտ - արժեթղթերի վերագնահատումից օգուտներ |
| | | | Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր<br>Կտ - արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ: |
| | | | Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր<br>Կտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ |
| | 266 | Շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերի շուկայական գնի անկման դեպքում ձևակերպվում է. | Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր,<br>Կտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ |
| | | | Դտ - արժեթղթերի վերագնահատումից կորուստներ,<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր |
| | | | Դտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ,<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր |
| | | | Դտ - արժեթղթերի շուկայական գնի ճշտման հաշիվ,<br>Կտ - արժեթղթերի վերագնահատումից օգուտներ |
| | 267 | Համաձայն հաշվային պլանի, ո՞ր հաշիվներում է արտացոլվում շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերի իրական արժեքի փոփոխության հետևանքով առաջացող ճանաչված շահույթը | շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ |
| | | | կազմակերպության կողմից ընտրված տարբերակով |
| | | | վերագնահատման պահուստներ |
| | | | շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված օգուտներ |
| | 268 | Համաձայն հաշվային պլանի, ո՞ր հաշիվներում է արտացոլվում շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերի իրական արժեքի փոփոխության հետևանքով առաջացող ճանաչված վնասը | կորուստներ շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վաճառքից |
| | | | վերագնահատման պահուստներ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | կորուստներ շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից |
| | | | կորուստներ շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից կամ վերագնահատման պահուստ հաշիվներում |
| | 269 | Համաձայն հաշվային պլանի, շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերի վաճառքից առաջացած դրական արդյունքը արտացոլվում է՝ | «շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վաճառքից ստացված օգուտներ» հաշվում |
| | | | «արժեթղթերի հավելավճար» հաշվում |
| | | | «շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված օգուտներ» հաշվում |
| | | | «արժեթղթերի վերագնահատման պահուստ» հաշվում |
| | 270 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: «Ա» բանկը «Բ» բանկից առևտրային նպատակով ձեռք է բերել արժեթղթեր 90.000 դրամով: Մեկ ամիս անց արժեթղթի իրական արժեքը կազմում է 92.000 դրամ: «Ա» բանկը արժեթղթերի դասակարգել է որպես շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող: | Դտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ 2.000դր<br>Կտ - արժեթղթերի վերագնահատումից ստացված օգուտներ 2.000դր |
| | | | Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 2.000դր<br>Կտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ 2.000դր |
| | | | Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 2.000դր<br>Կտ - արժեթղթերի վերագնահատումից ստացված օգուտներ 2.000դր |
| | | | Դտ - արժեթղթերի վերագնահատումից առաջացած վնասներ 2.000դր<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 2.000դր |
| | 271 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: «Ա» բանկը «Բ» բանկից առևտրային նպատակով ձեռք է բերել արժեթղթեր 90.000 ՀՀ դրամով: Մեկ ամիս անց արժեթղթի իրական արժեքը կազմում է 88.000 ՀՀ դրամ: «Ա» բանկը արժեթղթերի դասակարգել է որպես շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող: | Դտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ 2.000դր<br>Կտ - արժեթղթերի վերագնահատումից ստացված օգուտներ 2.000դր |
| | | | Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 2.000դր<br>Կտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ 2.000դր |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | Դտ - կորուստներ արժեթղթերի վերագնահատումից 2.000դր<br>Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 2.000դր |

| | | | |
|---|---|---|---|
| | 272 | Համաձայն հաշվային պլանի, մինչև մարման ժամկետը պահվող տոկոսային արժեթղթերի (ներառյալ հաշվեգրված տոկոսները) մարման հաշվապահական ձևակերպումը | Դտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ<br>Կտ - տոկոսային արժեթղթեր (անվանական արժեքի և հաշվեգրված և չհավաքագրված տոկոսների հանրագումարի չափով) |
| | | | Դտ - տոկոսային արժեթղթեր<br>Կտ - հաշվեգրված տոկոսներ<br>Կտ - դրամարկղ կամ թղթակցային հաշիվ |
| | | | Դտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ<br>Կտ - տոկոսային արժեթղթեր<br>Կտ - հաշվեգրված տոկոսներ (հաշվեգրված և չհավաքագրված տոկոսների չափով) |
| | | | Դտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ<br>Կտ - տոկոսային արժեթղթեր (անվանական արժեք)<br>Կտ - հաշվեգրված տոկոսներ (անվանական արժեքի և հաշվեգրված տոկոսների գումարի տարբերության չափով) |
| | 273 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը:<br>Ա բանկը Բ բանկից իրական արժեքով ձեռք է բերել 100.000 ՀՀ դրամ անվանական արժեք ունեցող արժեթուղթ՝ վճարելով 90.000 ՀՀ դրամ: Այդ արժեթղթերը դասակարգվել են որպես վաճառքի համար մատչելի | Դտ - վաճառքի համար մատչելի արժեթղթեր 100.000<br>Կտ - էգուտներ արժեթղթերի առք ու վաճառքից 10.000<br>Կտ - դրամարկղ կամ թղթակցային հաշիվ 90.000 |
| | | | Դտ - վաճառքի համար մատչելի արժեթղթեր 90.000<br>Կտ - դրամարկղ կամ թղթակցային հաշիվ 90.000 |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | Դտ - վաճառքի համար մատչելի արժեթղթեր 100.000<br>Կտ - վաճառքի համար մատչելի արժեթղթերի զեղչատոկոս 10.000<br>Կտ - դրամարկղ կամ թղթակցային հաշիվ 90.000 |
| | 274 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը:<br>Ա բանկը Բ բանկից իրական արժեքով ձեռք է բերել 80.000 ՀՀ դրամ անվանական արժեք ունեցող արժեթղթեր, վճարելով 90.000 դրամ: Այդ արժեթղթերը դասակարգվել են որպես վաճառքի համար մատչելի: | Դտ - վաճառքի համար մատչելի արժեթղթեր 80.000<br>Դտ - վնասներ արժեթղթերի առք ու վաճառքից 10.000<br>Կտ - դրամարկղ կամ թղթակցային հաշիվ 90.000 |
| | | | Դտ - վաճառքի համար մատչելի արժեթղթեր 90.000<br>Կտ - դրամարկղ կամ թղթակցային հաշիվ 90.000 |
| | | | Դտ - վաճառքի համար մատչելի արժեթղթեր 80.000<br>Դտ - վաճառքի համար մատչելի արժեթղթերի հավելավճար 10.000<br>Կտ - դրամարկղ կամ թղթակցային հաշիվ 90.000 |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 275 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը:<br>Մինչև մարման ժամկետը պահվող առանց տոկոսի արժեթղթերը ձեռք են բերվել զեղչով: | Դտ - առանց տոկոսի արժեթղթեր (ձեռքբերման գին)<br>Կտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ (ձեռքբերման գին) |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Դտ - առանց տոկոսի արժեթղթեր (անվանական արժեք)<br>Կտ - առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս (ձեռքբերման գնի և անվանական արժեքի տարբերություն)<br>Կտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ (ձեռքբերման գին) |
| | | | Դտ - առանց տոկոսի արժեթղթեր (ձեռքբերման գին)<br>Դտ - առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս (ձեռքբերման գնի և անվանական արժեքի տարբերություն)<br>Կտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ |
| | | | Դտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ (ձեռքբերման գին)<br>Կտ - առանց տոկոսի արժեթղթեր (անվանական արժեք)<br>Կտ - առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս (ձեռքբերման գնի և անվանական արժեքի տարբերություն) |
| | 276 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը:<br>Բանկը 830.000,00 ՀՀ դրամով ձեռք է բերել այլ կազմակերպության տոկոսային պարտատոմս և մտադիր է այն պահել մինչև մարման ժամկետը: Արժեթղթի անվանական արժեքը 800.000,00 ՀՀ դրամ է: | Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր 800.000<br>Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի հավելավճար 30.000<br>Կտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ 830.000 |
| | | | Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր 830.000<br>Կտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ 830.000 |
| | | | Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր 800.000<br>Դտ - հաշվեգրված տոկոսներ 30.000<br>Կտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ 830.000 |
| | | | Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր 800.000<br>Կտ - արժեթղթերի հավելավճար 70.000<br>Կտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ 730.000 |
| | 277 | Համաձայն հաշվային պլանի, երբ բանկը ընդունում է հաճախորդի ներկայացրած ճանապարհային չեկը և վճարում է հաճախորդին՝ ներկայացված չեկի դիմաց: Ընտրել ճիշտ հաշվապահական ձևակերպումը | Դտ - կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթեր<br>Կտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ |
| | | | Դտ - դեբիտորական պարտքեր<br>Կտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | Դտ - հաճախորդի չեկային հաշիվ<br>Կտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ |

| | | | |
|---|---|---|---|
| | 278 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը:<br>Մինչև ՀՀ ԿԲ կողմից սահմանված կարգով կանոնադրական հիմնադրամի գրանցումը, գործող բանկերի կանոնադրական հիմնադրամի համալրման նպատակով փոխանցված գումարները հաշվառելու համար տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները | Դտ - կանոնադրական հիմնադրամի համալրման կուտակման հաշիվ ՀՀ ԿԲ-ում<br>Կտ - կրեդիտորական պարտքեր կանոնադրական հիմնադրամի համալրման գծով |
| | | | Դտ - թղթակցային հաշիվ ՀՀ ԿԲ- ում<br>Կտ - կրեդիտորական պարտքեր կանոնադրական հիմնադրամի համալրման գծով |
| | | | Դտ - կանոնադրական հիմնադրամի համալրման կուտակման հաշիվ ՀՀ ԿԲ-ում<br>Կտ - թղթակցային հաշիվ |
| | | | Դտ - կանոնադրական հիմնադրամի համալրման կուտակման հաշիվ ՀՀ ԿԲ-ում<br>Կտ - հաճախորդի հաշիվ |
| | 279 | Կազմակերպությունը գնել է 2.000.000 ՀՀ դրամ արժեքով հիմնական միջոցներ՝ 5-րդ տարվա վերջում մարվելիք փոխառությամբ: Ինչպիսի ազդեցություն կունենա տվյալ գործարքը կազմակերպության ընթացիկ ակտիվների հանրագումարի, ընթացիկ պարտավորությունների հանրագումարի և շահույթի վրա՝ | ընթացիկ ակտիվների, ընթացիկ պարտավորությունների հանրագումարները և շահույթը չի փոխվի |
| | | | ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հանրագումարը կփոխվի իսկ շահույթը կմնա նույնը |
| | | | ընթացիկ ակտիվների հանրագումարը և շահույթը կփոխվի, իսկ ընթացիկ պարտավորությունների հանրագումարը կմնա նույնը |
| | | | ընթացիկ ակտիվների և ընթացիկ պարտավորությունների հանրագումարը և շահույթը կփոխվի |
| | 280 | Համաձայն ՖՀՄՍ 10-ի՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ», ներդրման օբյեկտի համախմբումը պետք է սկսվի | ներդրման օբյեկտի նկատմամբ ներդրողի կողմից վերահսկողություն ձեռք բերելու մտադրություն առաջանալու ամսաթվից |
| | | | ներդրման օբյեկտի նկատմամբ ներդրողի կողմից վերահսկողություն ձեռք բերելու ամսաթվից |
| | | | ներդրման օբյեկտի նկատմամբ ներդրողի կողմից վերահսկողություն ձեռք բերելու տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ից |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 281 | Համաձայն ՖՀՄՍ 10-ի՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ», ներդրման օբյեկտի համախմբումը պետք է դադարի | ներդրման օբյեկտի օտարման վերաբերյալ նախնական համաձայնության գալու ամսաթվից |
| | | | ներդրման օբյեկտի նկատմամբ ներդրողի կողմից վերահսկողության կորստի տարվա հունվարի 1-ից |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | | | ներդրման օբյեկտի նկատմամբ ներդրողի վերահսկողությունը կորցնելուն պես |

| | | | |
|---|---|---|---|
| | 282 | Համաձայն ՖՀՄՍ 10-ի՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ», համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվության կազմման կանոններից, ո՞րն է սխալ՝ | մայր կազմակերպության և դուստր կազմակերպությունների ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների, ծախսերի և դրամական հոսքերի նմանատիպ հոդվածները համախմբվում են |
| | | | յուրաքանչյուր դուստր կազմակերպությունում մայր կազմակերպության ներդրման հաշվեկշռային արժեքը և յուրաքանչյուր դուստր կազմակերպության սեփական կապիտալում մայր կազմակերպության բաժինը հաշվանցվում է (բացառվում է) |
| | | | դուստր ընկերության ակտիվները արտացոլվում են համախմբման ամսաթվի դրությամբ իրական արժեքով |
| | | | մայր կազմակերպությունը պետք է չվերահսկող բաժնեմասերը ներկայացնի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում որպես սեփական կապիտալի հոդված՝ մայր կազմակերպության սեփականատերերի սեփական կապիտալից առանձին |
| | 283 | Համաձայն ՖՀՄՍ 10-ի՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ», ընկերությունը ունի վերահսկողություն ներդրման օբյեկտի նկատմամբ, երբ ունի ա) իշխանություն ներդրման օբյեկտի նկատմամբ<br>բ) ներդրման օբյեկտում իր ներգրավվածության արդյունքում փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկային ենթարկվածություն<br>գ) ներդրման օբյեկտի նկատմամբ իր իշխանությունն օգտագործելու կարողություն՝ ներդրողի հատույցների գումարն իր ազդեցությանը ենթարկելու նպատակով | «ա» |
| | | | «ա» և «բ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «բ» և «գ» |
| | 284 | Համաձայն ՖՀՄՍ 10-ի՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ», չվերահսկող բաժնեմասին վերաբերվող ո՞ր պնդումն է ճիշտ. | մայր կազմակերպությունը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում բոլոր տողերը պետք է ներկայացնի տրոհված՝ առանձնացնելով չվերահսկող բաժնեմասերին վերաբերվող գումարները |
| | | | մայր կազմակերպությունը պետք է չվերահսկող բաժնեմասերը ներկայացնի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում որպես սեփական կապիտալի հոդված՝ մայր կազմակերպության սեփականատերերի սեփական կապիտալից առանձին |
| | | | մայր կազմակերպությունը ֆինանսական հաշվետվություններում չվերահսկող բաժնեմասը չի ներառում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |

| | | | |
|---|---|---|---|
| | 285 | Համաձայն ՖՀՄՍ 13-ի՝ «Իրական արժեքի չափումը», իրական արժեքը չափելիս, կազմակերպությունը պետք է հաշվի առնի տվյալ ակտիվի կամ պարտավորության հետևյալ բնութագրերը | ակտիվի վիճակը |
| | | | գտնվելու վայրը |
| | | | բոլոր պատասխանները ճիշտ են |
| | | | ակտիվի վաճառքի կամ օգտագործման նկատմամբ սահմանափակումները |
| | 286 | Համաձայն ՖՀՄՍ 13-ի՝ «Իրական արժեքի չափումը», իրական արժեքի չափումը ենթադրում է, որ ակտիվը վաճառելու կամ պարտավորությունը փոխանցելու գործարքը տեղի է ունենում<br>ա) կազմակերպության համար առավել բարենպաստ շուկայում<br>բ) այդ ակտիվի կամ պարտավորության համար հիմնական շուկայում<br>գ) հիմնական շուկայի բացակայության դեպքում, տվյալ ակտիվի կամ պարտավորության համար առավել բարենպաստ շուկայում | «ա» |
| | | | «ա» և «բ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | 287 | Համաձայն ՖՀՄՍ 13-ի՝ «Իրական արժեքի չափումը», ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի չափումը հաշվի է առնում<br>ա) շուկայի մասնակցի տնտեսական օգուտներ ստեղծելու կարողությունը ակտիվի առավելագույն և լավագույն օգտագործումից<br>բ) շուկայի մասնակցի կողմից ակտիվի գնման արժեքը<br>գ) այն շուկայի մեկ այլ մասնակցի վաճառելուց, ով ակտիվը կօգտագործեր առավելագույն և լավագույն կերպով | «ա» և «բ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | | | «ա» և «գ» |
| | 288 | Համաձայն ՖՀՄՍ 13-ի՝ «Իրական արժեքի չափումը», կազմակերպությունը պետք է օգտագործի գնահատման մեթոդներ,<br>ա) որոնք տեղին են տվյալ հանգամանքներում<br>բ) որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ առավելագույն ին հասցնելով համապատասխան (տեղին) դիտելի ելակետային տվյալների օգտագործումը<br>գ) որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ նվազագույնին հասցնելով ոչ դիտելի ելակետային տվյալների օգտագործումը | «ա» և «բ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | 289 | Համաձայն ՖՀՄՍ 13-ի՝ «Իրական արժեքի չափումը», իրական արժեքի հիերարխիայում 1-ին մակարդակի ելակետային տվյալներ են. | այն տվյալներներն են, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի են ակտիվի կամ պարտավորության համար |
| | | | նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաների գնանշվող գներ (չճշգրտվող) են, որոնք կազմակերպության համար կարող են հասանելի լինել չափման ամսաթվի դրությամբ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | ակտիվի կամ պարտավորության համար ոչ դիտելի տվյալներ են |
| | 290 | Համաձայն ՖՀՄՍ 13-ի՝ «Իրական արժեքի չափումը», իրական արժեքի հիերարխիայում 2-րդ մակարդակի ելակետային տվյալներ են.<br>ա) ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների համար գնանշվող գները<br>բ) նույնական կամ համանման ակտիվների կամ պարտավորությունների համար գնանշվող գներն այն շուկաներում, որոնք ակտիվ չեն<br>գ) շուկայի տվյալներով հաստատված (հիմնավորված) ելակետային տվյալներ | «ա» և «բ» |
| | | | «բ» և «գ» |
| | | | «ա» և «գ» |
| | | | «ա», «բ» և «գ» |
| | 291 | Համաձայն հաշվային պլանի, բանկի և մասնաճյուղերի միջև փոխադարձ հաշվարկների արդյունքները | հաշվետվությունը ներկայացնելու կամ հրապարակելու ժամանակ ենթակա չեն զրոյացման |
| | | | հաշվետվությունը ներկայացնելու կամ հրապարակելու ժամանակ ենթակա են զրոյացման, իսկ զրոյացման արդյունքում առաջացած մնացորդը դասակարգվում է համապատասխան հաշիվներին |
| | | | հաշվետվությունը ներկայացնելու կամ հրապարակելու ժամանակ ենթակա չեն զրոյացման, սակայն պահանջվում է դրանց բացահայտումը հաշվետվություններին կից ծանոթագրություններում |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 292 | Համաձայն հաշվային պլանի, բանկը առաջնային շուկայում անվանականից ցածր արժեքով ձեռք է բերել պետական տոկոսային արժեթուղթ և մտադիր է այն պահել մինչև մարման ժամկետը: Արժեթուղթը ձեռք բերելիս տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը. | Դտ - պետական տոկոսային արժեթղթեր<br>Կտ - պետական տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս<br>Կտ - դրամական միջոցներ |
| | | | Դտ - պետական տոկոսային արժեթղթեր<br>Կտ - դրամական միջոցներ |
| | | | Դտ - պետական տոկոսային արժեթղթեր<br>Դտ - պետական տոկոսային արժեթղթերից ստացվելիք տոկոսներ<br>Կտ - դրամական միջոցներ |
| | | | Դտ - պետական տոկոսային արժեթղթեր<br>Դտ - պետական տոկոսային արժեթղթերի հավելավճար<br>Կտ - դրամական միջոցներ |
| | 293 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Բանկը առաջնային շուկայում անվանականից բարձր արժեքով ձեռք է բերել պետական տոկոսային արժեթուղթ և մտադիր է այն պահել մինչև մարման ժամկետը: Արժեթուղթը ձեռք բերելիս տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը. | Դտ - պետական տոկոսային արժեթղթեր<br>Կտ - պետական տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս<br>Կտ - դրամական միջոցներ |
| | | | Դտ - պետական տոկոսային արժեթղթեր<br>Դտ - պետական տոկոսային արժեթղթերի հավելավճար<br>Կտ - դրամական միջոցներ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Դտ - պետական տոկոսային արժեթղթեր<br>Դտ - պետական տոկոսային արժեթղթերից ստացվելիք տոկոսներ<br>Կտ - դրամական միջոցներ |
| | | | Դտ - պետական տոկոսային արժեթղթեր<br>Կտ - դրամական միջոցներ |
| | 294 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Բանկը առաջնային շուկայում անվանականից ցածր արժեքով ձեռք է բերել պետական տոկոսային արժեթուղթ և մտադիր է այն վերավաճառել: Արժեթուղթը ձեռք բերելիս տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը. | Դտ - պետական տոկոսային արժեթղթեր<br>Կտ -պետական տոկոսային արժեթղթերի զեղչատոկոս<br>Կտ - դրամական միջոցներ |
| | | | Դտ - պետական տոկոսային արժեթղթեր<br>Կտ - դրամական միջոցներ |
| | | | Դտ - պետական տոկոսային արժեթղթեր<br>Կտ - պետական տոկոսային արժեթղթերից ստացվելիք տոկոսներ<br>Կտ - դրամական միջոցներ |
| | | | Դտ - պետական տոկոսային արժեթղթեր<br>Դտ - պետական տոկոսային արժեթղթերի հավելավճար<br>Կտ - դրամական միջոցներ |
| | 295 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Բանկն իր կողմից թողարկված առանց տոկոսի արժեթուղթերն անվանական արժեքից ցածր գնով տեղաբաշխելիս ձևակերպվում է. | Դտ - դրամական միջոցներ<br>Կտ - բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր |
| | | | Դտ - դրամական միջոցներ<br>Դտ - բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս<br>Կտ - բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր |
| | | | Դտ - տոկոսային ծախսեր<br>Կտ - բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս<br>Կտ - բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր |
| | | | Դտ - բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթերի զեղչատոկոս<br>Կտ - դրամական միջոցներ<br>Կտ - բանկի կողմից թողարկված առանց տոկոսի արժեթղթեր |
| | 296 | Համաձայն հաշվային պլանի, արժեղթերից ստացվելիք տոկոսները հաշվեգրելիս ձևակերպվում է՝ | Դտ - դրամական միջոցներ<br>Կտ - տոկոսային եկամուտներ |
| | | | Դտ - արժեթուղթ<br>Դտ - դրամական միջոցներ<br>Կտ - տոկոսային եկամուտներ |
| | | | Դտ - արժեթղթերից ստացվելիք տոկոսներ<br>Կտ - տոկոսային ծախսեր |
| | | | Դտ - արժեթուղթ<br>Կտ - տոկոսային եկամուտներ |

| | | | |
|---|---|---|---|
| | 297 | «Ա» բանկը «Բ» բանկից վերավաճառելու նպատակով ձեռք է բերել արժեթղթեր 120.000 դրամով: Մեկ ամիս անց արժեթղթի իրական արժեքը կազմում է 125.000 դրամ: «Ա» բանկը արժեթղթերի վերագնահատումը արտացոլելու նպատակով իրականացնում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը | Դտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ 5.000դր Կտ - արժեթղթերի վերագնահատումից ստացված օգուտներ 5.000դր |
| | | | Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 5.000դր Կտ - արժեթղթերի վերագնահատումից ստացված օգուտներ 5.000դր |
| | | | Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 5.000դր Կտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ 5.000դր |
| | | | Դտ - արժեթղթերի վերագնահատումից առաջացած վնասներ 5.000դր Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 5.000դր |
| | 298 | «Ա» բանկը «Բ» բանկից վերավաճառելու նպատակով ձեռք է բերել արժեթղթեր 120.000 ՀՀ դրամով: Մեկ ամիս անց արժեթղթի իրական արժեքը կազմում է 115.000 ՀՀ դրամ: «Ա» բանկը արժեթղթերի վերագնահատումը արտացոլելու նպատակով իրականացնում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը | Դտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ 5.000դր Կտ - արժեթղթերի վերագնահատումից ստացված օգուտներ 5.000դր |
| | | | Դտ - կորուստներ արժեթղթերի վերագնահատումից 5.000դր Կտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 5.000դր |
| | | | Դտ - շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթեր 5.000դր Կտ - արժեթղթերի վերագնահատման պահուստ 5.000դր |
| | | | բոլոր պատասխանները սխալ են |
| | 299 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Մինչև մարման ժամկետը պահվող տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթերի գծով արժեթղթի մարման պահին հաշվեգրվել է 2.000 ՀՀ դրամի տոկոսային եկամուտ; արժեթղթի անվանական արժեքը կազմում է 100.000 ՀՀ դրամ: Արժեթղթի (ներառյալ տոկոսների) մարման դեպքում | Դտ -թղթակցային հաշիվ կամ դրամարկղ 102.000 Կտ - տոկոսային արժեթղթեր (անվանական արժեք) 102.000 |
| | | | Դտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ 102.000 Դտ - տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթեր (անվանական արժեք) 100.000 Կտ - հաշվեգրված տոկոսներ (հաշվեգրված տոկոսների չափով) 2.000 |
| | | | Դտ - տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթեր (անվանական արժեք) 100.000 Կտ - հաշվեգրված տոկոսներ (հաշվեգրված տոկոսների չափով) 2.000 Կտ - դրամարկղ կամ թղթակցային հաշիվ 102.000 |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Դտ - թղթակցային հաշիվ կամ դրամարկղ 102.000<br>Կտ - տոկոսային եկամուտ ապահովող արժեթղթեր (անվանական արժեք) 100.000<br>Կտ - հաշվեգրված տոկոսներ (հաշվեգրված տոկոսների չափով) 2.000 |
| | 300 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Բանկը 100 միավորով ձեռք է բերել 120 միավոր անվանական արժեքով 6%-ոց մինչև մարման ժամկետը պահվող արժեթուղթը: | Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր 120 միավոր<br>Կտ - դրամական միջոցներ 120 միավոր |
| | | | Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր 100 միավոր<br>Կտ - դրամական միջոցներ 100 միավոր |
| | | | Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր 120 միավոր<br>Կտ - մինչև մարման ժամկետը պահվող արժթղթերի զեղչատոկոս 20 միավոր<br>Կտ - դրամական միջոցներ 100 միավոր |
| | | | Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր 100 միավոր<br>Դտ - մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի հավելավճար 20 միավոր<br>Կտ -դրամական միջոցներ 120 միավոր: |
| | 301 | Համաձայն հաշվային պլանի, նշել ճիշտ ձևակերպումը: Արժութային սվոպ կնքելիս՝ արտարժույթ վերցնելու դեպքում, տոկոսներ ստացողի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները՝ | Ձևակերպում չի կատարվում |
| | | | Ճիշտ պատասխանը նշված չէ |
| | | | Կտ - Թղթակցային հաշիվ կամ դրամարկղ արտարժույթով<br>Կտ - Արժութային սվոպ արտարժույթով (պասիվ)<br>և<br>Դտ - Արժութային սվոպով վաճառված արժույթ դրամով<br>Կտ - Թղթակցային հաշիվ կամ դրամարկղ դրամով |
| | | | Դտ - Արժութային սվոպ արտարժույթով (ակտիվ)<br>Կտ - Թղթակցային հաշիվ կամ դրամարկղ արտարժույթով, և<br>Դտ - Թղթակցային հաշիվ կամ դրամարկղ դրամով<br>Կտ - Պարտավորություններ արժութային սվոպի գծով դրամով |

| | | | |
|---|---|---|---|
| | 302 | Բանկի գործադիր մարմինը 2004թ. մարտի 5-ին կազմել է 2003թ. ֆինանսական հաշվետվությունների նախագիծը, 2004թ. մարտի 10-ին նախագիծը գործադիր մարմինը վավերացվել է բաժնետերերի ընդհանուր ժողովին ներկայացնելու համար: 2004թ. մարտի 17-ին բաժնետերերի ժողովի կողմից դրանք հաստատվել են: 2004թ. ապրիլի 1-ին հանձնվել է Կենտրոնական բանկին: Ֆինանսական հաշվետվությունները համարվում են ներկայացման համար վավերացված | 2004թ. մարտի 10-ին |
| | | | 2004թ. ապրիլի 1-ին |
| | | | 2004թ. մարտի 17-ին |
| | | | ճիշտ պատասխանը նշված չէ |
| | 303 | Բանկի վերաբերյալ ունենք հետևյալ տվյալները.<br>- հիմնական միջոցի վերագնահատումից օգուտներ՝ 500 միավոր,<br>- արտարժույթի վերագնահատումից ստացված օգուտներ՝ 200 միավոր,<br>- արտարժույթի առք ու վաճառքից ստացված օգուտներ՝ 800 միավոր,<br>- հիմնական միջոցի իրացումից ստացված օգուտներ՝ 150 միավոր,<br>- հիմնական միջոցի վրա կատարված ընթացիկ ծախս՝ 120 միավոր,<br>- վարկերի և այլ փոխատվություններից ստացված տոկոսներ՝ 450 միավոր,<br>- հիմնական միջոցի մաշվածություն՝ 50 միավոր,<br>- գործուղման ծախսեր՝ 180 միավոր (օրենսդրությամբ սահմանված չափը չգերազանցող):<br>Բանկի շահութահարկի գումարը կկազմի (դրույքը՝ 20%) | 330 միավոր |
| | | | 310 միավոր: |
| | | | 210 միավոր |
| | | | 350 միավոր |
| | 304 | Բանկի վերաբերյալ առկա են հետևյալ տվյալները.<br>- ծառայությունների իրացումից հասույթ՝ 700 միավոր<br>- հիմնական միջոցների իրացումից հասույթ՝ 80 միավոր<br>- արտարժութային ակտիվների վերագնահատումից դրական արդյունք՝ 50 միավոր<br>- հիմնական միջոցի վերագնահատման դրական արդյունք՝ 300 միավոր,<br>- աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված այլ վճարումներ՝ 110 միավոր,<br>- շահաբաժինների վճարում մասնակիցներին՝ 70 միավոր,<br>- այլ անձանց կանոնադրական կապիտալում կատարված ներդրումներ՝ 20 միավոր,<br>- հիմնական միջոցի ընթացիկ վերանորոգում՝ 10 միավոր,<br>- ֆակտորինգային գործառնությունների գծով եկամուտներ 60 միավոր,<br>- կապիտալացվող ծախսեր՝ 60 միավոր:<br>Հարկվող շահույթը կկազմի | 840 միավոր |
| | | | 720 միավոր |
| | | | 660 միավոր |
| | | | 960 միավոր: |